

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԳԻՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԱԶԳԱՅԻՆ ԱԿԱԴԵՄԻԱ
ՊԱՏՄՈՒԹՅԱՆ ԻՆՍՏԻՏՈՒՏ**

ՍԱՐԳՍՅԱՆ ԱՐՄԱՆ ՍՈՒՐԵՆԻ

**ԿԱՐԻՆԸ ՀԱՅ ԱԶԱՏԱՄԱՐՏՈՒՄ XIX ԴԱՐԻ
ՎԵՐՋԻՆ ՔԱՌՈՐԴԻՆ**

ԱՏԵՆԱԽՈՍՈՒԹՅՈՒՆ

**Է.00.01 - «Հայոց պատմություն» մասնագիտությամբ պատմական գիտությունների
թեկնածուի գիտական աստիճանի հայցման համար**

**Գիտական ղեկավար՝
ՀՀ ԳԱԱ ակադեմիկոս Ա.Ա. Մելքոնյան**

ԵՐԵՎԱՆ – 2017

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ.....	3
--------------------------	----------

ԳԼՈՒԽ I

ԿԱՐԻՆԻ ՆԱՀԱՆԳԸ XIX ԴԱՐԻ 80-ԱԿԱՆ ԹԹ. ԱԶԱՏԱԳՐԱԿԱՆ ՇԱՐԺՄԱՆ ԿԵՆՏՐՈՆ

1.1 Ազատագրական պայքարի զինված փուլի նախադրյալները.....	20
1.2 Ազատագրական խմբակները: «Պաշտպան հայրենյացը» որպես զինված պայքարի կազմակերպական կառույց.....	34
1.3 Հայ ազգային կուսակցությունների տեղական մարմինների ստեղծումը Կարինում և դրանց գործունեության վաղ շրջանը.....	56

ԳԼՈՒԽ II

ԱԶԳԱՅԻՆ-ԱԶԱՏԱԳՐԱԿԱՆ ՊԱՅՔԱՐԸ ԿԱՐԻՆԻ ՆԱՀԱՆԳՈՒՄ XIX ԴԱՐԻ ՎԵՐՋԻՆ ՏԱՄՆԱՄՅԱԿՈՒՄ

2.2 Հունիսյան դեպքերը և 1894-1896թթ. հայկական կոտորածները Կարինի նահանգում.....	83
2.3 Ֆիդայական շարժումը Կարինի նահանգում.....	109

ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆՆԵՐ.....	137
-------------------------------	------------

ՕԳՏԱԳՈՐԾՎԱԾ ԱՂԲՅՈՒՐՆԵՐԻ ԵՎ ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՑԱՆԿ.....	141
--	------------

ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ

XIX դարի վերջին քառորդին երբեմնի հզոր Օսմանյան կայսրությունը խիստ թուլացել էր: Եվրոպական երկրների արևելյան քաղաքականության մեջ դեպի հարավ՝ տաք ջրեր ռուսական առաջխաղացման դեմ հուսալի պատվար համարվող «տարբեր ռասաների հավաքածու»¹ կայսրությունում այդ երկրների թելադրանքով իշխանություններն իրավիճակը շտկելու համար մի շարք միջոցառումներ ձեռնարկեցին: Սակայն դա գրեթե անհնարին էր «միջնադարյան մակարդակում»² մնացած թուրքերի դեպքում: Ուստի XIX դարի ընթացքում այդ երկրում ձեռնարկվող բարենորոգումների փորձերին զուգահեռ՝ անմիջապես առաջ էին քաշվում սուլթանի հպատակներին թուրքացնելու նպատակ ունեցող քաղաքական ծրագրեր, որոնցից մեկը ձևակերպված էր 1869 թ. սուլթան Աբդուլ Ազիզին թողած Ֆուադ փաշայի կտակում:

Օսմանյան կայսրության թուրք կառավարողների համար 1877-1878 թթ. ռուս-թուրքական պատերազմը և որպես դրա արդյունք՝ Եվրոպայից դուրս մղվելու իրողությունը կայսրության արևելյան հատվածի (առաջին հերթին՝ Արևմտյան Հայաստանի) վրա ուշադրությունը կենտրոնացնելու նոր առիթ դարձավ: Մինչ այդ էլ, զգուշանալով, որ «հայերը հակում ունեն ոտնձգութեան և խելացի կլինի նրանց եռանդը չափաւորել»³, թուրքերը «1870-77 թթ., երբ տակավին ո՛չ հայ հեղափոխութիւն գոյութիւն ունէր, ո՛չ հայ կամավոր, գործադրութեան մէջ էին դրել հայկական բնաջնջումի ծրագիրը»⁴:

Այդ հարաբերություններից անմասն չէր Արևմտյան Հայաստանի հայաշատ ու տարածական մեծ ընդգրկում, տնտեսական ու մշակութային բարձր համարում ունեցող Կարինի նահանգը: Այն իր աշխարհագրական դիրքով (հետևաբար նաև՝ ռազմաքաղաքական ու ռազմավարական նշանակությամբ) հսկայական տնտեսական, քաղաքական, ռազմավարական և մշակութային դերակատարություն ուներ⁵:

¹ Տե՛ս Еремеев Д. Е., Этногенез турок, М., 1971, էջ 222:

² Տե՛ս Чихачев П. А., Великие державы и Восточный вопрос, М., 1970, էջ 173-174:

³ Տե՛ս Սերոբեան Մ., Հայկական հարցը և անոր փուլերը, Պեյրուֆ, 1937, էջ 115-116:

⁴ Տե՛ս Սերոբեան Մ., Հայկական մղձավանջը, Պոսթըն, 1916, էջ 20-21:

⁵ Հայ ուսումնասիրողներից բոլոր նրանք, ովքեր անդրադարձել են Կարինի պատմությանը համակարծիք են այս հարցում. տե՛ս Ա-Դո, Վանի, Բիթլիսի և Էրզրումի վիլայեթները, Ե., 1912, Զատիկյան Հ., Կարինի նահանգը XIX դարի երկրորդ կեսին, Ե., 2013, Հովհաննիսյան Ռ., Արևմտահայ ազգային-

Կարինի նահանգի սոցիալ-տնտեսական պատմությունն ու ժողովրդագրական նկարագիրը բավականին լավ է ուսումնասիրված՝ ի տարբերություն այստեղ սկիզբ առած հայոց վերազարթոնքի և ազգային-ազատագրական շարժման պատմության մինչ օրս լուսաբանման կարոտ մի շարք հարցերի: Որպես Կարինում ծավալված ազատագրական պայքարի վճռորոշ նախադրյալներ կարևորել ենք՝ ա) սահմանադրական շարժումը, որի ծավալմանը Կարինի նահանգում նպաստեցին 1872 թ. մշակված «Սահմանադրական հրահանգ գավառաց համար» և «Կարինի բարենորոգումների ծրագիրը» փաստաթղթերը, բ) Զեյթունի ապստամբությունը որպես կայսրության դեմ հայերի անդրանիկ զինված բացահայտ ելույթի և դրա ազդեցությունը, գ) Հայկական հարցի միջազգայնացումը և դրա հետևանքները, դ) 1890 թ. հունիսյան հայտնի դեպքերը և դրանց նշանակությունը, ե) ազատագրական խմբակների հիմնումը Կարինում, զ) հայկական ազգային կուսակցությունների տեղական մարմինների ստեղծման գործընթացը, է) ֆիդայական պայքարը Կարնո աշխարհում և այլ հիմնահարցեր:

Հայ ազգային-ազատագրական պայքարի պատմությունը մշտապես ուսումնասիրության առարկա է եղել սփյուռքահայ և թույլատրելիության տարբեր չափաբաժիններով նաև՝ խորհրդահայ պատմագիտության համար: Խորհրդային կայսրության մայրամուտին և անկախության տարիներին հայ ուսումնասիրողների ուշադրությունն ավելի սևեռվեց այդ հիմնախնդրի վրա: Դա պատահական չէր, քանի որ մեր օրերում, երբ պետական մակարդակով բարձրացվում են Հայոց ցեղասպանության և

ազատագրական շարժումները և Կարինի «Պաշտպան հայրենյաց» կազմակերպությունը (XIX դարի 70-80-ական թթ.), Ե., 1965, Չարըզ Դ., Յուշամատեան Բարձր Հայքի, Կարինապատում, Պեյրուֆ, 1957, Քոսեան Յ., Բարձր Հայք, հ. Ա (Կարին քաղաքը), Վիեննա, 1925, և ուրիշներ: Նահանգի ու նույնանուն քաղաքի կարևոր դերակատարությունը շեշտել են նաև օտարազգի գործիչները: Նրանցից Գրոտեն համարում էր, որ «միակ ճանապարհը Կենտրոնական Ասիայից ու Կովկասից դեպի Փոքր Ասիայի խորքը անցնում է Էրզրումով: Էրզրումն արդարացիորեն համարվում է Թուրքիայի արևելյան տիրույթների բանալին», տե՛ս Гротте, По Азиатской и Европейской Турции, М., 1904, էջ 97: Ռուսական բանակի գլխավոր շտաբի բնութագրումով էլ՝ «Կարինի բերդը միակ կետն է ամբողջ ասիական Թուրքիայում, որը միաժամանակ պաշտպանում է և՛ Անատոլիան, և՛ Սիրիան, և՛ կարգավորում ստրատեգիական շարժումը դեպի Միջագետք: Ընդհուպ մինչև Բոսֆորը այսպիսի մի ուրիշ կետ չկա», տե՛ս «Հայ ժողովրդի պատմություն», հ. 6, Ե., 1981, էջ 543: Ռուս զորավար Ա. Կայուբակինն էլ նշում է, որ «հնագույն ժամանակներից Էրզրումը ունեցել է հսկայական ռազմական նշանակություն: Որ քաղաքի աշխարհագրական դիրքը նրան տալիս է ոչ միայն տնտեսական ու քաղաքական մեծ նշանակություն, այլև այն դարձնում է անվիճարկելի «գլխավոր կենտրոն», տե՛ս Колубакин А., Материалы для описания Персии, Азиатской Турции и Закавказского края. Тифлис, 1888, с. 219. Ֆրանսիացի դիվանագետ Բերտելյուն էլ գտնում էր, որ «Էրզրում քաղաքը մի հզոր ամրոց է, որը թողնել թուրքերին, կնշանակի տեղավորել նրանց ուղիղ հայերի վզին», տե՛ս Джордж Ллойд, Правда о мирных договорах, т. 2, М., 1957, с. 426.

դրան ածանցյալ տարածքային, էթնիկական, հոգևոր-մշակութային ժառանգության և պատմական արդարության վերականգնման հարցերը, հիմնախնդիրն ու դրանց սերտորեն միահյուսված հայ ազգային-ազատագրական պայքարին ու Հայկական հարցին առնչվող իրադարձությունների համապարփակ ուսումնասիրությունը և պատմության դասերը հաշվի առնելը ոչ միայն ճանաչողական, այլև արդիական-քաղաքական կարևոր նշանակություն ունեն: Հայ ժողովրդին նետված մերօրյա մարտահրավերների և տարածաշրջանում ընթացող խորքային գործընթացների հետնախորքի վրա հիմնախնդրի լուսաբանումն ավելի քան կարևոր է:

XIX դարի վերջին քառորդին Կարինի նահանգում հայոց զարթոնքի և դրա շարունակության՝ ազատագրական պայքարի մասին մի քանի ուսումնասիրություններ են գրվել, սակայն հիմնախնդրի շատ կողմեր և առանձնահատկություններ այսօր էլ սպառիչ լուսաբանված չեն, մի մասն էլ վերագնահատման կարիք ունեն: Մասնավորապես, համակողմանիորեն չի ուսումնասիրվել ազգային-ազատագրական պայքարի սկզբնավորումը Կարինի նահանգում և դրանում կարինահայության դերակատարությունը: Գիտաթեմայի ուսումնասիրության գործում կարևորելով այդ իրողությունը, միաժամանակ խուսափել ենք փաստական նյութի ավելորդ կուտակումից, և աշխատել ենք կատարել փաստերի համակողմանի և անաչառ վերլուծություն: Մեր առջև խնդիր ենք դրել՝ ա) արժևորել խնդրո առարկա ժամանակաշրջանին նվիրված ուսումնասիրությունները, շեշտադրել այն հարցերը, որոնք մեր կարծիքով ոչ բավարար են լուսաբանված պատմագիտական գրականության մեջ, բ) արխիվային փաստաթղթերի, տպագիր սկզբնաղբյուրների, մամուլից քաղված նյութերի և ուսումնասիրությունների օգտագործմամբ ներկայացնել նշված ժամանակաշրջանում Կարինի նահանգի հայերի իրավազուրկ կացությունը, գ) ներկայացնել օսմանյան իշխանությունների հայակործան քաղաքականության արդյունքում վտանգված արևմտահայության կողմից ազատագրական պայքարին օժանդակելու դժվարությունները: Ուսումնասիրության խնդիրն է նաև փաստագրական հարուստ հենքով ներկայացնել ու անկողմնակալ գնահատել Կարնո աշխարհի տեղն ու դերը XIX դարի վերջին քառորդի հայ ազատագրական պայքարում: Ատենախոսության շարադրանքում բացահայտվում են հետևյալ պատմական իրողությունները.

1. XIX դարի վերջին քառորդին զարթոնք ապրող, հարստահարված ու կեղեքված կարինահայությունը, այլևս չկարողանալով հանդուրժել իշխանությունների ապօրինությունները և քուրդ, չերքեզ ու այլ հրոսակների կողմից ժողովրդի հարստահարություններն ու կեղեքումները, ոտքի ելավ պայքարելու իր իրավունքների համար: Այդ պայքարին նպաստող կարևոր քաղաքական նախադրյալներ էին Ազգային սահմանադրությունը և դրա օրգանական շարունակությունը դարձած ու կարինահայության կյանքում կարևոր դերակատարություն ունեցած 1872 թ. «Սահմանադրական հրահանգ գավառաց համար» և 1879 թ. «Ծրագիր բարենորոգմանց Կարին նահանգի» փաստաթղթերը: Թեև դրանք իրավական կարևոր փաստաթղթեր էին, բայց զուրկ լինելով գործադրվելու իրավունքից՝ հիմնականում մնացին թղթի վրա՝ միաժամանակ դառնալով հայ ազգային-ազատագրական պայքարի կարևոր նախադրյալներ:

2. Հասկանալով, որ անտեսելով Ազգային սահմանադրությունը և նրա հիման վրա ձևավորված ազգային հաստատությունների կամքն ու բարենորոգումների խոստումների միջոցով ժամանակ շահելով՝ թուրքերը Հայկական հարցում որևէ զիջման չեն գնալու, հայ ժողովուրդը որդեգրեց զինված պայքարի ուղին և դրան նախապատրաստվելու համար իրականացրեց կրթալուսավորչական, գաղափարա-քարոզչական և կազմակերպական ընդգրկուն աշխատանքներ: Արժևորելով դրանք՝ ներկայացվում են Կարինի հայության կարևոր դերակատարությունն ու մեծ ներդրումն այդ գործում:

3. Բացահայտվում են Կարինում հայ ազգային կուսակցությունների տեղական կառույցների ստեղծման և վաղ շրջանի գործունեության մանրամասները:

4. Շարադրելով կարինահայության՝ 1895 թ. կոտորածի մանրամասները՝ բացահայտվել են դրանց խորքային պատճառները, մարդկային և նյութական կորուստների չափը և պատուհասին դիմագրավելու կարինահայության փորձերը: Ընդգծել ենք, որ այդ կոտորածները թեև հաճախ մնում են 1915 թ. իրականացված Հայոց ցեղասպանության սովերում, սակայն դրանք թուրքերի տիրապետության բոլոր ժամանակներում կարինահայությանը հասցված ամենամեծ հարվածներն էին Մեծ եղեռնից առաջ:

5. Ներկայացնելով ֆիդայական պայքարի նախաքայլերը՝ ցույց տալ, որ այն առաջիններից մեկն սկզբնավորվեց հենց Կարինի նահանգում, իսկ այնուհետև տարածվեց ամբողջ Արևմտյան Հայաստանում: Հստակեցնել Կարնո աշխարհի ազատագրական կազմակերպությունների ու խմբակների և ֆիդայական խմբերի ունեցած ներդրումը, ներկայացնել կարևոր դերակատարություն ունեցած ֆիդայիներին, դեպի Երկիր զենք-զինամթերք փոխադրելու ուղիները, գնահատել կարնեցի ֆիդայիների սխրանքները, ցույց տալ այդ պայքարի ստվերոտ կողմերն ու անարդյունավետության պատճառները:

6. Շեշտել, որ XIX դարի վերջին քառորդում Կարինի հայության կյանքում տեղի ունեցած բոլոր կարևոր փոփոխությունները դիտարկվում են մեկ ամբողջության և օրգանական կապի մեջ ու ոչ միայն պայմանավորված են միմյանցով, այլև իրենց հերոսականությամբ ու դրամատությամբ նախադուռը եղան հետագա զարգացումների համար:

Ատենախոսությունը ժամանակագրական առումով ընդգրկում է XIX դարի վերջին քառորդը: Սակայն որոշ դեպքերում որևէ հարց ավելի խորքային, պատճառաբանված և հիմնավոր ներկայացնելու նկատառումով ժամանակագրական փոքրիկ շեղումներ ենք կատարել հատկապես, ազատագրական պայքարի նախադրյալներին անդրադառնալիս:

Ատենախոսությունը գրվել է պատմահամեմատական մեթոդով և քննական-վերլուծական մոտեցմամբ: Հարազատ մնալով գիտական ճշմարտությունը վեր հանելու սկզբունքին՝ փորձել ենք առաջնորդվել պատճառների վերլուծության և պատմական օրինաչափությունների հաշվառման սկզբունքով: Օգտագործված արխիվային փաստաթղթերի, տպագիր սկզբնաղբյուրների, հուշագրությունների, պարբերական մամուլի նյութերի, պատմագիտական ուսումնասիրությունների նկատմամբ ցուցաբերվել է քննական մոտեցում, համեմատվել, պարզաբանվել և վերլուծության են ենթարկվել բազմաբնույթ, երբեմն իրարամերժ փաստեր և տեսակետներ:

Ատենախոսության գիտական նորույթն ամենից առաջ այն է, որ XIX դարի վերջին քառորդին հայ ժողովրդի կյանքում տեղի ունեցած կարևորագույն իրադարձությունների լույսի ներքո հայ պատմագիտության մեջ առաջին անգամ համակողմանիորեն ներկայացված է ազգային-ազատագրական պայքարում կարինահայության

դերակատարության ամփոփ պատմությունը: Բացահայտվել է հայոց վերազարթոնքի ու ազատագրական պայքարի գաղափարական նախադրյալ սահմանադրական շարժման կոնկրետ դրսևորումը Կարինի նահանգում՝ 1879 թ. «Ծրագիր բարենորոգմանց Կարին նահանգի» փաստաթղթը ու նրանում տեղ գտած դրույթները: Նորովի է լուսաբանված Կարինում ստեղծված կրթամշակութային և ազատագրական խմբակների պատմությունը: Մանրամասն ներկայացված է ազգային կուսակցությունների տեղական մարմինների հիմնադրման ու գործունեության ընթացքը, և պարզաբանված են դրանց հետ առնչվող մի քանի վիճահարույց հարցեր: Տրված է Կարնո աշխարհում ֆիդայական պայքարի և կարնեցի ու Կարինում գործած նշանավոր ֆիդայիների հերոսական պայքարի պատմությունը: Լուսաբանված է 1895-1896 թթ. նահանգին պատուհասած կոտորածների պատմությունը ու տարածաշրջանի հայաթափման գործընթացը: Հայ պատմագիտության մեջ առաջին անգամ ներկայացվում է Համիդիե գնդերի կազմավորմանը զուգահեռ ստեղծված ոչ պակաս վտանգավոր «խաֆիէներ»-ի համակարգը (ինստիտուտը), որի նպատակն էր հայ ազգային-ազատագրական պայքարը ներսից քայքայելը:

Ատենախոսությունում պատմագիտության մեջ առաջին անգամ օգտագործված են արխիվային նորահայտ մի շարք փաստաթղթեր, ցայսօր ուշադրության չարժանացած վավերագրեր, նամակներ, ժամանակակիցների վկայություններ և մամուլում սփռված որոշ հրապարակումներ, որոնք հնարավորություն են տալիս ամբողջական պատկերացում կազմելու հիմնախնդրի մասին:

Ատենախոսության հիմնախնդրին վերաբերող աղբյուրագիտական նյութերն այնքան էլ շատ չեն: Կարինի նահանգում քննության առարկա ժամանակահատվածում տեղի ունեցող կարևոր իրադարձությունների՝ հայոց վերազարթոնքի, կրթամշակութային ու ազատագրական խմբակների հիմնադրման, հայկական կուսակցությունների տեղական մարմինների ստեղծման, 1890 թ. հունիսյան դեպքերի, հայության կոտորածների ու ֆիդայական պայքարի սկզբնավորման մասին ժամանակին հրատարակվել են կազմակերպությունների կանոնադրությունները, կուսակցությունների ծրագրային փաստաթղթերը, առկա են արխիվային վավերագրերի հավաքածուներ, ժամանակակիցների հուշագրություններ, ուսումնասիրություններ և այլն:

Տպագիր սկզբնաղբյուրները մեծ արժեք ունեն, սակայն առանց արխիվային վավերագրերի՝ ուսումնասիրվող թեմային վերաբերող լուրջ պատմագիտական ուսումնասիրություն հնարավոր չէ գրել: Մեր ուսումնասիրության շրջանակներում օգտվել ենք Հայաստանի ազգային արխիվի անձնական ծագում ունեցող վավերագրերի հավաքածուից⁶, հայ ազատագրական շարժումներին վերաբերող փաստաթղթերից⁷, տարբեր երկրների դեսպանների, հյուպատոսների, դիտորդների զեկուցագրերից ու ականատեսների վկայություններից, Կարինի նահանգում կատարված զարհուրելի դեպքերի նկարագրություններ պարունակող Էջմիածնի Ս. Լուսավորչական Սինոդի, Ամենայն հայոց կաթողիկոսի դիվանի⁸, արտասահմանից ստացված վավերագրական նյութերի⁹, Արտակ Դարբինյանի¹⁰, Անուշավան Տեր-Մկրտչյանի¹¹, Ապահ Պետրոսյանի¹², Հայկազուն Գալուստյանի¹³, ՀՅ Դաշնակցության¹⁴, Մկրտիչ Ներսիսյանի¹⁵, Եղիշե քահանա Գեղամյանի¹⁶, Սոցիալ-դեմոկրատ հնչակյան¹⁷ կուսակցության և այլ ֆոնդերից¹⁸:

Արխիվային կարևոր փաստաթղթեր են պարունակում նաև Եղիշե Չարենցի անվան Գրականության և արվեստի թանգարանի արխիվը¹⁹ և ՀՀ ԳԱԱ պատմության ինստիտուտում պահվող Լեոյի անձնական արխիվը²⁰:

Ատենախոսության համար կարևոր սկզբնաղբյուր են հանդիսացել վավերագրերի տպագիր ժողովածուները: ՀՅԴ Բոստոնի կենտրոնական արխիվում պահվող

⁶ Տե՛ս Հայաստանի ազգային արխիվ (այսուհետև՝ ՀԱԱ), ֆ. 314, ց.8, գ. 6, ց. 32, գ. 8:

⁷ Տե՛ս նույն տեղում, ֆ. 56, գ. 68, 70, ֆ. 57, ց. 5, գ. 3, ց. 17, ֆ. 402, ց. 1, գ. 24, 25:

⁸ Տե՛ս նույն տեղում, ֆ. 41, 56, 114 և այլն:

⁹ Տե՛ս նույն տեղում, ֆ. 420, ց. 16, գ. 8, 9, 12, ց. 81, գ. 214:

¹⁰ Տե՛ս նույն տեղում, ֆ. 424, ց. 2, գ. 116:

¹¹ Տե՛ս նույն տեղում, ֆ. 1396, ց. 1, գ. 1, 8, 15, 46, 66, տարբեր թերթեր:

¹² Տե՛ս նույն տեղում, ֆ. 453, ց. 1, գ. 59, 72:

¹³ Տե՛ս նույն տեղում, ֆ. 476, ց. 4, գ. 51:

¹⁴ Տե՛ս նույն տեղում, ֆ. 4047, ց. 2, գ. 9, թ. 132:

¹⁵ Տե՛ս նույն տեղում, ֆ. 818, ց. 1, գ. 23, 515:

¹⁶ Տե՛ս նույն տեղում, ֆ. 1296, ց. 1, գ. 51:

¹⁷ Տե՛ս նույն տեղում, ֆ. 1456, ց. 1, գ. 38, ց. 2, գ. 7, 9, 24:

¹⁸ Կան դեպքեր, երբ որևէ փաստաթղթի վերաբերյալ կոնկրետ հղում չենք արել, սակայն դրանք ժամանակաշրջանն ու տեղի ունեցող իրադարձությունները ճիշտ հասկանալուն և գնահատելուն շատ են նպաստել, ուստի ճշմարտության դեմ չմեղանչելու համար դրանք հիշատակել ենք աղբյուրների ցանկում: Դա վերաբերում է հատկապես Թ. Նազարբեկովի, Լ. Սարգսյանի, Վ. Շահպարտյանի և այլոց հուշերին:

¹⁹ Տե՛ս Եղիշե Չարենցի անվան Գրականության և արվեստի թանգարանի արխիվ (այսուհետև՝ ԳԱԹ), Թ. Ազատյանի ֆ., բաժ. XII, գ. 11507, 11508, 11512, 11519, Սրվանձտյանց Գ.-ի ֆ., II բ., գ. 65, Բ. Նավասարդյանի ֆոնդ, վավ. 9-111, թ. 38, «Թ» 55:

²⁰ Տե՛ս ՀՀ ԳԱԱ պատմության ինստիտուտ, Լեոյի անձնական արխիվ, ֆ.1, ց. 1, գ. 162, 175:

փաստաթղթերի դասակարգման և հրատարակման գործում հատկապես անգնահատելի է Հրաչ Տասնապետյանի²¹ և Երվանդ Փամբուկյանի²² կատարած հսկայածավալ աշխատանքը, որի արդյունքում տպագրվել են «Նիւթեր Հ.Յ. Դաշնակցութեան պատմութեան համար» մեծածավալ հատորները: Մեծ արժեք է ներկայացնում նաև Սիմոն Վրացյանի կազմած «Դիւան Հ.Յ. Դաշնակցութեան» երկհատորյակը²³:

Խորհրդային Հայաստանում փաստաթղթերի ու նյութերի հրատարակման գործում որոշակի ներդրում են ունեցել Մկրտիչ Ներսիսյանը²⁴, Զոն Կիրակոսյանը²⁵, իսկ Սփյուռքում՝ ՀՅԴ գործիչ Գաբրիել Լազյանը, հնչակյան գործիչներ Ստեփան Սապահ-Գյուլյանը և Արսեն Կիտուրը, ռամկավարներից՝ Վաչե Ղազարյանը²⁶: Կարևոր տպագիր սկզբնաղբյուրներ են թուրքական վավերագրերը²⁷, օտարալեզու մի քանի հրապարակումներ²⁸ և «Բանբեր Հայաստանի արխիվների» հանդեսում տպագրված որոշ վավերագրեր²⁹:

²¹ Տե՛ս Նիւթեր Հ.Յ.Դաշնակցութեան պատմութեան համար (այսուհետև՝ Նիւթեր...), խմբ.՝ Հր. Տասնապետեանի, հրատ.՝ Հ. Յ. Դաշնակցութեան, Պէյրուֆ, Ա. հատ., ք. Տպագր., 1984, Բ. հատ., ք. Տպագր., 1985, Գ. հատ., 1976, Դ. հատ., 1982:

²² Տե՛ս Նիւթեր..., խմբ.՝ Եր. Փամպուքեանի, հրատ.՝ Հ. Յ. Դաշնակցութեան, Պէյրուֆ, Ե., 2007, Զ. հատ., 2010, Է. հատ., 2010, Ը. հատ., 2011, Թ. հատ., 2012:

²³ Տե՛ս Դիւան Հ. Յ. Դաշնակցութեան (այսուհետև՝ Դիւան...), յաւելած «Հայրենիք» ամսագրի, հրատ., Պոսթըն, 1934, 395 էջ, Բ. հատ, Ե., 1938:

²⁴ Տե՛ս Հայերի ցեղասպանությունը Օսմանյան կայսրությունում (փաստաթղթերի և նյութերի ժողովածու), Մ. Ներսիսյանի խմբագրությամբ, Ե., 1991: Հարկ ենք համարում արձանագրել, որ Մ. Ներսիսյանի անձնական արխիվում հայտնաբերել ենք ատենախոսության թեմային առնչվող վավերագրեր, որոնք չեն ներառվել նրա կողմից հրատարակված փաստաթղթերի և նյութերի ժողովածուում:

²⁵ Տե՛ս Հայաստանը բուրժուական դիվանագիտության և սովետական արտաքին քաղաքականության փաստաթղթերում (1828-1923), Զ. Կիրակոսյանի խմբագրությամբ, Ե., 1972:

²⁶ Տե՛ս Լազեան Գ., Հայաստան եւ հայ դատը եւ ռուս յարաբերութիւններու լոյսին տակ, Գահիրէ, 1957, Տե՛ս նաև Յիսնամեակ Սօց. Դէմոկրատ Հնչակեան (1887-1937), խմբ.՝ Ստ. Սապահ-Գիւլեանի, Փրովիտէնս, 1938, Տե՛ս նաև Պատմութիւն Ա.Դ.Հնչակեան կուսակցութեան (1887-1962), Ա. հատ., խմբ.՝ Ա. Կիտուր, Պէյրուֆ, 1962, Տե՛ս նաև Ռամկավար ազատական կուսակցութիւն, հիմնական ծրագրեր, կանոնագրեր եւ վաւերագրեր, կազմեց՝ դոկտ. Վաչէ Ղազարեան, Պէյրուֆ, 1988:

²⁷ Տե՛ս Փափագյան Ա., Թուրքական վավերագրական նյութեր Օսմանյան կայսրության ոչ մահմեդական ժողովուրդների մասին (1839-1915 թվականներ), Ե., 2002:

²⁸ Տե՛ս Сборник договоров России с другими государствами, 1856-1917, М., 1952, տե՛ս նաև Современное состояние Османской империи, составил М. А. Убичини и П. де Куртейль, Санкт-Петербург, 1877, տե՛ս նաև Амфитеатров А., Армянский вопрос, С.-Петербург, 1906. տե՛ս նաև Коллюбакин А.. Материалы для описания Персии, Азиатской Турции и Закавказского края. Тифлис, 1888, տե՛ս նաև М. Макколь. Ответственность Англии перед Арменией (Положение армян в Турции до вмешательства держав в 1895 году, М., 1896, с. 131-211. տե՛ս նաև Ролен-Жекмен М. Г., Армения, армяне и турки. Положение армян в Турции до вмешательства держав в 1895 году, М., 1896, տե՛ս նաև Гасымлы М., Анатолия и Южный Кавказ в 1724-1920-е гг. в поисках исторической истины, М., «2014, տե՛ս նաև

Վավերագրերի բացակայության դեպքում սկզբնաղբյուրի արժեք ունեն նաև ականատեսների ու ժամանակակիցների հուշագրությունները, որոնք, արժեքավոր լինելով հանդերձ, աչքի են ընկնում կուսակցական կողմնակալությամբ, հաճախ նաև՝ ժամանակագրական անճշտություններով: Այդ ամենով հանդերձ, ուսումնասիրվող թեմայի վերաբերյալ արժեքավոր վկայություններ են պարունակում Մինաս Տեր-Մինասյանի (Ռուբեն)³⁰, Ռուբեն Խանազատի (Նշան Կարապետյան)³¹, Սեպուհի (Արշակ Ներսիսյան)³², Արամայիս Ազնավուրյանի³³, Արամայիս Տեր-Դանիելյանի (հանձին Ա. Տեր-Դանիելյանի պետք է նկատի ունենալ արշավանքը գլխավորող Սարգիս Կուկունյանին, քանի որ Արամայիսը միայն վերարտադրել է վերջինիս պատմածը)³⁴, Միհրան Տամատյանի³⁵, Արմենակ Եկարյանի³⁶ հուշերը:

Աղբյուրների արժեքավոր մյուս խումբը մամուլում հրապարակված նյութերն են: Դրանք երբեմն տվյալ պահի կամ իրադարձության անմիջական ազդեցության ներքո են գրվել, հաճախ էլ անձնավորված բնույթ ունեն, սակայն արժեքավոր տեղեկություններ են պարունակում կարևոր շատ իրադարձությունների ու գործիչների մասին: Հիմնախնդրի հետ կապված տարբեր հարցեր լուսաբանելիս օգտագործել ենք «Արարատ», «Արմենիա», «Արեւ», «Արևմուտք», «Արծուի Վասպուրականի», «Դրօշակ», «Լրաբեր

Karal E., Armenian questions (1878-1923), Ankara, 1975, տե՛ս նաև Hakobian A., Armenia and the war, London, 1917, տե՛ս նաև Wittin Alma, Abdul Hamid, The Shadow of God, London, 1940 և այլն:

²⁹ Տե՛ս Բանբեր Հայաստանի արխիվների, Ե., 1991, թիվ 3:

³⁰ Տե՛ս Ռուբեն, Հայ յեղափոխականի մը յիշատակները, Ե., «Ա հատ., 1990, Բ հատ., 1990, Գ հատ., 1990, Դ հատ., 1991, Ե հատ., 1991, Զ հատ., 1991:

³¹ Տե՛ս Խան-Ազատ Ռ., Հայ յեղափոխականի յուշերից, «Հայրենիք» ամսագիր, 1927, թիվ 1, էջ 122-135, թիվ 2, էջ 112-124, թիվ 8, էջ 60-72, թիվ 9, էջ 52-63, թիվ 10, էջ 56-72, թիվ 11, էջ 124-138, թիվ 12, էջ 122-129, 1928, թիվ 1, էջ 146-154, թիվ 2, էջ 91-100, թիվ 3, էջ 114-128, թիվ 4, էջ 123-135, թիվ 5, էջ 102-114, թիվ 6, էջ 126-141, թիվ 7, էջ 153-160, թիվ 8, էջ 134-148, թիվ 10, էջ 136-142, թիվ 11, էջ 146-156, թիվ 12, էջ 149-157, 1929, թիվ 3, էջ 117-125, թիվ 4, էջ 99-108, թիվ 5, էջ 102-114, թիվ 6, էջ 107-115, թիվ 7, էջ 147-160, նույնի Յիշողութիւններ, «Մշակ», Թիֆլիս, 13 փետրվարի, 1908, թիվ 35:

³² Տե՛ս Զօրաւար Սեպուհի յուշերը (մանկութիւն, պատանեկութիւն, երիտասարդութիւն), Հալէպ, 1992:

³³ Տե՛ս Արամայիս Ազնաւուրեանի յուշերը, գրի առաւ՝ Ե. Հայրապետեան, «Հայրենիք» ամսագիր, խմբ.՝ Ռ. Դարբինեան, Բոստոն, 1936, թիվ 9, էջ 99-110, թիվ 10, էջ 75-82, թիվ 11, էջ 115-122, 1937, թիվ 1, էջ 136-142, թիվ 2, էջ 135-144, թիվ 4, էջ 144-149, թիվ 5, էջ 135-141, թիվ 6, էջ 150-153, թիվ 8, էջ 133-141, թիվ 9, էջ 145-151, թիվ 10, էջ 156-160, թիվ 11, էջ 133-136, թիվ 12, էջ 126-136, 1938, թիվ 1, էջ 145-150, թիվ 2, էջ 118-123, թիվ 3, էջ 130-137, թիվ 4, էջ 158-163, թիվ 6, էջ 130-136, թիվ 7, էջ 137-140, թիվ 8, էջ 154-157, թիվ 9, էջ 140-143, թիվ 11, էջ 149-155, թիվ 12, էջ 134-139, տե՛ս նաև Ազնաւուրեան Ա., Առաջին յեղափոխական սուրհանդակները Ալաշկերտի մէջ, «Հայրենիք» ամսագիր, աշուն, 1968, թիվ 3, էջ 59-67:

³⁴ Տե՛ս Արամայիս (Տեր-Դանիելյան), Սարգիս Կուկունեան (կեանքն ու գործը), Դիւան Հ.Յ.Դաշնակցութեան, խմբ.՝ Ս. Վրացեան, Բ հատ., էջ 5-25:

³⁵ Տամատեան Մ., Իմ յուշերս, Պեյրուք, 1985:

³⁶ Եկարեան Ա., Յուշեր Արմենակ Եկարեանի, Պեյրուք, 1985:

հասարակական գիտությունների», «Ծաղիկ», «Կռունկ հայոց աշխարհին», «Հայրենիք», «Հնչակ», «Հորիզոն», «Մասիս», «Մամուլ», «Մուրճ», «Մեղու», «Մշակ», «Պատմաբանասիրական հանդես», «Վէմ», «Փարիզ», «Փորձ», «Московский телеграф» և այլ պարբերականների նյութերը:

Աղբյուրների վերջին խումբն էլ էլեկտրոնային կայքերն են³⁷: Դրանց հաղորդած տեղեկություններին թեև վերաբերվել ենք խիստ վերապահությամբ, սակայն երբեմն արժեքավոր տեղեկություններ ենք քաղել:

Ատենախոսության թեման ընդգրկող համապարփակ ուսումնասիրություն հայ պատմագիտության մեջ առ այսօր չի գրվել: Հրապարակի վրա առկա՝ Սփյուռքում և Հայաստանում ստեղծված գրականության մեջ այս կամ այն չափով լուսաբանվել են միայն հիմնախնդրի առանձին կողմեր: Թեմայի ներկայացմանը նպաստող ուսումնասիրություններ են Նաումանի³⁸, Հ. Հակոբ ծ. վ. Քոսյանի³⁹, Հակովբոս վ. Տաշյանի⁴⁰ և այլ հեղինակների⁴¹ գործերը, որոնք ավելի շատ տեղեկատվական բնույթ ունեն: Հիմնախնդիրը լուսաբանելու առաջին փորձերը կատարել են Հ. Նշկյանը⁴², Ղ. Չարըզը⁴³, Օ. Ճգնավորյանը⁴⁴, Տ. Կերեքցյանը⁴⁵, որոնք, բոլորն էլ լինելով կարնեցիներ, առաջնորդվել են հայրենակցական մղումներով, սակայն կատարել են արգասաբեր աշխատանք:

«Պաշտպան հայրենյացի» հիմնադիրներից և Գերագույն խորհրդի անդամ Կարապետի եղբայր Հ. Նշկյանը, խոսելով այդ կազմակերպության ստեղծման ու գործունեության մասին, ընդգծում է, որ թուրքական բռնատիրության դեմ ծավալված

³⁷ <http://www.aztagdaily.com/archives/190231,akunq.net/am/?p=2241,armeniancommunity.ge/News/954,http://www.armenianreligion.am/images/menus/752/pastatxter.pdf>, էջ 119, էջ 130, <http://www.slaq.am/arm/news/148100/>, և <http://www.genocide-museum.am,http://www.aztagdaily.com/archives/190231,http://www.armenianreligion.am/images/menus/752/pastatxter.pd>:

³⁸ Տե՛ս Նաուման, Էրզրում, Թիֆլիս, 1896:

³⁹ Տե՛ս Քոսեան Յակոբ ծ. վ., Բարձր Հայք, հ. Ա (Կարին քաղաքը), Վիեննա, 1925:

⁴⁰ Տե՛ս Տաշեան վ. Հ. Յակովբոս, Հայ բնակչութիւնը Սեւ ծովէն մինչեւ Կարին, պատմա-ազգագրական հարեանցի ակնարկ մը, Վիեննա, 1921:

⁴¹ Տե՛ս Կարնոյ յիշատակին, Վիեննա, 1869, Малама Я., Описание Эрзрумского жилайета, СПб, 1874:

⁴² Տե՛ս Նշկեան Յ., Առաջին կայծերը, էջ մը Կարնոյ զարթոնքէն, Ֆրեզնօ, 1930:

⁴³ Տե՛ս Չարըզ Ղ., Յուշամատեան Բարձր Հայքի: Կարինապատում, Պեյրուֆ, 1957:

⁴⁴ Տե՛ս Ճգնավորեան Օ., Հայ ազատագրական ճիգերը Արեւմտեան Հայաստանի մէջ, նիւթեր պատմութեան համար, տե՛ս ՀԱԱ, ֆ. 420, ց. 16, գ. 8, ց. 81, գ. 214:

⁴⁵ Տե՛ս ԳԱԹ, Բ. Նավասարդյանի ֆոնդ, վավ. 9-III, Կերեկցյան Տիգրան, Խաչատուր Գևորգ Կերեկցյանի կենսագրությունը, ձեռագիր:

շարժման ալիքն իր մեջ էր առել Արևմտյան Հայաստանի մեծ քաղաքներն ու Թուրքիայի հայաբնակ շատ այլ վայրեր⁴⁶ և մեծ ազդեցություն ունեցավ հայ ազատագրական պայքարի վրա: «Պաշտպան հայրենյացի» հիմնադիր Խ. Կերեքցյանի կենսագրությունն է ներկայացրել նրա եղբայր Տիգրան Կերեքցյանը⁴⁷: Այդ ձեռագիր հուշերում տալով կազմակերպության հիմնադրման ու բացահայտման համառոտ պատմությունը՝ հեղինակն անում է եզրակացություններ, որոնք ոչ բոլորն են քննություն բռնում:

Թիֆլիսի և Կ.Պոլսի արանքում գտնվող, «Հայաստանի կեդրոնական բարձունքին վրայ նստած» Կարինը, ըստ Ղ. Չարըզի, բնականաբար պիտի դառնար արևմտահայության խմորումների կարևոր կենտրոններից մեկը, որի «հայ կեանքը յուզող առաջին հասարակական ալիքը Ազգային Սահմանադրութեան հաստատումն էր եւ անոր խոստացած բարիքները»⁴⁸: Նշելով Սահմանադրության, Կարինի բարենորոգումների ծրագրի, «լոկ քաղաքական մեքենայութիւն մը»⁴⁹ 61-րդ հոդվածի ունեցած կարևոր դերակատարությունն ազատագրական պայքարի ելած հայության համար՝ Ղ. Չարըզն իրավացիորեն շեշտում է, որ հայության բոլոր խավերն էին մասնակցում այդ պայքարին, բայց հիմնական շարժիչ ուժն արհեստավորությունն էր:

«Ազգային Սահմանադրութեամբ արբեցած պոլսահայութեան եւ թուրք ու քուրդ իրական դժոխքի մեջտեղում» գտնվող կարինահայությունը հեղինակի դիպուկ բնորոշմամբ դարձավ հայկական «պահանջներուն կեդրոնը, հետեւաբար նաեւ՝ զանոնք առաջնորդողը»⁵⁰: Ընդգծելով Կարինի կարևոր դերակատարությունը՝ հեղինակը նշում է, որ սահմանադրությունը եղավ հայության հոգևոր-գաղափարական պայքարի մեկնակետը: Իսկ եկեղեցու խուզարկության առիթով տեղի ունեցած ցույցն ու դիմադրությունը, երբ «առաջին անգամն էր, որ հայու գնդակով եւ սուրով թուրք դիակներ կը մնային կռուի դաշտին վրայ»⁵¹, ազդարարեցին հետագա ռազմական պայքարի սկիզբը: Այնուհետև Ղ. Չարըզը նշում է, որ դրանց մասնակցած

⁴⁶ Տե՛ս Նշկեան Յ., նշվ. աշխ., էջ 27-29:

⁴⁷ Տե՛ս Կարեքցյան Տիգրան, Խաչատուր Գետրգ Կարեքցյանի կենսագրութ., ԳԱԹ, Բ. Նավասարդյանի ֆոնդ, վավ. 9-III, թ. 49:

⁴⁸ Տե՛ս Չարըզ Ղ., նշվ. աշխ., էջ 392:

⁴⁹ Տե՛ս նույն տեղում, էջ 402:

⁵⁰ Տե՛ս նույն տեղում:

⁵¹ Տե՛ս նույն տեղում, էջ 413:

գործիչներն ազատագրական պայքարի նախակարապետները եղան և «իրենց պատուաւոր տեղը պիտի ունենան հայոց պատմութեան մէջ»⁵²:

Հայ քաղաքական մտքի՝ քրիստոնյա մեծ տերութիւնների վրա հույսը դնելուց ձերբազատվել չկարողանալը ժողովրդի դժբախտության «առարկայական պատճառը» համարելով՝ Օ. Ճգնավորյանն էլ գտնում է, որ Արևմտյան Հայաստանում ազատագրական պայքարը նախապես ծրագրված չէր, այն ծնվեց ինքնաբոլի, որպես պատասխան օսմանյան դաժան բռնատիրության և «պատմական անձերու ճիգերով, որոնք ի յայտ եկած սխրագործութիւններ էին լոկ»⁵³ և հաղթական ավարտ չունեցան: Ձեռագիր անավարտ, բայց փաստառատ այս աշխատությունը⁵⁴, որում քարտեզներ և Կարինի բնակչության թվաքանակի ու կազմի մասին հարուստ տեղեկություններ կան, կարևոր աղբյուր է՝ խնդրո առարկա թեման ուսումնասիրելու համար: Չնայած որոշ դեպքերում դաշնակցամետ դիրքորոշումներին, ընդհանուր առմամբ զինված պայքարն առաջինը շեփորողի պատվին արժանացած կարնեցու մասին այս մեծածավալ աշխատությունը, որը զարմանալիորեն սպրդել է ուսումնասիրողների ուշադրությունից, հիմնականում անաչառ դիրքերից է գրված և կարևոր ճանաչողական ու աղբյուրագիտական արժեք ունի:

Հետագայում գրած իր հուշերում թեև հայտնած վիճելի այն տեսակետին, թե «Կարինում 1890 թ. հունիսի 8-ի ընդհարման գաղտնի զսպանակները գտնվում էին Կովկասում»⁵⁵, հիմնախնդրի լուսաբանման համար հետաքրքիր տեղեկություններ է հաղորդում Կարինի «Պաշտպան հայրենյացի» ղեկավար դեմքերից մեկի՝ Կարապետ Նշկյանի եղբայրը՝ Միսաք Նշկյանը:

Սփյուռքում հիմնախնդրի վերաբերյալ ուսումնասիրությունների մեծ մասը գրվել է ՀՅԴ գործիչներ Ս. Վրացյանի⁵⁶, Մ. Վարանդյանի⁵⁷, Գ. Գյուզալյանի⁵⁸, Ս.

⁵² Տե՛ս նույն տեղում, էջ 402:

⁵³ Տե՛ս Ճգնավորեան Օ., Հայ ազատագրական ճիգերը Արեւմտեան Հայաստանի մէջ, նիւթեր պատմութեան համար, տե՛ս ՀԱԱ, ֆ. 420, ց. 16, գ. 8, ց. 81, գ. 214, 2-3:

⁵⁴ Աշխատության մեջ աղյուսակներ կան, որոնցում ներկայացված են Կարինի բնակչության թվաքանակն ըստ քաղաքի թաղամասերի և փողոցների, ըստ կրոնական պատկանելության, վարժարանների աշակերտների քանակը և այլ արժեքավոր տվյալներ:

⁵⁵ Տե՛ս Նշկեան Մ., Ո՞վ փճացուց հայութիւնը, Ֆրէզնօ, 1920, էջ 14:

⁵⁶ Տե՛ս Վրացեան Ս., Կեանքի ուղիներով: Դէպքեր, դէմքեր, ապրումներ, Գահիրէ, 1955, նույնի՝ Վրացյան Ս., Բագրատ վրդ. Թավաքալյանի նամակները, «Հայրենիք», Բոստոն, 1933, հ. 12, թիվ 1, էջ 103-110, հ. 12, թիվ 2, էջ 98-112, 1934, հ. 12, թիվ 3, էջ 84-95:

Գյուլխանդարյանի⁵⁹, Վ. Վալադյանի⁶⁰ և այլոց կողմից: Դրանք ավելի շատ փաստագրական, հրապարակախոսական և կուսակցական բնույթ ունեն և անսխալականության մտայնություն, որը զգալիորեն խանգարել է խնդրի անաչառ լուսաբանմանը: Եվ այնուամենայնիվ, XIX դարի վերջին քառորդի ազատագրական պայքարի ու դրանում կարինահայության ունեցած դերակատարության լուսաբանման գործում անժխտելի է սփյուռքահայության կարևոր ներդրումը:

Սփյուռքում հիմնախնդրի առանձին հարցեր լուսաբանվել են պատմաքննական մոտեցմամբ աչքի ընկնող Գաբրիել Լազյանի⁶¹, Մուշեղ Եպիսկոպոս Սերոբյանի⁶², Կարո Սասունու⁶³, Լևոն Չորմիսյանի⁶⁴, Հրաչ Տասնապետյանի⁶⁵, Հակոբ Վարդիվառյանի⁶⁶, Հրանտ Գանգրունու⁶⁷, Սարգիս Իզմիրլյանի⁶⁸ և այլոց աշխատություններում:

Խորհրդային Հայաստանում հիմնախնդրի առանձին հարցեր առաջին անգամ լուսաբանվել են Լեոյի աշխատություններում⁶⁹: Հայ ազգային-ազատագրական շարժումների պատմության ուսումնասիրության հարցում խորհրդահայ պատմագիտությանը բնորոշ են եղել գաղափարական կաղապարները և քաղաքական

⁵⁷ Տե՛ս Վարանդեան Մ., Հ.Յ.Դաշնակցության պատմություն, Ա. եւ Բ. հատորներու միացեալ հրատարակութիւն (անձնանուններու եւ տեղանուններու ցանկերով հարստացած), Բ. հրատարակութիւն, Պեյրուֆ, 2013:

⁵⁸ Տե՛ս Գիւզալեան Գ., Հայ քաղաքական մտքի զարգացումը և Հ.Հ. Դաշնակցութիւնը, Փարիզ, 1927:

⁵⁹ Տե՛ս Գիւլխանդարեան Ս., Ազգային շարժումների դրդապատճառները ԺԹ դարում, Փարիզ, 1939:

⁶⁰ Տե՛ս Վ. Վալադեան, Տիգրան Օրոնեան, «Հայրենիք» ամսագիր, Բոստոն, թիւ 6, 1960, նոյնի՝ Վ., Քեռին, «Հայրենիք», 1959, թիւ 8, 11, 12, նոյնի՝ Հրոսակապետ Յունսոն, «Հայրենիք», 1958, թիւ 5, 11 և այլն:

⁶¹ Տե՛ս Լազեան Գ., Յեղափոխական դէմքեր (մտաւորականներ եւ հայդուկներ), Գահիրէ, 1945, տե՛ս նոյնի՝ Դէմքեր հայ ազատագրական շարժումէն, Գահիրէ, 1949:

⁶² Տե՛ս Սերոբեան Մ., Մեր պայքարը ազատագրութեան ուղիով (վերլուծումներ Հայկական հարցին շուրջ), Գահիրէ, 1948:

⁶³ Տե՛ս Սասունի Կ., Հրայրի դերը հայ ազատագրական շարժման մէջ (ակնարկ մը անոր յեղափոխական նկարագրին վրայ), Պեյրուֆ, 1964:

⁶⁴ Տե՛ս Չորմիսեան Լ., Համապատկեր արևմտահայոց մէկ դարու պատմութեան, Բ. հատ., 1878-1908 թթ., Պեյրուֆ, 1974:

⁶⁵ Տե՛ս Տասնապետեան Հ., Հ.Յ.Դաշնակցութիւնը իր կազմութենէն մինչեւ Ժ. Ընդհանուր ժողովը (1890-1924 թթ.), Աթէնք, 1988, նոյնի՝ Հ.Յ.Դաշնակցութեան կազմակերպական կառոյցի հոլովոյթը եւ այլ ուսումնասիրութիւններ, Պեյրուֆ, 2009:

⁶⁶ Տե՛ս Վարդիվառեան Հ., Մեծ երազի ճամբուն ուղեւորները եւ համապարփակ պատմութիւն Ռամկավար ազատական կուսակցութեան, հ. Ա, Նիւ Ճըրզի, 2015, և հ. Բ, Նիւ Ճըրզի, 2016:

⁶⁷ Տե՛ս Գանգրունի Հ., Հայ յեղափոխութիւնը Օսմանեան բռնատիրութեան դէմ (1890-1910), Պեյրուֆ, 1973:

⁶⁸ Տե՛ս Իզմիրլեան Ս., Դատումներ մեր հարիւրամեյ յեղափոխութեան մասին, անձնական յուշերուս ընդմեջէն, հատ. 1, 2, Պեյրուֆ, 1962, 1966:

⁶⁹ Տե՛ս Լէօ, Թիւրքահայ յեղափոխութեան գաղափարաբանութիւնը, հատ. Բ., Պարիզ, 1935, տե՛ս նաև Լեո, Անցեալից, Թիֆլիս, 1925:

շահարկումները, որոնք խոչընդոտում էին հիմնահարցի գիտական պատշաճ ուսումնասիրությունը: Իրավիճակը մասամբ փոխվեց 1956 թ. հետո, երբ գաղափարական կաղապարները որոշ չափով մեղմացան: Գրվեցին աշխատություններ, որոնցից առանձնանում են Մ. Ներսիսյանի⁷⁰, Ռ. Հովհաննիսյանի⁷¹, Վ. Պարսամյանի⁷² և Զ. Կիրակոսյանի⁷³ ուսումնասիրությունները:

Հայ ժողովրդի ազգային-ազատագրական պայքարի հիմնահարցերին նվիրված Մ. Ներսիսյանի աշխատությունը նոր խոսք էր օսմանյան տիրապետության տակ հեծող տառապյալ հայ ժողովրդի, նրա անհավասար, սակայն հերոսական պայքարի մասին: Հեղինակը զարգացրել է այն տեսակետը, որ արևմտահայության ազգային-ազատագրական պայքարն ունեցել է գերազանցապես ինքնապաշտպանական բնույթ, գոյատևման նպատակ, սակայն քիչ չեն եղել նաև ապստամբություններն օսմանյան բռնատիրության դեմ: Մ. Ներսիսյանի այս աշխատությամբ սկիզբ դրվեց հայ ժողովրդի ազգային-ազատագրական պայքարի գիտական ուսումնասիրությանը:

Ժամանակաշրջանի խոր իմացությամբ, հարուստ փաստական հենքով և առաջ քաշված հարցադրումներին տրված սպառիչ պատասխաններով առանձնացող Ռ. Հովհաննիսյանի ուսումնասիրությունը նոր ու սպառիչ խոսք է Կարինի «Պաշտպան հայրենյաց» կազմակերպության և դրան առնչվող այլ կառույցների ու խնդիրների մասին: Եթե բացառենք սոցիալ-դասակարգային դիրքերից պատմությունը մեկնելու պարտադրված դրսևորումը, ապա կարող ենք նշել, որ հեղինակին հիմնականում հաջողվել է անաչառ գնահատել պատմական ժամանակաշրջանն ու իրողությունները:

XIX դարի 70-80-ական թթ. արևմտահայության քաղաքական պատմությանը նվիրված երկհատոր ուսումնասիրությամբ Զ. Կիրակոսյանը փորձել է բացահայտել հայոց ազգային-ազատագրական պայքարի և օտար տերությունների դիվանագիտական հակամարտությունների առնչությունները, վեր հանել ազգային ինքնագիտակցման,

⁷⁰ Տե՛ս Ներսիսյան Մ., Հայ ժողովրդի ազատագրական պայքարը թուրքական բռնապետության դեմ 1850-1870 թթ., Ե., 1955: Ավելի ուշ այն վերահրատարակվեց, տե՛ս Հայ ժողովրդի ազատագրական պայքարը թուրքական բռնապետության դեմ 1850-1890 թթ., Ե., 2002:

⁷¹ Տե՛ս Հովհաննիսյան Ռ., Արևմտահայ ազգային-ազատագրական շարժումները և Կարինի «Պաշտպան հայրենյաց» կազմակերպությունը (XIX դարի 70-80-ական թթ.), Երևան, 1965:

⁷² Պարսամյան Վ., Հայ ազատագրական շարժումների պատմությունից: Ուսումնասիրություն և փաստաթղթեր, Ե., 1958:

⁷³ Տե՛ս Կիրակոսյան Զ., Բուրժուական դիվանագիտությունը և Հայաստանը (XIX դարի 70-ական թթ.), Ե., 1978, նույնի՝ Բուրժուական դիվանագիտությունը և Հայաստանը (XIX դարի 80-ական թթ.), Ե., 1980:

ինքնաճանաչման գործընթացի հանգամանքները: Աշխատությունը մեծապես նպաստել է Ռուսաստան-Օսմանյան կայսրություն-Անգլիա դիվանագիտական լաբիրինթոսում հայտնված անփորձ արևմտահայության անելանելի վիճակը պատկերացնելու, օգնել ճիշտ ըմբռնելու Կարինի կարևոր ռազմավարական նշանակությունը բոլոր կողմերի համար և այն տխուր իրողությունը, որ կարինահայությունը կորսվեց հենց այդ հակասությունների կիզակետում հայտնվելու արդյունքում:

Վերակառուցման և անկախության առաջին տարիներին հայ ազգային-ազատագրական պայքարին նվիրված ուսումնասիրություններով պատմագիտության մեջ նոր խոսք ասացին ավագ սերնդի որոշ ներկայացուցիչներ: Մյուս կողմից կոմունիստական գաղափարախոսության կաղապարներից ձերբազատված և թարմ ասելիքով հանդես եկավ պատմաբանների երիտասարդ սերունդը:

Թեմային անմիջականորեն առնչվում են Հովհաննես Զատիկյանի աշխատությունները⁷⁴, որոնք ներկայացնում են Կարինի նահանգի՝ XIX դարի երկրորդ կեսի սոցիալ-տնտեսական և քաղաքական կացությունը, նահանգի գավառների պատմությունը, ժողովրդագրությունը և այլ հարցեր:

XIX դարի վերջին քառորդի ազատագրական պայքարին առնչվող հիմնահարցերի խորագիտակ քննարկումներով և գիտական բարձր մակարդակով ու հիմնարար եզրակացություններով առանձնանում են ակադեմիկոս Հրաչիկ Սիմոնյանի ուսումնասիրությունները⁷⁵: Հիմնախնդրին որոշակիորեն առնչվող արժեքավոր աշխատություններ են հեղինակել Ա. Համբարյանը⁷⁶, Հ. Ղազարյանը⁷⁷, Է.

⁷⁴ Տե՛ս Զատիկյան Հ., Կարինի նահանգը XIX դարի երկրորդ կեսին, Ե., 2013, տե՛ս նույնի՝ Կարինի նահանգի հայ բնակչության, արևմտահայության, 1894-1896 թթ. կոտորածների, Մեծ եղեռնի զոհերի՝ թվաքանակի հարցի շուրջ, «ՊԲՀ», թիվ 1(125), էջ 143-151), տե՛ս նույնի՝ Կարնո նահանգի պատմությունից, «ԼՀԳ», 1991, թիվ 1, տե՛ս նույնի՝ Կարին քաղաքը որպես ռազմական խոշոր կենտրոն, «Հայոց բանակ», 2002, թիվ 1-2, տե՛ս նույնի՝ Կարինի բարենորոգումների ծրագիրը (1879 թ.), «ԲՀԱ», 1991, թիվ 3: Բնականաբար առանձին լույս տեսած հոդվածների դրույթների զգալի մասը տեղ են գտել նշված մենագրությունում, սակայն շատ տեսակետներ ու փաստական տվյալներ էլ դուրս են մնացել: Այդ պատճառով է, որ որոշ հոդվածներ առանձին ենք նշում:

⁷⁵ Տե՛ս Սիմոնյան Հ., Անդրանիկի ժամանակը, երկու գրքով, Ա գիրք, Ե., 1966, տե՛ս նաև Ազատագրական պայքարի ուղիներում, գիրք I, Ե., 2003, գիրք II, Ե., 2003, գիրք III, Ե., 2009, գիրք IV, Ե., 2010, գիրք V, Ե., 2013:

⁷⁶ Տե՛ս Համբարյան Ա., Հայ հասարակական-քաղաքական միտքը արևմտահայության ազատագրության ուղիների մասին, XIX դ. վերջ-XX դարի սկիզբ, Ե., 1990:

⁷⁷ Տե՛ս Ղազարյան Հ., Արևմտահայությունը ցեղասպանության նախօրյակին, Ե., 2001:

Կոստանդյանը⁷⁸, Ա. Խառատյանը⁷⁹, Ա. Մելքոնյանը⁸⁰, Վ. Պողոսյանը⁸¹, Հ. Պողոսյանը⁸², Ստ. Պողոսյանը և Կ. Պողոսյանը⁸³, Ս. Սարգսյանը⁸⁴, Կ. Եղիազարյանը⁸⁵, Խ. Ստեփանյանը⁸⁶ և այլ ուսումնասիրողներ: Իրենց շահեկան և բարձրարժեք աշխատություններում հայ ազգային-ազատագրական պայքարին, մասնավորապես ՀՅԴ-ի պատմությանը վերաբերող բազմաթիվ տեսական ու գործնական հարցեր են լուսաբանել Հ. Գևորգյանը⁸⁷, Գ. Խուդինյանը⁸⁸, Ա. Ներսիսյանը⁸⁹, Հ. Գրիգորյանը⁹⁰ և այլ հետազոտողներ:

Վերևում հիշատակված աղբյուրագիտական նյութի և պատմագիտական ժառանգության համակողմանի ուսումնասիրությունն ու քննահամեմատական վերլուծությունը թույլ են տալիս հիմնախնդրի վերաբերյալ ստեղծել ամբողջական և համակողմանի ուսումնասիրություն:

⁷⁸ Տե՛ս Կոստանդյան Է., Մկրտիչ Խրիմյան, հասարակական-քաղաքական գործունեությունը, Ե., 2000, տե՛ս նույնի՝ Ակնարկներ արևմտահայ մշակութային և հասարակական-քաղաքական կյանքի պատմությունից (19-րդ դարի 80-ական թվականներ), Ե., 2005, տե՛ս նույնի՝ Դրվագներ Մաղաքիա արքեպիսկոպոս Օրմանյանի կյանքից և գործունեությունից, Ե., 2015:

⁷⁹ Տե՛ս Խառատյան Ա., Դարձյալ արևմտահայերի սահմանադրության մասին, «ՊԲՀ», թիվ 2, 2008, էջ 84:

⁸⁰ Տե՛ս Մելքոնյան Ա., Ջավախքը XIX դարում և XX դարի առաջին քառորդին (պատմաքննական ուսումնասիրություն), Ե., 2003:

⁸¹ Տե՛ս Պողոսյան Վ., Հայոց ցեղասպանության առաջին փուլը ֆրանսիական պատմագրության և հասարակական մտքի գնահատմամբ (XIX դ. վերջ-XX դ. սկիզբ), Ե., 2005:

⁸² Տե՛ս Պողոսյան Հ., Զեյթունի պատմությունը, Ե., 1969:

⁸³ Տե՛ս Պողոսյան Ստ., Պողոսյան Կ., Հայկական հարցի և հայոց ցեղասպանության պատմություն, հ. առաջին, Ե., 2000:

⁸⁴ Տե՛ս Սարգսյան Ս., Հայ Սահմանադրական ռամկավար կուսակցություն (1908-1921 թթ.), Ե., 2009, տե՛ս նույնի՝ «Արմենիա» պարբերականը ազատագրական գաղափարախոսության ակունքներում, Ե., 2014:

⁸⁵ Տե՛ս Եղիազարյան Կ., Սարգիս Կուկունյանի արշավանքը, Եր., 2016, տե՛ս նույնի Սարգիս Կուկունյանը և նրա գլխավորած արշավանքը, «ՊԲՀ», 2000, թիվ 1, 18.

⁸⁶ Տե՛ս Ստեփանյան Խ., Ռուբեն Տեր-Մինասյան (կյանքը և գործը), Ե., 2008, տե՛ս նույնի՝ Ռուբեն Տեր-Մինասյան. պայքարի առաջին փորձառությունը, «ԲՀԱ», 2004, թիվ 1, էջ 144-149:

⁸⁷ Տե՛ս Գևորգյան Հ., Ազատագրական պայքարի ռազմավարությունը և էջեր նրա հերոսապատումից, Ե., 2012:

⁸⁸ Տե՛ս Խուդինյան Գ., Հայ Յեղափոխական Դաշնակցության ծնունդը, Ե., 2000, տե՛ս նույնի՝ Հ. Յ. Դաշնակցության քննական պատմություն (ակունքներից մինչև 1895 թվականի վերջերը), Ե., 2006: Հայ Յեղափոխական Դաշնակցության ծրագրի և կանոնագրի պատմությունից, «ԲՀԱ», Ե., 2002, թիվ 1, էջ 63-64: Տե՛ս նաև Հ.Յ. Դաշնակցության գործունեությունը Էրզրումի վիլայեթում 1890-1895 թթ., Հայոց պատմության հարցեր, Ե., 2003, էջ 57-65:

⁸⁹ Տե՛ս Ներսիսյան Ա., Զորավար Սեպուհ, Ե., 2006, տե՛ս նույնի՝ Ռուբեն, «Ապրող հերոսներ» մատենաշար, թիվ 4, Ե., 2007:

⁹⁰ Տե՛ս Գրիգորյան Հ., Հայ ազատագրական պայքարի մարտավարությունը 1885-1898 թթ., Ե., 2002:

ԳԼՈՒԽ I

ԿԱՐԻՆԻ ՆԱՀԱՆԳԸ XIX ԴԱՐԻ 80-ԱԿԱՆ ԹԹ. ԱԶԱՏԱԳՐԱԿԱՆ ՇԱՐԺՄԱՆ ԿԵՆՏՐՈՆ

1.1 Ազատագրական պայքարի զինված փուլի նախադրյալները

ա) Արևմտահայ Սահմանադրությունը որպես զինված պայքարի գաղափարական նախադրյալ

XIX դարի II կեսի հայոց պատմության հիմնախնդիրների մեջ առանձնակի տեղ են գրավում հայ ժողովրդի վերագարթոնքն ու դրա օրգանական շարունակությունը ազգային-ազատագրական շարժումը: Այն արդյունք էր և հետևանք թուրքական իշխանությունների օրեցօր խստացող սոցիալ-տնտեսական, հարկային և ազգային քաղաքականության: Ազատարար այդ պայքարի տեսական-գաղափարական նախադրյալներից մեկը եղավ արևմտահայության Սահմանադրական շարժումը, որը թեև շոշափելի ոչինչ չտվեց, սակայն տարրական իրավունքներից զուրկ արևմտահայությանն իր ուժերի նկատմամբ վստահություն ներշնչեց և փոփոխության պահանջ առաջացրեց: Արևմտահայ Սահմանադրական շարժման կենտրոնը մայրաքաղաք Կ.Պոլիսն էր, սակայն արձագանքներ ունեցավ նաև գավառներում, այդ թվում՝ Կարինում: Հենց Սահմանադրական շարժումը դարձավ նաև XIX դարի վերջի կարինահայության ազատագրական պայքարի հիմնաքարը:

Դեռևս 1856 թ. ընդունված միլլեթների վերակառուցման հաթերը շերիֆով⁹¹ հռչակվել էին առանց խտրականության բոլոր հպատակների կյանքի, պատվի ու գույքի ապահովություն և հավասարություն օրենքի առաջ: Այդ օրենքին համապատասխան

⁹¹ «Հաթեր-Շերիֆ» կոչվող հրովարտակը («Թանգիմաթ») հրատարակվել է սուլթան Աբդուլ Մեջիդի (1839-1861) օրոք: Թանգիմաթը բարեփոխումների իրականացման ծրագիր էր, որը կոչված էր զարգացնելու Օսմանյան կայսրության հետամնաց տնտեսությունը, ռազմական գործն ու մշակութային կյանքը: Թանգիմաթի հիմնադրույթները հռչակում էին առանց խտրականության բոլոր հպատակների կյանքի, պատվի և գույքի ապահովություն, հարկերի ու տուրքերի հավասար բաշխում, բոլոր հպատակների հավասարություն օրենքի առաջ, քրիստոնյաներին թույլատրվում էր ծառայել, և այլ ազատություններ: Դրանց մեծ մասը մնաց թղթի վրա: Տե՛ս Советская историческая энциклопедия, том 14, М., 1973, с. 163:

1856 թ. դեկտեմբերին Կ. Պոլսի հայերի Գերագույն ժողովը կազմեց հանձնախումբ՝ ազգային վարչության կանոնադրություն մշակելու համար:

Արևմտահայերի կրոնահամայնական կյանքը կարգավորող այդ կանոնադրության (Ազգային սահմանադրության) հեղինակներն էին Նիկողայոս Պալյանը, Նահապետ Ռուսինյանը, Գրիգոր Օտյանը⁹²: Այդ գործին ակտիվորեն մասնակցել են նաև Սերովբե Վիչենյանը (Սերվիչեն), Կարապետ Ութունյանը, Գրիգոր և Մկրտիչ Աղաթոն եղբայրները: Առանձնապես մեծ էր Ն. Պալյանի ներդրումը: Այդ փաստաթուղթը սահմանադրություն անվանելով⁹³ հեղինակները ոչ թե տուրք էին տալիս սնապարծությանը, այլ խնդիրն այն է, որ արևմտահայերենում «կանոնադրություն» և «սահմանադրություն» բառերը պարզապես հոմանիշներ են⁹⁴:

Երկար քաշքշուկից հետո՝ 1863 թ. մարտի 17-ին, կառավարությունը հաստատում է⁹⁵ ներածությունից («Հիմնական սկզբունք») և հինգ գլուխներից բաղկացած սահմանադրությունը⁹⁶: Մայրաքաղաքում տարաբնույթ հարցեր լուծելու համար ստեղծվում էին թաղային խորհուրդներ, իսկ գավառների գործերը տնօրինելու էին ազգային գավառական վարչությունները՝ տվյալ եկեղեցական թեմի առաջնորդի նախագահությամբ:

Ավելի շատ «կառավարության սովորական գործողություն, երբ փառավոր պիտակներ էին փակցվում դատարկ տուփերի վրա»⁹⁷ հիշեցնող սահմանադրությունը գործեց մինչև 1866 թ.: Որոշ ժամանակ արիեստական պատճառաբանությամբ

⁹² «Սահմանադրություն» է կոչվել Նահապետ Ռուսինյանի առաջարկով, քանի որ գրվել էր բելգիական սահմանադրության գլխավոր սկզբունքների հիման վրա՝ միաժամանակ կրելով 1848 թ. Ֆրանսիական հեղափոխության գաղափարների ազդեցությունը:

⁹³ Երբեմն սահմանադրության հեղինակներին քննադատել են այն բանի համար, որ նրանք հայ համայնքի կանոնադրությունը կոչել են «սահմանադրություն» հավակնոտ բառաեզրով, որը կարող է ունենալ միայն անկախ պետականություն ունեցող ժողովուրդը: Թուրքերեն տեքստում այն թարգմանված է «Նիզամնամեի միլլեթի էրմենիյան» (Հայ ազգի կանոնադրություն) և ոչ թե «կանունու էսասի» (սահմանադրություն):

⁹⁴ Տե՛ս Խառատյան Ա., Արևմտահայ սահմանադրական շարժումը: Արևմտահայերի ազգային սահմանադրությունը: Տե՛ս Հայոց պատմություն, հ. III, գիրք առաջին, էջ 365:

⁹⁵ Տե՛ս Սարուխան, Հայկական խնդիրն ու ազգային սահմանադրությունը Թուրքիայում (1860-1910), հ. Ա, Թիֆլիս, 1912, էջ 24-25: Այդ տարբերակը տե՛ս նաև՝ Սարուխան, Օսմանեան հայերի Ազգային սահմանադրությունը (1860-1910), տե՛ս «Արօր» հանդես, Թիֆլիս, 1910, թիվ 1, 2, 3, 4, 5, 6-7, 8-9-10, 12 և 1911, թիվ 1, 2-3, 4, 5-6, 7-8, 9 համարներում:

⁹⁶ Տե՛ս Նուրբեկյան Լ., Արևմտահայերի ազգային ժողովի հոգևոր գործառույթները, «ՊԲՀ», թիվ 4, 2011, էջ 93:

⁹⁷ Տե՛ս Րոլեն-Ջեկմեն Մ., Армения, армяне и трактаты. Положение армян в Турции до вмешательства держав в 1895 году, М., 1896, էջ 18:

դադարեցվեց, իսկ այնուհետև 1868 թ. մարտին Գր. Օտյանի և Սերվիլիենի ջանքերով հաջողվեց առանց վերաքննության վերագործադրել այն⁹⁸: Սահմանադրությունը, որի նպատակն էր կարգավորել պետության և արևմտահայության փոխհարաբերությունները, թերություններով ու անկատարությամբ հանդերձ առաջադիմական երևույթ էր արևմտահայության կյանքում: Գործադրման ամենաբեղուն շրջանում՝ 1870–90-ական թթ., Ազգային ժողովը բազմիցս քննարկել է նաև գավառահայության խնդիրները:

Սահմանադրություն-կանոնադրությունը կարգավորում էր հայ ժողովրդի մշակութային, կրոնական ու հասարակական գործերը: Իրավականորեն ձևակերպում էր ժողովրդի և նրա առաջադեմ մտավորականության պայքարի արդյունքները հայ հանրության վարչությունն ազատականացնելու, նրա մտավոր ու մշակութային զարգացումն ապահովելու ասպարեզում: Դրա շնորհիվ մայրաքաղաքում և գավառներում ստեղծվեցին ազգային բազմաթիվ դպրոցներ, կրթական ու հասարակական կազմակերպություններ, հիմնվեցին մամուլի նոր օրգաններ: Հայ հանրության վարչության մեջ հոգևորականության դերի թուլացումը և աշխարհիկ հարաբերությունների զարգացումը, որի միջոցով օսմանիզմի գաղափարախոսները փորձում էին խարխուլել հայերի ազգային ինքնությունը թուրքական զանգվածի մեջ՝ նրա ծուլումը նախապատրաստելու նպատակով, հուսախաբ արեցին այդ նույն գաղափարախոսներին: Իր ամբողջ կանոնադրական բնույթով հանդերձ՝ սահմանադրությունը սնուցում էր ազգային ինքնորոշման տրամադրությունները, և դա այն անսպասելի իրողությունն էր, որ պետք է ընդունեին օսմանյան բարենորոգիչները:

XIX դարի երկրորդ կեսին կայսրության հպատակ ժողովուրդներին, այդ թվում նաև արևմտահայությանը, համակել էր պայքարի ու ազատագրական ոգին: Դրա առաջին դրսևորումը եղավ Սահմանադրական շարժումը: Դրա համար էլ օսմանյան իշխանություններն ամեն կերպ խոչընդոտում էին Ազգային սահմանադրության կիրառումը, իսկ 1896 թ. Աբդուլ Համիդ II-ը արգելեց այն⁹⁹:

⁹⁸ Մ. Խրիմյանի ժամանակից սկսած՝ Ազգային ժողովը զբաղվել է նաև գավառական հարստահարությունների խնդրով, կազմել և կառավարություն ներկայացրել տեղեկագիր: Այդ աշխատանքներն առավել հետևողականությամբ արժարժվեց Ներսես Վարժապետյանի պատրիարքության (1874-1884) տարիներին: Սահմանադրության շրջանի կարևոր հարցերից մեկը բարենորոգումների խնդիրն էր:

⁹⁹ Ավելի ուշ՝ 1908 թ., կրկին արտոնվելով, Ազգային սահմանադրությունը գործել է մինչև Առաջին աշխարհամարտը, երբ ազգային մարմինների անդամների մեծ մասը դարձան Մեծ եղեռնի զոհ:

Սահմանադրությունն արևմտահայության ծանր վիճակը ոչնչով չփոխեց: Բռնաճնշումները, սոցիալ-քաղաքական ու ազգային հալածանքները ոչ միայն շարունակվում էին, այլև օրեցօր ավելի էին խստանում: Այդ ամենին հակադարձելու և այդ հարձակումներից պաշտպանվելու համար հայ ժողովուրդն, այլ ելք չտեսնելով, պարզեց ազգային-ազատագրական պայքարի դրոշը և դուրս եկավ պայքարի: Այդ պայքարի առաջնագծում էր Օսմանյան կայսրության հայաշատ նահանգներից Կարինի հայությունը, որտեղ թեև հայությունը բնակչության բացարձակ մեծամասնություն չէր կազմում, սակայն համեմատաբար կազմակերպված էր և նպատակասլաց:

Երկրում ծայր առած Սահմանադրական շարժման արգասիք և անբաժանելի մասն են կազմում 1872 թ. մշակված «Սահմանադրական հրահանգ գավառաց համար»¹⁰⁰ և «Կարինի բարենորոգումների ծրագիրը» փաստաթղթերը:

1868 թ. պատրիարք ընտրված Մ. Խրիմյանն աշխատանքներ ձեռնարկեց սահմանադրությունը գավառներում գործադրելու ուղղությամբ: Գավառահայության աղերսագին դիմումներին բավարարություն տալու նպատակով կազմվեց «Սահմանադրական հրահանգ գավառաց համար» փաստաթուղթը¹⁰¹, որտեղ որոշակիություն էր մտցվում գավառական ընդհանուր ժողովների և տեղական իշխանությունների հետ հարաբերությունների ասպարեզում: Ըստ էության եթե Ազգային սահմանադրությունը կարող ենք դիտարկել արևմտահայոց կենտրոնական, ապա «Սահմանադրական հրահանգ գավառաց համար»-ը՝ տեղական կառավարման համակարգերը կարգավորող կանոնական նորմեր:

Սահմանադրական շարժման հիմնական նպատակն արևմտահայ կյանքի տնտեսական և իրավական բարեփոխումն էր: Այս տեսանկյունից այդ նույն շարժման արդյունք էր նաև Կարինում մշակված բարենորոգումների ծրագիրը (այն գրվել է 1879 թ.)¹⁰², որը ճիշտ կլինի վերլուծել Սահմանադրական շարժման հետ անմիջական

Սահմանադրության գործունեությունը վերջնականապես կասեցվել է հանրապետական Թուրքիայում (թեև որոշ դրույթներ ներկայումս դեռ կիրառվում են):

¹⁰⁰ Տե՛ս Սահմանադրական հրահանգ գավառաց համար, Կ. Պոլիս, 1872:

¹⁰¹ Տե՛ս նույն տեղում:

¹⁰² Մեր որոնումները ՀԱԱ-ում, Մատենադարանում և ԳԱԹ-ում անարդյունք եղան: Փաստաթղթի բնօրինակը, որը, «Փորձ» ամսագրի հավաստման համաձայն («...դորա հարազատ պատճեններ արժան համարեցինք հրապարակ հանել»), գոյություն է ունեցել, մեզ չհաջողվեց գտնել, ուստի օգտագործում ենք Լեոյի «Հայոց հարցի վավերագրերը» գրքում (տե՛ս Լեո, Հայոց հարցի վավերագրերը, Թիֆլիս, 1915, էջ

փոխկապակցվածության մեջ: Ավելին, ծրագիրը Սահմանադրական շարժման անմիջական արդյունք դիտելը հնարավոր է դարձնում առավել ճիշտ պատկերացում կազմել այդ շարժման արդյունքի մասին, ավելի պարզ ու հստակ է դարձնում յոթ տասնամյակ տևած պայքարի գաղափարական աճի պատկերը, որն, ինչ խոսք, 1863 թ. սահմանադրության համեմատությամբ առաջադիմական երևույթ էր: Ծրագիրն իր պահանջների ու առաջադրված խնդիրների առումով մի քայլ առաջ էր ինչպես սահմանադրության, այնպես էլ հրահանգի համեմատությամբ և հենվում էր 1876 թ. թուրքական սահմանադրության ու Բեռլինի Համաժողովի ընձեռած իրավունքների վրա: Սահմանադրությունը, Հրահանգը և Կարինի բարենորոգումների ծրագիրը¹⁰³ նույն շարժման բաղկացուցիչ մասերն են, դրա զարգացման փուլերը: Բարենորոգումների ծրագիրը բաղկացած է առաջաբանից, քառասունվեց հոդվածներից ու վերջաբանից:

Հեղինակներն առաջաբանում, դիմելով Բ. Դռան կոմիսարին, հույս են հայտնում, որ, ժամանելով «Հայաստան աշխարհ», նա կիրագործի այն բոլոր միջոցառումները, որոնք «զորս տեղական պիտոյքը կը պահանջեն»¹⁰⁴, քանի որ երկար տարիներ, հակառակ շատ խոստումների, երկրամասում ոչ մի բարենորոգում չի իրականացվել: Նահանգի անմխիթար կացությունը ներկայացնելով՝ ծրագրի հեղինակներն ավելացնում են, որ այդ ամենին նպաստել են տեղական պաշտոնյաներն իրենց «ապիկար և անհմուտ», «իրենց անձի քան երկրի» համար ծավալած գործունեությամբ: Նրանցից շատերը, ընդգծում է փաստաթուղթը, պատահական ու շահամոլ մարդիկ են: Ստացվում է այնպես, որ կառավարությունը «միշտ մարդու համար պաշտոն փնտռած է և ոչ պաշտոնի համար մարդ»¹⁰⁵: Ավելին, տառաճանաչությունից զուրկ մահմեդական պաշտոնյաները, նույնիսկ «քրդերը և նոցա նման վայրենի ցեղերն են իսկ, որք երկրին

135) և Հ. Զատիկյանի հրապարակման մեջ (տե՛ս Զատիկյան Հ., Կարինի բարենորոգումների ծրագիրը (1879 թ.), ԲՀԱ, 1991, թիվ 3, էջ 185-200) տեղադրված տարբերակները:

¹⁰³ «Փորձ»-ի խմբագրությունը տեղեկացնում է. «...ծրագիրը, որ մեր Կարնեցի ազգայինքը պաշտոնապես ներկայացրել են Օսմանեան Հայաստանի կոմիսարների, եթե բոլորովին կամ մասամբ, միայն թղթի վրա էլ մնալու լինի, այնուամենայնիվ դորա ներկայացումն իսկ նշանավոր երևույթ է՝ իբրեւ բուն ժողովրդական ձգտումների արտահայտութիւն, վասնորո ձեռք բերելով դորա հարազատ պատճենը՝ արժան համարեցինք հրապարակ հանել այն:

¹⁰⁴ Տե՛ս Լեո, Հայոց հարցի վավերագրերը, Թիֆլիս, 1915, էջ 135:

¹⁰⁵ Տե՛ս նույն տեղում, էջ 136:

պատուհաս եղած են միշտ, ամենակարևոր պաշտոններու կանչված են», այն դեպքում, երբ «որ մի հայազգի արժանավոր անձի հանձնված չէ ցարդ նույնպիսի մի պաշտոն»¹⁰⁶:

Դատարանները միշտ գործում էին շարիաթի օրենքներով, ուստի «անհնար է, որ քաղաքական օրենքը անարգել գործադրվի դատարանանց մեջ»¹⁰⁷: Նույնպիսի վիճակում է նաև ոստիկանությունը, որը կարգ ու կանոն պաշտպանելու փոխարեն, «հաճախ ինքն է եղած հարստահարիչ, հարստահարիչին պաշտպան և քաջալերիչ»¹⁰⁸: Ծրագրում նշվում է նաև, որ անօրինական հարկահավաքությունը զանազան շահախնդրությունների համար լայն դռներ է բացում: Այնուհետև խոսվում է հայ գյուղացու հողագրկման, իր աշխատանքի արդյունքից մաս չունենալու, դատարանների կողմից հափշտակումներն արդարացնելու, հարստահարություններին ուղեկից դաժանությունների մասին: Որպեսզի Վարչական ապարատը հարազատանա և ծառայի ժողովրդին, ծրագրում առաջարկվում էր հայկական նահանգներում նահանգապետից սկսած մինչև տեղական պաշտոնյաներ հայացնել:

Ծրագրի վերջաբանում լավատեսորեն և չարդարացված աներեր հավատով նշվում է, որ կառավարությունը «հաստատապես որոշած և ձեռնարկած է բարվոքել մեր ազգին ներկա աղետալի վիճակը, որուն ազգային իրավունքները այսքան տարիներե ի վեր ոտնակոխ լինելէն չարաչար և անընդհատ տառապած է»¹⁰⁹: Նույն ոգով շարունակելով՝ ծրագրի հեղինակները շեշտում են, որ իրենք, համոզված լինելով, «թե տերության և ժողովրդյան զորությունն ու մեծությունը ուրիշ կերպով չկրնար գոյանալ և հաստատ մնալ, եթե ոչ այս այժմու ապարդյուն հողի դրության բարեփոխությամբը»¹¹⁰, այդ պատճառով են գրել և կայսեր ուշադրությանը ներկայացրել այս ծրագիրը:

Ակներև է, որ այս ծրագրի հիմնական դրույթները բխում են 1863 թ. սահմանադրության ու գավառների սահմանադրական հրահանգի հիմնական նորմերից, կիսում դրանց գաղափարները և կատարում արժեքավոր լրացումներ: Նշենք նաև, որ 1863 թ. սահմանադրության, 1872 թ. «Հրահանգի», 1879 թ. Կարինի բարենորոգումների ծրագրի ընդհանրությունն ակնհայտ է, վերջնական նպատակի ձգտումն՝ անսքող,

¹⁰⁶ Տե՛ս նույն տեղում, էջ 137:

¹⁰⁷ Տե՛ս նույն տեղում:

¹⁰⁸ Տե՛ս նույն տեղում, էջ 139:

¹⁰⁹ Տե՛ս Զատիկյան Հ., Կարինի բարենորոգումների ծրագիրը (1879 թ.), «ԲՀԱ», 1991, թիվ 3, էջ 198:

¹¹⁰ Տե՛ս նույն տեղում, էջ 198-199:

դրանք շատ են առնչվում կորցրած տնտեսական ու քաղաքական իրավունքները հետ ստանալու գաղափարին: Այսինքն՝ ենթադրում ենք, որ ծրագրի հեղինակները քաջածանոթ են եղել առաջին երկու փաստաթղթերի բովանդակությանը և ձգտել են խորացնել դրանցում եղած հայանապաստ նորմերը: Նաև զարմանալի է, որ Կարինի բարենորոգումների այս ծրագիրն առանձնապես չի արժանացել ուսումնասիրողների ուշադրությանը¹¹¹ և չի ստացել իր արժանի գնահատականը: Նրա առաջին արժևորող «Փորձ» ամսագիրը զարգացնում է այն տեսակետը, թե կարևորն այն չէր, թե ծրագիրը կգործադրվեր, կունենար ակնկալվող արդյունքը, այլ կարևորը նրա թողած ազդեցությունն էր, որովհետև «դորա ներկայացումն իսկ նշանավոր երևույթ է՝ իբրև բուն ժողովրդական ձգտումների արտահայտություն...»¹¹²:

1863 թ. սահմանադրությունը, գավառների սահմանադրական հրահանգը, Կարինի բարենորոգումների ծրագիրը՝ իբրև նույն շարժման բաղկացուցիչ մասեր, վկայում են արևմտահայության ազգային ու քաղաքական ինքնագիտակցության աճի մասին: Այդ հիմնաքարերի վրա հետագայում կառուցվեց ազգային համախմբման, միասնության ու արևմտահայ ազատագրության գաղափարախոսությունը: Նույն հենքի վրա էլ թափ հավաքեց արևմտահայ ազատագրական շարժումը, որի հատկապես սկզբնական մասում իր մեծ դերակատարությունն ունեցավ կարինահայությունը:

Դիտարկելով Սահմանադրական շարժումը անընդհատական զարգացման և փոփոխությունների համատեքստում՝ նկատելի է դառնում, թե հատկապես վերջին փաստաթղթում այդ գործընթացն ինչ կարևոր ու խոր առաջընթաց է ապրել: Թերություններով հանդերձ՝ Ազգային սահմանադրությունը և նրանից բխող «Սահմանադրական հրահանգ գավառաց համար» և «Կարինի բարենորոգումների ծրագիրը» նոր և առաջադիմական երևույթ էին արևմտահայ կյանքում:

Ամփոփելով նշենք, որ Ազգային սահմանադրությունն ազգային և հոգևոր-մշակութային փոխհարաբերությունների նոր փուլ էր, որը արևմտահայությանն իր ուժերի նկատմամբ վստահություն ներշնչեց, դարձավ ազատագրական գաղափարախոսության ամուր հիմնաքարը: Սահմանադրության շնորհիվ արևմտահայությունը ճեղքում էր կրոնական համայնքի կաղապարները և իր վարչությունը կազմակերպում

¹¹¹ Միակ բացառությունը Հ. Զատիկյանի վերոնշյալ հրապարակումն է:

¹¹² Տե՛ս «Փորձ», 1879, № 9, էջ 181:

քաղաքակիրթ իրավական նորմերի շրջանակներում: Այն ազգային և հոգևոր-մշակութային փոխհարաբերությունների նոր փուլ էր նշանակելու արևմտահայ կյանքում: Իրավականորեն ձևակերպում էր ժողովրդի և նրա առաջադեմ մտավորականության պայքարի արդյունքները, հայերին ընձեռված բողոքելու իրավունքով հող էր նախապատրաստում ազգի ազատ ապրելու՝ ազգային ինքնորոշման իրավունքի ուղղությամբ պայքարելու համար: Միևնույն ժամանակ Սահմանադրական շարժումը նպաստեց արևմտահայ գաղափարական պայքարը գործնականի՝ Զեյթունի 1862 թ. զինված ապստամբության վերածելու համար: Այսինքն՝ եթե Սահմանադրական շարժումը եղավ XIX դարում արևմտահայ զարթոնքի ու ազգային-ազատագրական շարժման գաղափարական մեկնակետը, ապա Զեյթունի 1862 թ. ապստամբությունը՝ զինված պայքարի:

բ) Զեյթունի 1862 թ. ապստամբությունը

XIX դարի կեսերից կայսրությունում ծայր առած հպատակ ժողովուրդների ազգային-ազատագրական շարժումները Բ. Դուռը ոչ միայն դաժանորեն ճնշեց, այլև դիմեց մի շարք կտրուկ միջոցների, որպեսզի նոր ապստամբություններ թույլ չտա: Ակնհայտ էր դառնում, որ օսմանիզմի դրույթները միայն արտաքուստ էին ենթադրում բարեփոխումների անհրաժեշտությունը, բայց իրականում գործադրվում էին հպատակ ժողովուրդների ծուլման քաղաքականությունն իրականացնելու համար:

Իշխանությունների տեսադաշտից, բնականաբար չէր կարող դուրս մնալ արևմտահայությունը, որի ներսում ևս Սահմանադրական շարժման հենքի վրա արդեն պարարտ հող էին գտել ազատասիրության սերմերը: Ձգտելով կանխել ազատախոհական շարժումներն արևմտահայերի մեջ՝ Բ. Դուռն սկսեց աստիճանաբար սահմանափակել և ոչնչացնել հայկական ինքնավարության վերջին մնացորդները՝ նախ և առաջ վերացնելով Զեյթունի կիսանկախ դրությունը¹¹³:

¹¹³ Դեռևս 1626-1627 թթ. սուլթան Մուրադը Զեյթունի գավառակին տրված ֆերմանով տեղի հայ բնակչությանն ազատել էր գլխահարկից և պարտավորեցրել անհամեմատ թեթև տարեկան՝ 15.000 դահեկան տուրք վճարել Այա Սոֆիա մզկիթին՝ իբրև կանթեղների ձեթի վճար: Հարկի այդ չափը հիմնավորելու համար անհրաժեշտ էր ցույց տալ հայ բնակչության միևնույն թվաքանակը. «Միշտ 78.000-ի անձանց չափ ցուցուցած են թիւը», իսկ տների քանակը՝ 3.000-ի, (տե՛ս Զեյթունի պատմագիրը, Պուլնոս Այրէս, 1960, էջ 135):

Թուրքական իշխանությունները մի քանի անգամ փորձել էին ծնկի բերել զեյթունցիներին, սակայն վերջիններս միշտ հաղթող էին դուրս եկել: Վախենալով, որ այն կարող է հայ ազատագրական շարժման կենտրոն դառնալ՝ իշխանությունները հարձակումներ ձեռնարկեցին Զեյթունի վրա, որին ի պատասխան սկսվեց 1862 թ. Զեյթունի զինված ապստամբությունը¹¹⁴: Չնայած լեռնականները անօրինակ սխրանքներ գործեցին, սակայն ուժերը խիստ անհավասար էին, և զեյթունցիները պարտվեցին ու փաստորեն կորցրին կիսանկախ կարգավիճակը: Բայց ապստամբության շնորհիվ հնարավոր եղավ պահպանել Կիլիկիայի հայության ֆիզիկական գոյությունը: Բացի այդ, ապստամբությունը կարևոր նշանակություն ունեցավ հայության ազգային ինքնագիտակցության բարձրացման, համախմբման և թուրքական բռնություններին ուժով հակադրվելու մտայնության տարածման համար: Հատկանշական էր 1862 թ. օգոստոսին հայերի բազմամարդ ցույցը Կ. Պոլսում, երբ ցուցարարները պահանջում էին իշխանություններից վերջ տալ Զեյթունը ուժով հնազանդեցնելու փորձերին և վերահաստատել արևմտահայերի դադարեցված սահմանադրությունը: Ըստ Փարիզում հրատարակվող «Փարիզ» թերթի՝ Զեյթունի օրինակին հետևելով՝ իսկական ճակատամարտի էր վերածվել Վանում հայերի զինված ընդհարումը թուրքերի հետ¹¹⁵: Մուշում հայերը զինված բախումներ ունեցան հայկական գյուղերն ասպատակող քրդերի հետ և այլն:

Զեյթունի ապստամբությունը մեծապես խթանեց նաև հայության ազատագրական ծագումները, աննախընթաց չափերով բարձրացրեց նրա ազգային ինքնագիտակցությունը: Հայ մամուլը Զեյթունի իրադարձությունները որակում էր իբրև կարևոր հանգրվան՝ օսմանյան բռնակալության դեմ ուղղված ազատագրական պայքարի գործընթացում: Սվաճյանի «Մեղուն» հիմնավորում էր զեյթունցիների պայքարի

¹¹⁴ Պետք է փաստել, որ 1862 թ. Զեյթունի հերոսամարտն ավելի շուտ ապստամբության, քան ինքնապաշտպանական բնույթ ուներ, թեև նշված երկու հասկացություններն էլ օգտագործվում են համապատասխան գրականության մեջ: Հարկեր չվճարելը և օսմանյան տիրապետության պայմաններում այդպիսի իրավունք ձեռք բերելու համար զինված պայքարը Բ. Դռան թելադրանքով զեյթունցիներին պատերազմ հայտարարած Մարաշի փաշայի զորքերի դեմ ոչ այլ ինչ էր, եթե ոչ բացահայտ ապստամբություն: Բնականաբար, ապստամբությունն իրականացվում էր նաև ինքնապաշտպանական մարտերով, որը նախ և առաջ զեյթունցիների՝ իրենց վաղեմի կիսանկախությունն օսմանյան ոտնձգություններից պաշտպանելու նպատակ ուներ: Բայց դրանից «ապստամբություն» որակումը չի կարող փոխվել:

¹¹⁵ Տե՛ս «Փարիզ», 1862, 28 փետրվարի, 28 մարտի:

արդարացիությունը¹¹⁶: Կ. Պոլսում Կ. Փանոսյանի հայատառ «Մյունստրի Էրճիաս» («Արգեստի մունեստիկ») թերթը հոդված տպագրեց, որտեղ պարսավում էր Ջեյթուն արշավող Ազիզ փաշային՝ անվանելով նրան «փարավոնական բարբարոս», որի համար թերթն ընդմիշտ փակվեց¹¹⁷: Զմյուռնիայի «Ծաղիկ» հանդեսը համառ պայքարով պահպանելու իրենց պատիվը և իրավունքը «անիրավ թշնամությանց դեմ» հայերին ուղղված կոչ տպագրեց¹¹⁸: «Արծուի Վասպուրական» ամսագրում տպագրվեց Գ. Ս.-ի (Գ. Սրվանձտյանց) «Սկսենք մեր գործ, նորեն սկսենք» հոդվածը, որ համարձակ կոչ էր զեյթունցիներին և ամբողջ հայությանը՝ շարունակելու դիմակայել բռնակալությանը¹¹⁹: «Մասիս», «Դիմակ», «Փարիզ» և արևմտահայ ու գաղութահայ այլ պարբերականներ ևս պաշտպանեցին զեյթունցիների հերոսական պայքարը:

Իրադարձություններին աշխուժորեն արձագանքեց նաև արևելահայ մամուլը: «Մեղու Հայաստանի» թերթը, «Կռունկ հայոց աշխարհի» ամսագիրը հանգամանալի լրատվություն էին տալիս ապստամբության ընթացքի և դեպքերի հետագա զարգացումների վերաբերյալ¹²⁰: Գաղութահայ պարբերականներից Ջեյթունն իրենց ուշադրության կենտրոնում էին պահում «Արևմուտքը» և այլ պարբերականներ: Ստ. Ոսկանյանը «Լեռնականք» հոդվածում ժխտում էր ազգային սահմանադրության ընձեռած՝ արևմտահայերի կյանքի ազատականացման հնարավորությունները Օսմանյան կայսրությունում և բռնակալությունը թոթափելու միակ միջոց էր համարում ազատագրական զինված պայքարը:

Թեև Ջեյթունի «զինված ելույթը ոգևորեց, օրինակ ծառայեց, բայց չվերածվեց համազգային կռվի»¹²¹, սակայն հայրենասիրական հզոր լիցք ներարկեց հայ հասարակական ամենատարբեր շրջաններին, խորացրեց նրանց մեջ ազգային միասնության գիտակցումը: Ջեյթունի 1862 թ. իրադարձությունները հասունացրին հայ հասարակական միտքը: Ապստամբությունը հայերի մեջ ամրապնդեց ազգային իրավունքները զինված պայքարով պաշտպանելու մտայնությունը: Ի վերջո, եթե

¹¹⁶ Տե՛ս «Մեղու», 1862, թիվ 169, էջ 174-175:

¹¹⁷ Տե՛ս «Մասիս», 1862, 25 օգոստոսի և 11 սեպտեմբերի:

¹¹⁸ Տե՛ս «Ծաղիկ», 1862, թիվ 42, էջ 351-352:

¹¹⁹ Տե՛ս «Արծուի Վասպուրական», 1862-1863, թիվ 1, էջ 9-19:

¹²⁰ Տե՛ս «Կռունկ հայոց աշխարհին», 1862, թիվ 10, էջ 781-814, 1863, թիվ 1, էջ 71-76, թիվ 3, էջ 213-230:

¹²¹ Տե՛ս Կիրակոսյան Զ., Բուրժուական դիվանագիտությունը և Հայաստանը (XIX դարի 70-ական թթ.), Ե., 1978, էջ 44:

արևմտահայությունը սահմանադրությունը համարում էր ազգային կյանքը ժողովրդավարացնելու հնարավորություն, ապա այդ նույն սահմանադրության դադարեցումը հայ հանրությանը հուշում էր բռնակալությանը զենքով դիմակայելու գաղափարը: 1862 թ. Զեյթունի ապստամբությունը դրա գործնական արտահայտությունն էր:

Հայ քաղաքական մտքի այս վերափոխումները՝ զուգակցվելով զինված պայքարին փարելու արմատներ նետող մտայնությանը, թեև դանդաղ, բայց հիմնավորապես յուրացվեցին հայ հասարակության կողմից և շուտով ունեցան իրենց արձագանքները: Չնայած տարածքային հեռավորությանը, այդ ազդեցությունը կրողներից էր նաև կարինահայությունը, որն իր կազմակերպչական ու գործնական արարքներով մարտահրավեր նետեց շարունակական հարմարվողականությանը և դուրս եկավ ազատագրական պայքարի: Գաղափարական հասունացման այդ գործընթացին մեծապես նպաստեց նաև Հայկական հարցի միջազգայնացումը:

գ) Հայկական հարցի միջազգայնացման նշանակությունը ազատագրական պայքարի նախաշեմին

XIX դարում թուլացած Օսմանյան կայսրությունը դարձել էր Եվրոպայի մեծ տերությունների մրցակցության ասպարեզ: Առաջնորդվելով սեփական շահերով՝ այդ տերություններն իրենց ձգտումները քողարկում էին կայսրության ստատուս քվոյի պահպանման իմաստազուրկ սկզբունքով¹²²: Դա ձեռնտու էր նաև Օսմանյան իշխանություններին: Արևմտյան Հայաստանում և կայսրության այլ վայրերում բնակվող շուրջ երեք միլիոն հայեր, որոնք ենթարկվում էին ազգային, տնտեսական, քաղաքական և կրոնական ճնշման ու հալածանքների, համաշխարհային առաջադեմ գաղափարախոսությունների և Սահմանադրական շարժման ազդեցությամբ զարթոնք էին ապրում: Սկսվեցին ազատախոհական խլրտումներ, որոնք ծավալվեցին Օսմանյան

¹²² Տե՛ս ՀԱԱ, ֆ. 450, ց. 2, գ. 1, թ. 27, փաստաթղթերի հավաքածու Հայկական հարցի վերաբերյալ:

Թուրքիայի շատ գավառներում¹²³: Ընդվզումներ եղան Վանում, Մուշում, Ջեյթունում և այլ վայրերում:

1877-1878 թթ. տեղի ունեցավ ռուս-թուրքական պատերազմ: Այն ավարտվեց, և 1878 թ. փետրվարի 19-ին Սան Ստեֆանոյում կնքվեց հաշտության պայմանագիր¹²⁴, նոր պատմության շրջանում առաջին անգամ Հայաստան անվանումը և հայերը հիշատակվում էին այդ միջազգային դաշնագրում¹²⁵: Ասպարեզ նետվեց և միջազգային դիվանագիտական վավերացում ստացավ Հայկական հարցը, որը տարբեր ժամանակներում տարբեր ծավալներ է ունեցել: Դիվանագիտության պատմության մեջ օսմանյան տիրապետությունից Արևմտյան Հայաստանի ազատագրման, հայ ժողովրդի ինքնորոշման, սեփական պետականության վերականգնման, հայ ժողովրդի համախմբման և այդ նպատակներին հասնելու համար հայ ժողովրդի մված ազգային-ազատագրական պայքարի անվանումն է: Հայ ժողովուրդը մեծ հույսեր էր կապում ռուսական զենքի հաղթանակի հետ, ինչն օբյեկտիվորեն համընկնում էր հայ ժողովրդի ազատագրական ձգտումներին: Այդ պատճառով էլ ոտքի ելավ և աջակցեց ռուսական զորքին:

27-րդ հոդվածը պարտադրում էր օսմանյան կառավարությանը պատժիչ միջոցներ չձեռնարկել այն անձանց նկատմամբ, որոնք պատերազմի ընթացքում աջակցել էին ռուսական բանակին, և «եթե ոմանք իրանց ընտանիքներով ռուսական զորքին կցվելով երկրից (Թուրքիայից) հեռանալ ուզեն, օսմանյան իշխանությունները նրանց մեկնելուն պիտի չընդդիմանան»¹²⁶: 27-րդ հոդվածի այս երկու կետերն էլ միանշանակ կարևոր էին արևմտահայության և հատկապես կարինահայության համար: Նախ՝ քանի որ նահանգի հայ բնակչության սովոր մասը մեծ համակրանքով էր ընդունել ռուսական բանակին, որը նրանց պատկերացմամբ պիտի պաշտպաներ օսմանյան

¹²³ Տե՛ս Սարուխան, Հայկական խնդիրն և Ազգային սահմանադրությունը Թուրքիայում (1860-1910), հ. Ա, Թիֆլիս, 1912, էջ 129:

¹²⁴ Ռուսաստանի կողմից պայմանագիրն ստորագրեցին կոմս Ն. Իգնատեն ու Ս. Նելիդովը, Թուրքիայի կողմից՝ Սավֆետ փաշան ու Սահադուլլահ բեյը: Տե՛ս Հայաստանը միջազգային դիվանագիտության և սովետական արտաքին քաղաքականության փաստաթղթերում (1828-1923), պրոֆ. Զ. Ս. Կիրակոսյանի խմբագրությամբ, Ե., 1972, էջ 83-98:

¹²⁵ Դաշնագիրը բաղկացած էր 29 հոդվածից: Հայերին էին վերաբերում այդ պայմանագրի մի քանի (16-րդ, ինչ-որ չափով 19-րդ, 25-րդ, 27-րդ) հոդված: Տե՛ս նույն տեղը:

¹²⁶ Տե՛ս Հարությունյան Գ., Արևմտահայության կացությունը և Հայկական հարցի միջազգայնացումը (1850-1870-ական թթ.), Ե., 2009, էջ 138: Տե՛ս նաև 1877-1878 թթ. ռուս-թուրքական պատերազմը և Հայկական հարցը Սան-Ստեֆանոյի պայմանագրում, «ՊԲՀ», թիվ 2, 2006, էջ 31:

տիրապետության տակ տառապող հարստահարված քրիստոնյաներին¹²⁷: Ռուսների՝ տարածաշրջանում գտնված ժամանակ ամբողջովին ռուսամետ պահվածք դրսևորած կարինահայերի կացությունն ավելի էր վտանգված: Նրանց բարեկամական տրամադրվածությունն ու համակրանքը ռուսների նկատմամբ կարող էին դառնալ նոր բռնությունների ու հալածանքների աղբյուր, և «ռուսների քաշվելուց հետո նոր կոտորած և հալածանք կսկսվեր տեղի հայերի դեմ»¹²⁸:

Իրադարձությունների հետագա ընթացքը եկավ ապացուցելու, որ Ռուսաստանի «դիվանագիտական հավատամք Սան Ստեֆանոյի պայմանագրի»¹²⁹ թվացյալ հոգատարությունը շինծու էր, և ռուսական դիվանագիտությունը մտադրություն չունեւ պայքարելու Արևմտյան Հայաստանի համար, ինչպես դա տեղի ունեցավ բալկանյան ժողովուրդների դեպքում: Այդ պատճառով Սան Ստեֆանոյում իրավական ձևակերպում ստացած Հայկական հարցը,¹³⁰ դառնալով քաղաքական գործոն, դիվանագիտական բարդ խաղերում արևմտահայությանն առևտրի առարկա դարձրեց:

1878 թ. հունիսին Բեռլինում հրավիրված վեհաժողովի դաշնագրի 61-րդ հոդվածով Ռուսաստանը զրկվեց հայոց գործերը տնօրինելու մենաշնորհից, այսինքն՝ Հայկական հարցը ձախողվեց: Ինչպես իրավացիորեն նշել է Գ. Հարությունյանը. «...քչի և ոչնչի միջև Ռուսաստանը պետք է նախընտրեր քիչը, իսկ Հայկական հարցը տարրալուծվելու էր հենց այդ ոչնչի մեջ»¹³¹: Չնայած Բեռլին մեկնած հայոց պատվիրակության թափած ջանքերին՝ այստեղ ևս որոշվեց ընդամենը բարեփոխումներ իրականացնել

¹²⁷ Տե՛ս Սարուխան. Հայկական խնդիրն և Ազգային սահմանադրությունը Թուրքիայում (1860-1910), հ. Ա, Թիֆլիս, 1912, էջ 291:

¹²⁸ Տե՛ս Հարությունյան Գ., նշվ. աշխ., էջ 292: Հայերն ամենուրեք մեծ ոգևորությամբ էին դիմավորում ռուսական բանակին. «Նորին կայսերական բարձրություն Մեծ իշխան Նիկոլայ Նիկոլաևիչին մի քանի ոչխար նվիրաբերեցին, որոնք, համաձայն արևելյան սովորույթի, պիտի զոհաբերվեին հանուն ռուսական զենքի հաջողության», «Դեպի Ղըզըլ-չախ-չախ և Ղըզըլ-քիլիսա տանող ճանապարհների հատման մասում հարևան գյուղերի հայ հոգևորականությունը դիմավորում էր ռուսական զորքին, իր աղոթքը ուղղելով ազատագրող (ռուսական) արքային, որն իր սուրն էր մերկացրել ի պաշտպանություն հարստահարված քրիստոնյաների» (Հարությունյան Գ., 1877-1878 թթ. ռուս-թուրքական պատերազմը և Հայկական հարցը Սան-Ստեֆանոյի պայմանագրում, «ՊԲՀ», թիվ 2, 2006, էջ 32):

¹²⁹ Տե՛ս Ս. Մ. Чернов. К вопросу о Сан-Стефанском договоре 1878 г., «История СССР», 1975, с. 136.

¹³⁰ Առաջին հայ հեղինակը Կ. Թումայանն է, որ միջազգային իրավունքի շրջանակներում է գնահատում Սան Ստեֆանոյի և Բեռլինի դաշնագրերը՝ նշելով, որ առաջինը արևմտահայության վիճակի բարելավման լուրջ երաշխիքներ էր տալիս Ռուսաստանի շնորհիվ, մինչդեռ Բեռլինի վեհաժողովը Անգլիայի ճնշումներով հայերին թողեց առանց որևէ պաշտպանության: Տե՛ս Թումայան Կ., Պատմություն Արևելեան խնդրոյ և առաջնորդ Հայկական հարցի, հ. Ա-Բ, Լոնդոն, 1905:

¹³¹ Տե՛ս Հարությունյան Գ., 1877-1878 թթ. ռուս-թուրքական պատերազմը և Հայկական հարցը Սան Ստեֆանոյի պայմանագրում, «ՊԲՀ», 2006, թիվ 2, էջ 32:

կայսրության հայաբնակ նահանգներում¹³²: Բայց այս դեպքում դրա հսկողությունը Ռուսաստանի փոխարեն պետք է իրականացնեին եվրոպական վեց տերությունները, որը նշանակում էր. «...ընդհանուր պարտավորվածությունը և ոչ մեկի պարտավորվածությունն էլ չէր»¹³³:

Էականն այն է, որ Սան Ստեֆանոյի և Բեռլինի պայմանագրերի համապատասխանաբար 16-րդ և 61-րդ հոդվածներով սկզբնավորվեց Հայկական հարցի դիվանագիտական պատմությունը, ինչպես նաև հասարակական-քաղաքական կյանքում եվրոպական դիվանագիտության օգնությամբ թուրքական բռնատիրությունը թոթափելու, հայերի անկախությունն ու ինքնավարությունը ձեռք բերելու մտայնությունն ու գործելակերպը: Բեռլինի վեհաժողովը ոչ միայն շրջադարձային եղավ Հայկական հարցի պատմության մեջ, այլև խթանեց հայ ազգային-ազատագրական շարժումը¹³⁴: Եվրոպական դիվանագիտությունից հուսախաբ հայ հասարակական-քաղաքական շրջանակները որդեգրեցին Արևմտյան Հայաստանը թուրքական տիրապետությունից զինված պայքարով ազատագրելու տեսլականը: Հայկական հարցը, որ տիրապետող դարձավ հայ քաղաքական մտքի վրա, եղավ այն նշանակետը, որի լուծմանն ուղղվեց հայ ազգային-ազատագրական շարժումը: Հայ հասարակության մեջ, հատկապես Խրիմյանի «երկաթե շերեփի» քարոզ-կոչից հետո աստիճանաբար տիրապետող էր դառնում զենքի դիմելու անհրաժեշտության գիտակցումը, որին առաջիններից մեկն արձագանքեց կարինահայությունը և անմիջապես լծվեց գործի՝ ձեռնարկելով ընդգրկուն կրթալուսավորչական, քարոզչական և կազմակերպչական աշխատանքներ:

¹³² Տե՛ս Հայաստանը միջազգային դիվանագիտության և սովետական արտաքին քաղաքականության փաստաթղթերում (1828-1923), պրոֆ. Զ. Ս. Կիրակոսյանի խմբագրությամբ, Ե., 1972, էջ 128:

¹³³ Տե՛ս Макколь М., Ответственность Англии перед Арменией (Положение армян в Турции до вмешательства держав в 1895 году, в кн.: Положение армян до вмешательства держав в 1895 году, М., 1896, с. 131-211).

¹³⁴ Տե՛ս Армянский вопрос. Геноцид армян, библиография литературы на русском языке (1877-1997), составители П.О. Оганесян, Э. А. Бабаян, издательство «Хоск», 1998, с. 6.

1.2 Ազատագրական խմբակները: «Պաշտպան հայրենյացը» որպես զինված պայքարի կազմակերպական կառույց

Արևմտյան Հայաստանի զգալի մասը կազմող և երբեմնի սովոր հայկական բնակչություն ունեցող Կարինի նահանգն ու նույնանուն քաղաքը XIX դարի ընթացքում տեղի ունեցած ռուս-թուրքական չորս պատերազմների ընթացքում կռվախնձոր ու պատերազմների թատերաբեմ էին դարձել: Արևելքի այդ երկու հզոր կայսրությունների մրցապայքարի ընթացքում նահանգը թեև զգալիորեն հայաթափվեց, սակայն 1880-ական թթ. դեռևս պահպանում էր իր հայկական դիմագիծը¹³⁵: Ճիշտ է, քաղաքի բնակչության գերակշիռ մասը թուրքերն ու քրդերն էին կազմում, սակայն տնտեսական լծակները, հատկապես արհեստներն ու առևտուրը, գտնվում էին հայերի ձեռքում:

Հատկանշական է, որ 1877-1878 թթ. ռուս-թուրքական պատերազմի ընթացքում Կարինի հայությունը Հայաստանի ուղղությամբ առաջացող ռուսական զորքին համակրանքով էր վերաբերվում և սատարում էր: Սակայն պատերազմն ավարտվելուց հետո Կարինի նահանգը հայտնվեց հերթական ողբերգական իրադարձությունների կիզակետում: Սան Ստեֆանոյի ու Բեռլինի դաշնագրերով Հայկական հարցի միջազգային վավերացումից վերազարթոնք ապրող հայությանը սուլթանական գահին նոր բազմած Աբդուլ Համիդը կատաղի պայքար հայտարարեց: Նրա ղեկավարությամբ դիվանագիտության մեջ հմուտ թուրքական կառավարությունը «...որոճում էին և հղանում դիվային ծրագիր մի ողջ ազգության ֆիզիկական գոյության վերաբերյալ՝ ցանկանալով թուրքավարի լուծել հայկական հարցը»¹³⁶:

Թուրքական իշխանությունները դիմեցին նաև հերթական խարդավանքին. Հայկական հարցի պատրվակով հրահրեցին և պատերազմի ընթացքում «անհավատարիմ» պահվածք դրսևորած հայ ժողովրդից վրեժխնդիր լինելու համար ոտքի հանեցին քուրդ ռազմական ավազանուն: Էրզրումի վիլայեթը, որ պաշտոնական

¹³⁵ Կարինի նահանգի XIX դարի առաջին երեսնամյակի վարչաէթնիկական պատկերը, էթնոժողովրդագրական գործընթացներն ու տեղաշարժերը և մասնավորապես, 1829 թ. նահանգից մեծաքանակ հայության արտագաղթի ճշմարտացի պատկերը հարուստ փաստական հենքով ներկայացրել է Ա. Մելքոնյանը, տե՛ս Մելքոնյան Ա., Էրզրումի նահանգի հայ ազգաբնակչությունը XIX դարի առաջին երեսնամյակին (ժողովրդագրական ուսումնասիրություն), Ե., 1994: Մեզ համար կարևոր է եղել նաև հեղինակի «Զավախքը 19-րդ դարի վերջին և 20-րդ դարի սկզբին» աշխատությունը, Ե., 2003:

¹³⁶ Տե՛ս Կոստանյան Է., Ակնարկներ արևմտահայ մշակութային և հասարակական-քաղաքական կյանքի պատմության (19-րդ դարի 80-ական թվականներ), Ե., 2005, էջ 80:

փաստաթղթերում Էրմենիստան էլայեթ էր կոչվում, նախատեսում էին վերանվանել Քուրդիստանի էլայեթի: «Բաժանիր, որ տիրես» քաղաքական կուրսով առաջնորդվող Բ. Դռանը հաջողվեց թշնամացնել հարևան երկու ժողովուրդներին և առանձին-առանձին հաշվեհարդար տեսնել նրանց հետ¹³⁷: Բ. Դռուը գաղտնի հրահանգում էր հայկական նահանգների կառավարիչներին բոլոր միջոցներով արգելակել հայոց վերազարթոնքն ու ազատագրական ձգտումները: Այդ ամենը «...փոփոխություն մը առաջ բերին հայ մտայնության մեջ և 1878-է 1882 հանդարտ աղերսարկուն և խեղճուկ աղարավորը գրեթե բռնադատեալ նոր միջոցներու մղուեցալ և հայուն կյանքին ու գործին վրա փոփոխութիւն նշմարեցալ:...Հայտնապես կտեսնվեր, որ օսմանեան կառավարութիւնն էր փոփոխութեան պատճառ տվողը, երբ հանդարտ աղերսարկուն կանարգեր և խռովարար պահանջողը կը գոհացներ»¹³⁸: Այսինքն՝ հայոց ազգային-ազատագրական շարժումը, հայ ժողովրդի ինքնագիտակցության հզոր վերելքի, ազատաբաղձ ձգտումների և սեփական պետականության վերականգնմանը նպատակաուղղված պայքար լինելով հանդերձ, միևնույն ժամանակ համապատասխան արձագանք ու պատասխան էր թուրքական իշխանությունների՝ հայերի նկատմամբ որդեգրած սոցիալական և ազգային դաժան բռնատիրության: Ժողովրդի մեջ սկսված խլրտումների անմիջական արձագանքը եղան տարբեր «անմեղ» անունների տակ քաղաքական գաղտնի կազմակերպությունների ստեղծումը Արևմտյան Հայաստանում, այդ թվում նաև՝ Կարինի նահանգում:

1880-ական թթ. սեփական ուժին ապավինելու գաղափարներով տոգորված արևմտահայ ազգային-ազատագրական շարժումը թևակոխեց կազմակերպական շրջափուլ: Այդ պայքարում միմյանց զուգահեռ տիրապետող էին երկու հիմնական մտայնություն. նախ՝ կրթել, լուսավորել և միջնադարյան խավարից դուրս բերել ժողովրդին, ապա՝ պայքարել նրա ազատության և մարդավայել ապրելու իրավունքի

¹³⁷ Ի դեպ, մինչև վերջերս տարածված էր այն տեսակետը, որ քրդերը սոսկ գործիք են եղել թուրքերի ձեռքին հայերին կոտորելու և Հայկական հարցը ցեղասպանության միջոցով լուծելու գործում: Սակայն նոր ուսումնասիրությունների արդյունքում աստիճանաբար քաղաքացիություն է ստանում մեկ այլ տեսակետ, որ քրդերը ոչ միայն կույր գործիք չեն եղել, այլ մշտապես հետապնդել են ազգային հեռագնա նպատակներ, որոնք պարզապես համընկել են թուրքական իշխանությունների հետապնդած նպատակներին: Տե՛ս Հովհաննիսյան Ն., Քրդերի մասնակցությունը հայերի ցեղասպանությանը, քրդական գործոնը Արևմտյան Հայաստանի հարցի լուծման հայկական հայեցակարգում, Ե., 2016:

¹³⁸ Տե՛ս Օրմանյան Մ., Ազգապատում, հ. Գ., Ե., 2001, էջ 5060-5061:

համար: Այդ նպատակներն իրականացնելու համար իրար հետևից ձևավորվեցին մի շարք ազատագրական խմբակներ, որոնց հենքի վրա հետագայում ստեղծվեցին նաև կուսակցությունները:

Հատկապես գավառահայությանը լուսավորելու, աշխարհիկ դպրոցներ բացելու և հենց տեղերում ուսուցիչներ պատրաստելու խնդիրը լուծելու, գավառահային Կ.Պոլիս մեկնելուց հետո պահելու ու Երկիրը հայաթափվելուց զերծ պահելու նպատակով ստեղծվում էին կրթամշակութային ընկերություններ, որոնցից էին «Միացեալ ընկերութիւնք հայոց» (ստեղծվեց «Արարատեան», «Դպրոցասիրաց-արևելեան» և «Կիլիկիան» ընկերությունների միավորման արդյունքում), «Ազգաներ հայուհեաց», «Դպրոցասէր տիկնանց»: Մասնավորապես բեղուն գործունեություն ծավալեց «Միացեալ...»-ը, որի վարչության կազմում էին ժամանակի արևմտահայ առաջադեմ գրեթե բոլոր գործիչները՝ Մ. Փորթուգալյանը, Ա. Արփիարյանը, Մ. Սարըլյանը, Մ. Չերազը, Հ. Շահնազարը¹³⁹:

Առաջիններից մեկը Գ. Սրվանձտյանցի անմիջական մասնակցությամբ և Մ. Խրիմյանի ղեկավարությամբ 1872 թ. կազմակերպված «Միութիւն ի փրկութիւն» գաղտնի խմբակն էր¹⁴⁰, հետո՝ 1878 թ. հիմնադրված Վանի «Սև խաչը», որին անդամակցել են Մ. Խրիմյանը, Մ. Փորթուգալյանը և Կ. Կամսարականը¹⁴¹: Հենց վերջինիս միջոցով իրար հետ կապ հաստատեցին «Սև խաչը» և «Պաշտպան հայրենյացը»¹⁴²:

Կարին քաղաքը, որ առևտրական և մշակութային կապերով հաղորդակից էր Կ. Պոլսի և Թիֆլիսի «հաւաքական կեանքին», միանգամայն բնական էր, որ առավելագույնս էլ պետք է ազդվեր թե՛ արևելահայության և թե՛ արևմտահայության մեջ առաջացած քաղաքական և հասարակական շարժումներից, իսկ ավելի ուշ դառնար նաև այդ խմորումների և գործունեության կարևորագույն կենտրոններից

¹³⁹ Տե՛ս Հիմնական կանոնագիր Միացեալ ընկերութեանց հայոց, Կ.Պոլիս, 1880:

¹⁴⁰ Տե՛ս Դիվան հայոց պատմության, հ. ԺԳ, էջ 269-270, Ներսիսյան Մ., Հայ ժողովրդի ազատագրական պայքարը թուրքական բռնատիրության դեմ, էջ 169-171, Կոստանդյան Է., Գարեգին Սրվանձտյանց (կյանքը և գործունեությունը), Ե., 1979, էջ 100-109:

¹⁴¹ Ավելի մանրամասն տե՛ս Կոստանդյան Է., Մկրտիչ Խրիմյան, Ե., 2000, 440 էջ, Սարգսյան Ս., «Արմենիա» պարբերականը ազատագրական գաղափարախոսության ակունքներում, Ե., 2014, 679 էջ և այլն:

¹⁴² Տե՛ս Հայոց պատմություն, հ. III, գիրք առաջին, Ե., 2010, էջ 465:

մեկը¹⁴³: Դեռևս ռուս-թուրքական պատերազմին նախորդող շրջանում քաղաքի երիտասարդությունը, որ իր քաղաքական և մտավոր դաստիարակությունն ու մշակութային զարգացումը «կ'ստանար Պոլիսէն և Կովկասէն», դրանք «կ'իւրացնէր ինքնուրոյն դրոշմ դնելէ ետէն միայն»¹⁴⁴: Իսկ նահանգի գյուղացիները հետևում էին քաղաքացիների օրինակին: Միանգամայն բնական էր, որ XIX դարի 60-ական թթ. սկսած՝ արևմտահայ հոգևոր-մշակութային կենտրոն Կ.Պոլսին գրեթե զուգընթաց Կարինի շրջանի հայ բնակչությունը նույնպես տոգորվեց ազգային վերազարթոնքի շնչով, անսահման ոգևորվեց հայ կյանքը հուզող առաջին ալիքով՝ Սահմանադրական շարժումով: Առաջադեմ մտավորականների գլխավորությամբ երիտասարդությունը մեծ խանդավառությամբ սկսեց ինքնակազմակերպվել: Զարգացան մշակույթը, արհեստները և առևտուրը, կազմվեցին նոր միություններ և ընկերություններ:

Նկատենք, որ ինքնակազմակերպման շարժումը և կրթամշակութային վերելքը Կարինում պայմանավորել էին մինչ այդ եղած համանման կառույցները: Այսպես, դեռևս 1850-ական թթ. ծայր առած մշակութային վերազարթոնքի արդյունքում 1851 թ. Գրիգորիս վարդապետի ջանքերով Արծն քաղաքի անունով ստեղծվել էր «Արծնեան» կրթասիրաց ընկերությունը. «...հազարաւոր ազգայիներ ամսական 60 փարա վճարելով մէջտեղ բերին «Արծնեան» ընկերութիւնը»¹⁴⁵: Սա էլ իր ուժերով 1855 թ. հիմնեց «Ժառանգաւորաց» վարժարանը, որի տեսուչ նշանակվեց վարդապետ Մամիկոնյանը: 1865 թ. նույն ընկերությունը դպրոցը վերանորոգելու նպատակով հանգանակություն կազմակերպեց: Արձագանքեցին շատերը, սակայն դպրոցը հիմնովին վերանորոգելու գործը ֆինանսավորեց քաղաքի պատվարժան այրերից մեկը. «...մահտեսի Յակոբալա Մակարեան յանձն առաւ դպրոցը հիմէն վերակառուցանել իր ծախքով», որից հետո այն անվանվեց «Արծնեան վարժարան»¹⁴⁶: Նույն ընկերությունը 1863 թ. փետրվարի 7-ին քաղաքի հասարակության համար «Օձնեցի Պետրոս Տէր Մարտիրոսեանի տեսչութեան տակ» բացեց գրադարան ընթերցարան: Ընթերցարանն ստանում էր 14 անուն հայերեն և մի քանի օտարալեզու պարբերականներ, որոնք կարող էին ընթերցել բոլոր ցանկացողները: 1877-78 թթ.

¹⁴³ Տե՛ս Զարրգ Ղ., Յուշամատեն Բարձր Հայքի, Կարինապատում, Պեյրութ, 1957, էջ 392:

¹⁴⁴ Տե՛ս ֆ. 420, ց. 16, գ. 8, թ. 7-8:

¹⁴⁵ Տե՛ս ՀԱԱ, ֆ. 420, ց. 16, գ. 8, թ. 11:

¹⁴⁶ Տե՛ս նույն տեղում:

ռուս-թուրքական պատերազմի ընթացքում ընթերցարանը դարձավ համաքաղաքային լսարան, որտեղ այցելուներին տեղեկացնում էին ընթացող պատերազմի և այլ իրադարձությունների մասին: Կարդացվում էին ամենատարբեր բովանդակությամբ դասախոսություններ, որոնց մեջ մեծ թիվ էին կազմում պատմական և հայրենասիրական թեմաները:

1862 թ. «աղջկանց վարժարան մը կառուցանելու նպատակաւ» Հարություն եպիսկոպոսը հիմնեց «Ուսումնասիրաց ընկերությունը»: Սակայն հետագայում այդ ընկերության անունը փոխվեց և դարձավ «Վարդանանց ընկերութիւն», որն էլ «Հռիփսիմեանց աղջկանց վարժարան» հիմնելու համար ստեղծեց հիմնադրամ և մեծ գործ կատարեց այդ նպատակն իրականացնելու ուղղությամբ:

1864 թ. Հ. եպիսկոպոս Վեհապետյանի նախաձեռնությամբ հիմնվեց Արշարունի ընթերցասիրական և գիտական ընկերութիւնը, որը 14 տարի տեղի հանրությանը ծառայեց որպես «տեսակ մը չափահասներու դպրոց»¹⁴⁷: Հետաքրքրական է, որ Կարինում ունևոր խավն ու բարձրաստիճան հոգևորականությունը «...հակառակ իրենց հարուստ եւ իշխանական դիրքերուն, յանձն կ'առնեն գործակցել...և ունենալ զօրաւոր պատուանդան մը իրենց գործունեութեան համար քաղաքին արհեստաւորութիւնը»¹⁴⁸:

Համընդհանուր վերազարթոնքի այս շրջանում կարինահայությունը հայտնվել էր բացառիկ իրավիճակում՝ մի կողմից Ազգային սահմանադրությամբ ոգեշնչված պոլսահայության և մյուս կողմից թուրք պաշտոնեության և քուրդ թալանչիների ճիրաններում տառապող գավառահայության դժոխքի արանքում: Այս պայմաններում դառնալով գավառի հայության հալածանքների և սարսափների փոխանցման միակ կենտրոնը Կարինը տեղյակ էր Կ.Պոլսի մտավորականության անզորությանն ու ստեղծված իրավիճակի լուռ համակերպմանը: Միևնույն ժամանակ նկատելի էր դառնում, որ Կ.Պոլսի պատրիարքարանում տեղի ունեցող ժողովներում հետզհետե «գաւառը ուրանալու յանցանքը կզգացուեր»¹⁴⁹: Սակայն չվիատվելով այդ կացությունից՝ Կարինի հայությունը միշտ եղավ գավառի հայության կողքին, մնաց նրան ցավակից:

¹⁴⁷ Տե՛ս ՀԱԱ , ֆ. 420, ց. 16, գ. 8, թ. 12:

¹⁴⁸ Տե՛ս Չարըզ Դ., նշվ. աշխ., էջ 392:

¹⁴⁹ Տե՛ս նույն տեղում:

Այդ պայմաններում Կարինում նոր թափով զարգացան մշակույթը, արհեստները և առևտուրը, կազմվեցին նոր միություններ և ընկերություններ, հիմնվեցին հանրային հասարակական հիմնարկություններ, հրատարակվեցին պարբերականներ: Կարինում մշակութային և մտավոր վերածնության ռահվիրա հանդիսացան Մաղաքիա եպիսկոպոս Օրմանյանը, Սողոմոն Տեր Ազարյանը, Ալեքսան Ներսեսյանը, Հակոբ Հովասափյանը, Հակոբ Մակարյանը, Հակոբ Արծնյանը, Մկրտիչ Աղապալյանը, Գևորգ Մարլենցը, Մարկոս Գաֆայանը և այլ նշանավոր անձինք¹⁵⁰: Նրանց ջանքերի շնորհիվ երիտասարդ սերունդը, ստանալով ազատաբաղձ ձգտումներով տոգորված դաստիարակություն, ուրքի կանգնեց ժողովրդի ազատության համար պայքարի:

Կարինահայության կրթական ու հասարակական կյանքն ավելի է աշխուժանում, երբ 1862 թ. քաղաքի բոլոր վարժարանների լիազոր տեսուչ է հաստատվում մայրաքաղաք Կ.Պոլսում կազմված կրթական միությունների աշխատանքներին և դրանց «գաւառներու մասին ունեցած ծրագիրներուն եւ տաճած գուրգուրանքին»¹⁵¹ քաջատեղյակ Գ. Սրվանձտյանցը¹⁵²: Մարդ, ով իր բազմահմուտ և պատկառելի գիտելիքներով, համառ աշխատասիրությամբ ու «շէնշող» բնավորությամբ «մտերմութիւն մը կը պարտադրէր» և բոլորի վստահությունը «կը շահէր», քանի որ բնավորության գծերով շատ նման էր կարնեցիներին¹⁵³: Գ. Սրվանձտյանցին հաջողվեց որոշ չափով բարելավել «Կարնոյ հայութեան եւ դաշտի գիւղացիութեան» կյանքն ու կենցաղը, ձերբազատել նրան տարբեր հոռի սովորույթներից: Քաղաքի և մասամբ էլ նահանգի բնակչության շրջանում անգրագիտության դեմ պայքարում զգալի գործ կատարեց նրա ջանքերով 1869 թ. հիմնադրված «Անձնուեր» ընկերությունը, որի նպատակն էր «անգրագետ ազգայնոց համար կիրականօրեայ դպրոց մը հիմնել»¹⁵⁴: Արդեն առաջին տարում այդ դասընթացին պարբերաբար հետևում էին 30-40 աշակերտներ, որը ժամանակի ու տեղի հայ բնակչության համար փոքր թիվ չէր¹⁵⁵:

¹⁵⁰ Տե՛ս ՀԱԱ, ֆ. 420, ց. 16, գ. 9, թ. 72-73:

¹⁵¹ Տե՛ս Չարըզ Դ., նշվ. աշխ., էջ 185:

¹⁵² Տե՛ս ԳԱԹ, Սրվանձտյանց Գ.-ի ֆ., II բ., գ. 65: Գ. Սրվանձտյանցը որոշ ընմիջումներով Կարինի բոլոր վարժարանների ընդհանուր տեսուչը եղավ 1862-69 թթ. ընթացքում:

¹⁵³ Տե՛ս Չարըզ Դ., նշվ. աշխ., էջ 185:

¹⁵⁴ Տե՛ս ՀԱԱ, ֆ. 420, ց. 16, գ. 9, թ. 72-73 (Ճգնաւորեան Օ., Հայ ազատագրական ճիգերը Արեւմտեան Հայաստանի մէջ):

¹⁵⁵ Տե՛ս նույն տեղում:

1877-78 թթ. ռուս-թուրքական պատերազմի՝ ռուսների համար հաջող ընթացքը, Կարինում նրանց մի քանի ամիս մնալու հանգամանքը նպաստեցին՝ և քաղաքում ստեղծվեցին նոր կրթամշակութային ընկերություններ՝ «Ղևոնդյանց», «Մամիկոնյանց» և այլն: Դրանց նպատակն էր նպաստել կրթական գործին և երիտասարդ սերնդին հայեցի դաստիարակելուն: Այդ աշխատանքներին ավելի լայն թափ հաղորդեց այն իրողությունը, որ քաղաքի երիտասարդության ակտիվ միջամտությամբ քսանմեկ տարի պաշտոնավարելուց հետո հաջողվեց Կարնո առաջնորդ Վեհապետյանին հեռացնել և նրա փոխարեն նշանակել տալ Գ. Զոհրապի բնորոշմամբ. «... մեր եպիսկոպոսներեն երիտասարդ, ինչ որ մեծ բան է հարկավ և մեր երիտասարդներուն եպիսկոպոսը, ինչ որ ավելի մեծ բան մըն է...Մաղաքիա Օրմանյանին»¹⁵⁶:

Երիտասարդ առաջադեմ և ազգասեր Օրմանյանն իր հերթին նախաձեռնություն դրսևորեց և նահանգի դպրոցներում դասավանդելու հրավիրեց ունակ և առաջադեմ շատ ուսուցիչների, բարենորոգեց վարժարանները և վերափոխեց կրթական համակարգը¹⁵⁷: Շարունակելով Գ. Սրվանձտյանցի հայրենանվեր գործն ու ավանդույթները՝ նա Կարինի կրթամշակութային կյանքը նոր մակարդակի բարձրացրեց: Նրա ջանքերով և ղեկավարությամբ քաղաքի քաղաքական ժողովի կողմից կազմված նոր ուսումնական խորհուրդը դպրոցների համար հատուկ ծրագիր է պատրաստում, որով դպրոցները բաժանվում էին երեք կարգի: Ընտելարան՝ երեք տարվա ուսման շրջան, նախակրթարան՝ չորս տարվա, և ուսումնարան՝ երեք տարվա¹⁵⁸: «Մասիս» պարբերականը հաղորդում էր, որ այդ շրջանում (1880 թ.) Արծնյան եռամյա երկսեռ վարժարանն ուներ ընտելարան, նախակրթարան և ուսումնարան, 460 աշակերտ: Հռիփսիմյան իգական դպրոցն ուներ միայն ընտելարան և նախակրթարան, 370 աշակերտ: Վարժարաններում սովորողների ընդհանուր թիվը

¹⁵⁶ Տե՛ս Գ. Զոհրապ, Ծանոթ դեմքեր ու պատմվածքներ, Փարիզ, 1932, էջ 74-75: Կարինի առաջնորդ դառնալու ժամանակ՝ 1880 թ., Մ. Օրմանյանը ծայրագույն վարդապետ էր, եպիսկոպոս ձեռնադրվեց 1886 թ.:

¹⁵⁷ Տե՛ս Կոստանդյան Է., Դրվագներ Մաղաքիա արքեպիսկոպոս Օրմանյանի կյանքից և գործունեությունից, Ե., 2015, էջ 152-153:

¹⁵⁸ Տե՛ս «Մասիս», 1880, թ. 2718: Տարիներ հետո «Խոհք և խօսք»-ում Օրմանյանը անդրադառնալով այդ ծրագրին, հայտնում է այլ տեղեկություններ: Ըստ այդ տեղեկության՝ դպրոցների ուսման տևողությունը բաժանված էր 5 շրջանի՝ յուրաքանչյուրը 2 տարվա տևողությամբ՝ ծաղկոց, ընտելարան, նախակրթարան, կրթարան և ուսումնարան: Ընդ որում, առաջին երեքում կրթությունն անվճար պետք է լիներ, իսկ վերջին երկուսում՝ վճարովի: Օրմանյան Մ., Խոհք և խօսք, էջ 110:

մոտ 1300 էր, որը, սակայն, բավարար չէր, և նոր կրթարաններ բացելու անհրաժեշտություն կար¹⁵⁹:

Օրմանյանի խորհրդով քաղաքում գործող չորս մշակութային ընկերությունները՝ «Վարդանանց», «Դպրաց», «Ուսումնասիրաց» և «Ընթերցասիրաց», միավորվում են և կազմում «Բարձր հայոց միությունը»¹⁶⁰: Այս ընկերությունն իր հովանավորությունը տարածում է տեղի հայկական Արծնյան, Սանասարյան, Աղբալյան և մյուս դպրոցների վրա և բարերար ազդեցություն ունենում ոչ միայն կրթության որակի բարելավման, այլև սաների մեջ ազատաբաղձ ձգտումներ սերմանելու գործում: Դրանցից հատկապես Սանասարյան վարժարանը դարձավ ապագա ազատամարտի նվիրյալներ պատրաստելու դարբնոց: Դրա պատերի ներսում սերմանվեցին ազատ ու մարդավայել ապրելու, իրավազուրկ ու չարքաշ գոյատևելու փոխարեն պայքարի ելնելու և դարավոր անարդարությանը վերջ դնելու սրբազան գաղափարները¹⁶¹: Թուրքական իշխանությունները «Բարձր» բառի մեջ իրենց համար ինչ-որ վտանգավոր ու ստորացուցիչ երևույթ տեսան, կասկածեցին նաև, որ այն քաղաքականացված է և շուտով արգելեցին: Նրանց թելադրանքով այն ստացավ ավելի անմեղ «Երկրագործական ընկերություն» անվանումը: Ընկերությունն ուներ գրադարան-ընթերցարան, աշխատավորների համար կիրակնօրյա դպրոց, որտեղ արվում էր ամեն ինչ իրենց ունկնդիրների շրջանում ազգային ինքնագիտակցությունը բարձրացնելու ուղղությամբ:

Կարինում սոցիալ-տնտեսական և կրթալուսավորական փոփոխություններն ու հայրենաբաղձ ձգտումներով դաստիարակված նոր սերնդի առկայությունը պարարտ հող դարձան ազգային-ազատագրական շարժմանը նոր լիցք հաղորդելու գործում: Հայկական հարցի միջազգայնացումը մեծ հույսերի, սպասումների ու ակնկալիքների առիթ էր տվել, իսկ թուրքական բռնատիրությունից ազատագրվելու խնդիրը օրակարգի հարց դարձրել: Անհրաժեշտ էր ստեղծված նոր պայմաններին համապատասխան նոր մարտավարություն մշակել: Աղերսագրերը, հնազանդությունը թուրքական «բարեխնամ» պետությանը չտվեցին սպասվող արդյունքները: Հնազանդ

¹⁵⁹ Տե՛ս «Մասիս», 1880, թ. 2718:

¹⁶⁰ Տե՛ս Օրմանյան, Ազգապատում, հ. Գ, էջ 5000:

¹⁶¹ Ավելի մանրամասն տե՛ս ՀԱԱ, ֆ. 524 (Կարինի Սանասարյան վարժարանին նվիրված նյութերը):

հայն այլևս չէր ուզում հաշտվել ստեղծված իրականության հետ և հանդես էր գալիս մարդկային ամենատարրական իրավունքների պահանջներով: Աստիճանաբար ուրվագծվել ու հստակ էր դարձել, որ դրան հասնելու համար անհրաժեշտ էր համախմբվել, ստեղծել ժողովրդին իր հետևից տանող ուժեղ կազմակերպություններ:

Մինչև ազգային կուսակցությունների ստեղծումը արևմտահայ իրականության մեջ տարածական ընդգրկումով, անդամների թվաքանակով, ծրագրային դրույթների համեմատաբար հստակ ձևակերպումներով, կազմակերպական կուռ կառուցվածքով և գաղտնի գործելու կարողությամբ ամենաուժեղ կազմակերպությունը 1881 թ. մայիսին Կարինում հիմնադրված «Հայրենասիրաց գաղտնի ընկերություն Բարձր Հայոց Պաշտպան Հայրենյաց»¹⁶² ազատագրական գաղտնի կազմակերպությունն էր, որն ավելի հայտնի է «Պաշտպան հայրենյաց» անունով¹⁶³:

Նշենք, որ մեզ համար «Պաշտպան հայրենյաց»-ի գործունեության ներկայացումն ու գնահատումը կարևոր են: Օսմանյան բռնակալության դեմ հայ ժողովրդի վերսկսած պայքարի նոր շրջանն սկզբնավորող «Պաշտպան հայրենյաց» կազմակերպության մասին բավական հանգամանալից տեղեկություններ կան ժամանակի հայ, որոշ չափով նաև օտարալեզու մամուլի էջերում: Ավելի ուշ (1905 թ.) կազմակերպության մասին հուշագրել են Բ. Մելիք-Գրիգորյանը և Հ. Նշկյանը¹⁶⁴: Ապա գիտական հոդվածով հանդես եկավ Սարուխանը «Գործ» ամսագրում¹⁶⁵: Առանձին հետաքրքրություն են ներկայացնում Մ. Օրմանյանի «Խոհ և խօսք» աշխատության մեջ եղած ժլատ, բայց արժեքավոր էջերը¹⁶⁶: Ավելի ուշ կազմակերպության պատմությանն անդրադարձել են Մ. Ներսիսյանը¹⁶⁷, Վ. Պարսամյանը¹⁶⁸ և Է. Կոստանդյանը¹⁶⁹: «Պաշտպան հայրենյացի»

¹⁶² Սկզբում նախատեսվում էր կազմակերպությունն անվանել «Մասիս լեռների միություն», բայց հետո նպատակահարմար գտան հրաժարվել այդ մտադրությունից: Կարինի նոր շրջանի պատմությանը նվիրված և ցայսօր ուսումնասիրողների ուշադրությունից վրիպած մի ուսումնասիրության մեջ հանդիպեցինք նաև կազմակերպության «Արարատ Լեռան Ընկերություն- Պաշտպան Հայրենյաց» անվանաձևին, տե՛ս ՀԱԱ, ֆ. 420, ց. 16, գ. 8, թ. 52:

¹⁶³ Տե՛ս Հովհաննիսյան Ռ., Արևմտահայ ազգային-ազատագրական շարժումները և Կարինի «Պաշտպան հայրենյաց» կազմակերպությունը (XIX դարի 70-80-ական թթ.), Ե., 1965:

¹⁶⁴ Տե՛ս Նշկյան Յ., Առաջին կայծերը, էջ մը Կարնոյ զարթօնքէն, Ֆրեզնօ, 1930:

¹⁶⁵ Տե՛ս «Գործ» ամսագիր, 1917, թիվ 3: Տե՛ս նաև Սարուխան, Հայկական խնդիրն ու Ազգային սահմանադրությունը Թուրքիայում, Թիֆլիս, 1912:

¹⁶⁶ Տե՛ս Օրմանյան Մ., Խոհ եւ խօսք, Երուսաղեմ, 1929:

¹⁶⁷ Տե՛ս Ներսիսյան Մ., Հայ ժողովրդի ազատագրական պայքարը թուրքական բռնապետության դեմ 1850-1890 թթ., Ե., 2002:

¹⁶⁸ Տե՛ս Պարսամյան Վ., Հայ ազատագրական շարժումների պատմությունից, Ե., 1958:

մասին բարձրարժեք գիտական ուսումնասիրություն է հեղինակել Ռ. Հովհաննիսյանը: Համաձայն չլինելով հեղինակի որոշ մոտեցումների հետ (նախ և առաջ իրադարձությունները սոցիալ-դասակարգային պայքարով պայմանավորելը)¹⁶⁹ նշենք, որ Ռ. Հովհաննիսյանը փաստառատ հենքի վրա և համակողմանիորեն շարադրել է կազմակերպության ընդգրկումն պատմությունը:

1870-80-ական թթ. ազգային զարթոնքին ու առաջընթացին մեծապես նպաստել էին նաև 1877-1878 թթ. պատերազմի ընթացքում ռուսական բանակի հաղթանակները: Կարինը գրավելուց հետո ռուսական բանակի և մասնավորապես հայազգի զորավարների ներկայությունը քաղաքում ոգևորեցին, ուժ, համարձակություն ու եռանդ ներշնչեցին Կարինի երիտասարդությանը: Չնայած հայազգի հրամանատարներ Մ. Լոռիս Մելիքովի, Ս. Տեր-Ղուկասովի, Հ. Լազարյանի և Կ. Կամսարականի «զգուշացումներուն եւ բացատրութեանց, թե իրենք հայ ըլլալով հանդերձ, ռուսական բանակի վերին հրամանատարութեան եւ անոր կարգադրութեանց ենթակայ են»¹⁷⁰ և ամենայն հավանականությամբ վաղ թե ուշ թողնելու են Կարինը թուրքերին, ամենուրեք թևածում էին ազգային արժեքները վերագնահատելու, կրթամշակութային ասպարեզը զարգացնելու և ազատաբաղձ ձգտումներին հագուրդ տալու մղումները:

Բեռլինի վեհաժողովից հետո ռուսական զորքերը լքեցին Կարինը: Տեղի հայությունը, անզոր ու անապահով վիճակից ելնելով, ցանկացավ հեռանալ երկրից: Ռուսական կողմի պահանջով թուրքերի «խաղաղասեր» ձեռնարկների արդյունքում հայերը որոշ ժամանակ հանդարտվեցին և ոչ միայն անցան խաղաղ կյանքի, այլև սկսեցին մտածել կրթական ու մշակութային կյանքը զարգացնելու մասին: Հայկական նահանգների «ցաւերուն եւ պահանջներուն իրական կեդրոնը, հետեւաբար նաեւ զանոնք առաջնորդողը» դարձած Կարինի հայությունը, առանձնապես առաջադեմ մտավորականությունը, եզրակացրին, որ «61րդ յօդուածը լոկ քաղաքական մեքենայութիւն մըն էր» հայկական բարենորոգումները զանց առնելու և թուրքական իշխանություններին որևէ պատասխանատվությունից ազատ պահելու գործում¹⁷¹:

¹⁶⁹ Տե՛ս Կոստանդյան Է., Ակնարկներ արևմտահայ մշակութային և հասարակական-քաղաքական կյանքի պատմությունից (19-րդ դարի 80-ական թվականներ), Ե., 2005:

¹⁷⁰ Տե՛ս Չարըզ Դ., նշվ. աշխ., էջ 396-397:

¹⁷¹ Տե՛ս նույն տեղում, էջ 402:

Իշխանությունների հետզհետե խստացող քաղաքականությունը (Կարինի զինվորական նորանշանակ հրամանատար Ֆազլ փաշայի առաջին գործը եղավ հայկական բոլոր տեսակի հավաքույթների արգելումը, մշակութային ընկերությունների փակումը և այլն), քուրդ ու չերքեզ հրոսակների ավազակություններն ու անպատժելիությունը գալիս էին հակառակը համոզելու բոլոր նրանց, ովքեր դեռևս հույս ունեին ապավինելու իշխանությունների բարեհոգությանը: Հետզհետե ռուսական զսպաշապիկից ձերբազատվող թուրք ամբոխն էլ սկսեց կրկին ցույց տալ իր նենգ ու տմարդի դեմքը և բազմազան անօրենություններ կատարել հայեր նկատմամբ: Ստեղծված կացության արդյունքում Կարինի երիտասարդության մեջ «կը սկսի ներքին շարժում մը, որուն նպատակն էր երիտասարդութեան կազմակերպումը եւ զինուիլը, ինքնապաշտպանութեան դիմելու համար»¹⁷²: Կարինի առաջնորդարանն էլ դարձել էր գավառների յուրատեսակ կենտրոնը: Այս հանգամանքը «Կարնոյ ազգային մարմիններուն եւ երիտասարդութեանը կուտային առաջնորդողի դեր մը»¹⁷³:

Այս պայմաններում «Հայրենասիրաց» գաղտնի ընկերության հենքի վրա ազգանպաստ գործեր կատարելու անհագ մղումներով տոգորված երիտասարդներ՝ «Էրզրումցի Խաչատուր Կերեկցեան գործակցելով Կարապետ Ագաթեանի հետ երկուստեք հիմնեցին Հայրենասիրաց գաղտնի ընկերութիւնը, որի¹⁷⁴ աչքառու անդամներն էին Յակոբ Իշգալացեան, Ալեքսան Էթէլէկեան, Յովհաննէս Աստուրեան, Եղիշէ Թուրսունեան, Կարապետ և Յովհաննէս Նշկեաններ, Հաճի Յակոբ Սէրինկիւլեան, Տիգրան և Խաչատուր Կերեքցեաններ, Աւետիս և Գէորգ Վէմեաններ»¹⁷⁵: Իս. Կերեքցյանի ղեկավարությամբ և այդ ժամանակ Կարինի հայոց թեմի առաջնորդ Մ. Օրմանյանի օրհնությամբ կյանքի կոչված գաղտնի այդ

¹⁷² Տե՛ս նույն տեղում, էջ 403:

¹⁷³ Տե՛ս նույն տեղում, էջ 404:

¹⁷⁴ Այս անունով ընկերության մասին արխիվային վավերագրերում, ժամանակի նշանավոր գործիչների թողած հուշերում, գրագրություններում և պատմագիտական ուսումնասիրություններում այլ տեղեկություններ մեզ չհաջողվեց գտնել: Ենթադրելի է, որ «Հայրենասիրաց գաղտնի» ընկերությունը Կարինի առավել ակտիվ երիտասարդների կողմից ստեղծված ընկերություն էր, որը նախատիպը եղավ և առաջին քայլը «Պաշտպան հայրենյացի» ստեղծման ճանապարհին, և որ վերջինիս կազմակերպական ու ծրագրային հիմնադրույթների նախաձևերը եղել են այս ընկերության հիմնական ուղենիշները:

¹⁷⁵ Տե՛ս ՀԱԱ, ֆ. 420, ց. 16, գ. 8, թ. 52:

կազմակերպությունը, ուղղակիորեն, ընդառաջումն էր Բեռլինի վեհաժողովից հետո Մ. Խրիմյանի «Երկաթե շերեփ» ունենալու պատգամին¹⁷⁶:

Կազմակերպության առաջնահերթ նպատակը՝ ծրագիր-մինիմումը, եղել է հայ ժողովրդի ինքնապաշտպանության կազմակերպումը, որի մասին հետագայում՝ դատավարության ժամանակ, խոստովանել են կազմակերպության անդամները: Իսկ վերջնական նպատակը՝ ծրագիր-մաքսիմումը՝ սեփական ուժերով Հայաստանի անկախության վերականգնումը, որը հասկանալի պատճառներով դատավարության ընթացքում նրանք չեն խոստովանել:

Կազմակերպության հիմնական շարժիչ ուժը և գործող անձինք «գործաւոր, արհեստաւոր եւ գիւղացի դասերն էին»¹⁷⁷, քանի որ ավելի շատ ու հաճախ այս խավերն էին ենթարկվում թուրքերի ու քրդերի բռնություններին, բնականաբար նրանք էլ նախ և առաջ փրկության եզրեր էին որոնում: Սակայն քիչ չեն եղել դեպքերը, երբ կազմակերպությանը նյութապես և այլ միջոցներով սատարել են նաև քաղաքի ունևոր խավի և եկեղեցական դասի ներկայացուցիչները:

1882 թ. նոյեմբերին կազմակերպությունը, որի անդամների ու համակրողների թիվն օր օրի ավելանում էր և հասավ հարյուրների¹⁷⁸, պատահականորեն հայտնաբերվում է և հիմնականում ջախջախվում, թեև դանդաղ ու խաթարված ընթացքով հարատևեց մինչև 90-ական թվականների սկզբները¹⁷⁹:

Ընկերությունը նպատակ էր դրել առողջ, համարձակ, խելացի, ուժեղ և վստահելի հայ երիտասարդներին համախմբելու նույն տեսլականի շուրջ և գոյացնելու նույն գաղափարի համար զոհողությունների պատրաստ կազմակերպություն: Միջոցներ հայթայթել, զենք ձեռք բերել և զինավարժել երիտասարդությանը, որպեսզի նրանք ի վիճակի լինեն պաշտպանելու «ինքզինքնին հարստահարիչներուն և սպաննիչներուն

¹⁷⁶ Տե՛ս Նշկեան Յ., Առաջին կայծերը, էջ մը Կարնոյ զարթօնքէն, Ֆրեզնօ, 1930, էջ 110:

¹⁷⁷ ՀԱԱ, ֆ. 420, ց. 16, գ. 8, թ. 48:

¹⁷⁸ Կազմակերպության անդամների թվաքանակի ճշգրտումը մեր խնդիրներից դուրս է: Պարզապես նշենք, որ հուշագրություններում, մասնագիտական գրականության մեջ և թերթային հրապարակումներում երբեմն խոսվում է գնում չորս հազար և նույնիսկ ավելի անդամների մասին: Հաշվի առնելով ժամանակն ու Կարինի հայ բնակչության թվաքանակը՝ ենթադրում ենք, որ կազմակերպության անդամների թիվն ընդամենը մի քանի հարյուրի կարող էր հասնել:

¹⁷⁹ Տե՛ս Հովհաննիսյան Ռ., նշվ աշխ., էջ 11-13:

դէմ երբ առիթը ներկայանայ»¹⁸⁰: «Պաշտպան հայրենյացն» աչքի էր ընկնում երկաթյա կարգապահությամբ:

Ընկերության յուրաքանչյուր անդամ ստորագրում էր հատուկ այդ նպատակով մշակված երդմնագիր, որով պարտավորվում էր քաղաքական ազատություն ձեռք բերելու համար բացարձակ գաղտնապահությամբ և կատարյալ անձնազոհությամբ կատարել ընկերության բոլոր հրահանգները: Ապա նրանք ստանում էին կազմակերպության անդամատոմսեր, որոնք «Պ. Հ.» («Պաշտպան հայրենյաց») դրոշմով թերթիկներ էին¹⁸¹: Երդմնագրերի վրա նկարված էին խաչաձևված թուր և դաշույն, ու գրված էր «ազգային բարենպատակ ձեռնարկս», որը հետամուտ էր հայ ժողովրդին ազատագրել քրդերի, չերքեզների և թուրքական պաշտոնյաների դաժան բռնություններից: Այն վերջանում էր ամերիկյան հայտնի քաղաքական գործչի դասական դարձած թևավոր արտահայտությամբ՝ «Ազատություն կամ մահ»¹⁸² նշանաբանով»¹⁸³: Երդմնագրերի օրինակն առաջինը ստորագրած Ալեքսան Էթալիկյանը, որն իր վրա էր վերցրել դեռ կազմակերպական շրջանում գտնվող ընկերությանը սեփական միջոցներից դրամական օժանդակություն ցույց տալու գործը, գերագույն խորհրդի հանձնարարությամբ հետևողականորեն ձեռնամուխ է լինում կազմակերպության մեջ նոր անդամների հավաքագրմանը:

Կազմակերպության ղեկավարությունն իրականացնում էր յոթ հոգուց բաղկացած Գերագույն խորհուրդը (Խ. Կերեքցյան, Հ. Իշգալացյան, Ա. Էթալիկյան, Հ. Աստուրյան, Ե. Տուրսունյան, Կ. և Հ. Նշկյաններ)¹⁸⁴: Գաղտնապահության նպատակով կազմակերպությունը ձևավորվել է տասնյակների համակարգով. ղեկավարներից յուրաքանչյուրը հավաքագրում էր 10 անդամի, երդում ընդունում, և ինքը դառնում

¹⁸⁰ ՏԵՍ ՀԱԱ, ֆ. 420, ց. 16, գ. 8, թ. 52:

¹⁸¹ Կարծում ենք, որ հուշագիրների, ինչպես նաև ուսումնասիրողների գրքից գիրք անցած այս դրույթն այնքան էլ չի համապատասխանում իրականությանը: Անդամատոմսերն ավելի շուտ ստեղծվել էին «դրսում» ներկայացնելու, տպավորություն ստեղծելու և օգնություն ստանալու համար, քան թե անդամներին բաժանելու, քանի որ կազմակերպության ղեկավարները խելացի մարդիկ էին և չէին կարող այդպիսի հասարակ միջոցով վտանգել կազմակերպության գոյությունն ու մարդկանց կյանքը:

¹⁸² Պատրիկ Հենրին ամերիկյան քաղաքական գործիչ էր, անկախության պայքարի նվիրյալ: Վիրջինիա նահանգի օրենսդիր ժողովում 1755 թ. նա հանդես եկավ Ամերիկայի ժողովրդի իրավունքների պաշտպանական կրակոտ ճառով, որտեղ նրա արտասանած «Տվեք ինձ ազատություն կամ մահ» (give me liberty or give me death) նախադասությունը դարձավ դասական թևավոր արտահայտություն: Որևէ փաստ մեզ հայտնի չէ, թե ինչ աղբյուրից էին նրանք տեղեկացել այդ կոչի մասին:

¹⁸³ ՏԵՍ Նշկեան Յ., Առաջին կայծերը, էջ մը Կարնոյ զարթօնքէն, Ֆրեզնո, 1930, էջ 122:

¹⁸⁴ ՏԵՍ նույն տեղում, էջ 110:

տասնապետ: Տասնյակի անդամներն իրար չէին ճանաչում և կապ էին պահպանում միայն տասնապետի հետ: Անդամներն իրավասություն ունեին անհատաբար հեղափոխական այս գաղտնի ուխտին միանալու երդում վերցնել կամավոր հայ երիտասարդներից: Նորագիր յուրաքանչյուր հեղափոխական իր երդումով հանձնառության տակ էր մտնում իր շուրջը խմբել տասնոգիանոց ուխտյալներ, որոնք միասնաբար պիտի կազմեին «Պաշտպան հայրենյաց»-ի մի բջիջ՝ հրամանատար ունենալով իրենց անդամագրող հեղափոխականին: Եթե անդամներից որևէ մեկը եռանդ ու գործելու հատուկ ունակություն էր դրսևորում, տասնապետը նրան թույլ էր տալիս կազմել իր տասնյակը: Անդամների համար սահմանված էր անդամավճար՝ տարեկան մեկ քառորդ մեջիդիե, հավաքված գումարով պետք է զենք գնվեր: Նախատեսվում էր զենքի հայթայթումը կազմակերպել հայ վաճառականների միջոցով և ցածր գներով, իսկ հարկ եղած դեպքում նաև անվճար բաժանել ժողովրդին: Այդ ուղիով զենք ձեռք բերելու գործում կարնեցիները որոշ փորձ ունեին, դեռ 1877 թ. վաճառականներ Հ. Եգանյանը և Հ. Նշկյանը Կ. Պոլսից զենք էին տեղափոխում Կարին և վաճառում հատկապես հայերին¹⁸⁵: Զենք ձեռք բերելու համար նաև կազմակերպության ունևոր անդամների կողմից կամավոր նվիրատվություններ էին կատարվում, ինչպես նաև հանգանակություններ կազմակերպվում:

Կազմակերպության անդամները արհեստավորներ էին, երկրագործներ: Կազմակերպությունը հովանավորվում էր Կարինի հոգևոր առաջնորդ Մաղաքիա Օրմանյանի կողմից: «Պաշտպան հայրենյացն» իր մասնաճյուղերն ուներ Արևմտյան Հայաստանի տարբեր նահանգներում: Սերտ կապեր էին հաստատվել նաև արևելահայերի հետ: Այդ տեղական մասնաճյուղերի ղեկավարությունն իրագործելու նպատակով որոշվում և է Արևմտյան Հայաստանի քաղաքներում ստեղծել հինգական մարդուց կազմված խորհուրդներ, որն իրագործվում է մասամբ: Շարժման գաղափարներն ու գործելակերպը մեծ տարածում էին գտել հատկապես Արևմտյան Հայաստանի մեծ քաղաքներում, ինչպես նաև Օսմանյան կայսրության հայաբնակ շատ այլ վայրերում. «Ամենուր պատրաստ են զենքի դիմելու, որպեսզի թոթափեն

¹⁸⁵ Տե՛ս նույն տեղում, էջ 27-29:

թուրքական լուծը»,- գրում էին ժամանակի մամուլի ռուսական ու եվրոպական բազմաթիվ օրգաններ¹⁸⁶:

Կազմակերպությունը միասնական ուժերով թուրքական բռնատիրությունը թոթափելու կոչերով թռուցիկներ էր տարածում: «Պաշտպան հայրենյաց»-ի «արմատական» թևը, ազատագրության միակ ուղին համարելով զինված ապստամբությունը, կողմ էր անհապաղ զինված ելույթին: Իսկ «չափավոր» թևը ժողովրդի վիճակի բարելավումը տեսնում էր աստիճանական բարեփոխումների միջոցով մեծ տերությունների, մասնավորապես Ռուսաստանի օգնությամբ և գտնում էր, որ զինված ելույթը պետք է իրականացնել մանրակրկիտ և երկարատև նախապատրաստությունից հետո միայն:

Ձենք ու զինամթերք ձեռք բերելու համար «Պաշտպան հայրենյացը» փորձել է նյութական միջոցներ հայթայթելու նպատակով կապեր հաստատել հայ քաղաքական և կրոնական գործիչների՝ Մ. Խրիմյանի Գ. Արծրունու, Կ. Պոլսի պատրիարք Ն. Վարժապետյանի և հայ ազգի վիճակով մտահոգ այլ անհատների հետ: Կազմակերպության գաղափարական ու գործնական աշխատանքների որոնումների շրջանում զենք հայթայթելու և կովկասահայերի հետ խորհրդակցելու նպատակով որոշվում է Խ. Կերեքցյանին ուղարկել Կովկաս: Ճանապարհին նա մտնում է Վան, կապ հաստատում «Սև խաչի» անդամների հետ, հանդիպում է Մ. Խրիմյանին: Վերջինս քաջալերում է նրան, հրահանգներ և արևելահայ գործիչներին ուղղված նամակներ տալիս¹⁸⁷: Նրա խորհրդով Խ. Կերեքցյանը Վանից անցնում է Թիֆլիս, ապա՝ Երևան: Թիֆլիսում հանդիպումներ է ունենում արևելահայ մի շարք գործիչների հետ, խրախուսվում նրանց կողմից, այնուհետև վերադառնում Կարին: Այդ ընթացքում կազմակերպության մասին տեղեկանում է Մ. Օրմանյանը: Հայրենասեր եպիսկոպոսը ոգևորվելով ոգևորում է անդամներին, հորդորում լինել խիստ գաղտնապահ և գործել զգուշավոր, առանց ցուցադրական քայլերի:

Իրենց հերթին արևելահայերն ապստամբության հարցը խորը և բազմակողմանի ուսումնասիրելու և կազմակերպության աշխատանքներն ավելի գործնական դարձնելու

¹⁸⁶ Տե՛ս, օրինակ, «Московский телеграф», 1883, № 2 և այլ թերթեր:

¹⁸⁷ Տե՛ս Նշկեան Յ., Առաջին կայծերը, էջ մը Կարնոյ զարթոնքէն, Ֆրեզնո, 1930, էջ 110:

համար որոշում են Թիֆլիսից գործիչներ ուղարկել Կարին: Այդ նպատակով 1882 թ. հուլիսին Կարին են գալիս Բագրատ Նավասարդյանը և Արսեն Թոխմախյանը:

Մինչ այդ էլ 1882 թ. նոյեմբերի 1-ին առևտրական գործունեության պատրվակով դրամ հայթայթելու և զենք տեղափոխելու նպատակով Կ.Պոլիս է մեկնում կազմակերպության հիմնադիրներից Կ. Նշկյանը: Այստեղ նա հանդիպում է պատրիարք Ն. Վարժապետյանին: Վերջինս ևս հրահանգում է գործել ծայրահեղ զգույշ, ձեռնպահ մնալ ցուցամոլ արարքներից և որևէ գրավոր հետք թողնելուց: Առատ խոստումներ ստանալով՝ մի քանի ամսից նա վերադառնում է Կարին:

Անցնում էին օրեր, ամիսներ, սակայն խոստացված օգնությունն ուշանում էր: Այդ ժամանակ Գերագույն խորհրդի նիստերից մեկում Խ. Կերեքցյանը մի հանդուգն ծրագիր է առաջարկում՝ զենք ու զինամթերք ձեռք բերելու համար հարձակվել Կարինի կառավարական զինապահեստի վրա: Այս առաջարկությունը բուռն քննարկումների տեղիք է տալիս և՛ իրենց համար ուժերի ոչ նպաստավոր փոխհարաբերակցության պատճառաբանությամբ մեծամասնության կողմից մերժվում:

Բուռն քննարկումներից հետո «Գերագույն խորհուրդը» որոշում է արևելահայերից դրամական և այլ տեսակի օգնություն խնդրելու նպատակով այլևս չհապաղել և Խ. Կերեքցյանին նորից ուղարկել Թիֆլիս, սակայն այս անգամ Թիֆլիս է մեկնում Կ. Նշկյանը: Կազմակերպության գոյությունն ու անդամաշատությունը հավաստելու նպատակով հանձնարարվում է նկարիչ-ձևավորող Միքայել Մանուկյանին անդամատոմսեր և երդմնագրեր տպել: Մի քանի օրինակ իր հետ դրանցից վերցնելով՝ Կ. Նշկյանը մեկնում է Թիֆլիս, հանդիպումներ է ունենում տեղի հայ գործիչների, այդ թվում՝ Գր. Արծրունու և Պ. Տեր-Ասատուրյանի և այլոց հետ: Գր. Արծրունին Հ. Նշկյանին խորհուրդ է տալիս շուտափույթ ոչնչացնել բոլոր տեսակի երդմնագրերը, անդամատոմսերն ու մյուս վտանգավոր թղթերը, որոնք կարող են ընկնել թուրքական ոստիկանության ձեռքը և դառնալ կազմակերպության հայտնաբերման պատճառ: Ինչպես իրավացիորեն գրում է Մ. Օրմանյանը. «...ընկերակիցներու արձանագրության տոմսեր բաշխելու ձևը գազանության (ակնհայտ է, որ Օրմանյանը նկատի ունի գաղտնապահությունը, իսկ թե ինչու է այդ բառաձևով գրել, մեզ չհաջողվեց պարզել)

պահանջին չէր հարմարեր և ձախող հետևանք ալ ունեցավ»¹⁸⁸: Ի դեպ, երբ կազմակերպության անդամներից մեկը (ենթադրում ենք՝ Կ. Նշկյանը) Կ.Պոլսում պատրիարք Ն. Վարժապետյանին ներկայացնում է կազմակերպության անդամատոմսը, վերջինս, «խակ և անփորձ» գործ համարելով այդտեսակ պահվածքը, պատվիրում է անմիջապես ոչնչացնել դրանք, «լրջանալ և հասուն խորհուրդներով գործել»¹⁸⁹:

Անսալով այդ խորհուրդներին՝ Կարինում «Պաշտպան հայրենյացի» անդամները հավաքում և այրում են բոլոր անդամատոմսերը: Միայն մի քանի օրինակ մնում է Պալաս Էիրամջանի տանը, որոնք էլ դառնում են կազմակերպության բացահայտման իրական պատճառը: 1882 թ. նոյեմբերի 25-ին Պ. Էիրամջանը և Գալուստը գնում են այդ անդամատոմսերը վերցնելու: Ճանապարհին՝ կարգալույծ քահանա Մելքիսեդեկի տան մոտ, կռիվ է սկսվում «Պաշտպան հայրենյացի» մի քանի անդամների միջև: Քահանայի որդին ոստիկանություն է կանչում և պահանջում պատասխանատվության ենթարկել բոլոր կռվողներին: Նրանց տանում են ոստիկանատուն, որտեղ էլ խուզարկության ժամանակ Պալաս Տեր-Ղազարյանի և Հարությունի մոտ հայտնաբերվում են ընկերության անդամատոմսեր, հավանաբար նաև այլ թղթեր: Խոշտանգումներին երկար չդիմանալով՝ Պալասը հանձնվում է և մատնում նկարիչ Մ. Մանուկյանին, գուցե նաև իր հարյուրապետ Ա. Էթալիկյանին և այն տասնյակի անդամներին, որի հրամանատարն էր ինքը: Լսելով, որ կազմակերպությունը հայտնաբերված է, նկարիչ Միքայելը ներկայանում է ոստիկանատուն և խոստանում ամեն ինչ ճշտությամբ ու մանրամասնորեն պատմել, եթե իրեն ընդունեն ոչ թե որպես շարժման մասնակից, այլ որպես վկա, լրատու («մյուխպիր») և վարձատրեն: Կուսակալը երդումով երկուսն էլ խոստանում է: Միքայելի մատնությամբ ձերբակալվում են Գերագույն խորհրդի՝ քաղաքում գտնվող անդամները, բացառությամբ Կ. Նշկյանի, որը դեռ չէր վերադարձել Կովկասից¹⁹⁰, ապա և «Պաշտպան հայրենյաց»-ի բազմաթիվ

¹⁸⁸ Տե՛ս Օրմանեան Մ., Խոհ և խօսք, Երուսաղեմ, 1929, էջ 119:

¹⁸⁹ Տե՛ս Հայոց պատմություն, հ. III, գիրք առաջին, Ե., 2010, էջ 469:

¹⁹⁰ Ռ. Հովհաննիսյանի մի հոդվածում որպես Գերագույն խորհրդի չձերբակալված անդամ հիշատակվում է Եղ. Տուրսունյանի անունը, որը, սակայն, հիշատակված չէ Գերագույն խորհրդի անդամների մեզ հայտնի ցուցակում: Նրա մասին որևէ տեղեկություն չկա նաև մեզ հայտնի մյուս աղբյուրներում: Տե՛ս Հովհաննիսյան Ռ., Կարինի «Պաշտպան հայրենյաց» կազմակերպության պատմությունից, «ՊԲՀ», 1964, թիվ 2 (292), էջ 296:

շարքային անդամներ, որոնց թիվը, շնորհիվ կազմակերպության տասնապետական կառուցվածքի, 72-ից չի անցնում: Չնայած բոլոր խոշտանգումներին՝ Խ. Կերեքցյանն ու նրա ընկերները չմատնեցին Թիֆլիսի իրենց բարեկամներին, որոնցով դատաքննիչները փութաջանորեն հետաքրքրվում էին:

Կազմակերպության հայտնաբերումից անմիջապես հետո օսմանյան իշխանությունները սարսափի մեջ ընկան: Կառավարության շրջանակներում հնչում է տազնապի ազդանշան Օսմանյան կայսրությունը տապալելու նպատակով ստեղծված մի հզոր կազմակերպության հայտնաբերման մասին: Կարինի կուսակալի տենդագին հեռագրերը համաշխարհային հանրությանը հայտնում էին չափազանցված թվեր և հայերի դավադրական գործունեության մասին: Ազդարարեցին նաև այն մասին, որ ողջ Արևմտյան Հայաստանը հեղափոխական շարժման մեջ է և առաջիկայում Ռուսաստանի օժանդակությամբ ապստամբություն է բարձրացնելու: Ողջ կայսրությունով մեկ արձագանքեցին օգնության խուճապային աղաղակներին: Նույնիսկ Երզնկայում տեղավորված թուրքական չորրորդ բանակը «քալեց Կարինի վրա»: Քաղաքի ամրոցների հրանոթներն ուղղվեցին դեպի հայկական թաղամասերը: Տեղական զինվորներն ու ոստիկանությունը լրացուցիչ փամփուշտ ստացան, և ամենուր պատերազմական ժամանակների պահակություն սահմանվեց: Այնպիսի իրարանցում էր սկսվել, կարծես «ահեղ բանակ մը օսմանյան գահուն հաստատությանը սպառնար»¹⁹¹: Շուտով, սակայն, պարզ դարձավ, որ այդպիսի իրարանցման հարկ չկա, և նրանք հանդարտվեցին: Այնուհետև, վախենալով եվրոպական տերությունների, մասնավորապես, Ռուսաստանի միջամտությունից, Բ. Դուռը սկսեց հերքել նախկին հայտարարությունները՝ միաժամանակ շարունակելով ձերբակալությունները: Կ. Պոլսից ստացված հրահանգների համաձայն՝ արդեն այդ ձերբակալություններն ու հարցաքննությունները սկսեցին ավելի գաղտնի կատարվել, իսկ օտարերկրյա դիտորդներին շարժումը ներկայացվեց որպես տեղական բնույթ ունեցող աննշան մի դեպք: Կազմակերպության հայտնաբերվելու հենց հաջորդ օրը Խաչատուր Կերեքցյանի կրտսեր եղբայրը հեղափոխական կոչերով և այլ փաստաթղթերով լի արկղը բեռնակիր Հովհաննեսի միջոցով Պողոս Թերզիբաշի (Իշղալացյան) տանից տեղափոխում է

¹⁹¹ Տե՛ս ԳԱԹ, Թ. Ազատյանի ֆ., բաժ. XII, գ. 11507:

առաջնորդարանի ծառա Մարութի բնակարան և նրա հետ միասին այրում այնտեղ եղած թղթերը՝ հավանաբար դրանով էլ շատերին փրկելով անխուսափելի պատժից:

Բանտում ահավոր խոշտանգումների էին ենթարկում ձերբակալվածներին: Բայց ոչինչ չէր վիատեցնում հայրենասերներին¹⁹²: Այդ օրերին Կարինի հույները մի փոքրիկ գումար են հավաքում և, ի նշան հույն ազգաբնակչության լուռ համերաշխության, իրենց առաջնորդի միջոցով հանձնում Մ. Օրմանյանին՝ ձերբակալվածների ընտանիքներին օգնելու նպատակով¹⁹³:

1883 թ. ապրիլի սկզբին ավարտվեց մեղադրական եզրակացություն հերյուրելու արարողությունը: 1883 թ. ապրիլի 7-ին սկսվում է «Պաշտպան հայրենյացի» անդամների դատավարությունը, որը Օսմանյան կայսրությունում հայերի առաջին քաղաքական դատավարությունն էր: Պետական մեղադրողը հայտարարում է, որ կազմակերպության անդամները ցանկացել են հեղափոխական ճանապարհով Թուրքիայից անջատել «օսմանյան երկրների մի մասը, այսինքն՝ էրզրումը և շրջակայքը»¹⁹⁴: Դատավարության վերջում պետական շահերի պաշտպանը կազմակերպության հիմնադիր անդամների համար պահանջեց մահապատիժ: Սակայն դատարանը համեմատաբար մեղմ պատիժներ սահմանեց: Խ. Կերեքցյանը դատապարտվեց 15, Կ. Նշկյանը (հեռակա)՝ 13, Հ. Ասատուրյանն ու Հ. Իշգալացյանը՝ 10-ական, Ա. Էթալակյանը՝ 7 տարի բանտարգելության, 4 հոգի դատապարտվեցին 6, 31 հոգի՝ 5-ական տարի ազատազրկման, 16 հոգի դատարանի վճռով, հաշվի առնելով, որ նրանք նախնական կալանքում արդեն կրել են իրենց պատիժը, ազատ արձակվեցին: Կալանքից ազատ արձակվեցին նաև մյուս ձերբակալվածները¹⁹⁵:

Դատապարտյալները Կ.Պոլիս ուղարկեցին բողոքագրեր, որոնցում հերքում էին մեղադրանքներն ու դժգոհություն հայտնում հարցաքննությունների ժամանակ օրինապահների թույլ տված կամայականությունների և կտտանքների համար: Իշխանությունները «արդարադատ լինելու» իրենց կեցվածքն ապացուցելու համար հերթական արարը բեմադրեցին և դատավճիռը բեկանելով՝ գործը վերաքննության

¹⁹² Տե՛ս Հովհաննիսյան Ռ., Կարինի «Պաշտպան հայրենյաց» կազմակերպության պատմությունից, «ՊԲՀ», 1964, թիվ 2 (292), էջ 297:

¹⁹³ Տե՛ս ԳԱԹ, Թ. Ազատյանի ֆ., բաժ. XII, գ. 11508:

¹⁹⁴ Տե՛ս ԳԱԹ, Թ. Ազատյանի ֆ., բաժ. XII, գ. 11519: Տե՛ս նաև «Մասիս», 1883, թիվ 3463-3464:

¹⁹⁵ Տե՛ս Չարըզ Դ., նշվ. աշխ., էջ 409:

ուղարկեցին: 1883 թ. մայիսի 31-ի վճռով Կարինի դատարանը վերահաստատեց մեղադրանքի ծավալը և դատավճիռները թողեց անփոփոխ: Առաջ անցնելով նշենք, որ բանտարկվածներից ոչ ոք սահմանված պատիժը մինչև վերջ չկրեց: 1884 թ. հուլիսին նրանց մեծ մասը ներում ստացավ, իսկ մյուսներն ազատվեցին մի քանի ամիս անց: Միայն Խ. Կերեքցյանն ու Ա. Էթալակյանը ազատվեցին 1886 թ. սեպտեմբերին:

Նկատենք, որ «Պաշտպան հայրենյաց»-ի գործունեությունը լայն արձագանք գտավ արևմտահայության մեջ: Տարբեր տեղերից հայ մարդիկ իրենց համակրանքն էին արտահայտում բռնադատված հերոսներին: Խուլ դժգոհությամբ և հուզումներով ու խլրտոցներով էր սպառնում Վանի, Մուշի, Տարոնի, Փոքր Հայքի, Կ.Պոլսի և այլ վայրերի հայությունը: Շարժմանն արձագանքեց նաև մամուլը: Հրապարակումներ եղան «Մասիս», «Մամուլ» «Մշակ» և այլ պարբերականներում¹⁹⁶: Իսկ Կարինի ողջ բնակչությունն ակնդետ հետևում էր այդ գործընթացներին, քանի որ նահանգի հայության մեծ մասը ուղղակի կամ այլ ձևով առնչվում էր դրան: Այսինքն՝ այդ շարժումը համաժողովրդական բնույթ ուներ: «Պաշտպան հայրենյաց»-ը իր ճյուղավորումներով տարածվել էր ողջ Արևմտյան Հայաստանում և կապեր էր ստեղծել արևելահայության հետ՝ փորձելով դառնալ արևմտահայության սոցիալական ու քաղաքական հարստահարությունների դեմ ուղղված ժողովրդական ընդվզումների կենտրոն:

Շարժումը ժողովրդական բնույթ ուներ, իսկ կազմակերպության հիմնական շարժիչ ուժը քաղաքի արհեստավորներն էին և գյուղացիությունը: «...Գրեթե բոլորը կա՛մ բոլորովին կարոտ են, կա՛մ օրը աշխատող և օրը ուտող», -գրում էր Օրմանյանը «Պաշտպան հայրենյաց»-ի բանտարկված անդամների մասին¹⁹⁷: «Մեկ-երկու վաճառականի, դերձակի կամ ուսուցչի բացառությամբ, բոլորն էլ հայ աշխատավորներ էին՝ կոշկակարներ, դարբիններ, անագողներ, կտավագործներ, ասպանդակագործներ, հյուսներ, մաղագործներ, ջրաղացպաններ, մշակներ, ջորեպաններ և մոտիկ գյուղերի հողի աշխատավորներ»¹⁹⁸, -գրում է Ռ. Հովհաննիսյանը: Կազմակերպության պատմության բոլոր ծախքերին քաջատեղյակ հեղինակը, կաշկանդված լինելով

¹⁹⁶ Տե՛ս «Մասիս», 1883, թիվ 3463-3464, թիվ 3497, «Մամուլ», 1882, թիվ 973, «Մշակ», 1883, թիվ 4, թիվ 6 և այլն:

¹⁹⁷ Տե՛ս ԳԱԹ, Թ. Ազատյանի ֆ., բաժ. XII, գ. 11512:

¹⁹⁸ Տե՛ս Հովհաննիսյան Ռ., Կարինի «Պաշտպան հայրենյաց» կազմակերպության պատմությունից, «ՊԲՀ», 1964, թիվ 2 (292), էջ 298:

խորհրդային գաղափարախոսական կապանքներով, թեև փորձում է ժխտել այդ իրողությունը, սակայն շարժումն իրականում համակրում ու շարժմանն աջակցում էին նաև ունևոր խավի և հոգևորականության բազմաթիվ առաջադեմ ներկայացուցիչներ: Իր հրապարակումներում ակադեմիկոս Մ. Ներսիսյանը նույնպես անընդհատ շեշտել է ազատագրական շարժման համաժողովրդական բնույթը և այն հանգամանքը, որ նրանում ընդգրկված են եղել բնակչության գրեթե բոլոր խավերը և որպես օրինակ վկայակոչում է Կարինի «Պաշտպան հայրենյաց» գաղտնի կազմակերպության կազմը¹⁹⁹:

«Պաշտպան հայրենյաց»-ի նկատմամբ իշխանությունների դաժան հաշվեհարդարը թեև որոշ հիասթափության առիթ եղավ, սակայն ժողովուրդը չհուսալքվեց: Ժամանակակիցների միաձայն պնդմամբ 1882-1886 թթ. ընթացքում բանտարկյալների ընտանիքներին օգնելու և նրանց ազատման գործը «կը դառնայ նուիրուած գործունեութեան ասպարեզ մը» բոլորի համար: Հոգևոր առաջնորդը, ազգային իշխանության մարմինները և քաղաքի բոլոր ազդեցիկ անհատներն աշխատանքներ էին տանում այդ ուղղությամբ: Նյութական զոհողություններին բոլորն էին մասնակցում²⁰⁰: Այդ իրադարձություններից հետո Կարինում ոչ միայն ազատագրական շարժումը չմարեց, այլև ընդհակառակը՝ ձերբակալվելուց ազատ մնացած, ավելի փորձված ու հասունացած գործիչները նոր եռանդով նետվեցին ազատագրական պայքարի հորձանուտը: Ազատագրական ձգտումներին ավելացել էր նաև վրեժի գործոնը: Ավելի ակտիվ էր Սանասարյան վարժարանի շուրջը համախմբված մտավորականությունը: Նրանց ջանքերով և հատկապես Գ. Չիլինկիրյանի եռանդուն մասնակցությամբ սկսվում են երիտասարդության գործունեությունն ավելի նպատակաուղղված հունի մեջ դնելու և ավելի զգույշ գործելու եռանդուն աշխատանքներ: «Թուրքական բանտի ամբողջ սարսափները կրած ազնիվ հայորդին»²⁰¹ (Խ. Կերեքցյանը), որ դարձել էր ավելի լուրջ, խոհուն և շրջահայաց, ազատվելուց հետո միանալով նրանց, փորձում էր վերջիններին հետ պահել անխոհեմ արարքներից: Պահպանելով գաղտնիության սկզբունքը (ավելորդ կասկածներ

¹⁹⁹ Տե՛ս Մելքոնյան Է., Մկրտիչ Ներսիսյանն ընդդեմ հայ ազգային-ազատագրական շարժման պատմության կեղծարարների, «ԼՀԳ», թիվ 1, 1996 թ., էջ 28-40:

²⁰⁰ Տե՛ս Չարլզ Ղ., նշվ. աշխ., էջ 407:

²⁰¹ Տե՛ս Հայոց պատմություն, հ. III, գիրք առաջին, Ե., 2010, էջ 470:

չհարուցելու համար կազմակերպության հավաքները տեղի էին ունենում տներում՝ խնջույքների անվան տակ)՝ Խ. Կերեքցյանն ու Հ. Իշգալացյանը փորձեր արեցին վերականգնելու կազմակերպությունը, սակայն որևէ կոնկրետ քայլ չձեռնարկեցին:

Այդ ընթացքում շարժումը կրկին որոշ աշխուժություն ապրեց, որը դրսևորվեց 1890 թ. Կարինում տեղի ունեցած տարածած զինված ելույթով: Որից հետո այն դանդաղ մարեց՝ աստիճանաբար տեղը զիջելով առավել կազմակերպված քաղաքական կառույցներին՝ ազգային կուսակցություններին, որոնք 1890-ական թթ. սկզբին փորձեցին իրենց ձեռքը վերցնել ազատագրական շարժումների ղեկավարությունը: Դա էլ տարածայնությունների և երկպառակությունների պատճառ դարձավ այդ ասպարեզում փորձված գործիչների և հայրենի երկիրն ու սեփական ժողովրդին անմիջապես ազատ տեսնելու մղումներով առաջնորդվող երիտասարդության միջև: Հետևանքը եղավ այն, որ 1891 թ. օգոստոսին Խ. Կերեքցյանը սպանվեց:

«Պաշտպան հայրենյաց»-ի գործունեությունը, որ Ա. Արփիարյանն իրավացիորեն գնահատում է որպես Զեյթունի հերոսական ապստամբության նման մի իրադարձություն²⁰², համազգային բնույթ ստանալով, հուշեց հայ ժողովրդին, որ նա իր ազատությունը կարող է ձեռք բերել միայն կազմակերպված, հետևողական ու զինված պայքարով: Ճիշտ է, միայն մանկության շրջան ապրած և առաջին անվստահ քայլերն անող «Պաշտպան հայրենյացն» իր նպատակների կենսագործման համար մղած պայքարի արշալույսին նահատակվեց, սակայն նրա գործունեությունը նշանակալից երևույթ էր արևմտահայ ազգային-ազատագրական շարժումների համատեքստում և կազմում է 1880-ական թթ. սկսված նրա վերելքի փառապսակը: «Չնայած քաղաքական ասպարեզից հեռանալուն, «Պաշտպան Հայրենյաց»-ը կարևոր նշանակություն ունեցավ արևմտահայ ազգային-ազատագրական շարժման համար՝ իր գործունեությամբ նշանավորելով օսմանյան բռնապետության դեմ հայ ժողովրդի պայքարի նոր շրջանի սկիզբը»²⁰³: Պաշտպան հայրենյաց»-ի գործունեությունից խիստ անհանգստացած իշխանություններն արեցին ամեն հնարավորը՝ հայ ժողովրդի ազատագրական ձգտումները խեղդելու համար, սակայն չհասան իրենց նպատակին, քանի որ՝ այդ

²⁰² Տե՛ս «Մշակ», 1883, թիվ 6:

²⁰³ Տե՛ս Հայոց պատմություն, հ. III, գիրք առաջին, Ե., էջ 467:

ազատաբաղձ նպատակները որդեգրելով՝ շուտով պայքարի նետվեցին ազգային կուսակցությունները:

«Պաշտպան հայրենյացի» շնորհիվ Կարինում ազգային-ազատագրական շարժումն իր շղթայազերծման կարևորագույն խոստումներից մեկը կատարեց: Հայկական հեղափոխության բացահայտ ծնունդը տեղի ունեցավ 1882 թվականի դեկտեմբերի 4-ին, երբ Կարինում հայ երիտասարդությունը, ըմբոստանալով սուլթանի բռնատիրության դեմ՝ հայոց ազատամարտի բռնկման ազդանշանը տվեց իր կազմակերպած մեծ ցույցով: Դրանից ներշնչված՝ հայ գուսանները սերունդներ ոգեշնչող երգի վերածեցին «Ձայնը մը հնչեց Էրզրումի հայոց լեռներից» պատգամը, իսկ ժողովուրդը մեծ խանդավառությամբ փարվեց զինված ապստամբության գաղափարին:

1.3 Հայ ազգային կուսակցությունների տեղական մարմինների ստեղծումը Կարինում և դրանց գործունեության վաղ շրջանը

Մինչև ազգային կուսակցությունների տեղական մարմինների ձևավորումը առանց «դուրսի թելադրութեան եւ ծրագրուած գործունեութեան»²⁰⁴ Կարինում զանազան «անմեղ» անուններով («Երկրագործական», «Պաշտպան հայրենյաց», «Ուսումնասիրաց», «Ընթերցասիրաց» և այլն) քողարկված արդեն ստեղծվել էր «անանուն կուսակցութիւն մը», որի գաղափարական ղեկավարներն անցյալի դառը փորձից դաս քաղելով, դանդաղ և զգուշավոր քայլերով, իրենց շարքեր ներառելով խելացի երիտասարդներին, ընթանում էին դեպի ազատություն տանող բաղձալի նպատակը: Շուտով տարածաշրջան ներթափանցեցին ազգային կուսակցությունների առաջին քարոզիչները, որոնք, պարարտ հող գտնելով, եռանդուն գործունեություն ծավալեցին Կարինում:

1885 թ. Վանում հիմնադրված հայ առաջին՝ Արմենական կուսակցության պատմության մասին գրվել են զգալի թվով ուսումնասիրություններ²⁰⁵, որոնցում,

²⁰⁴ Տե՛ս Չարլզ Ղ., նշվ. աշխ., էջ 423-424:

²⁰⁵ Տե՛ս Համբարյան Ա., Հայ հասարակական-քաղաքական միտքը արևմտահայության ազատագրության ուղիների մասին, Ե., 1990: Նաթանեան Մ., Արմենական կուսակցութիւնը, ծագումէն սկսեալ մինչեւ Սահմանադրական Ռամկավար կուսակցութեան կազմութիւնը, խմբագրութիւն եւ ներածութիւն

սակայն, որևէ խոսք չկա Կարինում գործող կազմակերպությունների ու արմենականների կարինահայության հետ ունեցած առնչությունների մասին: Մեր փնտրտուքների արդյունքում որոշ աղոտ և վիճելի ակնարկների հանդիպեցինք արխիվային մի քանի վավերագրերում²⁰⁶: Ինչպես նաև՝ կուսակցության պատմագիր-տեսաբան Արտակ Դարբինյանի և արմենական նշանավոր ֆիդայի Արմենակ Եկարյանի հուշագրություններում²⁰⁷: Ա. Դարբինյանի հայտնած հետևյալ տեղեկությունը, որ «Տարիներէ ի վեր Կ.Պոլսէն Կիլիկիա, Փոքր Հայքէն մինչեւ Մուշ եւ Կարին կայծկլտացող տարերային ըմբոստութեան մասնակի պոռթկումները եկեր ձեւաւորուեր էին հայակեդրոն Վանի մէջ եւ ծնունդ տուել յեղափոխական կազմակերպութեան մը, որ մկրտուեցաւ «Արմենականութիւն» անունով»²⁰⁸, անուղղակի հուշում է, որ արևմտահայ ազգային-ազատագրական շարժումը մեկ ամբողջական երևույթ էր, իսկ երկու միմյանց հարևան ու Ռուսահայաստանին սահմանակից գավառներում այդ շարժումն անկասկած առնչություններ ու շփումներ կունենար: Այդպիսի անուղակի, սակայն իրականությանը շատ մոտ մի վկայություն է նաև հետևյալը. «Սուլթանական կառավարութեան համար անհանդուրժելի էր Ռուսիոյ սահմանակից դարձած երկու նահանգներու՝ Էրզրումի եւ Վանի մէջ Հայերու կեդրոնացումը եւ անոնց շրջահայեաց կեցուածքը: Հայակեդրոն Էրզրումի նահանգին ջարդերէն յետոյ կարգը պիտի գար Վանին»²⁰⁹: Այսինքն՝ իշխանությունները նույն հարթության վրա էին տեսնում տարբեր երկրամասերում շարժման դրսևորումները, քանի որ դրանք ունեին միևնույն գաղափարախոսությունը, նպատակները, գործելակերպն ու հիմնական շարժիչ ուժերը: Հետևապես կարելի է ենթադրել, որ նույն նպատակի շուրջ ձևավորված, այդքան ընդհանրություններ և նմանություններ ունեցող կազմակերպությունների համար

Տիգրան Գեորգեանի, Գահիրէ, 1990: Ղազարեան Վ., Արմենական կուսակցութիւն, Պէյրութ, 1985, Ուզունեան Հ., Արեւմտահայ ազատագրական պայքարին ծագումը Արմենական կուսակցութեան մէջ եւ Ռամկավար Ազատական Կուսակցութիւնը իր 60-ամեակին, Լոս Անճելըս, Գալիֆորնիա, 1986: Սարգսյան Ս., Հայ Սահմանադրական ռամկավար կուսակցություն 1908-1921 թթ., Ե., 2009, նույնի՝ «Արմենիա» պարբերականը հայ ազատագրական պայքարի ակունքներում, Ե., 2014, նույնի՝ 1885-1908 թթ. հայ ժողովրդի ազգային-ազատագրական պայքարը արմենական գործիչների գնահատմամբ, Ե., 2010, Կարապետյան Ա., Արմենական կուսակցություն, ատենախոսության սեղմագիր, Ե., 1995:

²⁰⁶ Տե՛ս ՀԱԱ, ֆ. 424, 1396 (Արտակ Դարբինյանի և Անուշավան Մկրտչյանի ֆոնդեր):

²⁰⁷ Տե՛ս Դարբինեան Ա., Հայ ազատագրական շարժման օրերէն, Յուշեր 1890էն 1940, Ե., 2003 և Եկարեան Ա., Հուշեր, Պէյրութ, 1985:

²⁰⁸ Տե՛ս Դարբինեան Ա., նշվ. աշխ., էջ 25:

²⁰⁹ Տե՛ս նույն տեղում, էջ 34:

աշխարհագրական գործոնը հազիվ թե այն աստիճան խոչընդոտ լիներ, որ նրանց միջև համագործակցության եզրեր չլինեին:

Թեև շատ ընդհանրական, սակայն հոգուտ ասվածի մի ակնարկ կա նաև Ղ. Չարըզի աշխատությունում. «Կարնոյ ղեկավար շրջանակները լայն կապեր ունեին հայկական բոլոր կեդրոններու եւ գլխաւոր շրջաններու հետ»²¹⁰: Մի անչափ կարևոր հանգամանք էլ է հուշում, որ այդպիսի առնչություններ եղել են: Այսպես, հայտնի իրողություն է, որ մինչև կուսակցության հիմնումը Կ. Կամսարականի միջոցով (նա հաճախ կապավորի դեր էր կատարում տարբեր վայրերում հայ հասարակական գործիչների միջև)²¹¹ իրար հետ կապ էին հաստատել, բավականին ակտիվ շփումներ և համագործակցություն ծավալել Կարինի «Պաշտպան հայրենյաց» և Վանում գործող «Սև խաչ»²¹² կազմակերպությունները: Իսկ Օ. Ճգնավորյանը գրում է, թե «Վանի հայ երիտասարդության կազմած «Սև խաչ» գաղտնի կազմակերպությունը ճյուղավորումներից մեկն էր «Պաշտպան Հայրենյաց»ի²¹³: Հայտնի փաստ է նաև այն, որ թե՛ «Սև խաչ»-ի և թե՛ արմենականների գաղափարական արմատները սնվում էին իրենց բեղուն կրթալուսավորական և գաղափարաքաղաքական ու կազմակերպչական գործունեությամբ առանձնացած Մ. Խրիմյան-Մ. Փորթուգալյան փառավոր երկյակի ու նրանց համախոհների անդաստանում: Երկու կազմակերպություններին էլ հովանավորում, դրամական և բարոյական օգնություն էին ցուցաբերում Մ. Խրիմյանը, Մ. Փորթուգալյանը, Կ. Կամսարականը և նրանց համախոհները²¹⁴: Հետո էլ արմենականների զգալի մասը նախկին սևխաչականներ էին: Հետևապես ի՞նչը կարող էր խոչընդոտել արմենականների և Կարինում գործող ազատագրական շրջանակների համագործակցությունը: Այս տեսակետն անուղղակի հաստատում է նաև Հ.Յ.Դաշնակցության նշանավոր գործիչ, տեսաբան և պատմագիր Մ. Վարանդյանը, որը, խոսելով 1890 թ. Հայաստանի «սրտին մէջ-իսկ էրգրումում», իսկ այնուհետև

²¹⁰ Տե՛ս Չարըզ Ղ., նշվ. աշխ., էջ 404:

²¹¹ Տե՛ս Հայոց պատմություն, հ. III, գիրք առաջին, Ե., 2010, էջ 465:

²¹² Կազմակերպության մասին տե՛ս Կոստանդյան Է., Գարեգին Սրվանձտյանց (կյանքը և գործունեությունը), Ե., 1979, էջ 126-134, նույնի՝ Մկրտիչ Խրիմյան, հասարակական-քաղաքական գործունեությունը, Ե., 2000, էջ 288-295: Նույնի՝ Ակնարկներ արևմտահայ մշակութային և հասարակական-քաղաքական կյանքի պատմության (19-րդ դարի 80-ական թվականներ), Ե., 2005, էջ 175:

²¹³ Որքան էլ փորձեցինք այս տեսակետը հաստատող այլ փաստ կամ հիշատակություն գտնել, չհաջողվեց:

²¹⁴ Տե՛ս Հայոց պատմություն, հ. III, գիրք առաջին, Ե., 2010, էջ 465:

Կ.Պոլսում տեղի ունեցած ցույցերի մասին, գրում է, որ դրանք «տեղի ունեցան Հնչակեաններու ձեռքով, արմենական գործիչներու աջակցութեամբ և ուժեղ ցնցում պատճառեցին հայ շրջաններու»²¹⁵: Այսինքն՝ արմենականների և Կարինի հեղափոխական ուժերի միջև համագործակցություն եղել է: Դրանից կարելի է եզրակացնել նաև, որ եթե արմենականների տեղական կառույց չի էլ եղել, ապա Կարինում անհատ արմենականներ գործել են: Այնպես որ, թեև մեզ չհաջողվեց ուղղակի վկայություններ գտնել Կարինում Արմենական կուսակցության գործունեության մասին, սակայն վերոնշյալ իրողություններից կարելի է ենթադրել, որ այդպիսի առնչություններ, այնուամենայնիվ, եղել են: Պարզապես դրանց մասին տեղեկությունները կամ չեն պահպանվել, կամ ուղղակի մեզ չեն հասել, քանի որ արմենականները, թշնամուն ավելորդ փաստեր չտալու զգուշավորությունից ելնելով, խուսափում էին իրենց ու իրենց գործունեության մասին գրավոր հիշատակություններ թողնելուց:

1887 թ. ժնևում (Շվեյցարիա) հիմնադրված Հնչակյան կուսակցությունը²¹⁶ Կարինի նահանգում և մասնավորապես նրա կենտրոն Կարինում կուսակցություններից առաջինը նշանակալի գործունեություն ծավալեց:

Կուսակցության հիմնադիր ղեկավարները եղան ռուսահպատակ հայ ուսանողները՝ Ա. Նազարբեկը, Մ. Վարդանյանը, Գ. Կաֆյանը, Ռ. Խանազատը և ուրիշներ: Նրանք 1887 թ. հիմնեցին «Հնչակ» թերթն ու կուսակցությունը: Կուսակցության սոցիալական հիմքը կազմում էին հայ հասարակության տարբեր խավերից սերված մտավորականությունը, արհեստավորները, մանր առևտրականները, հայ քաղաքային

²¹⁵ Տե՛ս Վարանդեան Մ., Հ.Յ.Դաշնակցութեան պատմութիւն, Ա. եւ Բ. հատորներու միացեալ հրատարակութիւն (անձնանուններու եւ տեղանուններու ցանկերով հարստացած), Բ. հրատարակութիւն, Պեյրուֆ, 2013, էջ 42:

²¹⁶ Հնչակյան կուսակցության պատմությունը համեմատաբար լավ է ուսումնասիրված: Առաջին փորձը կատարել է Հմայակ Արամյանցը (Պատմութիւն հնչակեան կուսակցութեան, Կ.Պոլիս, 1918), որին հաջորդեց հնչակյան գործիչների վերաբերյալ հուշերի ժողովածուն (Հիսնամեակ 1887-1937 սոցիալ-դեմոկրատ հնչակեան կուսակցութեան, Ֆրեզնո, 1938), այնուհետև՝ հայ ազատագրական շարժման հայտնի գործիչ Մանուկ Ճիզմեճեանի շահեկան ուսումնասիրությունը (Պատմութիւն ամերիկահայ քաղաքական կուսակցութեանց, 1890-1925, Ֆրեզնո, 1930): Հնչակյան կուսակցության առաջին ամբողջական ուսումնասիրությունն Արսեն Կիտուրի գրչին է պատկանում (Պատմութիւն Ս.Դ.Հնչակեան կուսակցութեան, 1887-1962, Պեյրուֆ, հ. Ա, 1962 և հ. Բ, 1963): Կուսակցության 1887-1915 թթ. պատմությանը նվիրված հաջորդված ուսումնասիրություն է նաև մերօրյա հետազոտող Գեղամ Հովհաննիսյանի աշխատությունը (Հնչակյան կուսակցության պատմություն 1887-1915 թթ.): Կուսակցության տարբեր տարիների պատմությանն ու գաղափարական, ծրագրային հիմնադրությունների մասին աշխատություններ են հեղինակել նաև Ս. Սապահ-Գյուլյանը, Հ. Գանգրունին, Ա. Համբարյանը, Լ.Խուրշուդյանը, Ռ. Խուրշուդյանը, Մ. Ստեփանյանը և այլ հեղինակներ:

և գյուղական մանր սեփականատերերը: 1888 թ. հրատարակված նրանց ծրագրում կուսակցության մոտակա նպատակ էր հռչակվում համազգային ապստամբությամբ թուրքական բռնատիրությունից Արևմտյան Հայաստանի ազատագրումը:

Կուսակցության ծրագրի համաձայն՝ հնչակյանների գործունեության առանցքը Հայկական հարցն էր: Ազգային ճնշման դեմ իրենց մարտավարական նկրտումներում հնչակյանները համատեղում էին խաղաղ ցույցերը և զինված հայդուկային ելույթները: Թեև հնչակյանները գտնում էին, որ «ատրճանակի մի կրակոցը Կ. Պոլսում ավելի մեծ արձագանք կունենա, քան հրանոթների որոտը Արևմտյան Հայաստանում»²¹⁷, այնուամենայնիվ XIX դ. 80-90-ական թթ. Արևմտյան Հայաստանում ստեղծեցին իրենց կազմակերպությունները և անցան քարոզչակազմակերպչական լայն գործունեության²¹⁸:

Կանոնադրության համաձայն՝ կուսակցության Կենտրոնական վարչությունը պետք է գտնվեր Հայաստանի²¹⁹ տարածքում. «Գործունեության ասպարեզը լինելով թիրքաց Հայաստանը, բնականաբար, և կազմակերպությունն էլ պիտի այնտեղ հաստատվե»²²⁰: Նկատի ունենալով, որ Հայաստանի տարածքում կուսակցությունը դեռևս «չէր կազմակերպուած՝ կըորոշուի ժամանակաւոր կերպով զայն հաստատել Տրապիզոն»²²¹, որը թեև մայր երկրի սահմաններում չէր, սակայն սահմանակից էր նրան, և բազմատեսակ ինտենսիվ կապեր կային նրա հետ: Այդ պատճառով էլ կուսակցության ղեկավարությունը նախապես որոշել էր, որ հնչակյան մասնաճյուղերի մեջ ղեկավար դերը պետք է պատկաներ Օսմանյան կայսրության տարածքում առաջինը Տրապիզոնում հիմնադրված և իր կազմավորման օրից «Երկրի կեդրոն» անվանված տեղական մասնաճյուղին, թեև գործնականում այդ դերը վիճակված էր Կ.Պոլսի

²¹⁷ Տե՛ս Յիսնամեսկ Սօց. Դեմոկրատ Հնչակեան կուսակցութեան /1887-1937/, խմբ.՝ Ստ. Սապահ-Գիլեանի, Փրովիտէնս, 1938, էջ 67:

²¹⁸ Կարճ ժամանակամիջոցում հնչակյան մասնաճյուղեր ստեղծվեցին Օսմանյան կայսրությունում (114), ԱՄՆ-ում (86), Ռուսաստանում (36), Իրանում (15), Բուլղարիայում (9), Ռումինիայում (7) և այլուր: Տե՛ս Պատմություն Ս. Դ. Հնչակեան կուսակցութեան (1887-1962), հատ. Ա., խմբ.՝ Ա. Կիտուր, Պեյրուֆ, 1962, էջ 42:

²¹⁹ Մինչև Հայաստանի Առաջին հանրապետության հռչակումը Հայաստան ասելիս նկատի էր առնվում հիմնականում Արևմտյան Հայաստանը:

²²⁰ Տե՛ս «Հնչակ», սեպտեմբեր, 1888, էջ 9:

²²¹ Տե՛ս Պատմություն Ս.Դ. Հնչակեան կուսակցութեան 1887-1962, հ. Ա, Պեյրուֆ, 1962, էջ 49:

հնչակյան վարչությանը²²²: Միաժամանակ նշենք, որ Տրապիզոնին մոտ գտնվող հայաշատ ու արդեն իսկ «յեղափոխական» կազմակերպություն ունենալու փորձ ունեցող Կարինը ևս հենց սկզբից գտնվում էր հնչակյանների ուշադրության կենտրոնում: Ուստի պատահական չէր, որ կուսակցության առաջին մասնաճյուղերից մեկը հիմնադրվեց հենց այդտեղ:

Արևմտահայության ազատագրության խնդիրը և հնչակյանների ձեռնարկած քարոզչական-բացատրական աշխատանքներն ավելոծումներ էին առաջացրել նաև արևելահայության մեջ: Ռուսական կայսրության տարբեր հայաշատ քաղաքներից՝ «Ռոսթովեն, Արմաիրեն, Ախալցխայեն, Ալեքսանդրապոլեն և ուրիշ տեղերէ» Մշոյ Սուրբ Կարապետ վանքը «ուխտի» երթալու համար»²²³ և զանազան այլ պատրվակներով մեծ թվով երիտասարդներ, ոգևորվելով արևմտահայ եղբայրներին ազատելու մտքից, խմբեր էին կազմում և մեկնում Արևմտյան Հայաստան: «Ուխտավորների» այդպիսի մի խմբի, որ «իրենց հետ Հայաստան կը տանէին Ռաֆֆիի գործերը, որոնք հոն ձեռքէ ձեռք կը խլուէին»²²⁴, էրգրումում միանում է քաղաքի մեծահարուստներից Մարտիրոս Սահաթճյանը: Վերջինս «խիստ կը ոգեւորուի և կը խոստանայ իր վերադարձին էրգրումի մէջ եւս մասնաճիւղ մը կազմիլ»²²⁵:

Կուսակցության կենտրոնի որոշումով պետք է մասնաճյուղերի լայն ցանց ստեղծվեր Երկրում. «Յեղափոխական շրջաններ պէտք է կազմվեն երկրի որքան կարելի է շատ կէտերի վրայ, այսպէս ասած պէտք է երկիրը ծածկեն իրենց ցանցով»²²⁶: Ելնելով դրանից՝ հնչակյանները բավականին ակտիվ քայլեր են ձեռնարկում Կարինում կուսակցության մասնաճյուղ ստեղծելու ուղղությամբ: Այդ նպատակով 1889 թ. Կարին են մեկնում Ռաֆայել Մովսիսյանը և Ալեքսան Ռոստոմյանը: Այստեղ նրանք ծանոթանում են «Պաշտպան հայրենյացի» հիմնադիր-ղեկավար Խ. Կերեքցյանի եղբոր՝ Տ. Կերեքցյանի հետ, որը դեռ Կարին մեկնելուց առաջ Ա. Չափրյանի հանձնարարականով ներկայանում է Խանազատին: Հանդիպման ընթացքում Խանազատը Տ. Կերեքցյանի «միտքը կը մշակէ Հնչակեան նոր

²²² Տե՛ս ՀԱԱ, ֆ. 408, ց. 1, գ. 2, թ. 7-8:

²²³ Տե՛ս ՀԱԱ, ֆ. 1456, ց. 1, գ. 1, թ. 14:

²²⁴ Տե՛ս Պատմություն Ս.Դ. Հնչակեան կուսակցութեան 1887-1962, հ. Ա, Պեյրութ, 1962, էջ 82:

²²⁵ Տե՛ս նույն տեղում:

²²⁶ Տե՛ս «Հնչակ», սեպտեմբեր, 1888, էջ 9:

գաղափարաբանութեամբ»²²⁷, ծանոթացնում է նրան կուսակցության ծրագրին և հորդորում, որ Կարին վերադառնալուց հետո ինքը ևս ձեռնարկի կազմակերպչական աշխատանքներ կուսակցության մասնաճյուղ հիմնելու համար: Միաժամանակ նա Տ. Կերեքցյանին պարզաբանում է, որ մշտապես հարկավոր է աչքաթող չանել հարևան ժողովուրդներին և ապահովել դրանց «գործակցութիւնը հասարակաց թշնամիին՝ թուրք կառավարութեան դէմ»²²⁸: Տ. Կերեքցյանը վերադառնում է Կարին և, բանտից ազատված «Պաշտպան հայրենյացի» հիմնադիր անդամներից «իրեն գործակից ունենալով Գրիգոր Զիլինկիրեան, Յակոբ Իշգալացեան, Սահաթեան»²²⁹, ձեռնարկում է քարոզչական և կազմակերպչական լուրջ աշխատանքներ: Դրանց արդյունքում շուտով ստեղծվում է տեղի հնչակյան մասնաճյուղը: Այդ աշխատանքներին, բացի նշվածներից, իրենց ակտիվ մասնակցությունն են բերում նաև զգալի թվով տեղացի եռանդուն երիտասարդներ: Հնչակյան կուսակցության առաջին մասնաճյուղի անդամները Կարինում ոչ միայն ակտիվ շփումների, այլ նաև անմիջական կապերի մեջ էին «Պաշտպան հայրենյացի» նախկին անդամների մեծ մասի հետ²³⁰:

Մասնաճյուղի գաղափարական ու գործնական ղեկավարը, նախաձեռնությունների մեծ մասի հեղինակն ու ոգին Գ. Զիլինկիրյանն էր. «Այդ շրջանին Հնչակեան կուսակցութիւնը Էրզրումի մէջ իր առաջին խումբը կազմեց 15 դեկտեմբեր 1890ին»²³¹ Գ. Զիլինկիրեանի միջոցաւ»²³²: Հիմնականում հնչակյան հիմնադիր-ղեկավարներից Ռ. Խանազատի հրահանգով ու գաղափարական ուղղորդմամբ ստեղծված այս մասնաճյուղն սկզբնական շրջանում «դրական արդիւնք մը չունեցաւ Հայրենասիրաց Գաղտնի ընկերութեան ուժեղ դիրքին բերմամբ»²³³, սակայն շարունակական համառ

²²⁷ Տե՛ս Պատմութիւն Ս.Դ.Հնչակեան կուսակցութեան 1887-1962, հ. Ա, Պեյրութ, 1962, էջ 51:

²²⁸ Տե՛ս նույն տեղում:

²²⁹ Տե՛ս նույն տեղում: Նրանք բոլորն էլ «Պաշտպան հայրենյացի» հիմնադիր անդամներ էին:

²³⁰ Տե՛ս «Արօր», Երզնկա, 1911, 25 հոկտեմբերի, թիվ 245: Ավելացնենք, որ «Պաշտպան հայրենյաց»-ի անդամների մեծ մասն սկզբում անդամագրվեցին Հնչակյան կուսակցությանը, իսկ հետագայում շատերը համալրեցին նորաստեղծ ՀՅԴ-ի շարքերը:

²³¹ Տե՛ս ՀԱԱ, ֆ. 420, ց. 16, գ. 11, թ. 34:

²³² Տե՛ս նույն տեղում:

²³³ Տե՛ս նույն տեղում: Նկատի ունի «Պաշտպան հայրենյաց» կազմակերպությունը, որի նկատմամբ, չնայած թուրքական դաժան հաշվեհարդարին, այնուամենայնիվ պահպանվել էր տեղացի հասարակության և մասնավորապես երիտասարդության սերն ու նվիրվածությունը և նրա հետևից գնալու պատրաստակամությունը

քարոզչությամբ մասնաճյուղի անդամներն աստիճանաբար սկսեցին ազդեցություն ձեռք բերել տեղի գործիչների և հանրության մեջ:

Այդ շրջանում Տրապիզոնի ամենաեռանդուն կուսակցականներից Գրիգոր Վարդանյանին հանձնարարվում է մշտական կապ պահպանել Կարինի մասնաճյուղի հետ: Արդյունավետ քարոզչություն իրականացնելու նպատակով Գ. Վարդանյանն իր խմբից մեկին հանձնարարում է պարբերաբար անհրաժեշտ գաղափարախոսական գրականություն հասցնել Կարին: Այդ նպատակով նրան վարժեցնում են «կարաւանապետութեան» և ապրանքները փոխադրելու համար տրամադրում են մի ավանակ: Տրապիզոնից Կարին երթևեկող քարավանի բեռների հիմնական մասը «Հնչակ» թերթի կապոցներն էին և նամակներն ու այլ փաստաթղթեր:

Ձգտելով կանխել իրադարձությունների զարգացումը՝ Աբդուլ Համիդը փորձեց դեռ սաղմում ոչնչացնել հայ ազատագրական շարժումը: Նրա հարվածը բնականաբար առաջին հերթին պետք է ուղղվեր արևմտահայության այն կենտրոնների դեմ, որոնք հայտնի էին ազատագրական պայքարի ավանդույթներով և ապագայում սպառնում էին վերածվել ապստամբական օջախների: Նման կենտրոններից մեկն անշուշտ Կարինն էր, որի մասին լրտեսական խիտ ցանցով պատված կայսրության համապատասխան կառույցները շարունակաբար զեկուցում էին սուլթանին: Դեռ թարմ էին նաև հիշողությունները «Պաշտպան հայրենյաց» կազմակերպության մասին: Թուրքերը չէին մոռացել նաև 1877-1878 թթ. ռուս-թուրքական պատերազմի ժամանակ կարինցիների կողմից ռուսական բանակին ցույց տրված փառահեղ ընդունելությունը և հարմար պահի էին սպասում իրենց «թուրքավարի» վերաբերմունքը դրսևորելու համար: Այդ հրեշավոր ծրագրերն իրականացնելու համար Համիդի գնդերի ստեղծմանը զուգահեռ հիմնվեց ոչ պակաս վտանգավոր «**խաֆիէներ**»-ի **համակարգը (ինստիտուտը)**, որոնց «պաշտոնը պիտի ըլլար հայ հանրային կեանքը քայքայել ներքին խնդիրներ հանելով, եւ թուրք կառաւարութեան մօտ ցուցումներ ու մատնութիւններ ընելով»²³⁴: Օգտվելով առիթից՝ 1880-ական թթ. խաֆիէները քայքայիչ աշխատանքներ իրականացրին Կարինում: Նրանք թունավորում էին առանց այդ էլ լարված մթնոլորտը քաղաքում, «ջղագրգիռ կը դարձնէին գործող տաքարին երիտասարդները»՝ նրանց մղելով

²³⁴ Տե՛ս Չարըզ Դ., նշվ. աշխ., էջ 418:

ծայրահեղ արարքների: Հնարամիտ այս գործակալներից մի քանիսը «Պոլսէն յատուկ պաշտօններով փոխադրուած էին Կարին»²³⁵, ծանոթացել էին հայության կյանքի ներքին ծալքերին, գործակալներ հավաքագրել ինչպես թուրքերից, այնպես էլ հայերից և կատարում էին իրենց սև գործը: Ազգությամբ հայ, Ա. Գ. անունով և Մ. Օրմանյանի հետ կաթոլիկությունից հայ առաքելական եկեղեցու գիրկը վերադարձած այդպիսի գործակալի մասին հիշատակվում է Յ. Նշկյանի «Առաջին կայծեր» և Ղ. Չարըզի «Կարինապատում» գրքերում²³⁶: Կարին փոխադրվելուց անմիջապես հետո սա ամպագոռգոռ ճառերով կարողանում է իր շուրջը հավաքել մի խումբ երիտասարդների և փորձում է «հեղափոխական» կազմակերպություն հիմնել: Նրա նպատակը ազատագրական պայքարին նվիրված և նվիրվել պատրաստվողներին բացահայտելն էր և իշխանություններին մատնելը. «բաւական ժամանակ յետոյ միայն, հասկցուեցաւ թէ, անոր նպատակն էր լոկ հասկնալ, թէ այդպիսի կազմակերպութիւն մը գոյութիւն ունի Կարնոյ մէջ, թէ ոչ»²³⁷: Ըստ հուշագիրների՝ սա առաջին հայ «գործակալն է եղած», որ թուրքական իշխանությունների կողմից ուղարկվել էր Կարին, որպեսզի սաղմի մեջ խեղդեր քաղաքի ազատախոհներին և նրանց հավաքական գործունեությունը: Լավ է, որ շուտով այդ ամենը բացահայտվում է, և դավաճանությունը՝ կանխվում: Իսկ դրանից՝ հետո քաղաքի հայ ղեկավարներն ավելի զգուշավոր և շրջահայաց են դառնում: Սակայն քաղաքում կասկածի մթնոլորտ է գոյանում, որը պատճառ է դառնում «ծանրակշիռ չափազանցութիւններու եւ ճակատագրական դէպքերու»²³⁸:

1890թ. հունիսի 18-20-ին թուրքական իշխանությունների հրահանգով Կարինի հայկական թաղամասերում ջարդեր են կազմակերպվում: Կարինի այդ դեպքերը՝ որպես ազատության համար բողոքի պոռթկում, մեծ արձագանք են գտնում ինչպես արևմտահայության, այնպես էլ արևելահայության շրջանում: Այդ «դէպքերեն յետոյ առհասարակ զայրոյթ ծագեցաւ տաճկաց մէջ ընդդէմ քրիստոնեաներու, մասնաւորապէս, ի հարկէ, հայոց»²³⁹: Հայությունը, տեսնելով դա և քրիստոնյա մեծ

²³⁵ Տե՛ս նույն տեղում:

²³⁶ Տե՛ս Նշկեան Յ., նշվ. Աշխ., էջ 68, նաև՝ Չարըզ Ղ., նշվ. աշխ., էջ 418-419:

²³⁷ Տե՛ս Նշկեան Յ., նշվ. աշխ., էջ 74:

²³⁸ Տե՛ս Չարըզ Ղ., նշվ. աշխ., էջ 419: Այդ կասկածամտության մթնոլորտի առաջին զոհերից մեկը եղավ Խ. Կերեքցյանը:

²³⁹ Տե՛ս «Հնչակ», 1890, օգոստոս, թիվ 4, էջ 7:

տերությունների բացարձակ անտարբերությունը. «ինքզինք բոլորովին լքում զգաց»²⁴⁰: Իսկ Տրապիզոնում գտնվող Հնչակյան կենտրոնական վարչությունը որոշում է մեծ ցույց կազմակերպել Կ.Պոլսում, որի նպատակն էր բողոքել Կարնո ապօրինի խուզարկությունների և ձերբակալությունների առիթով և եվրոպական երկրների դեսպանների ուշադրությունը հրավիրել Հայկական հարցի վրա: «Մենք համոզումն ունենք,-գրում է Խանազատը,-թե Էրզրումի եվրոպական հիւպատոսները իսկոյն ահազանգ պիտի հնչեցնէին այդ դեպքի առիթով եւ «հայկական հարցը» պիտի հրապարակ գար ու շուտով իր լուծումն ստանար»²⁴¹: Երկար քննարկումներից հետո վարչությունը հանգում է այն եզրակացության, որ «եվրոպական պետություններին իրանց քար անտարբերութիւնից դուրս հանելու համար, անհրաժեշտ է մի ցույց կազմակերպել հէնց սուլթանի մայրաքաղաքում, դեսպանների քթի տակ»²⁴²:

Հիմնականում Կարինում տեղի ունեցած ոճրի և արևմտահայության նկատմամբ համատարած անարդարացի քաղաքականության դեմ, ինչպես նաև ցանկանալով բարձրացնել գավառահայության ոգին և կրկին Հայկական հարցի վրա բևեռել մեծ տերությունների ուշադրությունը՝ հնչակյանները 1890 թ. հուլիսի 15-ին խաղաղ ցույց կազմակերպեցին Կ. Պոլսի Գում Գափու թաղամասում: Բողոքի այդ խաղաղ ցույցն իշխանությունների նախաձեռնությամբ վերածվեց կոտորածի: Շատերին էլ ձերբակալեցին և ենթարկեցին դաժան կտտանքների: Թեև «Հնչակ» թերթը Լոնդոնից փառաբանում էր ցույցի ղեկավարներ ու գլխավոր գործող անձինք Հ. Ճանկույանին, Մ. Տամատյանին, Մուրադին և հայտարարում մատնիչների ահաբեկման ու մոտալուտ հաջողությունների մասին²⁴³, սակայն իրողությունն այն էր, որ հերթական անգամ հեղվեց անմեղ հայ մարդկանց արյունը և հերթական անգամ՝ անարդյունք: Կարինի դեպքերից հետո Գում Գափուի ցույցը հնչակյանների կազմակերպած առաջին զանգվածային ելույթն էր:

Նշենք, որ «Էրզրումի հայոց լեռներէն» հնչած խրոխտ ծայնը անարձագանք չմնաց: Ազատության տենչով տոգորված հայությունը 1894 թ. Սասունում զինված պայքարի ելավ, որը Բեռլինի վեհաժողովից հետո արևմտահայերի առաջին զինված ելույթն էր

²⁴⁰ Տե՛ս Պատմութիւն Ս.Դ. Հնչակեան կուսակցութեան 1887-1962, հ. Ա, Պեյրութ, 1962, էջ 52:

²⁴¹ Տե՛ս Խանազատ Ռ., Հայ յեղափոխականի յուշերից, «Հայրենիք», Բոստոն, 1927, թիվ 1, էջ 124:

²⁴² Տե՛ս նոյն տեղում:

²⁴³ Տե՛ս «Հնչակ», 1890, թիվ 6, 14 սեպտեմբեր:

օսմանյան բռնատիրության դեմ: Այն թեպետ պարտություն կրեց, սակայն եվրոպական տերություններին պարտադրեց Արևմտյան Հայաստանի համար բարեփոխումների ծրագիր մշակել, որն ստացավ «Մայիսյան բարենորոգումներ» անվանումը²⁴⁴:

XIX դարի վերջին տասնամյակում Կարինում Հայ հեղափոխական դաշնակցության կազմակերպական կառույց ստեղծելու և նրա գործունեությունը ճիշտ ու ամբողջական ներկայացնելու համար անհրաժեշտ ենք գտնում շատ հակիրճ տալ կուսակցության ձևավորման հիմնադրույթները: ՀՅԴ-ն ստեղծվել է 1890 թ. Թիֆլիսում: Հիմնադիրները և առաջին ղեկավարներն էին Ք. Միքայելյանը, Ս. Զավարյանը և Ս. Զորյանը (Ռոստոմ): 1890 թ. սեպտեմբերին հրապարակված ՀՅԴ ծրագրային առաջին փաստաթուղթ-մանիֆեստում նշված է, որ նոր ստեղծված կուսակցության նպատակն է համախմբել հայ ժողովրդի ուժերը և Հայաստանի համար ձեռք բերել քաղաքական ու տնտեսական ազատություն²⁴⁵: 1892 թ. ընդունված ՀՅԴ առաջին ծրագրով²⁴⁶ որոշվեց կուսակցության կազմակերպական կառուցվածքում որդեգրել ապակենտրոնացման սկզբունքը²⁴⁷: Հիմնադրումից անմիջապես հետո կուսակցությունը ձեռնարկեց Երկիր առաքել զինատար և մարտական խմբեր: Նպատակաուղղված գործունեության արդյունքում ՀՅԴ-ն կարճ ժամանակամիջոցում դարձավ կուսակցություններից ամենազորեղն ու հեղինակավորը:

²⁴⁴ 1895 թ. սեպտեմբերի 18-ին, նպատակ ունենալով թուրքական կառավարությանը հարկադրել կենսագործելու «մայիսյան բարենորոգումները», հնչակյաններն ավելի մեծ ցույց կազմակերպեցին. շուրջ 4.000 մարդ շարժվեց դեպի օսմանյան կառավարության նստավայր՝ Բաբ Ալի թաղամաս: Թուրքական ոստիկանությունը, զորքը և մահակներով զինված խուժանը հարձակվեցին ցուցարարների վրա. այդ օրը Կ.Պոլսում կոտորվեց 2000 հայ: Կ.Պոլսի այս ջարդերը հայերի զանգվածային կոտորածների ազդանշան եղան. 1895-ի սեպտեմբերի 26-ին՝ Տրապիզոնում, 30-ին՝ Բաքերդում, հոկտեմբերի 9-ին՝ Երզնկայում, 18-ին՝ Կարինում և Արևմտյան Հայաստանի մյուս բոլոր նահանգներում ու հայաշատ բնակավայրերում կազմակերպվեցին հայերի կոտորածներ:

1896 թ. օգոստոսի 14-ի «Բանկ Օտոմանի» գործողությունը ևս առիթ դարձավ Կ.Պոլսում հայկական նոր կոտորածների: Օգոստոսի 14-16-ին Կ.Պոլսում կոտորվեց ավելի քան 10 հազար հայ: Այս իրադարձությունները գալիս էին ապացուցելու, որ հայերին կոտորելը և իր բնօրրանից տարբեր միջոցներով դուրս մղելը պետական հատուկ մշակված ծրագիր էր:

²⁴⁵ Տե՛ս Գաթրճեան Ա., «Դրօշակ»ը Հ.Յ.Դաշնակցութեան դիմագիծն ու վկայականը (ՀՅԴ պաշտօնաթերթի 120-ամեակին առիթով), <https://arammanougian.wordpress.com/2011/08/06/>:

²⁴⁶ ՀՅԴ առաջին ծրագիրն առաջին անգամ հրապարակվել է 1894 թ., տե՛ս Ծրագիր Հայ Յեղափոխական Դաշնակցութեան, «Դրօշակ», թիվ 4, Ժնև, 1894, տե՛ս նաև վերափոխված տարբերակը՝ վաերացուած 1907 թ. ընդհանուր ժողովի կողմից, Թիֆլիս, 1917:

²⁴⁷ 1890 թ. հիմնադիր ժողովում ընդունված կանոնադրությամբ կուսակցության բարձրագույն մարմինը ընդհանուր ժողովն էր, գերագույն գործադիր մարմինը՝ բյուրոն:

XIX դարի 90-ական թթ. առաջին կեսը ՀՅԴ-ի՝ Արևմտյան Հայաստան մուտք գործելու առաջին՝ նախնական ժամանակահատվածն էր: Այդ շրջանում Կարին, Վասպուրական, Տարոն և Բարձր Հայք անցած կուսակցության լիազոր ներկայացուցիչների շուրջ ձևավորվում են առաջին ոչ մեծ բջիջները, որոնք արդեն 1890-ական թթ. երկրորդ կեսին ձեռք են բերում ավելի հստակ կազմակերպական կառույցների տեսք: 1890-ականների առաջին կեսին վերջիններիս շարքում առավել ուժեղ, բազմամարդ. ու գործունյա միջուկը ձևավորվել է Կարինում: Դա պայմանավորված էր նրանով, որ Կարինում 1880-ական թվականների երկրորդ կեսին սկսվել էր խոսքից գործի անցնելու և արևմտահայերի ազատագրության համար պայքարող բոլոր խմբակներն ու կազմակերպությունները միավորելու բավականին ինքնաբերական շարժում, որն անհրաժեշտ ենթահող էր ստեղծում ՀՅԴ-ի ընդարձակման համար: Այդ շարժման առանցքում 1886 թ. բանտից ազատված «Պաշտպան հայրենյացի» առաջնորդներն էին Խ. Կերեկցյանի գլխավորությամբ, որոնք, որոշակի կապեր հաստատելով մի կողմից՝ Կ.Պոլսում գործող Վարիչ մարմնի և նրա միջոցով՝ Հնչակյան կուսակցության հետ²⁴⁸ և մյուս կողմից էլ նախապատրաստվելով 1890 թ. սեպտեմբերին էջմիածնում նախատեսված մյուռնոսօրինության առիթով հավաքվելու հարմար պահին, ցանկանում էին այն օգտագործել՝ արևմտահայերի ազատագրության համար պայքարող բոլոր կազմակերպություններին համախմբելու համար:

«Խ. Կերեկցյանը հասցրել էր անգամ կարգավորել անցագիր ձեռք բերելու հարցը՝ իբրև էրզրումից ընտրված պատգամավոր՝ «...էջմիածին գնալու զանազան կուսակցությունների միացման խնդրի առթիվ...»²⁴⁹, երբ 1890 թ. հունիսի 6-ին տեղի ունեցավ Սանասարյան վարժարանի հայտնի խուզարկությունը: Այդ պատճառով Խ. Կերեկցյանը մնում է Կարինում, իսկ նրա խորհրդով անմիջապես Կովկաս է մեկնում

²⁴⁸ Թեև «Պաշտպան հայրենյացի» գործիչներից Գր. Չիլինկիրյանը նամակագրական կապ էր հաստատել Հնչակյան կուսակցության առաջնորդներից Ռուբեն Խանազատի հետ, բայց Կարինում Հնչակյան կուսակցության մասնաճյուղի ձևավորման մասին վերջինիս վկայությունը լուրջ կասկածներ է հարուցում: Եթե անգամ ստեղծվել էր նման մասնաճյուղ հիշեցնող մի բան, ապա միայն թղթի վրա, քանի որ 1890 թ. հունիսի 6-8-ի հայտնի ցույցի և ընդհարման առանցքում կրկին «Պաշտպան հայրենյացի» հին գործիչներն էին գտնվում:

²⁴⁹ Տե՛ս ԳԱԹ, Բ. Նավասարդյանի ֆոնդ, վավ. 9-III, թ. 38:

Տարոնում իր հայդուկային խմբի գործողությունների պատճառով հետապնդումների ենթարկված և Կարինում պատսպարված²⁵⁰ Հակոբ Սարկավազը (Տեր-Ղևոնդյան):

1890 թ. սեպտեմբերի սկզբներին գործունեությունն սկսած ՀՅԴ «Կենտրոնը» իր անդամներից մեկի՝ Լևոն Սարգսյանի վկայությամբ Կարինում ներկայացուցիչ նշանակեց «Պաշտպան հայրենյացի» նախկին ղեկավարներից մեկին՝ Հովհաննես Աստուրյանին²⁵¹: Դրանով պայմաններ ստեղծվեցին «Պաշտպան հայրենյացի» մեջ մտած գործիչների՝ ՀՅԴ-ի շուրջ համախմբվելու համար. «Հ.Յ.Դ.-ը իր կազմութեան առաջին օրերէն լայն հող գտաւ Կարնոյ մէջ»²⁵²: Սակայն այդ բնականոն գործընթացի ծավալման ճանապարհին լուրջ արգելք դարձավ այն փաստը, որ «Կենտրոնի» որդեգրած՝ Կարինի գործիչների վրա հենվելու մարտավարությանը զուգընթաց, արձանագրվեցին նաև Կովկասից ժամանող և տեղական պայմաններին անձանոթ «առաջին առաքյալների» ակտիվ ու հախուռն քայլերը, որոնք հակասություններ ծնեցին հայ ազատամարտը ներկայացնող երկու տարբեր սերունդների միջև:

Կարինի աշխարհագրական դիրքը, 1877-1878 թթ. ռուս-թուրքական պատերազմի ժամանակ ռուսական բանակի հայազգի հրամանատարների առկայությունը, գրավված վիճակում հայության ունեցած արտոնյալ վիճակը և օդում կախված ազատության շունչը ոգևորում, ազատամարտի էին կոչում Կարինի հայությանը, իսկ դրա ազդեցության ներքո՝ նաև ամբողջ հայ ժողովրդին: Սահմանի երկու կողմում էլ գտնվեցին հզոր անհատներ, ովքեր իրենց հայրենանվեր ու անձնուրաց գործունեությամբ ոգեկոչեցին ու պայքարի ձեռնոց նետեցին թուրքական իշխանություններին: Վավերագրերում և պատմագիտական գրականության մեջ հսկայական քանակությամբ փաստագրական նյութ կա, որում ներկայացված է կովկասահայության գործուն մասնակցությունն արևմտահայ ազատամարտին: Սակայն քանի որ այդ հայդուկ-ազատամարտիկների կենսագրականներում միշտ չէ, որ կարելի է գտնել վկայություններ նրանց իսկական անուն-ազգանունների, ծննդյան վայրերի մասին, բազմաթիվ գործիչների ով և որտեղացի լինելը մնացել է անհայտ²⁵³:

²⁵⁰ Տե՛ս նույն տեղում, թ. 38-39:

²⁵¹ Տե՛ս ՀԱԱ, ֆ. 4047, ց. 2, գ. 9, թ. 132, Լևոն Սարգսյան, Հուլիս 1889-1892 թվականներից (ՀՀԴ ծագումը, առաջին քայլերը և Ա. ընդ. ժողովը):

²⁵² Տե՛ս Չարըզ Դ., նշվ. աշխ., էջ 425:

²⁵³ Տե՛ս Մելքոնյան Ա., Զավախքը XIX դարի առաջին քառորդին, Ե., 2003, էջ 243-244:

Անդրկովկասից էրգրում անցած Հայ յեղափոխականների դաշնակցության առաջին գործիչը՝ Տիգրան Օքոնյանն էր (Շամիր)։

Դարավոր թշնամու դեմ հայ ժողովրդի աննկուն ոգու դրսևորում ֆիդայական պայքարի սկզբում հրապարակ իջան մեծ թվով հերոսներ՝ Աղբյուր Սերոբ, Անդրանիկ Օզանյան, Հրայր Դժոխք, Մարգար վարժապետ, Միհրան Տամատյան, Սեբաստացի Մուրադ, Արմենակ Եկարյան, Նիկոլ Դուման, Քեռի (Արշակ Գաֆավյան)... Նրանցից շատերի մասին գրվել են հուշեր, ուսումնասիրություններ, հոդվածներ, նույնիսկ ժամանակն են անվանել նրանցից ոմանց անունով²⁵⁴։ Կան նաև անուններ, որոնք հանիրավի մոռացվել են կամ մնացել ստվերում։ Դրանցից մեկը Տիգրան Օքոնյանն էր։ Բնավորությամբ տաքարյուն ու անհամբեր, հայրենիքը շատ արագ ազատ տեսնելու անհագ ցանկությամբ տոգորված գործիչ, ում կյանքը դրամատիկ վախճանով ավարտվեց։ Գործիչ-ֆիդայի, ով ապրեց ընդամենը 26 տարի, բայց բուռն հանրային գործունեություն ունեցավ, սակայն ում անունն այսօր քչերին է հայտնի²⁵⁵։

Տ. Օքոնյանը ծնվել է 1868 թ. Ախալցխայում։ Տեղական քաղաքային պետական միջնակարգ դպրոցն ավարտելուց հետո, հաշվապահություն սովորելով, մեկնում է Կարս և մի հայի վաճառատան մեջ հաշվապահի պաշտոն ստանձնում։ Մարտիրոս Մարգարյան-Սաֆոն, որ մոտիկից ճանաչել է Օքոնյանին, նշում է. «Բոլորովին ջահել, 17-18 տարեկան։ Քնքոյշ, նուրբ կազմուածքով, գեղեցկադէմ, բայց շիկահեր. սիրեցին նրան բոլոր ընկերները, իբրեւ մի բարի, քնքոյշ երիտասարդի, որը սիրում էր կարդալ, վիճել եւ ամենայն հաւատարմութեամբ վաճառատան հաշիւները պահել»²⁵⁶։ Նա երկար չի մնում Կարսում, ընդամենը՝ երկու տարի, բայց կարսեցիները երկար էին յիշում նրան։ Շուտով տեղափոխվում է Թիֆլիս,-հիշում է Մարգարյան-Սաֆոն, «մի ուրիշ վաճառատուն եւ այդպիսով մեր աչքից մի առժամանակ հեռացաւ»²⁵⁷։

²⁵⁴ Տե՛ս Սիմոնյան Հ., Անդրանիկի ժամանակը, երկու գրքով, գիրք Ա, Ե., 1996 և գիրք Բ, Ե., 1996։

²⁵⁵ Օքոնյանի մասին պատմագիտական գրականության մեջ որոշ հպանցիկ անդրադարձներ կան։ Դրանց մեջ առանձնանում են Վ. Վալադյանի Տիգրան Օքոնեան, (տե՛ս «Հայրենիք», ամսագիր, Բոստոն, թիվ (412), 1960, 1-14 էջեր), Ռ. Հովհաննիսյանի Արևմտահայ ազգային-ազատագրական շարժումները և Կարինի Պաշտպան հայրենյաց կազմակերպությունը, Ե., 1965, Ա. Մելքոնյանի Ջավախքը XIX դարում և XX դարի առաջին քառորդին, Ե., 2003, նույնի՝ Հայաստանի պատմության և ժողովրդագրության հիմնահարցեր, Ե., 2011, Գ. Խուդինյանի Հ.Յ. Դաշնակցության գործունեությունը Էրզրումի վիլայեթում 1890-1895 թթ., «Հայոց պատմության հարցեր», Ե., 2003, էջ 57-65 և այլ ուսումնասիրություններում։

²⁵⁶ Տե՛ս Վալադեան Վ., նշվ. հոդվածը, էջ 4։

²⁵⁷ Տե՛ս նույն տեղում։

Օքոնյանը Թիֆլիսում մնաց հավանաբար 1880-90 թթ., այսինքն՝ այն տարիներին, երբ այնտեղ սկսվել էր խմորվել Արևմտյան Հայաստանի ազատության համար ազատագրական շարժումը, և նախապատրաստվում էր առանձին գործող խմբակների համախմբումը: ՀՅԴ Կարինի հին գործիչների կենսագրական մանրամասներին քաջատեղյակ Օ. Ճգնավորյանի վկայությամբ Տ. Օքոնյանը մուտք է գործել Կարին 1890 թ. դեկտեմբերի 15-ին Արամ Արամյանի և Հաբեթ Նշկյանի հետ միասին²⁵⁸: Հիմնականում երիտասարդ գործիչներից կազմված այն շրջանակը, որը համախմբվեց Տ. Օքոնյանի շուրջը (Ա. Արամյան, Հ. Նշկյան, Տ. Գևորգյան, Հմ. Գալեմբերյան, Շ. Ղազարյան և այլք), մասամբ բաղկացած էր նաև նախկին «Պաշտպան հայրենյացի» անդամներից՝ Ղավաֆ Գրիգորն ու իր երեք որդիները, զինագործ-քահանա Ավետիս Վեմյանը, Հաջի Հակոբ Սերենկյուլյանը և Հովհաննես Աստուրյանը, որին ՀՅԴ կենտրոնը համարում էր իր լիազոր ներկայացուցիչը Կարինում: Այս շրջանակին հարում էին նաև էրզրումի դաշտավայրի (օվալի) գյուղացիներից օգնեցի Տեր Արիստակեսը, ձիթողիներ Հարություն Տեր-Վարդանյանը և Սեդրակ Անանյանը, նորշենցի Թաթոսը, իլիջեցի Քյոսե Միքայելը և ուրիշներ²⁵⁹:

Հայ հայդուկային պայքարի սկզբնական փուլի կարևոր դերակատարներից Տ. Օքոնյանն Օլթիի գծով մտել էր Երկիր և հարձակումներ սկսել թուրք պաշտոնյաների և քուրդ ավազակների վրա: Տիգրան-Շամիլի խումբը սարսափ է ազդում թալանչիների ու կեղեքողների վրա և պաշտպանության տակ վերցնում հայ գյուղացիներին: Նրա խմբում էին մեկը մյուսից հանդուգն ու քաջ մարտիկներ՝ կտրիճ Վարդանը, որ հետո սպանվեց Արաբոյի խմբում, օլթեցի հայտնի և հանդուգն գործիչ «Հայ» մականունով Մեխանը, Ոսով Գրիգորը, Քոռ Եղոն, Ալեքսանդրապոլից քիչ հեռու գտնվող Ղոնաղոան գյուղից Մարտիկը, հայտնի Կովիկի Տղան և էլի շատ ուրիշներ: Քիչ չէին դեպքերը, երբ Տիգրանը բռնազավթում էր վաշխառուների ու հարուստների ունեցվածքը և ավարը բաժանում չքավորներին:

Օքոնյանն անողորք էր թե՛ թշնամու և թե՛ խմբի անդամների հանդեպ: Խմբի յուրաքանչյուր անդամ ակնածում էր նրանից, չէր համարձակվում նրան խեթ նայել:

²⁵⁸ Տե՛ս ՀԱԱ, ֆ. 420, ց. 16, գ. 11, թ. 29, Օ. Ճգնավորյան, Բարձր Հայք, Ա հ., Բ մաս, ինքնագիր մենագրություն:

²⁵⁹ Տե՛ս նույն տեղում, թ. 30:

Նրան հնազանդվում էին նույնիսկ այնպիսիները, որոնք, տասնյակ տարիներ ինքնագլուխ գործելով, քաջի անուն էին վաստակել. «Երիտասարդ Շամիլը... շատ երիտասարդ, բայց երկաթեայ կամքով, առնական բազուկներով ղեկավարում է իւր հրոսակային խումբը մէկ արկածից միւսը: Եւ ո՞վ կարող էր կարսեցիներից կարծել, թէ այն շիկահեր քնքոյշ մանուկը, Տիգրան Օքոնեանն էր՝ ինքը Շամիլը»²⁶⁰: Դրոշակում տպագրված մի հոդվածում այդ մասին ասվում է, որ սեպտեմբերի 24-ին Կարինից 4-5 ժամ հեռավորության վրա ասպատակների մի խումբ Շամիլի առաջնորդությամբ կտրում է Լիսկավ և Նիխազ գյուղերի ճանապարհը, կողոպտում 25-ի չափ թուրք առևտրականների և բռնազավթում նրանց սայլերի վրա բարձած մանուֆակտուրայի, շաքարի, թեյի, բրնձի և ընդեղենի ողջ բեռը²⁶¹: Շուտով վրա են հասնում 150-ից ավելի թուրք զինվորներ և պաշարում խմբին: 15 հոգուց բաղկացած խումբը 6 ժամ շարունակ ոչ միայն կարողանում է դիմադրել թուրքերին, այլև իրենց հնարամիտ և ճարպիկ գործողությունների շնորհիվ բոլորովին անվնաս մնալով՝ կարողանում է մի քանիսին վիրավորել, շփոթեցնել և նույնիսկ փախուստի մատնել²⁶²:

Նույն հրապարակման մեջ նշվում է նաև, որ Շամիլի խումբը կտրում է Սիվրիից Կարին տանող ճանապարհը: Երկու օր էլ այդտեղ կողոպտելով անցուդարձ անող քուրդ ու թուրք ավազակներին՝ խումբը հեռանում է: Նույն օրը Շամիլի խումբը կողոպտում է մեկ այլ խումբ քուրդ ավազակների, դրանցից վերցնում եղած սնունդը, դրամ, ընտիր ձիեր և դրանց մեծ մասը նվիրում չքավոր գյուղացիներին²⁶³: Միևնույն ժամանակ նրանք ամեն անգամ ժողովրդին բացատրում էին, որ նրանց վնասելու միտք չունեն և «իրենց որսը կառավարութեան բարբարոս պաշտօնեաներն են»²⁶⁴: Այստեղ մեզ համար կարևորը խմբի և նրա առաջնորդ Տ. Օքոնյանի կեցվածքն է: Նրա խումբը սարսափ էր տարածում թալանչիների ու կեղեքողների վրա և պաշտպանության տակ էր վերցնում հայ գյուղացուն: Իմանալով խմբի կատարած գործերի մասին՝ օսմանյան իշխանություններն սկսում են ակնդետ հետևել նրա տեղաշարժերին: Հետապնդումներից ազատվելու համար Տիգրանը փորձում է անցնել սահմանը,

²⁶⁰ Տե՛ս Ա. Ազնաուրեանի յուշերը, գրի առաւ՝ Ե. Հայրապետեան, «Հայրենիք» ամսագիր, Բոստոն, թիվ 9, 1937:

²⁶¹ Տե՛ս Նամակ Կարինից, «Դրոշակ», թիվ 3, Փետրուար, 1892:

²⁶² Տե՛ս նույն տեղում:

²⁶³ Տե՛ս նույն տեղում:

²⁶⁴ Տե՛ս նույն տեղում:

սակայն դա նրան չի հաջողվում, ինչից հետո նա խումբը ցրում է, զենքերը պահ տալիս գյուղերից մեկում, և ինքն անցնում է Կարին:

Հետաքրքիր է, որ թե՛ հուշագիրները, թե՛ ուսումնասիրողները միաբերան պնդում են, որ Օքոնյանի գործունեությունն էլ իր անձի նման շատերի համար անհայտ մնաց, «մինչև իսկ առեղծվածային»²⁶⁵, սակայն միևնույն ժամանակ հետաքրքրական: «Ահա մէկը, որ իրաւամբ օժտուած էր ժողովրդական մեծ հերոս լինելու բոլոր յատկութիւններով,- նրա մասին գրում է Ռ. Սեւեանը,- սակայն, նրա կեանքը, դժբախտաբար, չափազանց կարճատեւ եղաւ յեղափոխական ասպարէզում»²⁶⁶:

Կազմակերպվելուց անմիջապես հետո Օքոնյանը, անդամագրվելով ՀՅԴ-ին, միշտ կողմնակից մնաց ֆիդայական պայքարում առկա երկու՝ հրայրյան և անդրանիկյան ուղղություններից վերջինին: Նա գտնում էր, որ «Հայ յեղափոխութիւնը ոչ թե պէտք է նպատակ դնի կազմակերպելու ընդհանուր ապստամբութիւն, այլ պէտք է բաւականանայ պարտիզանական կոիւնքով, երբ քիչ ուժերով հնարաւոր է մեծ վնասներ հասցնել եւ անդադար անհանգստութեան մէջ պահել տաճիկ կառավարութիւնը»²⁶⁷:

Արամայիս Ազնավուրյանը հուշագրում է, որ Օքոնյանը ծագում էր 1883 թվականին կազմակերպված «Հայրենասերների միությունից» անկախ մի կազմակերպություն ստեղծել, որի «մէջն էին Խ. Կերէկցեանը, Յ. Աստուրեանը, Կ. Նշկեանը եւ Յ. Եաշխալացեանը»²⁶⁸: Ա. Ազնավուրյանի վկայությամբ Կերեկցյանը դժգոհում է, որ տեղական պայմաններին բոլորովին անձանոթ օտարական մի երիտասարդ, առանց հաշվի առնելու ժողովրդի համակրանքը վայելող հայրենասերներին, եկել է և գաղտնի կազմակերպություն ստեղծելու ձախող փորձեր է անում: «Յարաբերութիւնները,- իր հուշերում գրում է Ա. Ազնավուրյանը,-Օքոնեանի եւ Կերէկցեանի միջեւ լարում են, եւ անզիջում տեսք ստանում»²⁶⁹: ՀՅԴ հիմնադիրներից Մ. Շաթիրյանն էլ Օքոնյանի մասին հուշագրում է, որ առաջին շրջանում բացի վիճող, բանախոսող ու ծրագրող

²⁶⁵ Տե՛ս Նամակ Կարինից, «Դրօշակ», թիվ 3, Փետրուար, 1892:

²⁶⁶ Ռ. Սևյանը Աբրահամ Գյուլխանդանյանն է: Տարիներ շարունակ նա կարգի է բերել ՀՅԴ արխիվը: Նա օգտվելով հիմնականում Մարտիրոս Մարգարյան-Սաֆոյի թողած չորսէջանոց ձեռագրից, տեղեկություններ է թողել նաև Օքոնյանի մասին:

²⁶⁷ Տե՛ս Հ.Յ. Դաշնակցութեան հիմնադիրները, «Հայրենիք» ամսագիր, Բոստոն, թիվ 6, 1937:

²⁶⁸ Տե՛ս Վ. Վալադեան, Տիգրան Օքոնեան, «Հայրենիք» ամսագիր, Բոստոն, թիվ 6, 1960, էջ 3:

²⁶⁹ Տե՛ս նույն տեղում:

մարդկանցից, կային մեկ այլ տեսակի խումբ երիտասարդներ, որոնք դաշնակցական հիմնադիր սերնդի իսկական «տիպարն էին եւ չէին վիճում, քիչ էին խօսում եւ շատ էին գործում» և ավելացնում է, որ դրանց թվում էր նաև Ս. Օքոնյանը²⁷⁰։ Շաթիրյանը նաև վկայում է, որ վերջիններս զենքեր էին կուտակում, հայդուկային խմբեր կազմում, վարժեցնում էին նորեկներին և առհասարակ անում էին այն ամենը, որը հետագայում դարձավ ՀՅԴ-ի անելիքը²⁷¹։ Նրանք էին, որ ապրում էին հայ ցեղի տառապանքով և հավատում էին հաղթանակին։ Նրանք, ովքեր հեղափոխական ջիղ ու պայքարելու կորով ունեցող անհատներ էին, համեստ իրենց պահանջների և հանդուգն՝ «իրենց զոհաբերութեան, յամառութեան ու հաւատքի մէջ»²⁷²։

Կարինում Ս. Օքոնյանն աշխատանքներ է ձեռնարկում ՀՅԴ տեղական մարմին կազմակերպելու համար. «Նրա ջանքերով Կարնոյ կազմուեց առաջին կոմիտէն, որի մէջ մտնում էին մի շարք երիտասարդ»²⁷³ տեղացի խելոք ու բանիմաց մարդիկ, որոնց մէջ իր պատրաստակամությամբ և եռանդուն գործունեությամբ առանձնանում է Ա. Արամյանը։ Հուշագիրների հավաստմամբ երկու ընկերները՝ Տիգրանն ու Արամը, հավասարապես խիզախ էին, պատրաստ նետվելու ցանկացած վտանգի մէջ։ Բայց առաջինը համառ էր, ավելի ճարպիկ, նախաձեռնող ու հակված էր ինքնիշխանության։ Օքոնյանն ուժեղ անհատականություն էր՝ «երկաթէ կամք ունէր ու գիտէր ուրիշներին պարտադրել իր կամքը»²⁷⁴։

Փաստորեն «Հայ յեղափոխական դաշնակցութիւնը Էրզրումի մէջ իր առաջին խումբը կազմեց 25 դեկտեմբեր 1891ին»²⁷⁵, այսինքն՝ հիմնադիր ժողովից անմիջապես հետո ակալցխացի Ս. Օքոնյանի և Շ. Հովասափյանի միջոցով։ Վերջիններին միացան «Յ.Նշկեան, Տիգրան Գէորգեան (Էզրաէ), Շերամ Ղազարեան, Հմայակ Գալէմքերեան, Սեդրակ Զնոյեան, Գարեգին Թէրզեան, Գարեգին Մալեծիզեան, Յովհաննէս Ղալայճի Գալուստ, Գրիգոր Իսակաճոնց, Ղաֆաֆ Գրիգոր իր երեք զաւակներով, որոնցմէ մեկը

²⁷⁰ Յիշողութիւններ մօտիկ եւ հեռաւոր անցեալից, «Հայրենիք» ամսագիր, թիվ 3, 1932, էջ 103:

²⁷¹ Տե՛ս նույն տեղում:

²⁷² Տե՛ս նույն տեղում:

²⁷³ Տե՛ս «Հայրենիք» ամսագիր, Բոստոն, թիւ 8, 1937, էջ 86:

²⁷⁴ Մելքոնյան Ա., նշվ. աշխ., էջ 246:

²⁷⁵ ՀԱԱ, ֆ. 420, ց. 16, գ. 9, թ. 120:

ապագա Արշակ Գավաճեանն է (Քեռի կամ Քէֆտէռ Արշակ), Աստուրեան Յովհաննէս, Սապոնճոնց Գրիգոր»²⁷⁶ և ուրիշներ:

Կարինում Տ. Օքոնյանի խմբի ձեռնարկած հախտուն, իսկ հաճախ նաև անհաշվենկատ քայլերն անմիջապես առաջ բերեցին լուրջ տարածայնություններ նրա և «Պաշտպան հայրենյացի» առաջնորդ Խ. Կերեկցյանի միջև: Սերունդների հերթափոխի փաստով ու դրանից բխող գործելակերպի առանձնահատկություններով պայմանավորված, տարակարծություններն «ի վերջոյ, յանգում են խորը հակադրութեան»²⁷⁷: Դրանք սպառնում էին բացահայտ ընդհարման վերածվել Տ. Օքոնյանի շուրջը համախմբված երիտասարդության ու Խ. Կերեկցյանի նման փորձառու անհատների միջև: Տ. Օքոնյանի հախտուն բնավորությունը և բացահայտ գործելակերպն առաջ էին բերել Խ. Կերեկցյանի լուրջ դժգոհությունը: Իրենց հերթին երիտասարդներն ամբաստանում էին Խ. Կերեկցյանին դրամական հաշիվներում, ինչպես նաև իբր ռուսական հյուպատոսի հետ ունեցած գաղտնի կապերի մեջ: Իրականում այդ ամենը պարզ հերյուրանք էր: Իսկ պատճառը երիտասարդների կողմից որդեգրված գործելակերպի մեջ առկա անհամբեր, տեղական պայմանները հաշվի չառնող, իսկ հաճախ էլ ուղղակի արկածախնդրական մղումներն էին: Նման պայմաններում Թիֆլիսում գտնվող Հայ հեղափոխականների «Կենտրոնը» նամակներ ու բացատրություններ էր ստանում թե՛ մեկ և թե՛ մյուս կողմից և փորձում էր հարթել հակասությունները: Բողոքելով Տ. Օքոնյանի որդեգրած գործելակերպի դեմ՝ Խ. Կերեկցյանը նամակներ էր ուղարկում Կովկաս, որոնք նրա եղբայրը՝ Տիգրանը, հանձնում էր ոչ միայն «Կենտրոնին», այլև Գ. Արծրունուն, Կովկասի հին գործիչներին (Սև Սանդրո, Բ. Նավասարդյան և այլք), ինչպես նաև Հնչակյան կուսակցության ներկայացուցիչներին: Դիմելով ռուսահայ եղբայրներին՝ Խ. Կերեկցյանը թախանձագին գրում էր. «... այսպիսի թեթևասլիկ անձնատրոփներ մի ուղարկեք... յետ կանչեցեք ձեր մարդիկը, մեզ թողուցեք մենք մեր իիւղովը տապակինք, (մեր ցաւերով) և մենք մեր ուժերով և մեր գիտցած կերպով գործենք»²⁷⁸: Այս թախանձագին խնդրանքին ի պատասխան՝ «Կենտրոնը» խոստանում

²⁷⁶ Նույն տեղում:

²⁷⁷ Վ. Վալադեան, Տիգրան Օքոնեան, «Հայրենիք» ամսագիր, Բոստոն, թիւ 6, 1960, էջ 3:

²⁷⁸ Տե՛ս Կերեկցյան Տիգրան, Խաչատուր Գևորգ Կերեկցյանի կենսագրությունը, ձեռագիր, ԳԱԹ, Բ. Նավասարդյանի ֆոնդ, վավ. 9-III, թ. 55:

է ուղարկել հարկ եղած մարդուն՝ մինչ այդ հորդորելով հաշտ լինել Տ. Օքոնյանի հետ²⁷⁹: Իր հերթին Տ. Օքոնյանն էլ ստորագրություններով ծանրաբեռնված նամակներ էր ուղարկում «Կենտրոնին»՝ հերքելով Խ. Կերեկցյանի մեղադրանքները: Տարածայնությունները հանգուցալուծելու խնդիրը բարդանում էր նաև այն պատճառով, որ լուրջ հակասություններ կային հենց իր՝ ՀՅԴ «Կենտրոնի» ներսում՝ արմատական-հեղափոխական գործելակերպի կողմնակիցների և չափավոր-ազատականների միջև:

Ի վերջո, ժամանելով Թիֆլիս, Տ. Օքոնյանը փորձեց ստանալ «Կենտրոնի» համաձայնությունը՝ ահաբեկման ենթարկելու Խ. Կերեկցյանին: Այդ շրջանում «Կենտրոնի» գործերը գրեթե միանձնյա տնօրինող Լևոն Սարգսյանն իր հուշերում վկայում է, որ «Վրդովված Կենտրոնը արգելում է Տ. Օ. շարունակել իր ազգափրկչական փորձերը և հեռագրով իմաց է տալիս Յ. Ա. (Հովհաննես Աստուրյանին - Ա. Ս.), թե արգելվում է «օղի գնել»²⁸⁰: Սա նշանակում էր, որ էրզրումի կառույցը, որն այդ ժամանակ կոմիտեի կարգավիճակ ուներ, ոչ մի պարագայում իրավունք չունեի կայացնելու և իրագործելու մահվան վճիռ Խ. Կերեկցյանի հանդեպ, քանի որ բացի այդ կարգադրությունից, գոյություն ուներ նաև ՀՅԴ-ի նախնական կանոնագրով սահմանվող հստակ նորմ, համաձայն որի՝ մահվան վճիռ կայացնելու իրավունքը պատկանում էր միայն «Կենտրոնին»²⁸¹: Սակայն, անտեսելով այդ ամենը, Կարինի կոմիտեի տաքգլուխ երիտասարդները, որոնք առաջնորդվում էին «Ով մեզ հետ չէ, թշնամի է» սկզբունքով, Տ. Օքոնյանի նախաձեռնությամբ կայացնում են Խ. Կերեկցյանին ահաբեկման ենթարկելու որոշում: Խ. Կերեկցյանի «յանցանքն» այն եղած էր, որ կը մերժեր հապշտապ յեղափոխական գործողությունները, խոհեմութիւն կը քարոզէր, կը յորդորէր երկարատեւ պատրաստութիւններ տեսնել»²⁸²: Տեղեկանալով այդ մասին, Խ. Կերեկցյանը շարունակում էր զսպել իր կողմնակիցների՝ կանխարգելիչ

²⁷⁹ Տե՛ս նույն տեղում, թ. 61:

²⁸⁰ ՀԱԱ, ֆ. 4047, ց. 2, գ. 9, թ. 90, Լևոն Սարգսյան, Հուլիս 1889-1892 թվականներից...

²⁸¹ Այդ մասին քիչ անց «Կենտրոնը» ստիպված էր անգամ «Դրօշակի» առաջին համարում «Դաշնակցութեան կանոնադրութիւնէ» վերտառությամբ հատուկ բացատրություն տպագրել, որտեղ նշվում էր. «Մահու պատիժը հայերի վերաբերմամբ ընդունվում է միմեայն անպայման ապացուցված դաւաճանութեան դէպքերում: Վարչական Կենտրոն», տե՛ս «Դրօշակ», «Հայ Յեղափոխակ. Դաշնակցութեան» օրգան, 1892, փետրուար, թիւ 3, էջ 12:

²⁸² Տե՛ս Վարանդեան Մ., Հ.Յ.Դաշնակցութեան պատմութիւն, Ա. եւ Բ. հատորներու միացեալ հրատարակութիւն (անձնանուններու եւ տեղանուններու ցանկերով հարստացած), Բ. հրատարակութիւն, Պելյուք, 2013, էջ 91:

քայլերի դիմելու ցանկությունը, հայտարարելով. «թողէք սպանեն ինձ որպէսզի սպանել սովորեն»²⁸³: Ահաբեկումն իրականացնելու խնդիրը վճռվում է վիճակահանությամբ, որն ընկնում է Խ. Կերեկցյանի պահած-փայփայած որբ հոգեզավակին՝ Արշավիր Հովասափյանին (նույն ինքը՝ Արամ Արամյան, Աշոտ, Թաթուլ)²⁸⁴, վայելելով Խ. Կերեկցյանի վստահությունը, 1891 թ. օգոստոսի 26-ին նրան հրավիրում է Կարինի մոտակա բանջարանոցները և թիկունքից կրակելով՝ ծանր վիրավորում: Սեպտեմբերի 2-ին Խ. Կերեկցյանը մահանում է՝ պատվիրելով չհայտնել Ա. Արամյանի անունը, որին մինչև մահն էլ համարում էր իր ազնիվ ու խաբված հոգեզավակը:

Ի պատասխան Խ. Կերեկցյանի եղբոր՝ Տիգրանի բողոքների՝ ՀՅԴ «Կենտրոնը» այդ տխուր առիթով հանդես է գալիս հատուկ հայտարարությամբ, որտեղ ասվում էր. «Յանուն ընդհանուր գործի և բազմաչարչար ազգի ազատութեան գաղափարի մենք դիմում ենք հայ յեղափոխականներին, մէր կոմիտէներին, երբէք չդիմել այդպիսի միջոցի: Մենք բարձրաձայն յայտնում ենք, որ այդպիսի սպանութիւնը մենք համարում ենք յանցանք, ուղղուած ազգի շահերի դէմ, որի անունով կատարվում է նա»²⁸⁵:

Այնուհետև Տ. Օքոնյանը ձեռնամուխ է լինում զենք-զինամթերք Երկիր տեղափոխելու գործին: Նրա հանձնարարությամբ ձիթողի Հ. Տեր-Վարդանյանը մեկնում է Օլթի՝ զենքերի փոխադրության գործն սկսելու համար: Հենց վերջինիս ջանքերով է հիմնվում դեպի Կարին զինատար խմբերի անցման առաջին՝ Կարս-Օլթի-Նարիման-Ձիթող-Կարին գիծը: Առաջին անգամ հաջողվում է տեղափոխել 40 ատրճանակ, 4000 փամփուշտ, որը հասցվում է Նարիմանի գավառի Վեգիխաս գյուղ, իսկ այնտեղից էլ՝ Շիփեկ: Այդ զինամթերքը բաշխվում է Կարինի կոմիտեին, իսկ երկրորդ անգամ նույն գծով տեղափոխված 25 ատրճանակ և շուրջ 4000 փամփուշտով Տ. Օքոնյանը ձեռնամուխ է լինում 17-հոգանոց հայդուկային խմբի ձևավորմանը: Խմբի անդամներից մեկը՝ Հարություն Տեր-Վարդանյանը, հետագայում գրած իր հուշերում մանրամասն տեղեկություններ է հաղորդում Տ. Օքոնյանի գլխավորած արշավանքի

²⁸³ Տե՛ս Կերեկցյան Տ., Խաչատուր Գևորգ Կերեկցյանի կենսագրությունը, ձեռագիր, ԳԱԹ, Բ. Նավասարդյանի ֆոնդ, վավ. 9-111, թ. 67:

²⁸⁴ Սպանությունից հետո Արամ-Աշոտ-Թաթուլը փախչում է Կովկաս, «որ արկածալից կեանք մը ապրեցաւ ու մեռաւ 1899ին թրքական կախաղանին վրայ» (տե՛ս Վարանդեան Մ., նշվ. աշխ., էջ 91):

²⁸⁵ Տե՛ս Յայտարարութիւն, Դիւան Հ. 3. Դաշնակցութեան, հ. 1, Պոսթըն, 1934, էջ 94-95:

մասին²⁸⁶. Նա վկայում է, որ խումբը հիմնվել է Օլթիի Թանպուրատ գյուղում՝ հագնվելով լազի, քոլի, թուրքի հագուստներ և գյուղի քահանա տեր Նիկոլոսի օրհնությունն ստանալուց ու երդվելուց հետո՝ 1891 թ. Սեպտեմբերին, մտել Նարիմանի գավառը՝ տեղի հայությանը հարստահարողներ Փաշա և Իդրիս բեկերին ահաբեկելու համար: Սակայն, շուրջ երկու ամիս տևած անօգուտ ու վտանգաշատ ձեռնարկը, որին Ս. Օքոնյանից բացի մասնակցություն ունեցան հետագայում մեծ հեղինակություն ձեռք բերած՝ ՀՅԴ առաջին հայդուկներից Ղազախեցի Մեխակը, Նարիմանի Ագրակ գյուղից Որսորդ Գևորգը, ալեքսանդրապոլցի Ուսուլ Գրիգորը, կարսեցի Հարություն Կիրակոսյանը (Տուրբախ) և ուրիշներ²⁸⁷, ոչ միայն չհասավ իր նպատակին, այլև ճիշտ հակառակ արդյունքն ունեցավ Նարիմանի գավառի հայության համար: Նիխազից ժամանած թուրքական բանակի մի ամբողջ գումարտակի կողմից պաշարվելով՝ խումբը կարողացավ Քիրեջլի լեռան վրայով անցնել Դևելի լեռը ու իջևանել Իթ կոչվող լայլայում՝ կասկած անգամ չառաջացնելով իրենց հայ լինելու մեջ: Այդտեղ նրանք սպանեցին մի քանի թուրքի, իսկ քիչ անց, Ախա լեռան վրա կռվի բռնվելով քոլերի հետ, ընդհարման ժամանակ բացահայտեցին իրենց հայ լինելը: Դրանից հետո խումբը վերադարձավ Թանպուրատ, լուծարվեց, և Ս. Օքոնյանը, վերցնելով իր երեք հայրենակիցներին՝ Չոլախ Ստեփանին, Փելնեկ Ենովքին ու Հակոբ վարժապետին, մեկնեց Ախալցխա²⁸⁸:

«Դրօշակի» երրորդ համարում տեղ գտած «Նամակ Կարինից» ընդարձակ թղթակցության մեջ²⁸⁹ ներկայացվում էր Շամիլ ծածկանունով գործող Ս. Օքոնյանի խմբի գործողությունների համառոտ պատմությունը, փորձ էր արվում քողարկել

²⁸⁶ Տե՛ս ՀԱԱ, ֆ. 420, ց. 16, գ. 11, թ. 37-39:

²⁸⁷ Այս հայդուկային խմբի զինվորների ցանկը տե՛ս ՀԱԱ, ֆ. 420, ց. 16, գ. 11, թ. 55:

²⁸⁸ Հետագայում Խ. Կերեքցյանի եղբայր Տիգրանը երկար հետապնդելուց հետո սպանում է Ս. Օքոնյանին: Սակայն մինչ օրս անհայտ է մնում Օքոնյանի սպանության ո՛չ միայն ամսաթիվը, այլև տարին, քանի որ իրար չեն համապատասխանում տեղեկությունները, որոնք հայտնի են: Փաստերի համադրությունը և հատկապես այդ հարցերին քաջատեղյակ Ա. Գյուլխանդանյանի ճշգրտումները հուշում են, որ ամենայն հավանականությամբ նա սպանվել է 1896 թ. վերջին կամ 1897 թ. սկզբին: Սակայն դա էլ դեռևս վերջնական ճշգրտման կարիք ունի: Առհասարակ շատ բաներ նրա մասին անորոշ են ու հանելուկային, ինչպիսին ինքն էր՝ Տիգրան Օքոնյանը, ով զորավոր կամքի տեր ու խիզախ լինելով հանդերձ՝ որոշակիորեն իր իսկ ձեռնարկած ու սիրած գործի մեջ հարատևելու խառնվածք չի ունեցել: Նա ավելի հակված էր հաճախ փոխելու գործն ու դրա վայրը:

²⁸⁹ «Դրօշակ», Հայ Յեղափոխակ. Դաշնակցութեան» օրգան, 1892, փետրուար, թիվ 3, էջ 6-7:

ձեռնարկված արշավանքի կապը նորաստեղծ կուսակցության հետ, սակայն ինչպես Նարիմանի գավառի հայության, այնպես էլ թուրքական իշխանությունների համար տեղի ունեցածն արագորեն պարզվեց: Հ. Տեր-Վարդանյանի վկայությամբ. «...Նարիմանի Վեգիխաս և Ագրակ գիւղացիներէն 60 հոգի կալանաւորուելով խոշտանգուեցան և 35-ը չը դիմանալով գործորուած վայրագութիւններուն դիտապաստ ինկան բանտին մէջ»²⁹⁰: Դրանով, սակայն, գործը չփակվեց: 1893 թ. փետրվարի 20-ին Կարինում Ռուսաստանի հյուպատոս Վ. Մաքսիմովը հաղորդում էր Կ. Պոլսում իր երկրի դեսպանին, որ Նարիմանի կազայի Իդա գյուղի յայլայում 1891 թ. սեպտեմբերին 3-ին թուրքերի սպանության առիթով ոչ պակաս 60 հայ է դատաքնության ենթարկվել: Ռազմական դատարանը, Թևֆիկ փաշայի գլխավորությամբ. «...առանց երկար մտածելու, փետրվարի 13-ին մեկ նիստի ընթացքում որոշեցին մեղադրյալներից 25-ին, մեկ այլ տեղեկությամբ՝ 27-ին դատապարտել մահապատժի՝ կախաղանի միջոցով, իսկ մյուսներին ենթարկել ցմահ աքսորի»²⁹¹:

Տ. Օքոնյանը համարձակ էր: Նրա նախաձեռնած արշավանքը կարինցիների շուրթերին վերածվեց երգի: Նա միշտ ուներ իր տեսակետները տարբեր հարցերի շուրջ, և պատահական չէ, որ առաջիններից էր, որ դժգոհություն հայտնեց կուսակցության կենտրոնից: Հովնան Դավթյանի հետ գրած «Հրաւեր առաջին ընդհանուր ժողովի հայ յեղափոխականներին», նամակում, նշելով հեղափոխական գործերի թույլ ընթացքը, ժողովրդի «գործից սառչիլը», նրանք պարզաբանում էին, որ դա հետևանք է «գործողների մէջ մի ընդհանուր ընկերական կապ, գործունէութեան որոշ ուղղութիւն-տաքտիկը չլինելուն եւ բոլորիս դիմած կէտ-նպատակի անորոշութեան»²⁹², առաջարկում էին քննարկել և հստակեցնել հետևյալ կարևոր հարցերը.

- 1) հեղափոխության նպատակը,
- 2) կազմակերպական խնդիրներ,
- 3) գործելակերպի միջոցներն ու մարտավարությունը:

Այնուհետև ներկայացնելով իրենց տեսակետներն այդ հարցերի վերաբերյալ՝ նշում էին, որ իրենց նպատակն է հեղափոխության միջոցով «թուրքա-Հայաստանում ձեռք

²⁹⁰ ՀԱԱ, ֆ. 420, ց. 16, գ. 11, թ. 39:

²⁹¹ Архив внешней политики России, ф. "Политархив", 1889-94гг., оп. 482, д. 1630, л. 163.

²⁹² Նիպեր Հ.Յ. Դաշնակցութեան պատմութեան համար, Բ հատոր, Բ տպագրութիւն, Պեյրուֆ, 1985, էջ 156:

բերել (հիմնել) ժողովրդավարական-ռամկավարական կազմակերպություն»²⁹³: Իսկ հեղափոխական կազմակերպությունը պետք է բաղկացած լիներ մի քանի շրջանային կառույցներից, որոնք պետք է ունենային իրենց գործադիր մարմինները: Ինչ վերաբերում էր կուսակցության մարտավարությանը, ապա նամակի հեղինակները, կարևորելով քարոզչությունն ու տեռորը, մնացած միջոցները որոշելու իրավասությունը վերապահում էին ընդհանուր ժողովին:

Հայտնի է, որ հայ հեղափոխական շարժման արշալույսին ունեցել ենք գործիչներ, որոնց մեջ շաղկապվել ու որոշ ժամանակ գոյակցել են ասպատակն ու ազատամարտիկը, սակայն, ի վերջո մեջտեղում մնացել է միայն «յեղափոխական ոգին»: Այդպիսի օրինակները շատ են՝ Շատախցի Չաթոն ու Շերոն, Դերսիմի Քեռին (Երզնկացի Ռուբեն Շիշմանեան), Արաբոն, Հունոն, Աղբյուր Սերոբը, որոնցից շատերն սկզբում փախստական էին դարձել՝ խուսափելով իշխանությունների հետապնդումներից: Իսկ երբ հեղափոխական կուսակցությունները հրապարակ իջան, հայ «ղաչաղները» շտապեցին միանալ նրանց և սկսեցին պայքարել արդեն հանուն ժողովրդի ազատության: Նրանց թվում էր նաև Տ. Օքոնյանը, միայն այն տարբերությամբ, որ նա մյուսների նման նախապես փախստական չէր դարձել թուրք կամ քուրդ սպանած լինելու պատճառով:

Բազմաթիվ հայդուկային կոիվների կազմակերպիչ Տ. Օքոնյանը, իր մղած կոիվների փորձն ամփոփելով, կազմեց նաև մի փաստաթուղթ՝ «Հրահանգ հրոսակային խմբերին» վերտառությամբ, որը փաստորեն Հ. Յ. Դաշնակցության պատմության մեջ առաջին մարտական կանոնագրի նախագիծն էր²⁹⁴: Սակայն ակնհայտ էր, որ նրա առաջարկած հարձակողական մարտավարությունը երբեմն անպաշտպան ժողովրդին դարձնում էր քավության նոխազ՝ հանգեցնելով հակառակորդից անհամեմատ ավելի մեծ կորուստների: Ուստի, պատահական չէ, որ թեև ՀՅԴ 1892 թ. ամռանը կայացած առաջին ընդհանուր ժողովում հեղափոխական-արմատական թևի ներկայացուցիչները վերջնական հաղթանակ արձանագրեցին կուսակցության ներսում, սակայն հաջորդ տարիների ընթացքում ոչ միայն Կարինի

²⁹³ Նույն տեղում:

²⁹⁴ Փաստաթղթի տպագիր օրինակը տե՛ս Խուդինյան Գ., Հայ Յեղափոխական Դաշնակցության ծրագրի և կանոնագրի պատմությունից, «ԲՀԱ», Ե., 2002, թիվ 1, էջ 63-64:

վիլայերում, այլև ողջ Արևմտյան Հայաստանում մենք չենք հանդիպում նման հախուռն ու անկազմակերպ գործելակերպի: Ընդհակառակը, Էրզրումի կոմիտեն, որը 1894-ից հետո նույնիսկ կենտրոնական կոմիտե անվանվեց, սկսեց հետևողական աշխատանք ծավալել կուսակցության շարքերն ընդլայնելու ուղղությամբ՝ ՀՅԴ-ի մեջ լայնորեն ներգրավելով ինչպես քաղաքի զանազան վարժարանների (Սանասարյան, Արծնյան) շրջանավարտներին, այնպես էլ դաշտավայրի (օվայի) գյուղերի բնակիչներին: Սանասարյանցիներից ՀՅԴ շարքերը ներգրավվեցին Գարեգին Փաստրմաճյանը (Արմեն Գարո), Արամ Արծնյանը, Արծնյան վարժարանի շրջանավարտներից՝ Հովհաննես Սերենկուլյանը, Միհրան Թեղեմեզյանը, Լևոն Մազմանյանը, Վահե Թոգաճյանը, Տիգրան Օամհուրը և ուրիշներ: Կուսակցության մեջ մտան նաև Կարինի և շրջակա գյուղերի առավել ակտիվ ու գործունյա երիտասարդները՝ Դարբին Ստեփանը, Անտոն Պոյաճյանը, Մինաս Օզպեքյանը և ուրիշներ: Դաշտի գյուղերից առավել ուժեղ ու գործունյա կառույց ձևավորվեց Ձիթողում՝ Սեդրակ Անանյանի, Հ. Տեր-Վարդանյանի և այլոց ջանքերով: Այստեղից Հ. Յ. Դաշնակցությունը տարածվեց Հինձք, Թվանջ, Մուտուրկա, Սովուկջերմուկ, Խեստե Մելեք, Դինարի գոմ, Արծրթի, Ումուտում, Խաչկաց վանք, Երկնիստ, Ըղտաձոր ու Պատիշեն գյուղերում²⁹⁵:

ՀՅԴ Կարինի կոմիտեի ստանդնած հիմնական առաջադրանքը զենքի հայթայթումն ու ժողովրդի զինումն էր: Այդ նպատակով օգտագործվում էին զենքի փոխադրության միաժամանակ մի քանի գծեր: Դրանք էին՝ ա) Կարս-Օլթի-Նարիման-Ձիթող-Էրզրում, բ) Ղալա-Բողազ-Հասան Դալա-Հերթև-Խնուս-Սասուն, գ) Ղալա-Բողազ-Իսպիր-Կիվ-Լսոնք-Բաբերդ-Դերջան-Երզնկա-Դերսիմ:

Միաժամանակ Հ.Յ. Դաշնակցության առաջին ընդհանուր ժողովից հետո ժամանակավորապես մի կողմ քաշված Ա. Արամյանը 1894-ից սկսած կրկին Կովկասից երկիր անցնող Հրայրի (Արմենակ Ղազարյան) հորդորների շնորհիվ ակտիվացնում է իր գործունեությունը: Վերջինս կարևորում էր Բասենի ու Խնուսի դերը Մուշ-Սասուն զենք փոխադրելու գործում: Այդ նպատակով Ա. Արամյանը հաստատվում է Բասենի Քյոփրի-Քյոյ գյուղում՝ դառնալով կապող օղակ Էրզրումի կոմիտեի, Կովկասի և Տարոնի գործիչների միջև:

²⁹⁵ ՀԱԱ, ֆ. 420, ց. 16, գ. 11, թ. 41:

1895 թ. օգոստոսին՝ ռուսական ինքնաեռի վաճառականի անվան տակ Կարին է մտնում նաև ՀՅԴ առաջնորդներից մեկը՝ Ռոստոմը (Ստեփան Զորյան): Այստեղից նա մեկնում է Տրապիզոն՝ զենքի փոխադրության գործը կարգավորելու համար: Նույն շրջանում ՀՅԴ-ի կողմից մատնիչների և դավաճանների հանդեպ կազմակերպվում են մի շարք ահաբեկչական գործողություններ:

Այսպիսով, 1895 թ. աշնանն սկիզբ առած արևմտահայերի զանգվածային ջարդերի նախօրեին ՀՅԴ-ն արդեն հասցրել էր իր կազմակերպական կառույցը ձևավորել Կարինի վիլայեթում: Վկայակոչելով Ռոստոմի՝ «Դրօշակի» խմբագրությանը հասցեագրած մի նամակը, որտեղ ասվում է. «Ուղարկեք մի կնիք Պարսկաստանի համար..., միւսը՝ «Կարնոյ Կենտրոնական Կոմիտե»²⁹⁶, որոշ ուսումնասիրողներ²⁹⁷ գտնում են, որ Կարինի ՀՅԴ կառույցն այդ ժամանակ ունեցել է Կենտրոնական կոմիտեի կարգավիճակ: Սակայն ուսումնասիրողների մյուս խմբի կարծիքով այդ կառույցը կենտրոնական կոմիտեի կարգավիճակ չունեցավ. «ՀՅԴ գործունեությանը վերաբերող սկզբնաղբյուրներում չկան այնպիսի տեղեկություններ, որոնք ցույց տան, որ այդ նահանգում գործիչները 1895-1908 թթ. կարողացել են հիմնել Կենտրոնական կոմիտե կամ թեկուզ կոմիտե», - գրում է Հ. Գևորգյանը²⁹⁸: Ապա ավելացնում է, որ եթե «այդ ժամանակ էրգրումում կազմակերպված լիներ ՀՅԴ կոմիտե, ապա Զավարյանը կնշեր»²⁹⁹ ոչ թե «Կարնոյ խումբ», այլ... «Կարնոյ Կոմիտե»: Այնուհետև որպես լրացուցիչ փաստարկ գրում է, որ «Իրականում էրգրումի կուսակցական կառույցները, անգամ հրավիրյալի կարգավիճակով, չեն ունեցել իրենց ներկայացուցիչները ՀՅԴ 3-րդ և 4-րդ Ընդհանուր ժողովներում»³⁰⁰: Աշխատանքը չձանրաբեռնելու համար ձեռնպահ ենք մնում նոր փաստեր վկայակոչելուց: Հակված ենք կարծելու, որ ավելի ճիշտ է երկրորդ տեսակետը: Սկսվել էր նաև զենքի ու զինամթերքի տեղափոխման երկարատև ու դժվարին գործը: Սակայն, այդ քայլերի համար անհրաժեշտ ժամանակ էր

²⁹⁶ Տե՛ս Ռոստոմ, Նամականի, Պեյրուք, 1999, էջ 31:

²⁹⁷ Տե՛ս Խուրդինյան Գ., Հ.Յ. Դաշնակցության գործունեությունը Էրզրումի վիլայեթում 1890-1895 թթ., Հայոց պատմության հարցեր, ՀՀ ԳԱԱ պատմության ինստիտուտ, Ե., 2003, էջ 57-65:

²⁹⁸ Տե՛ս Գևորգյան Հ., Ազատագրական պայքարի ռազմավարությունը և էջեր նրա հերոսապատումից, Ե., 2012, էջ 10:

²⁹⁹ Խոսքը Ս. Զավարյանի մի նամակի մասին է, տե՛ս Դիւան Հ.Յ.Դաշնակցութեան, հ. 1, Պոսթըն, 1934, էջ 181:

³⁰⁰ Տե՛ս Գևորգյան Հ., նշվ. աշխ., էջ 10:

պահանջվում, մինչդեռ 1895 թ. սեպտեմբերի 18-ին՝ ի պաշտպանություն 1895 թ. «Մայիսյան բարենորոգումների» ծրագրի Կ. Պոլսում հնչակյանների կազմակերպած ցույցը դարձավ մայրաքաղաքում ու կայսրության տարբեր վայրերում, այդ թվում և Էրզրումի վիլայեթում, զանգվածային ջարդերի առիթ: Կարինում ՀՅԴ-ն, դիմադրելով ջարդարարներին, կորցրեց Ավետիս Վեմյանի և Հովհաննես Կորկոտյանի նման կարող ուժերի: Բայց ավելին անելու և սուլթանի հայաջինջ ծրագրերի իրականացումը կանխելու հնարավորություն չունեցավ: Ուժերի հարաբերակցությունն ակնհայտորեն շարունակում է մնալ հակառակորդի օգտին:

Այսպիսով, 1880-ական թթ. ընթացքում Կարինում ազատագրական խմբակների գործունեությունը պարարտ հող էր նախապատրաստել, և 1890-ականների սկզբին այստեղ հայտնված կուսակցությունների ներկայացուցիչները կարողացան շատ արագ ստեղծել իրենց տեղական մարմինները: Նրանց գործունեությանը բնորոշ էին երկու հիմնական ուղղություն՝ ա) զգուշությամբ զինվելու, զինավարժվելու և հարմար պահին վճռական գործողությունների դիմելու և բ) պատժիչ գործողություններ ձեռնարկելու և անմիջապես զինված ելույթներ ունենալու, որոնցով հույս ունեին Հայկական հարցի վրա գրավել եվրոպական դիվանագիտության ուշադրությունը: Այս երկու ուղղությունների միջև անհամաձայնությունները նույնիսկ հանգեցրին բախման ու անհարկի կորուստների: Կարինում թե՛ հնչակյանների, թե՛ դաշնակցականների մոտ գերակշռողը երկրորդ ուղղությունն էր, որն այնքան էլ արդյունավետ չէր և հաճախ անցանկալի հետևանքներ էր ունենում: Միևնույն ժամանակ Կարինի վրայով կազմակերպվեցին տարանցիկ ուղիներ, որոնցով զենք-զինամթերք էին ներկրվում Երկիր: Հատկանշական է այն իրողությունը, որ նահանգի բնակչության մեծ մասը սատարում էր սկսված պայքարը, նույնիսկ ունևոր խավը, ինչն այնքան էլ բնորոշ չէր մյուս տարածաշրջաններին: Այդ եռանդուն, համերաշխ ու միասնական գործելակերպը վախեցնում էր իշխանություններին, որոնք իրենց համար անցանկալի այդ զարգացումները կանխելու համար էլ սադրեցին հունիսյան հայտնի դեպքերը:

ԳԼՈՒԽ II

ԱԶԳԱՅԻՆ-ԱԶԱՏԱԳՐԱԿԱՆ ՊԱՅՔԱՐԸ ԿԱՐԻՆԻ ՆԱՀԱՆԳՈՒՄ XIX ԴԱՐԻ ՎԵՐՋԻՆ ՏԱՄՆԱՄՅԱԿՈՒՄ

2.2 Հունիսյան դեպքերը և 1894-1896 թթ. հայկական կոտորածները Կարինի նահանգում

1890 թվականի հունիսին Կարինում կեղծ լուրեր են տարածվում հայերի քաղաքում զինապահեստներ ունենալու և ապստամբության պատրաստվելու մասին: Այդ կեղծ ահազանգի հիման վրա Բ. Դոնից ստացված հրամանով խուզարկելու նպատակով թուրք ոստիկանները պատարագի ժամին ներխուժում են եկեղեցի: Դա շատ ծանր տպավորություն է թողնում տեղի հայության վրա: Մասնավորապես հնչակյան գաղափարներով տոգորված երիտասարդությունն ընդվզում և բողոքում է այդ անօրնականության դեմ: 1890 թ. հունիսի 18-ի վաղ առավոտյան ժողովուրդը հավաքվում է Ս. Աստվածածին եկեղեցու բակում, որպեսզի արգելի ծրագրված խուզարկությունը: Հուշագիրների վկայությամբ Հակոբ Իշգալացյանի, որ «Պոլիս երթալ-գալով Հնչակեան արձանագրուած էր Աչգալաշեանի ձեռքով»³⁰¹, ղեկավարությամբ երիտասարդներից ոմանք զինվում են ատրճանակներով: Ոստիկանապետ Մուրադի առաջնորդությամբ շուտով երեսուն ոստիկաններ խուժում են եկեղեցու բակ և փորձում մտնել եկեղեցի: Քաղաքի մի քանի պատվարժան հայեր դիմում են ոստիկանապետին, որպեսզի վերջինս հետ տանի ոստիկաններին և հրաժարվի եկեղեցին խուզարկելու մտքից: Բանակցությունները դեռ չավարտված՝ ձերբակալված հայ երիտասարդներից մեկը ոստիկանից ձերբազատվելու մտադրությամբ ատրճանակից օդ է կրակում: Այդ կրակոցն էլ առիթ է դառնում և ոստիկաններն սկսում են կրակել հայերի վրա: Սպանվում և վիրավորվում են քսան հայեր և մեկ ոստիկան: Անկազմակերպ, բայց անկյունադարձային էր այս իրադարձությունը. հայ իրականության մեջ առաջին անգամ էր, որ «հայու գնդակով եւ սուրով թուրք դիակներ»³⁰² կը մնային կռուի դաշտին վրայ. թուրք վիրաւոր վայնասունն

³⁰¹ Տե՛ս Պատմութիւն Ս.Դ. Հնչակեան կուսակցութեան 1887-1962, հ. Ա, Պեյրութ, 1962, էջ 51:

³⁰² Իրականում սպանվել է մեկ հոգի:

ալ կը խառնուէր հայու ցաւի ճիչերուն»³⁰³: Դեպքի անմիջական ազդեցության տակ հայ մարդու, մանավանդ երիտասարդության մեջ արթնանում էր արիությունը, մանավանդ «թուրքին զարնելու և սպաննելու հոգեբանությունը»³⁰⁴:

Կարինում, որտեղ թուրքերն անհամեմատ շատ էին, քան հայերը, հաստատվել էին նաև «ամէն տեսակ գիշատիչներ՝ լազեր, չերքեզներ, թարաքամաներ, քրդեր»³⁰⁵: Նրանք բոլորն էլ հայերի դեմ էին տրամադրված և միշտ հարմար առիթի էին սպասում նրանց թալանելու և կոտորելու համար: Այդ պատճառով էլ փոխանակ միջնորդեին ու կանխեին արյունահեղությունը, ավելի էին գրգռում զինվորներին ու մոտակայքում խռնված ամբոխին: Նույնիսկ այդ արյունահեղության վտանգը հետ չի պահում թուրք ժանդարմներին խուզարկության մտքից, ինչին էլ նրանք ձեռնամուխ են լինում անմիջապես: Խուզարկվում են Ս. Աստվածածին եկեղեցին, առաջնորդարանը և Սանասարյան վարժարանը: Սակայն խուզարկության արդյունքում ոչինչ չի հայտնաբերվում: Եկեղեցի եկած բազմությունը «Պաշտպան հայրենյացի» ղեկավարներ Խ. Կերեքցյանի, Գ. Չիլինկիրյանի և Հ. Իշգալացյանի գլխավորությամբ դիմադրում է ոստիկաններին: Քաղաքում լարվածությունը հետզհետե աճում է, և երկու օր անց՝ հունիսի 20-ին, իշխանությունների հրահանգով քաղաքի հայկական թաղամասերում ջարդեր են կազմակերպվում: Այնուհետև իշխանությունները քաղաքում ձերբակալություններ են սկսում՝ շատ դեպքերում հաշվի չառնելով՝ ձերբակալվողները որևէ մեղք գործել են, թե՞ ոչ: Դպրոցի տեսուչ և ցույցի ամենաակտիվ մասնակիցներից մեկը՝ Գ. Չիլինկիրյանը, ծածուկ հեռանում է Թիֆլիս, իսկ ցույցը կազմակերպող հնչակյաններ Կերեքցյանը, Իշգալացյանը, Սահաթճյանը, Նշկյանը «կը կորսնցնեն իրենց հետքերը»³⁰⁶:

Ընդհանրապես ցույցին նախորդած օրերին հայության շրջանում այն կարծիքն էր իշխում, թե եվրոպական դիվանագետները շատ մեծ կարևորություն պետք է տալին դրան և կօգտագործեին այդ առիթը օսմանյան Թուրքիայի գործերին միջամտելու և ավելի ուժեղ ճնշում գործադրելու Բ. Դռան վրա, որպեսզի վերջինս անմիջապես իրագործի Սան Ստեֆանոյի 16-րդ և Բեռլինի 61-րդ հոդվածներով կանխագծված և իր

³⁰³ Տե՛ս Չարլզ Դ., նշվ. աշխ., էջ 413:

³⁰⁴ Տե՛ս նույն տեղում:

³⁰⁵ Տե՛ս Ռոստոմ մահուան վաթսուամեակին առթիւ, խմբագիր՝ Հ. Տասնապետեան, Պեյրութ, 1979, էջ 50:

³⁰⁶ Պատմություն Ս.Դ.Հնչակեան կուսակցութեան 1887-1962, Խ. Ա, Պեյրութ, 1962, էջ 52:

կողմից բազմիցս խոստացված բարենորոգումները հայկական նահանգներում: Սակայն բոլորովին էլ այդպես չեղավ, և այդ կարծիքը հոգս ցնդեց հենց ցույցի հաջորդ օրը, երբ հստակ երևաց, որ օտար երկրների հյուպատոսները շատ անտարբեր կեցվածք ընդունեցին և բավարարվեցին միայն իրենց կառավարություններին պաշտոնական տեղեկագրերով տեղի ունեցածի մասին իրազեկելով: Այսպես, դեռևս 1890 թ. փետրվարին Կարինում Մեծ Բրիտանիայի հյուպատոսը, որ դեսպանությանը տեղեկացրել էր թուրքական իշխանությունների կողմից հայ բնակչության հանդեպ կիրառվող գրաքննական խստությունների մասին, որ շուրջ 30 հայեր մեղադրվել և ձերբակալվել էին «արգելված» գրականություն ունենալու համար, որի մեջ էին Վենետիկում հրատարակված հայոց պատմության գրքերը, Ֆրանսիայում գնված՝ Հայաստան աշխարհագրական անվանումը պարունակող քարտեզները և նույնիսկ ազգային երգերը, այս անգամ էլ բավարարվեց սոսկ դեպքերի մասին տեղեկացմամբ³⁰⁷: Ավելին, հայությունը ցնցված էր մինչ այդ չտեսած գազանություններից, որ իրականացրին իշխանություններն ու խուժանը Կարինում. «Կոտորածից առաջ նա (կարնեցին) դժուարութեամբ էր իրեն թոյլ տալիս մտածելու, որ կառաւարութիւնը ընդունակ է մի այդպիսի տմարդի եւ միեւնոյն ժամանակ գազանական գործողութեան»³⁰⁸: Այդպիսի ոճիր, որ մարդկության պատմության մեջ տեղի ունեցած բացառիկ դեպքերի շարքում կարելի է դասել, հայ ժողովուրդը նույնիսկ սուլթանական «ապուշ եւ վայրենի» կառավարությունից չէր սպասում: Կարինում տեղի ունեցած ոճիրը,- գրում է «Հնչակ»-ի թղթակիցը,- նաև ցույց տվեց, որ «յանկարծակի գրգռվիլը, առանց նախապատրաստութեան հարձակիլը անբարեհաջող ավարտ կունենայ»³⁰⁹: Միևնույն ժամանակ, քննարկելով ու վերլուծելով տեղի ունեցածը, «Հնչակը» եզրակացնում էր. «...դժուար չէ նկատել, որ թիւրք կառաւարութեան գաղտնի նախագծով ու դրդումով է առաջացրել այդ դէպքը, որ նա այնտեղ խաղացել է պրօվօկատորի դեր իսկ միա կողմից՝ հայ ժողովուրդը տրամադիր է եղել

³⁰⁷ Տե՛ս Turkey, թիվ 1(1892), London, 1892, էջ 16, 19, 37: Տե՛ս նաև Հայ ժողովրդի պատմություն, հ. VI, Ե., 1981, էջ 233:

³⁰⁸ Տե՛ս Ռոստոմ մահուան վաթսունամեակին առթիւ, խմբագիր՝ Հ. Տասնապետեան, Պեյրութ, 1979, էջ 50-51:

³⁰⁹ Տե՛ս «Հնչակը», 1890, հուլիս, թիվ 3, էջ 1:

կառաւարութեան զցած մարտական ձեռնոցն ընդունել բաւական սպառնական եղանակով»³¹⁰:

1890 թ. Կարինի ցույցն ու դրան հաջորդած անմիջական իրադարձությունները հանդիպեցին հայերի թեւ նախապես չծրագրված, սակայն ակտիվ դիմադրությանը: Առաջին անգամ հայը նաև զենքի դիմեց: Երկու կողմն էլ զոհեր և վիրավորներ ունեցան: Նշենք, որ այս ամենն անկյունադարձային եղավ արևմտահայ իրականության մեջ. ոչ միայն առաջին անգամ օրը ցերեկով քաղաքի կենտրոնում հայի գնդակից թուրք զոհվեց, այլև դրա անմիջական ազդեցության ներքո կոփվեց հայի հոգեբանությունը. մշտական զոհի կարգավիճակից նա շրջադարձ կատարեց դեպի պետք եղած դեպքում նաև սպանողի և կատարված անարդարությունների համար պատժողի կարգավիճակ: Կարինի դեպքերը, որպես ազատության համար բողոքի պոռթկում, մեծ արձագանք գտան ինչպես արևմտահայության, այնպես էլ արևելահայության շրջաններում: Կարինի դեպքերի անմիջական ազդեցության ներքո 1890 թ. հուլիսի 15-ին տեղի ունեցավ Գում Գափուի ցույցը, սեպտեմբերի 27-ին կազմակերպվեց Սարգիս Կուկունյանի արշավանքը, տարեվերջին՝ Տարոնի Վարդենիս գյուղի զինված դիմադրությունն իշխանության ներկայացուցիչներին, 1891 թ. Սկզբներին՝ կուսակալի ու Ռուսաստանի հյուպատոսության առջև բողոքի ցույցը Վանում և այլն: Նման ցույցեր ու ելույթներ կազմակերպվեցին գրեթե հայաշատ բոլոր խոշոր բնակավայրերում³¹¹: Այդ ցույցերն ու ելույթները շարունակվեցին նաև հետագայում՝ հաճախ վերածվելով արյունահեղ բախումների, որպիսիք էին Սասունի՝ 1893-1894 թթ., Վանի՝ 1896 թ. հերոսական ինքնապաշտպանական մարտերը, Բաբը Ալիի՝ 1895 թ. ցույցը, Ջեյթունի՝ 1895-1896 թթ. ապստամբությունը և այլն: Այդ բոլոր տարիների ընթացքում հայ ֆիդայական պայքարը ևս երբեք տեղի չտվեց: Այն երբեմն բզկտվում, թուլանում էր, բայց կրկին ծավալվում, հզորանում էր անընդհատ՝ առաջին հերթին դրսևորվելով որպես արևմտահայ ժողովրդի ազատագրման նպատակին ուղղված մի հերոսամարտ, հետո էլ որպես զսպաշապիկ արյունոտ ոսոխի համար:

Ավելացնենք, որ գնահատելով որպես իր ազատության համար ուրքի ելած բողոքի արդարացի պոռթկում, Կարինի ցույցը ոգեշնչման աղբյուր հանդիսացավ նաև հայ

³¹⁰ Տե՛ս «Հնչակ», 1890, հուլիս, թիվ 3, էջ 12:

³¹¹ Տե՛ս ՀԺՊ, հ. 6, էջ 238:

մշակույթի բազմաթիվ նշանավոր ներկայացուցիչների ու ժողովրդական գուսանների ստեղծագործություններում և պայքարի ոգեկոչեց գալիք սերունդներին:

XIX դարի վերջին տասնամյակում զգալիորեն թուլացած Օսմանյան կայսրությունը կառավարող «Կարմիր գազան»³¹² Աբդուլ Համիդ II-ը վախենալով, որ Բեռլինի վեհաժողովում հայերի համար նախատեսված «բարենորոգումները պարունակում են իրենց մեջ պետութեան կործանման պացիլները»³¹³ և ցանկանալով կանխել կայսրության վերջնական փլուզումը, ձգտում էր իր տերության շուրջը համախմբել ամբողջ մահմեդական աշխարհը: Դրա իրագործման ճանապարհին իրենց ազգային-ազատագրական գաղափարներով հայերը լուրջ խոչընդոտ էին: Այդ արգելքը վերացնելու նպատակով արյունարբու սուլթանը որոշեց պարզապես բնաջնջել հայ ժողովրդին: Նա նախաձեռնեց 1894-1896 թթ. կոտորածները, որոնք թեև միշտ մնում են 1915 թ. ցեղասպանության սուվերում, սակայն Օսմանյան կայսրությունում, այդ թվում Կարինի նահանգում, բնակվող հայերի գոյությանը հասցված ամենամեծ հարվածներն էին եղեռնից առաջ: Այդ ոճրագործությունը, որի մասին վկայում են մեծաքանակ արխիվային վավերագրեր, տպագիր սկզբնաղբյուրներ, ուղեգրություններ, հուշագրություններ, մամուլում զետեղված հրապարակումներ ու այլ աղբյուրներ, հայ և օտար ուսումնասիրողների բազմաթիվ աշխատություններ³¹⁴, մի օրում չծնվեց և պայմանավորված էր որոշակի սոցիալ-տնտեսական, քաղաքական, գաղափարախոսական, իրավական և բազում այլ նախադրյալներով, որոնք ընդհանուր էին ինչպես ամբողջ կայսրության, այնպես էլ Կարինի նահանգի համար:

XIX դ. վերջին Օսմանյան կայսրության թեև դանդաղ, բայց աստիճանաբար կապիտալիստական ուղիով զարգացող տնտեսության մեջ շատ կարևոր լծակներ ու կապիտալի (հատկապես փոխատվական) որոշ մասը գտնվում էին հայ գործարարների ձեռքում: Հայերն իրենց սոցիալական, տնտեսական և մշակութային զարգացմամբ էլ ավելի բարձր մակարդակի վրա էին, քան թուրքերը: Դա էլ ատելություն և թշնամանք էր առաջացնում էր հայերի նկատմամբ: Թուրք իշխանավորներն ու գործարար տարրը

³¹² Տե՛ս (Abdulhamid II), İkinci Abdulhamid'in HatıraDefteri, İstanbul, 1960, էջ 130: Արևմտահայության կոտորածների հեղինակ Աբդուլ Համիդը կյանքի վերջում գրի առած իր հուշագրություններում «միամտորեն» զարմանում էր, թե ինչու են իրեն անվանում «Կարմիր գազան»:

³¹³ Տե՛ս Եազըճեան Գուրգեն, Ապտուլ Համիտ Բ. Կարմիր սուլթանը, Պէյրուֆ, 1980, էջ 819:

³¹⁴ Դրանք այնքան շատ են, որ միայն թվարկումը մեծաքանակ էջեր կզբաղեցնի: Այդ պատճառով էլ ձեռնպահ ենք մնում դրանից և վկայակոչվածները կներկայացնենք համապատասխան տեղում:

տենդագին ելք էին որոնում ստեղծված իրավիճակից՝ ցանկանալով տեր դառնալ երկրի ողջ հարստություններին, հանուն այդ նպատակի կանգ չառնելով ոչ մի միջոցի առջև: «Հայոց տնտեսական ակտիվությունն էր, նշում է Զ. Կիրակոսյանը, որ գրգռում ու կատաղեցնում էր թուրք բուրժուազիայի քաղաքական պարագլուխներին. նրանք այլևս չէին հանդուրժելու երկրի ներքին շուկայում հայոց տնտեսական վերընթացը»³¹⁵:

Բոլորովին էլ պատահական չէր, որ Աբդուլ Համիդ II սուլթանի օրոք (1876-1908 թթ.) կառավարող վերնախավի գաղափարախոսությունը դարձավ պանիսլամիզմը (համախալամականություն): Հասկանալով, որ պետության թուլացման և քայքայման կարևոր պատճառներից մեկը եղել և շարունակում էր մնալ ազգային հարցը՝ կայսրության ամբողջականությունը և պետականությունը պահպանելու ելքը սուլթանը տեսնում էր երկիրը միակրոն և էթնիկ առումով միատարր դարձնելու մեջ: Ստեղծվեց պետությունը ճգնաժամից դուրս բերելու մանրակրկիտ մշակված, բայց հրեշավոր ծրագիր: Ի դեմս իսլամիզմի և օսմանիզմի հիմնարար դրույթների միախառնման³¹⁶, այն ուներ ամուր գաղափարախոսական հենք: Համիդի ջանքերով 1890-ականներից սկսած «թուրքական կյանքում այդ նոր հեղափոխական»³¹⁷ գաղափարախոսությունը դրվեց պետական քաղաքականության հիմքում: Աբդուլ Համիդ II-ը փաստորեն դարձավ հիմնադիրը «պետական դոկտրինայի, որի էությունը անփոփոխ մնաց և ուղեցույց եղավ թե՛ երիտթուրքերի և թե՛ քեմալականների համար»³¹⁸:

Պետական քաղաքականության աստիճանի էր բարձրացվել մուսուլմանների բնակեցումը հայաբնակ գյուղերում: Նրանց տասը տարով ազատելով ռազմական ծառայությունից՝ նվիրում էին նաև հայերի կողմից արդեն մշակված, եկամտաբեր հողեր, ցույց էր տրվում նյութական օժանդակություն³¹⁹: Դրանով թուրքերը ձգտում էին հայերին դուրս մղել Արևմտյան Հայաստանից և տիրանալ նրանց պատկանող ամեն ինչին: Կոնկրետ Կարինի նահանգում քրդերի մշտական հարձակումների հետևանքով ստեղծվել էր կյանքի և սեփականության անապահովություն, չկար խոսքի, խղճի

³¹⁵ Տե՛ս Կիրակոսյան Զ., Երիտթուրքերը պատմության դատաստանի առաջ (19-րդ դարի 90-ական թթ. – 1914 թ.), գիրք առաջին, Ե., 1982, էջ 122:

³¹⁶ Տե՛ս Մկրտչյան Լ., նշվ. հոդ., էջ 58:

³¹⁷ Տե՛ս Ziya Gokalp, The Principles of Turkism, Netherlands, 1968, էջ 6:

³¹⁸ Տե՛ս Մկրտչյան Լ., Արևմտահայության ցեղասպանության արդուլիամիդյան քաղաքականությունը, Հայոց ցեղասպանությունը (ուսումնասիրություններ), Ե., 2001, էջ 58:

³¹⁹ Տե՛ս Геноцид армян в Османской империи, Ереван, 1991, էջ 122:

ազատություն, իշխանությունները մահմեդականների հետ համեմատած հայերի նկատմամբ ցույց էին տալիս ընդգծված անհավասար վերաբերմունք³²⁰: Նահանգում մեծ տարածում էին գտել հայերի բռնի մահմեդականացումը, երեխաների, մանկահասակ աղջիկների զանգվածային առևանգումներն ու վաճառքը: Հսկայական չափերի էր հասել բողոքի զուսպ ձևը՝ արտագաղթը:

Աբդուլ Համիդի իշխանախումբն արևմտահայությանն ընկալում էր որպես կայսրության միությանն ու անվտանգությանը սպառնացող անմիջական վտանգ, որի համար էլ հայերը «լուսանցքայնացուել, իսկ մուսուլման առաջնորդները զօրեղացել էին»³²¹: Կարինի նահանգում թուրքերը քրդերին խոստանում էին հարստացնել հայերի հաշվին: Նրանք սկսեցին քրդական աշիրեթներն առաջին պլան մղել: Այդ իսկ պատճառով հայերի վրա հարձակումներն սկսեցին բացահայտ բնույթ կրել:

Այդ ընթացքում Ռուսաստանին սահմանամերձ Կարինի նահանգում տեղի ունեցավ հայ բնակչության աշխարհականացման գործընթաց, հայերը դարձան կարևոր գործոն կայսրության արևելյան մասերի անվտանգության ապահովման գործում: Իսկ այդ գործընթացում գերակշռող դարձան այնպիսի քաղաքական արտահայտություններ, ինչպիսիք են՝ անհավատարմություն, հայկական խառնակություն, ծառայություն օտարներին և այլն, որոնք, որպես կանոն, օգտագործվում են ի վնաս հայերի:

Իշխանությունները նաև շեշտադրում էին հայերի ազգային-ազատագրական շարժումները: Նրանք հաճախ էին թմբկահարում հայ հեղափոխականների և ազգայնականների՝ Անատոլիայի կեսը զավթել-չզավթելու վտանգը: Իրականում այդ ձգտումներն «այդքան ազդեցիկ եւ զօրեղ չէին կամ էլ շատ որոշակի վայրերով էին սահմանափակուում այդ ուժն ու իշխանութիւնը: Բացի Վանից եւ Էրզրումից՝ այնքան անզօր էին, որ ձերբակալութեամբ վերջ կը դրուէր»³²²: Սակայն այս վտանգի ընկալումը, որ ամեն ինչից անկախ ի հայտ էր եկել համիդյան վարչակարգի մտայնության մեջ, ուժնալուծվում և հատուկ շեշտադրումներով մատուցվում էր մահմեդական բնակչությանը: Այդ իսկ պատճառով հնարված այն ընկալումը, որ հայ բնակչությունն անվստահելի է և

³²⁰ Տե՛ս «Դրօշակ», Վիեննա, 1891, էջ 6:

³²¹ Տե՛ս «Ակօս» շաբաթաթերթի աշխատակից Էմրե Ճոն Տաղըլլօղլուի հարցազրույցը «Սայմըն Ֆրէյզլըր» համալսարանում հետազոտական աշխատանք կատարող Էտիպ Կեօլպաշիի հետ: Հարցազրույցը տե՛ս <http://www.aztagdaily.com/archives/190231>:

³²² Նույն տեղում:

ամեն պահի կայսրությունից կարող է անջատվել, այդ շրջանում սկսում է անմիջականորեն ազդել հայերի ճակատագրի վրա:

Սուլթանի տնտեսական ճնշումներն ամենուրեք զուգակցվում էին քաղաքական հետապնդումներով: Հաճախ նույնիսկ առանց որևէ մեղքի, միայն կասկածելով ձերբակալում ու կոտանքների էին ենթարկում հայ երևելի մարդկանց, հատկապես մտավորականներին:

Բեռլինի վեհաժողովում վավերացված Հայկական հարցը խոշոր տերությունների ձեռքում կարևորագույն կռվան էր դարձել՝ կայսրության գործերին միջամտելու համար: Ձգտելով յուրուտ պատառներ պոկել փլուզման եզրին հասած «հիվանդ մարդուց»՝ նրանք բարենորոգումների խնդիրը շահարկելու առիթը բաց չէին թողնում: Այդպիսի առիթ եղավ Մայիսյան բարենորոգումների հայտնի ծրագիրը: 1895 թ. հունվարին Մեծ Բրիտանիայի դեսպան Ֆ. Քարրին արտգործնախարար Զ. Քիմբերլին է ներկայացնում էրզրումում հյուպատոս Հ. Չերմսայդի մշակած հայկական բարենորոգումների ծրագրի մի նախագիծ³²³: Այնուհետև այդ նախագիծը ներկայացվում է Պոլսի հայոց պատրիարք Մ. Իզմիրլյանին և Կ.Պոլսում Ռուսաստանի դեսպան Ա. Նելիդովին: 1895 թ. մարտին տեղի ունեցած դեսպանների խորհրդակցության ժամանակ հայտնի է դառնում, որ մեծ տերությունները համակարծիք չէին Հայկական հարցում³²⁴: Իր հերթին Ա. Համիդը մեծ տերությունների դեսպաններին տեղեկացնում է, որ բոլոր սուլթանները, այդ թվում և ինքը, բարեսիրտ են եղել հայերի նկատմամբ, սակայն վերջին տարիներին հայերն իրենց «լավ չեն պահում», ինչն էլ զայրացնում է իր մյուս հպատակներին:

Երկար քննարկումների արդյունքում ներկայացվում է բրիտանական ծրագրի նոր տարբերակ, որով նախատեսվում էր բարելավել Վանի, Էրզրումի, Սեբաստիայի, Բիթլիսի, Խարբերդի և Դիարբեքի վիլայեթների հայության վիճակը: 13 գլխից և 40 հոգվածից բաղկացած այդ նախագծով Արևմտյան Հայաստանն ինքնավարության կարգավիճակ էր ստանում եվրոպական հովանու ներքո:

Նոր նախագիծը մեծ տերությունների միջև նոր անհամաձայնությունների առիթ դարձավ, իսկ սուլթան, օգտագործելով դա, մերժեց նախագիծը: Սակայն ի վերջո որոշ

³²³ St' u Public Record Office (London), Foreign Office (FO), 424/181, N 88/1, էջ 57:

³²⁴ St' u Հայոց պատմություն, հ. III, գիրք առաջին, Ե., 2010, էջ 522:

չափով տեղի տվեց և միայն հաստատեց բարենորոգումների իրագործման հանձնաժողովի կազմը: Դրանից հետո այդ հանձնաժողովի անդամները մեկնում են Էրզրում, քանի որ Արևմտյան Հայաստանի կարևորագույն և հիմնական սկզբնակետ դիտարկվում էր այդ քաղաքը:

Հասկանալով, որ եվրոպական տերությունների գործադրած ջանքերը դրական արդյունք չունեցան, եվրոպական դիվանագիտության մի քանի ակտիվ միջնորդություններից և տարբեր գործիչների հայանպաստ հայտարարություններից ոգևորված՝ հայ հասարակական-քաղաքական շրջանակները հանդես եկան Աբդուլ Համիդի հակահայկական քաղաքականության դեմ: Ուրքի ելան հայության գրեթե բոլոր խավերը: Հայության ամենալայն շրջաններում տարածում էր ստանում զինվելու, զենքը ձեռքին կռվելու և գոնե պատվով մեռնելու բնական ցանկությունը: Մշակվեց մարտական գաղափարախոսություն, կուսակցություններն իրենց վրա վերցրին համաժողովրդական պայքարի կազմակերպման գործը: Հայությունը վերջիններիս առաջնորդությամբ մտավ իր դարավոր գոյամարտի վճռական՝ զինված հեղափոխության ժամանակաշրջանը: Ինչպես ամեն մի ճնշված ազգի պայքար ընդդեմ բռնապետության, հայ ժողովրդի մաքառումը և՛ արդար էր, և՛ ուներ առաջադիմական, ազատագրական նշանակություն: Պայքարի բնույթով, ձևերով և եղանակներով այն իսկապես ժողովրդական էր և «պատմական ըրպէի պահանջած պայմաններին»³²⁵:

1895 թ. սեպտեմբերի 18-ին հայկական նահանգներում բարենորոգումներ իրականացնելու պահանջով տեղի ունեցավ Բաբը Ալիի հայտնի ցույցը, որին մասնակցում էին ավելի քան չորս հազար մարդ: Խաղաղ ցույցը թուրքերի հրահրման արդյունքում վերածվում է արյունալի բախման³²⁶:

³²⁵ Տե՛ս «Դրօշակ», 1891, թիւ 24, դեկտեմբեր:

³²⁶ Բախմանը զոհ գնացին 15 ոստիկան և 60 անմեղ հայեր: Ցույցն ուժով ցրվում է, 500-ից ավելի հայեր ձերբակալվում են: Հաջորդ օրերին ևս փողոցներում շրջում էին զինվորներն ու ոստիկանները, որոնք խուզարկում էին հայերին և չնչին պատրվակով ձերբակալում: 1895 թ. սեպտեմբերի 18-ի գիշերը մահմեդական խաժամուժը հարձակվում է Կեսիկ փաշա և Գում Գափու թաղերի հայ բնակչության վրա: Տեղի է ունենում կոտորած, շատերին ձերբակալում են առանց որևէ պատճառի՝ «մեկ օրւան մէջ 2000 հոգի ձերբակալւած են»: Տե՛ս «Մուրճ», 1885, թիվ 12, էջ 1888-1889: Կալանավածները ենթարկվում են կտտանքների: Հաջորդ օրերին քաղաքում տեղի են ունենում ջարդեր, որոնց զոհ են դառնում ավելի քան 2 հազար, իսկ ըստ որոշ աղբյուրների՝ 6 հազար անմեղ հայեր: Տե՛ս Հայոց պատմություն, հ. III, գիրք առաջին, Ե., 2010, էջ 528:

Մեծ տերությունների դեսպանների բողոքներին սուլթանն արձագանքում է բացարձակ անտարբերությամբ և լկտիաբար հայտարարում է, որ ներկայացված փաստերը չեն համապատասխանում իրականությանը: Ավելին՝ Բաբը Ալիի ցույցից անմիջապես հետո Օսմանյան կայսրության ամբողջ տարածքում սկսվում են անգլեն հայերի՝ պատմության մեջ աննախադեպ զանգվածային կոտորածները:

1895 թ. սեպտեմբերին մայրաքաղաք Կ.Պոլսում սկսված հայկական ջարդերի ակիբը շատ արագ տարածվեց և իր մեջ առավ ամբողջ Արևմտյան Հայաստանն ու կայսրության հայաշատ մյուս վայրերը³²⁷: 1894-1896 թթ. կոտորածների ժամանակ զոհվեց 300 հազար հայ: Սակայն հայերի կորուստները միայն դրանով չէին սահմանափակվում: Ստեղծված անասելի հուսալքման պայմաններում մոտ 100 հազար հայ բռնի դարձան մահմեդական, և մոտավորապես այդքան հայեր էլ հարկադրված հեռացան իրենց հայրենիքից: Որբացավ ավելի քան 50,000 երեխա³²⁸: Թուրքական իշխանությունների կողմից իրականացված այդ ոճրագործությունը ցեղասպանության դրսևորում էր, որի նպատակն էր արյան մեջ խեղդել արևմտահայերի ազգային-ազատագրական շարժումը և վերջնականապես վերացնել Հայկական հարցը: Ի դեպ, ջարդերը գերազանցապես իրականացվում էին Աբդուլ Համիդ II-ի կողմից հատուկ ստեղծված համիդիե անկանոն հեծելազորների կողմից: Նկատենք, որ դա թուրքական կառավարության բնաջնջման առաջին փորձն էր, ուստի և որոշ վայրերում տեղական իշխանությունները չկարողացան կազմակերպված իրագործել կենտրոնի հրահանգները: Բոլոր «վրիպումներն» ու «սխալները» հետագայում հաշվի առան Աբդուլ Համիդի հետևորդները:

Փաստորեն Աբդուլ Համիդը որոշեց Հայկական հարցը լուծել վերջնականապես, այսինքն՝ Արևմտյան Հայաստանը մաքրելով հայերից՝ թե՛ կոտորելու, թե՛ հավատափոխելու, թե՛ գաղթի միջոցով: Սուլթանական կառավարությունն ամեն ինչի պատրաստ էր, միայն թե կարողանար ազատվել իր համար մեծ բեռ դարձած Հայկական հարցից: Ինչպես արդեն նշեցինք, մեծ

³²⁷ Ջարդերի, կոլոպուտի և ավերածությունների ենթարկվեցին Տրապիզոնը, Բաբերդը, Եդեսիան, Դերջանը, Քոլին, Սամսոնը, Երզնկան, Բիթլիսը, Շապին-Գարահիսարը, Կարինը, Խարբերդը, Չարսանջակը, Մալաթիան, Մարզվանը, Սղերդը, Մուշը, Դիարբեքիրը, Սեբաստիան, Վանը: Ողջ Արևմտյան Հայաստանը, հայաբնակ շրջանները բոցերի մեջ էին:

³²⁸ Տե՛ս <http://www.slaq.am/arm/news/148100/> և <http://www.genocide-museum.am/>:

տերությունների խուսանավող քաղաքականությունը և նրանց միջև առկա հակասությունները հնարավորություն ընձեռեցին օսմանյան վարչակարգին իրագործելու իր դիվային ծրագիրը: Առաջ անցնելով նշենք, որ ջարդարարների անպատժելիությունը 1894-1896 թթ. հետագայում հիմք դարձավ՝ 1915 թ. ցեղասպանությունն իրագործելու համար:

Հայաստանի Հանրապետության ազգային արխիվի տարբեր ֆոնդերում պահվում են 1894-1896 թթ. համիդյան կոտորածներին վերաբերող տասնյակ զեկուցագրեր ու տեղեկագրեր³²⁹: Օրինակ՝ այն փաստաթղթերը, որոնք պահվում են ՀՀ ազգային արխիվի թիվ 56 (Ս. Էջմիածնի լուսավորչական հայոց սինոդ) ֆոնդում, գրի են առնվել 1895 թվականի ընթացքում և ներկայացնում են հայ բնակչության դեմ կիրառված բռնությունների, ավերածությունների ու կոտորածների համայնապատկերը³³⁰: 1894-1896 թթ. ընթացքում Արևմտյան Հայաստանի հայոց թեմական առաջնորդների, առաջնորդական փոխանորդների, հոգևոր հովիվների, կրոնական ու քաղաքական ժողովների կողմից հայկական կոտորածների վերաբերյալ անընդհատ տազնապալից տեղեկագրեր ու զեկուցագրեր էին հղվում Ամենայն Հայոց Կաթողիկոս Մկրտիչ Խրիմյանի և Կ. Պոլսի հայոց պատրիարք Մատթեոս արքեպիսկոպոս Իզմիրլյանի հասցեին³³¹: Արդեն 1894 թ. կոտորածներն այնքան մեծ չափեր էին ընդունել, որ դեկտեմբերի 7-ին հրաժարական տված պատրիարք Խորեն Աշրգյանին փոխարինած Մատթեոս Իզմիրլյանն Աբդուլ Համիդին ուղղված նամակում պահանջում էր դադարեցնել դրանք³³²: Խոսելով իր հոտի ծանր կացության մասին՝ Մ. Իզմիրլյանը մեծ վեզիրին 1895 թ. փետրվարի 8-ին հղած նամակում գրում էր. «Ամենուրեք քուրդ և չերքեզ հրոսախմբեր կասպատակեն՝ անարգել և համարձակ, սպանություններ կը գործեն, կը հափշտակեն երկրա գործ ժողովրդյան գույքն ու կենդանիներն, կը վնասեն անոնց պարենն ու խոտի դեզերն և ձմռան եղանակին մեջ գյուղացիք չը գըտնելով

³²⁹ Տե՛ս օրինակ՝ ՀԱԱ, ֆ. 56, ց. 16, 17, 18 և այլն: Նկատենք, որ այդ տեղեկագրերի ու զեկուցագրերի մի մասը 1895-1896 թթ. հրապարակվել են «Արարատ» ամսագրում:

³³⁰ ՀԱԱ, ֆ. 56, ց. 16, թթ. 7-8 շրջ., հաստատված պատճեն, ձեռագիր: ՀԱԱ, ֆ. 56, ց. 17, գ. 70, թ. 5-8 շրջ., հաստատված պատճեն, ձեռագիր: ՀԱԱ, ֆ. 56, ց. 17, գ. 70, թ. 5-8 շրջ., հաստատված պատճեն, ձեռագիր:

³³¹ <http://www.armenianreligion.am/images/menus/752/pastatxter.pdf>, էջ 119:

³³² Տե՛ս Կոստանդյան Է., Դրվագներ Մաղաքիա Արքեպիսկոպոս Օրմանյանի կյանքից և գործունեությունից, Ե., 2015, էջ 22:

ուտեստ ո՛չ իրենց և ո՛չ ալ կենդանյաց համար՝ կը հարկադրին թողուլ անոնց իրենց կենդանիներն»³³³: Դրանցում մանրամասն ներկայացվում էր հայկական նահանգներում և կայսրության հայաշատ վայրերում տիրող իրավիճակը՝ սով, բռնություններ, թալան, հրկիզումներ, բռնի իսլամացում, կանանց ու աղջիկների առևանգումներ, հայերի ձերբակալություններ, սպանություններ, ինքնապաշտպանական գործողություններ, համատարած կոտորած: Հաճախ նշվում էին այդ չարագործությունները կատարողների անունները:

Հատկանշական է, որ իրադարձություններին գրությունների հեղինակները տալիս էին ճիշտ քաղաքական գնահատականներ՝ հստակ հասկանալով, որ տեղի ունեցող կոտորածները ոչ թե տարերային բնույթ կրող իրադարձություններ են, այլ կառավարության կողմից իրականացվող հայաջինջ քաղաքականություն: Կ.Պոլսի հայոց պատրիարքին հասցեագրված մի նամակից տեղեկանում ենք, որ Էրզրումի գավառում զանգվածաբար բռնի իսլամացնում էին հայերին, իսկ դիմադրողներին պարզապես սպանում էին. «Ոչ միայն տղամարդկանց և տղայոց անգթորէն թլփատում են հրապարակաւ, այլ և իբրև ապացոյց նոցա անկեղծ հաւատափոխութեան՝ կենդանի մնացածներին ստիպում են իրենց մատաղահաս կանանց և աղջիկներին թուրքերի տալ կնութեան», - հայտնում են այդտեսակ նամակներից մեկի հեղինակները³³⁴: Նրանք հայտնում են նաև, որ շատերին բռնի մզկիթ են տանում և ստիպում անընդհատ կրկնել մահմեդականների աղոթքները: Նամակում ասվում է նաև այն մասին, որ թշվառ հայերի ամբողջ ունեցվածքը կողոպտել, են և վերջիններս, ծայրահեղ աղքատության մեջ լինելով հանդերձ, իրավունք չունեն «օգնութիւն ստանալու բարեգործական դրամներից, ապա թե ոչ նոցա կմեղադրեն անգլիացիների հետ յարաբերութիւններ ունենալու մեջ»³³⁵: Վտանգ կար նաև, - կարդում ենք նամակում, - որ նույնիսկ մահմեդականություն ընդունածներն «այժմ էլ իբրև մահմեդականութիւն ուրացողներ... կարող են կոտորվել»³³⁶:

Նկատելի էր, որ ջարդերի ժամանակ սպանում ու մահմեդականացնում էին հիմնականում հայ առաքելական եկեղեցու հետևորդներին: Իսկ այն հայերը, որոնք

³³³ ՀԱԱ, ֆ. 57, ց. 5, գ. 3, թ. 1:

³³⁴ Տե՛ս «Արարատ» ամսագիր, 1896, թիվ 3, էջ 123:

³³⁵ Տե՛ս նույն տեղում:

³³⁶ Տե՛ս նույն տեղում:

միսիոներների քարոզչական աշխատանքների արդյունքում հեռացել էին հայոց եկեղեցուց, շատ դեպքերում փրկվում էին: Ուստի պատահական չէր, որ զգալի թվով հայեր ընտրում էին չարյաց փոքրագույնը. հեռանում էին հայոց եկեղեցուց՝ մնալով քրիստոնյաներ: Օգտագործելով կոտորածների ընթացքում և դրանից հետո ստեղծված ծանր կացությունը, ընչազուրկ մարդկանց ապահովելով սննդով և հագուստով՝ կայսրության հայաշատ վայրերում գործող օտարերկրյա միսիոներական կազմակերպությունները զբաղվում էին հոգեորսությամբ՝ օտարելով հայերին մայր եկեղեցուց, հայկական ակունքներից, արևմտահայության շրջանում տարածելով իրենց պետությունների քաղաքական և տնտեսական ազդեցությունը: Այդ մասին է վկայում օրինակ՝ Բարդուղիմեոս վարդապետ Թագաճյանի՝ Աղասուն ուղղված մի նամակը (1896 թ. օգոստոսի 11), որտեղ նա գրում էր. «Կյանքերնիս գնաց, դրամներս գնաց, աղքատությունն ու թշվառությունը կրոնքնիս ալ այժմ ձեռքներուս խլելու վրա է, ոմանք բողոքականության կը դիմեն»³³⁷:

1894-1896 թթ. ջարդերը հատկապես հայ առաքելական եկեղեցու հետևորդների դեմ ուղղված լինելու իրողությունը մեր օրերում ընդունում են նաև ոչ հայ ուսումնասիրողները: Այսպես օրինակ՝ Կ.Պոլսում լույս տեսնող «Ակօս» թերթին տված հարցազրույցում «Սայմըն Ֆրեյզլը» համալսարանում հետազոտություններ կատարող Էդիպ Կեոլբաշը, պատասխանելով թերթի թղթակից Էմրե ջոն Տադըլլօղլուի այն հարցին, թե կոտորածները տարածվե՞լ են արդյոք շրջանում բնակվող ոչ մուսուլմանների վրա, պատասխանել է. «Այո՛, սակայն բռնութեան հիմնական նպատակը առաքելական հայերն են եղել: Օրինակ՝ Արաբկիրում 200 հոգուց բաղկացած կաթոլիկ հայերի վրայ դրանք չեն տարածուել: Նրանք Բարձր Դրանը անգամ շնորհակալական նամակ են ուղարկել առ այն, որ կաթոլիկ հայերը կոտորածների չեն ենթարկուել...»³³⁸: Սակայն եղել են նաև վայրեր, ինչպիսիք են՝ Խարբերդը, Տիգրանակերտն ու Ուրֆան, որտեղ կոտորածների թիրախ են դարձել ոչ

³³⁷ ՀԱԱ, ֆ. 453, ց. 1, գ. 72, թ. 2:

³³⁸ Տե՛ս 1915 թ. ոտնաձայները, Էմրե Ճոն Տադըլլօղլուի հարցազրույցը 1894 թ. Սասունում, 1895 թ. Տրապիզոնում սկսուած ու ողջ միջին եւ Արեւելեան Անատոլիայի (Արեւմտեան Հայաստան, «Ակունք»-ի խմբ.) վիլայեթներն ընդգրկած, այնուհետեւ Հալէպում եւ Կիլիկիայում, 1896 թ.՝ Վանում, Ակնում, Էրզրումում եւ Պոլիսում իրականացուած կոտորածների վերաբերեալ «Սայմըն Ֆրեյզլը» համալսարանում հետազոտական աշխատանք կատարող Էտիպ Կեոլպաշի հետ, <http://www.aztagdaily.com/archives/190231>, հոդվածը հայերեն է թարգմանել Անահիտ Քարտաշյանը:

միայն բոլոր հայերը, այլև մյուս ոչ մուսուլման համայնքները: Տիգրանակերտում մոտ 100 ասորի է սպանվել: Անգամ ասորիների պատրիարքի փոխանորդն ասելով, թե իր համայնքի անդամներին հայ համարելով սպանում են, խնդրել է Բ. Դռանը, որ հրովարտակ հրապարակի, որտեղ ասվի, որ իրենք սուլթանի հավատարիմ ծառաներն են: Որպեսզի սխալմունքի զոհ չդառնային, ասորիները նույնիսկ «իրենց կրպակների վրայ կախում էին «մենք ասորի ենք» գրութին»³³⁹:

Մեկ այլ համանման փաստաթղթում էլ խոսվում է այն ցավալի իրավիճակի մասին, որ այդ ամենը կատարվում էր իշխանությունների աչքի առջև և նրանց թողտվությամբ. «Իսկ տեղական կառավարութիւնը այս պարագայից մէջ կը փայլի իր ցցուցած սառն անտարբերութեամբը»: Ավելին, զեկուցագրի հեղինակները հայտնում են, որ «...մանաւանդ շատ մը պարագաներ կապացուցանեն անոր (կառավարության - Ա.Ս.) հուանաւորութիւնն ու գործակցութիւնն այս աղետալի կոտորածներու և աւարառութեանց մէջ», որի արդյունքում է,-նամակագիրների կարծիքով, «... այս միջոցին էրզրումի մէջ հաւաքած է հարիւրաւոր թալանչի և մարդասպան չէրքէզներ, քիւրտեր և զազաններ»³⁴⁰: Շարունակելով ներկայացնել տարածաշրջանի հայերի աղետալի վիճակը՝ մեկ այլ փաստաթղթում պատրիարք Իզմիրլյանին հղած գրության մէջ հեղինակը նշում է. «Մինչև որ ծրագիրը գործադրութեան դրուի և բարենորոգմունք ներմուծուին որոշեալ նահանգաց մէջ հայ մը չմնար: Թիւրքիոյ կառավարութիւնն ու իսլամութիւնն իսպառ բնաջինջ պիտի ընեն հայերը և այն ատեն ո՞ւմ համար պիտի գործադրուի ծրագիրը և ի՞նչ բանի պիտի ծառայէ բարեկարգութիւնն, հայկական խնդիրն հայոց կոտորածո՞վ պիտի լուծուի արդեօք»³⁴¹:

Պատրիարք Իզմիրլյանին հասցեագրված Կարինի քաղաքական և կրոնական ժողովի գրության մէջ մանրամասն նկարագրվում է քաղաքի հայության համար ստեղծված ծանր կացությունը, որն ընդհանուր էր նաև ողջ նահանգի համար. «Դառնանք քաղաքիս, ընդհանուր վիճակիս և նորա շրջակից արդի տագնապալից կացութեան, որ ցարդ չը մեղմանալէ զատ՝ օր ըստ օրէ, ժամէ ի ժամ և վայրկեան առ վայրկեան կը վատթարանայ, կը ծանրանայ և աւելի վտանգաւոր կը դառնայ և հայ

³³⁹ Տե՛ս նույն տեղում:

³⁴⁰ Տե՛ս հրապարակումներ, փաստաթղթեր 1894-1896 թթ. հայկական կոտորածների վերաբերյալ, տե՛ս <http://www.armenianreligion.am/images/menus/752/pastatxter.pdf>:

³⁴¹ Տե՛ս նույն տեղում:

ժողովրդեան վրայ տիրող ահ ու սարսափն ու մտահոգութիւնն գամ քան զգամ³⁴² կը շատնայ, մանաւանդ այլևս և այլ կողմերէ հասած ահաբեկիչ և սրտաճմլիկ լուրերովն Կ. Պոլսի, Տրապիզոնի, Երզնկայի, Ռօտոսթոյի, Նիկոմեդիոյ և Բաղէշի հայոց աղէտալի կոտորածներէն յետոյ՝ սարսափով և ցաւօք սրտի կը լսուի, որ Տիգրանակերտի, Բաբերդի, Սղերդի և ուրիշ քաղաքաց ու նոցա գիւղերու հայերն ևս կոտորուեր ու թալանուեր են»³⁴³: Այնուհետև նամակի հեղինակները նշում են, թե հավանական է, որ տեղի մոլեռանդ և կատաղի թուրքերը՝ «հակառակ Վսեմ. Կառավարչի տուած խոստման, չեն հանդարտած և կը շարունակեն իրենց սպառնական ընթացքը հայոց դէմ, ստոր և յետ մնած այն գազանաբարոյութեան և կարծեցեալ դիւցազնութեան մէջը, զորս գործեցին այլ տեղերու իրենց եղբարք»³⁴⁴: Իրատեսորեն գնահատելով ստեղծված իրավիճակը՝ նամակի հեղինակները եզրակացնում են, որ եթե երկու շաբաթ քաղաքում ջարդեր չեն եղել, դա չի նշանակում, որ այլևս չեն լինելու: Երկու շաբաթվա դադարն էլ հետևանք է հայերի «արթնութեան և զգուշաւոր ընթացքի»: Նրանք, նախապես զգալով վերահաս վտանգը, փութացին թողնել բոլոր գործերը և ապաստանել իրենց տներում: Չնայած կառավարության և թուրք երևելիների տված կեղծ խոստումներին՝ հայերը չեն վստահում,-ասվում է նամակում,-սակայն աղքատ ժողովուրդը հանուն իրենց «նօթի և կարօտ ընտանեաց և զաւակաց ոգեպահիկին շաբթուայ մը մէջ երկու օր կը բանան խանութնին», բայց «օրուան մէկ երրորդ պահէն վերջ վերստին տուններնին դառնալ կը պարտաւորուին», քանի որ այստեղի մահմեդականները, հատկապես Սասունի դեպքից հետո հայության դէմ ավելի ատելությամբ ու վրեժխնդրությամբ էին լցված: Քանի որ նրանք հարցի վերաբացման հեղինակ և սկզբնապատճառ տեղի հայերին էին համարում: Իսկ հայերը, տեղեկանալով այլ քաղաքներում և գավառներում մահմեդականների շահատակությունների մասին, ականատես լինելով կառավարության հովանավորչությանն ու «թոյլատու և գրգռիչ ընթացքին», դրսևորում էին խիստ զգուշավոր կեցվածք³⁴⁵:

Նամակի հեղինակները հայտնվել էին այնպիսի ծայրահեղ հուսահատ վիճակում, որ, այլ ելք չտեսնելով, միակ փրկությունն սպասում էին վերևից. «...եթէ այսօր ու վաղը

³⁴² Գամ քան զգամ – քայլ առ քայլ:

³⁴³ Տե՛ս <http://www.armenianreligion.am/images/menus/752/pastatxter.pdf>, էջ 130:

³⁴⁴ Տե՛ս նույն տեղում, էջ 131:

³⁴⁵ Տե՛ս նույն տեղում, էջ 131-132:

Տէր այցելութիւն մը չընէ և փրկութեան դուռ մը չբանայ մեզի, անտարակոյս այսօր ըլլայ, վաղ ըլլայ կամ շաբաթ մը վերջ ամենէն ծանր ու քստմնելի կոտորածն աստ տեղի պիտի ունենայ և տեղւոյս անգէն ու անպաշտպան հայերն իսպառ բնաջինջ պիտի ըլլոին»³⁴⁶: Սարսափահար ժողովուրդն ամեն վայրկյան կոտորածի ու մահվան էր սպասում սրտատրոփ, այդ պատճառով էլ «իւր աշխատութիւնն ու գործը թողած ներս փակուած մնացած է», մինչդեռ պիտի ջանար, որ կարողանար իր ընտանիքի գոնե առաջին անհրաժեշտութեան իրերն ու ձմեռվա պաշարն ապահովել: Նրանք շփոթված հարցնում են նաև, որ «եթէ այսպէս տևէ այս դժնդակ կացութիւնն», ի՞նչ կլինի աղքատ ժողովրդի վիճակն առաջիկայում, քանի որ «փախչելու և ազատուելու ճար ու ճամբայ չունինք, և ինքնապաշտպանութեան միջոցներէ ալ բոլորովին զուրկ ենք»³⁴⁷:

Իրավիճակն ավելի էր ծանրանում նրանով, որ ամեն շաբաթ քրիստոնյաներին զգուշացնում էին, թե մահմեդականություն չընդունածներին մոտալուտ կոտորած է սպառնում: Ժողովրդի օրերն ու ժամերը հաշված էին. «վայրկեանէ վայրկեան մահուան կ'սպասէին», առավոտյան արթնացողը հոյս չունէր, թե ողջ և առողջ կպառկի քնելու և գիշերը առանց վտանգի «անցունելով պիտի ողջունէ արշալոյսը այս ահ ու սարսափի մէջ»: Հատկապես ուրբաթ օրերը քրիստոնյաների համար սարսափելի էին, քանի որ սոսկալի կոտորածը, «իբրեւ կրօնական ջերմեռանդութեան արտայայտութիւն», տեղի է ունենում սովորաբար ուրբաթ օրվա հրապարակային պաշտամունքից հետո: Այդ պատճառով էլ ուրբաթ օրերը հայերն զգուշանում էին դուրս գալ աշխատանքի: Այդ օրը՝ բացի թուրքերի և մի քանի համարձակ հայերի խանութներից, շուկան գրեթե ամբողջովին փակ էր լինում: Այս պայմաններն ստեղծելով՝ թուրքերը ցանկանում էին բոլոր կողմերից հույսները կտրած հայերին ստիպել հավատափոխվել: Ավելին, երբ եվրոպական մամուլում հրապարակումներ եղան հայոց ջարդերի և զանգվածաբար բռնի մահմեդականացնելու մասին, թուրք պաշտոնյաները շրջում էին վերջին ժամանակներում մահմեդականացած գյուղերում և պատվիրում, որ եթե հարցնող լինի, չասեն, «թե իրենց բռնի են ստիպել մահմեդականութիւն ընդունել»³⁴⁸:

³⁴⁶ Տե՛ս «Արարատ» ամսագիր, 1896, թիվ 10, էջ 473:

³⁴⁷ Տե՛ս նույն տեղում, էջ 474:

³⁴⁸ Տե՛ս «Արարատ» ամսագիր, 1896, թիվ 3, էջ 123:

Կարինի քաղաքական և կրոնական ժողովների՝ Կ. Պոլսի Հայոց պատրիարք Մատթեոս Իզմիրլյանին՝ Էրզրումի նահանգի հայկական կոտորածների մասին 1895 թ. նոյեմբերի 1-ի գրությունը տեղեկացնում էր, որ վախի ու սարսափի պայմաններում մարդիկ վախենում էին տներից դուրս գալ, շփվել միմյանց հետ: Ամենուրեք անվստահության մթնոլորտն էր իշխում, կյանքը կարծես կանգ էր առել. «Մեր յարաբերությունք և երթևեկությունք ընդհանրապես դադրած են ուրիշ վիճակներու և նոյնիսկ մեր դաշտի գիւղօրէից միջև,-կարդում ենք նամակում,-ըստ առաջնոյն հաղորդակցութիւնք չեն կատարուիր շրջակայ քաղաքներու հետ, զի ճանապարհք անապահով և վտանգալից են, ի մի բան պաշարման վիճակի մէջ ենք»³⁴⁹: Մայրաքաղաք Կ.Պոլսից, Կարինից և այլ բնակավայրերից հայրենիք վերադառնալ ցանկացող հայ պանդուխտներն ու «վաճառականք կողոպտուած, սպաննուած ու անյայտացած են»³⁵⁰: Նամակագիրը հաղորդում է, որ «հազուադէպ է այժմ, որ տասէն քսանէն մէկ երկունք լոկ կեանքերնին ազատած ըլլան, սակայն այդպիսիք ալ այժմ մեռեալի նման են երկիւղահար եղած ըլլալով»³⁵¹:

Կարինի նահանգում տիրող ծանր ու անկայուն կացության մասին է վկայում պատրիարք Իզմիրլյանին ուղղված մի խումբ մշեցիների նամակը: Նամակագիրները հայտնում էին, որ «Կարնոյ մօտերը Արապ Չայիր ըստած տեղը աւազակներէ առևանգուած մշեցի 8 ազգայինք տակաւին չգտնուեցան, և հակառակ մեր և նոցա ազգականաց ջանքերուն հետքերնին չգտնուեցաւ, տարակոյս չկայ այլևս, որ սպաննուած ու անհետացուած են»³⁵²: Այնուհետև նամակագիրները տեղեկացնում էին, որ «Կարնոյ Գեր. Ս. Առաջնորդն ևս, այս անգամ գրութեամբ մը պատասխանելով յայտնած է, որ պարագայից բերմամբ անկարելի է իրեն հետազօտութիւններ կատարել և տեղեկութիւններ տալ այդ տարաբաղտներու մասին»³⁵³:

Փաստաթղթերից մեկում էլ ասվում էր, որ ընդհանրապես գավառներից լուրեր «առած չեն», քանի որ պաշարման հետևանքով բոլոր ճանապարհները փակ են, երթևեկությունը՝ դադարեցված: «Երկբայելու տեղի չ'կայ, որ յիշեալ գաւառայ (Էրզրումի

³⁴⁹ Տե՛ս ՀԱԱ, ֆ. 56, ց. 17, գ. 68, թ. 5, հաստատված պատճեն, ձեռագիր:

³⁵⁰ Տե՛ս նույն տեղում:

³⁵¹ Տե՛ս ՀԱԱ, ֆ. 56, ց. 17, գ. 70, թ. 7, հաստատված պատճեն, ձեռագիր:

³⁵² Տե՛ս նույն տեղում:

³⁵³ Տե՛ս ՀԱԱ, ֆ. 56, ց. 17, գ. 70, թ. 8, հաստատված պատճեն, ձեռագիր:

գավառը նկատի ունի - Ս.Ա.) հայ ժողովուրդը ևս անտանելի նեղության մէջ չ'իյնէ»³⁵⁴: Այնուհետև այդ նույն փաստաթղթից տեղեկանում ենք, որ կառավարությունը մի քանի զինվորական շրջուն պահապան խմբեր է ուղարկել նահանգի գյուղերը «քրդաց արշաւանքը զսպելու և յափշտակութենէն անոնցմէ ետ առնելով տէրերուն վերադարձնելու պաշտօնով»³⁵⁵: Սակայն հնարավոր չի եղել դա անել: Նույնիսկ անհնարին է եղել զսպել քրդերին և «յառաջին առնուլ գեշութեանց և նորանոր դէպքերու»³⁵⁶: Պատճառն այն էր, որ հայ ժողովրդի ցեղասպանության սկիզբ հանդիսացող այդ ջարդերի նախաձեռնող սուլթան Աբդուլ Համիդ 2-րդը, հովանավորելով և ուղղորդելով քրդերին հարձակվել հայերի վրա, նպատակ էր հետապնդում 1) խորացնել թշնամանքը երկու ժողովուրդների միջև, 2) հայերի ունեցվածքի կողոպուտով «կաշառել» քրդերին և նրանց զերծ պահել եվրոպական տերությունների ազդեցությունից և հնարավոր հակակառավարական ելույթներից, 3) կոտորածների մէջ ամբաստանել «վայրի» քրդերին և այսպիսով քողարկել կառավարության՝ զանգվածային սպանություններին մասնակցության փաստը:

Մեկ այլ փաստաթուղթ էլ վկայում է, որ նահանգի հայերի մեծ մասը «քիւրտերէ թալանուեր և բնակիչք ցրուեր են»³⁵⁷, որ աղետն ընդհանուր է և սարսափելի, «չորեք կողմէ մահու և ընդհանուր կոտորածի սպառնալիքներ կը հասնին»³⁵⁸, բացի տուն ու տեղ կորցնելուց «անթիւ հայ անմեղ արիւններ թափուեցան տարապարտուց, կոտորուելով»³⁵⁹: Հրաշքով միայն կենդանի մնացածներն էլ օրհասական տագնապի և «մահուան ճգնաժամու մէջ են, եթէ ընդ փոյթ դարման մը չտարուի այս անտանելի և անել կացութեան»³⁶⁰:

Կասկածից դուրս էր, որ Էրզրումի նահանգի (ինչպես նաև մյուս նահանգների) հայոց պարբերաբար իրականացվող ջարդերը կանխամտածված էին: Քանի որ տեղի թուրքերը, «որք վատութիւն կը համարէին ուրիշ երկիրներու թուրք եղբայրներէն վատ մնալ», ամեն անգամ աննշան առիթի էին սպասում՝ իրականացնելու իրենց սև գործը:

³⁵⁴ Տե՛ս ՀԱԱ, ֆ. 56, ց. 17, գ. 71, թ. 4:

³⁵⁵ Տե՛ս նույն տեղում:

³⁵⁶ Տե՛ս նույն տեղում:

³⁵⁷ Տե՛ս ՀԱԱ, ֆ. 453, ց. 1, գ. 72, թ. 2:

³⁵⁸ Տե՛ս նույն տեղում:

³⁵⁹ Տե՛ս նույն տեղում:

³⁶⁰ Տե՛ս նույն տեղում:

Այդպիսի առիթ եղավ սովորական մի իրադարձություն: Ուրբաթ մի օր՝ ժամ 4-5-ի կողմերը, մի քուրդ իր լիցքավորված և «ալրուած» ատրճանակը բերում է մի հայ զինագործի (զըլլճճի) մոտ նորոգելու: Պատրաստելու ընթացքում «զէնքը յանկարծակի կրակ կառնու, կարձակուի», որը մեծ իրարանցում է առաջացնում: Թուրքերն ու քրդերը զէնքը ձեռքներին և պատրաստ «յարձակեցան նոյն ժամուն հրապարակի մէջ գտնուող հայերու վրայ և սկսած հարուածներ տեղալ»³⁶¹: Ահաբեկված ու սարսափահար հայերը փորձեցին փախչել և ազատվել: Սակայն «անագան էր, ճամբայներ բռնուած ու գոցուած էին արդէն, թուրք հասարակութիւնն սպառազինեալ շուկայի մէջ լեցուած էր, փրկութիւն չկար հայոց»³⁶²: Աղետալի լուրն արագ տարածվում է քաղաքում և ընդհանուր ահ ու սարսափի մատնում խեղճ ու անզեն ժողովրդին: Ականատեսի վկայությամբ կանանց ու երեխաների բարձրացրած սրտակեղեք լաց ու կոծը, վայնասունն ու աղաղակները զարհուրելի և տխուր տեսարան էին ներկայացնում: Բարեբախտաբար, կարդում ենք փաստաթղթում, հայերն այնքան էլ շատ չէին շուկայի մէջ: Հետո էլ կայագործի թուրք հրամանատարը հեծյալ զորաշուկատով ու ոստիկան զինվորներով հրապարակ է ելնում և «քրդաց ու թուրքերու բազմութիւնն ցրուելու աշխատիլ և քաղաքիս մէջ շրջելով սիրտ ու ապահովութիւն տալ սարսափահար հայ ժողովրդեան»³⁶³:

Հայերը որոշ տեղերում փորձեցին ինքնապաշտպանվել, սակայն ուժերը խիստ անհավասար էին: Իշխանությունների օժանդակությունն ամբողջովին վայելող և լավ զինված Համիդիե զորաշուկատների, հայատյացության թույնով վարակված, հայերի անհաշիվ ոսկիներով հարստանալու մաղձով ոգևորված և մահմեդական մոլեռանդ մոլլաների կոչերին ենթակա խուժանի դեմ անզեն ու անպաշտպան հայերը քիչ բան կարող էին անել: Սակայն այդ պայմաններում նույնիսկ շատերն իրենց մէջ կորով էին գտնում և դիմադրում էին: Այդպիսի դիմադրության փայլուն օրինակ եղավ Վանի հերոսական ինքնապաշտպանությունն Արմենական կուսակցության առաջնորդ Մկրտիչ Ավետիսյանի գլխավորությամբ³⁶⁴: Թեև չզինված, սակայն իրենց խելացի

³⁶¹ Տե՛ս ՀԱԱ, ֆ. 453, ց. 1, գ. 59, թ. 8:

³⁶² Տե՛ս նույն տեղում:

³⁶³ Տե՛ս ՀԱԱ, ֆ. 453, ց. 1, գ. 59, թ. 9:

³⁶⁴ Տե՛ս Սարգսյան Ս., Վանի 1896 թ. հերոսական ինքնապաշտպանությունը, Հայոց պատմություն, հ. III, գիրք առաջին, Ե., 2010, էջ 557-562:

պահվածքով, կազմակերպվածությամբ և առճակատումից խուսանավելով՝ ավելի մեծ ողբերգությունից կարողացան խուսափել կարնեցիները: Հակառակ դեպքում հրապարակի և շուկայի «մէջ գտնուող ամբողջ հայերն ջարդուելէ և հրոյ ճարակ լինելէ զկնի՝ հոսանքը պիտի յառաջանար հայոց թաղերու մէջ ևս»³⁶⁵: Իսկ այդ ժամանակ աղետն անխուսափելի կլինէր, քանի որ փաստորեն «քաղաքիս հայերն անձնապաշտպանութեան միջոցներէն զուրկ կը գտնուին բոլորովին»³⁶⁶:

Հաջորդ օրերի ընթացքում, լսելով նաև «Բաղէշի, Տիգրանակերտի և այլ հայաբնակ քաղաքներու ու վիճակներու հայոց ջարդն», Կարինի սարսափահար ժողովուրդը «պաշարուած՝ առ ի զգուշութիւն և ՚ի պաշտպանութիւն կեանքի», խանութները բացում էր կարճ ժամանակով, օրումեջ և մտահոգ ու ահաբեկված սպասում էր այդ տագնապալից կացության «աղէտալի ելից ու վախճանին»³⁶⁷, իսկ որոշ տեղերում նույնիսկ ժողովուրդը, այլ ելք չգտնելով, «փախած քարանձաւներու մէջ ապաստանած է»³⁶⁸: Որոշ հայեր էլ, տեղեկանում ենք մի վավերագրից, «վախենալով քաղաքում վերջին շաբաթվա իրադարձությունների կրկնությունից, մի քանի ընտանիքներով տեղափոխվում են առանձին տներ և այդպիսով ապրում են 50-60 և ավելի անձից կազմված համայնքներով»³⁶⁹:

Կարին քաղաքում և շրջակա գյուղերում կոտորածների կազմակերպիչն ու գաղտնի ղեկավարը հայատյաց զինվորական գավառապետ Շաքիր փաշան էր: Իրականացնելով սուլթանի հայաջինջ քաղաքականությունը՝ հայերի ունեցվածքին տիրանալու և կրոնական անհանդուրժողականությունից կուրացած, նա չէր խնայում նույնիսկ կանանց և երեխաներին: Նրա այդ համբավն այնքան էր տարածվել, որ շրջակա բնակավայրերում սարսափում էին նրա հայտնվելուց. «Կըսուի, թէ Շաքիր Բաշան մօտիկցած է Մշոյ և այսօր վաղը տեղս պիտի ժամանէ: Անշուշտ Կարնոյ գործողութիւնքն աստ ևս պիտի կրկնէ, ի՞նչ ընելու ենք այդ պարագային»³⁷⁰:

1894-1896 թթ. իրադարձությունների մասին փաստական զգալի նյութ է պարունակում նաև ժամանակի պարբերական մամուլը, որը որոշ դեպքերում միակ

³⁶⁵ Տե՛ս ՀԱԱ, ֆ. 453, ց. 1, գ. 59, թ. 8:

³⁶⁶ Տե՛ս ՀԱԱ, ֆ. 453, ց. 1, գ. 59, թ. 9:

³⁶⁷ Նույն տեղում:

³⁶⁸ Տե՛ս ՀԱԱ, ֆ. 56, ց. 17, գ. 70, թ. 5-8:

³⁶⁹ Տե՛ս АБРП, ф. 1. Посольство в Константинополе, г. 1865, дело 3179, опись 517, л. 107.

³⁷⁰ Տե՛ս ՀԱԱ, ֆ. 56, ց. 17, գ. 70, թ. 5-8 շրջ., հաստատված պատճեն, ձեռագիր:

աղբյուրն է այս կամ այն իրադարձության վերաբերյալ³⁷¹: 1894-96 թթ. տեղի ունեցած կոտորածներն Արևմտյան Հայաստանում հզոր արձագանք ստացան նաև հայ գրողների ստեղծագործություններում: Կոտորածների կազմակերպիչների, «քաղաքակիրթ» եվրոպական պետությունների՝ մեր ժողովրդի ողբերգության նկատմամբ դրսևորած անտարբերությունը դատապարտելու հետ միաժամանակ հայ գրողները հնչեցնում էին թշնամուց վրեժ լուծելու, չհուսահատվելու, գոտեպնդվելու և համախմբվելու գաղափարները: Թիֆլիսում Ավետիք Արասխանյանի խմբագրությամբ լույս տեսնող «Մուրճ» ամսագիրն օրինակ, ելնելով այն փաստից, որ «նրանց (արևմտահայության) ճակատագիրը նաև իրենցն է», խոստանում էր ընթերցողներին «ամեն ամիս հաշիվ տալ Տաճկա-Հայաստանի ընթացիկ կյանքի դեպքերից»³⁷²: Պարբերականում տպագրվել են հոդվածներ, որոնք լուսաբանել են 1890-ական թթ. հայերի նկատմամբ իրականացված զանգվածային կոտորածները, հայ գաղթականության անասելի ծանր դրությունը, մեծ տերությունների դիրքորոշումը և այլն: Հասկանալի է, որ տպագրվել են ոչ բոլոր հաղորդագրությունները, քանի որ ռուսական իշխանությունները պարբերականները ենթարկել են խստագույն գրաքննության:

«Հայերի կոտորածները Տաճկաստանում» հոդվածում, օրինակ, «Մուրճի» թղթակից Ստ. Խաչ-Պապյանը հաղորդում է, որ Կ. Պոլսի հայկական մեծ ցույցից անմիջապես հետո Օսմանյան կայսրության ամբողջ տարածքում սկսվում են անզեն հայերի զանգվածային կոտորածները. «Պոլսէն մինչև Տրապիզոն, Կարինէն մինչև Մարաշ և Սեբաստիա, կոտորածը, մեծ հրդեհու պէս, ծաւալեցաւ ճարակեցաւ բոլոր Տաճկահայաստանի և Կիլիկիայի նահանգները: Թիւրքի սուրը խտիր չի դներ սեռի և տարիքի մէջ. երեխան իր մօրը գիրկը կը խողխողի. մայրը իր զաւակի առջև կը մորթի, զաւակը իր հօրը ներկայութեանը կը յօշոտի»³⁷³: Հիմնականում կենդանի են մնում այն հայերը, ովքեր համաձայնում են կրոնափոխ լինել³⁷⁴:

³⁷¹ 1894-1896 թթ. հայկական ջարդերի մասին մեծաքանակ հրապարակումներ կան Գր. Արծրունու «Մշակում», բայց քանի որ այդ հրապարակումների մասին շատ է գրվել, ձեռնպահ ենք մնում դրանց անդրադառնալուց:

³⁷² Տե՛ս «Մուրճ», Թիֆլիս, 1889, N 12, էջ 1888-1889:

³⁷³ Տե՛ս նույն տեղում, թիվ 11, էջ 1516:

³⁷⁴ Տե՛ս «Մուրճ», 1895, թիվ 11, էջ 1500:

1894-1896 թթ. ցավալի իրադարձությունները շրջադարձային եղան հայոց պատմության, առավել՝ կարինահայության համար: Միայն Կարին քաղաքում 1895 թ. հոկտեմբերի 18-ին սկսված ջարդերին զոհ գնացին 400 հայեր, կողոպտվեց 1500 խանութ ու պահեստ: Կարնո դաշտի հայկական գյուղերից ավերվում է 40-ը, իսկ 3-ի ամբողջ բնակչությունը բռնի մահմեդականացվում է: Կողոպտվում են Հասանկալի վանքը և 20 եկեղեցի, սպանվում են 1500 հայեր³⁷⁵: Հոկտեմբերի 30-ին ջարդերը վերսկսվում են: Կարին քաղաքում սպանվում է ավելի քան 350 հայ, թալանվում և ավերվում են հայերին պատկանող շուրջ հազար խանութ և մեծ թվով արհեստանոցներ: Ի դեպ, կոտորածների ընթացքում քաղաքի մեծաքանակ հույն բնակչությունը չէր տուժել, ինչն ապացույցն էր այն բանի, որ իշխանությունների գործողություններն ուղղված էին բացառապես հայերի դեմ³⁷⁶:

Հաճախ իշխանություններն իրենց կողմից իրականացվող ջարդերն ու վանդալիզմը պատճառաբանում էին հայերի անհնազանդությամբ և հեղափոխական պահվածքով, որն այնքան էլ իրականությանը չէր համապատասխանում: Այսպես, 1895 թ. հոկտեմբերի 28-ին, Կարինում Ռուսաստանի հյուպատոսը դեսպան Ա. Նելիդովին ուղղված զեկուցագրի վերջում հատուկ շեշտում էր. «Իմ պարտքն եմ համարում լրացնելու մեմուրանդումը կատեգորիկ հայտարարությամբ այն մասին, որ հոկտեմբերի 30-ին էրզրումում հայերի կողմից ոչ մի հեղափոխություն չի եղել»³⁷⁷:

Է. Դիլոնի բնորոշմամբ հայերի «ոչնչացման ծրագրի իրականացման առաջին քայլ»³⁷⁸ տնտեսական քայքայմանը հաջորդած կոտորածները մեծ ծավալներ ընդունեցին ամբողջ Արևմտյան Հայաստանում և կայսրության բոլոր հայաշատ վայրերում: Առանձնապես մեծ կորուստներ ունեցած երկրամասերից էր նաև Կարինը՝ իր արվարձան մի քանի գյուղերով (1200 զոհից ավելի)³⁷⁹, որը քաղաքի առանց այդ էլ փոքր թիվ կազմող հայության համար կորստաբեր եղավ: Նկատենք, որ այս թվական տվյալները վերջնական ճշգրտման կարիք ունեն, քանի որ եթե քաղաքներում հնարավոր էր կատարել քիչ թե շատ կանոնավոր հաշվառում, ապա նույնը գյուղական

³⁷⁵ Տե՛ս Հայոց պատմություն, հ. III, գիրք առաջին, Ե., 2010, էջ 531:

³⁷⁶ Տե՛ս նույն տեղում:

³⁷⁷ Տե՛ս АБРП, ф. Посольство в Константинополе, дело 3179, опись 517, л. 102.

³⁷⁸ Տե՛ս Диллон Э., Положение дел в Турецкой Армении, Братская помощь..., отд. II, էջ 15:

³⁷⁹ Տե՛ս Д-р Лепсиус, Правда об Армении, Братская помощь..., отд. II, էջ 136-137:

վայրերի համար հնարավոր չէր: Հատկապես, եթե նկատի առնենք այն կարևոր հանգամանքը, որ Բեռլինի վեհաժողովին հաջորդած ժամանակաշրջանում Օսմանյան կայսրությունում պետական մակարդակով արվում էր ամեն ինչ՝ իրական վիճակագրությունը կեղծելու և միջազգային հանրությանը դրանցով թյուրիմացության մեջ գցելու համար: Այսպես, օրինակ, կայսրության արտաքին գործերի նախարար Արեգին փաշան, պատասխանելով տերությունների հարցումներին, հայտնում էր, թե Վանի, Դիարբեքիրի, Էրզրումի, Սվազի վիլայեթներում հայերը կազմում են բնակչության ընդամենը 17%-ը, իսկ մահմեդականները՝ 79%-ը³⁸⁰, ինչը բացահայտ կեղծիք էր: Իսկ այդտեսակ կեղծումներն ավելի էին խճճում վիճակագրությունը: Ինչ վերաբերում է Կարինի ամբողջ նահանգին, ապա թուրքական պաշտոնական, Կ.Պոլսի պատրիարքարանի, Ա-Դոյի հաշվումների և այլ աղբյուրների տվյալները վկայակոչել և դրանց հիման վրա մանրակրկիտ վերլուծություններ է կատարել պատմաբան Հ. Զատիկյանը: «Մեր հաշվարկներով,-գրում է Հ. Զատիկյանը,- Կարինի նահանգում զոհերի քանակը կազմում է 44769 մարդ³⁸¹ (իսկ մեկ այլ հաշվարկով 51533 հայեր)»³⁸²: Այդ տվյալների վերջնական ճշտելը մեր խնդիրը չէ: Նշենք միայն, որ բաղդատելով Հ. Զատիկյանի, Ղ. Չարըզի, Օ. Ճգնավորյանի հաղորդած տեղեկությունները, զոհերի հավանական թվաքանակը մոտ 50 հազար էր:

Նշենք նաև, որ նահանգում կոտորածներին որպես հետևանք սովից, տարափոխիկ հիվանդություններից, վախից և այլ պատճառներով եղած կորուստները ևս փոքր թիվ չէին կազմում³⁸³:

Բացասական մյուս հետևանքը հայերի արտագաղթի հսկայական ծավալներն էին, որն ամայացնում էր նահանգը՝ նպաստելով ազգային նկարագրի աղճատման հետագա խորացմանը: 1895-1896 թթ. կոտորածների հետևանքով մեծ թվով հայեր հեռացան Էրզրումից³⁸⁴: Նույնիսկ 1913 թ. այս նահանգից պանդխտության մեջ գտնվող հայերի թվաքանակը կազմում էր շուրջ 2 հազար մարդ³⁸⁵:

³⁸⁰ Տե՛ս ՀԱԱ, ֆ. 476, ց. 1, գ. 4, թ. 30:

³⁸¹ Տե՛ս Զատիկյան Հ., Կարինի նահանգի հայ բնակչության, արևմտահայության, 1894-1896 թթ. կոտորածների, Մեծ եղեռնի զոհերի թվաքանակի հարցի շուրջ, «ՊԲՀ», թիվ 1(125), էջ 143-151):

³⁸² Տե՛ս նույն տեղում:

³⁸³ Տե՛ս Ա-Դո. Վանի, Բիթլիսի և Էրզրումի վիլայեթները, Երևան, 1912:

³⁸⁴ Տե՛ս Հայոց պատմություն, հ. III, գիրք առաջին, Ե., 2010, էջ 542:

³⁸⁵ Տե՛ս Հ. Յակոբ ծ. վ. Քօսեան, Բարձր Հայք, հ. Ա (Կարին քաղաքը), Վիեննա, 1925, էջ 89-90:

Կարինի նահանգի համար անչափ վտանգավոր եղավ նաև բռնի կրոնափոխությունը, որը նույնպես աղետալի չափեր ընդունեց 1895-1896 թթ. ընթացքում: Երևույթ, որը եղել է օսմանյան բռնապետության ճիրաններում գալարվող քրիստոնյա ժողովուրդների մշտական ուղեկիցը կայսրության գոյության ամբողջ ընթացքում և հատկապես լայն տարածում է գտել Արևմտյան Հայաստանում: Այսպես, մահվան սպառնալիքով բռնի կրոնափոխված հայերի թվաքանակը նշված ժամանակաշրջանում տասնյակ հազարների է հասել: Եթե Վանի վիլայեթում բռնի կրոնափոխ է եղել 30 հազար մարդ³⁸⁶, Խարբերդի՝ 12500³⁸⁷, Դիարբեքի՝ 7500³⁸⁸, Բիթլիսի՝ 6500³⁸⁹, ապա Էրզրումում՝ 5200 մարդ³⁹⁰: Բայց եթե նկատի ունենանք, որ Էրզրումի նահանգում հայերի թվաքանակը 1880-ական թթ. առանց այն էլ զգալի պակասել էր³⁹¹, իսկ Կարին քաղաքում անհամեմատ քիչ թվով հայեր էին մնացել³⁹², ապա ստացված պատկերն ավելի քան մտահոգիչ էր:

Ֆիզիկապես ոչնչացնելուց բացի, թուրքերն ինչպես ողջ Արևմտյան Հայաստանում, այնպես էլ Կարինի նահանգում, հայերին իրենց բնօրրանից դուրս մղելու նպատակով իրականացնում էին նաև տնտեսական ցեղասպանություն: Իշխանությունները մահմեդականներին բացահայտ իրավունք էին վերապահել տիրանալու ամայացած բնակավայրերին՝ դրանց պատկանող հողերով հանդերձ՝ դրանով բացառելով փախստական հայերի վերադարձը հայրենի բնօրրաններ³⁹³: Դեռևս 1880-ական թթ. թուրքերը բոլոր միջոցներն օգտագործում էին հայերին հողազրկելու և տարածաշրջանից դուրս մղելու համար: Այդ հալածանքները զանգվածային բնույթ կրեցին հատկապես 1895-1896 թթ. կոտորածների ընթացքում և դրանցից հետո: Ընդհանուր հաշվով այդ ընթացքում Գ. Տեր-Կարապետյանի (Տատրակ) հաշվարկներով

³⁸⁶ Տե՛ս Արարատ, 1896, թիվ 12, էջ 585:

³⁸⁷ Տե՛ս Д-р Лепсиус, Правда об Армении, Братская помощь..., отд. II, էջ 142:

³⁸⁸ Նույն տեղում:

³⁸⁹ Նույն տեղում:

³⁹⁰ Նույն տեղում:

³⁹¹ 1880-ական թթ. սկզբներին 2 կազաների և 142 նահիենների բաժանված Էրզրումի նահանգի բնակչության թվաքանակը, ըստ Հայոց ցեղասպանության հանրագիտարանի, 90 հազար էր, իսկ ըստ թուրքական աղբյուրների՝ ընդամենը 37480: Տե՛ս <http://www.armeniansgenocide.am/am/Encyclopedia-Of-armenian-genocide-erzrumi-hay-bnakchutyan-tvakanake>:

³⁹² Տե՛ս Լալայան Ե., Կարնո գավառի տեղեկագիրը, ԲՀԱ, 1974, թիվ 3,

³⁹³ Տե՛ս Համբարյան Ա., Արևմտահայերի թվաքանակի հարցի շուրջ, «ԲԵՀ», 1969, թիվ 2, նաև՝ Տեր-Կարապետեան Գ., Տարօնի աշխարհ, պատկերներ ու պատմուածքներ, Փարիզ, 1931, էջ 345:

հայերից խլված հողերի ընդհանուր տարածքը կազմում էր մոտ մեկ միլիոն 30 հազար օրավար³⁹⁴:

Հայտնի իրողություն է, որ հայ ժողովուրդը, իր կազմավորման արշալույսից սկսած, դարերի ու հազարամյակների ընթացքում ստեղծել ու հետագա սերունդներին է թողել բազում հոգևոր ու նյութական արժեքներ, որով պատմության մեջ մնացել է որպես ստեղծագործ, արարող, շինարար ժողովուրդ: Աբդուլ Համիդի ոճրագործ քաղաքականության և, հատկապես կազմակերպած կոտորածներն ուղեկցվում էին նաև նյութական արժեքների զանգվածաբար ոչնչացմամբ ոչ պակաս ահավոր բարբարոսությամբ, որն, ըստ էության, 1894-1896 թթ. իրականացրած ցեղասպանության առաջին փուլի երկրորդ կողմն էր: Ակնհայտ է, որ բնաջնջելով հայ ժողովրդի մի խոշոր զանգվածին, նրա ստեղծած մշակութային արժեքները՝ թուրքերը նպատակ ունեին պատմության ասպարեզից ջնջելու այն ամենը, ինչը կապված էր հայ ժողովրդի հետ և «...ամեն կերպ ջանալ ոչնչացնել բուն «Հայաստան» անվանումը Թուրքիայում»³⁹⁵: 1894-1896 թթ. ջարդերի ժամանակ ոչնչացվել կամ մզկիթի են վերածվել 568 հայկական եկեղեցիներ³⁹⁶: Ըստ Մ. Օրմանյանի տեղեկության՝ ջարդերի ժամանակ «վանք չէ եղած որ անձեռնմխելի ըլլայ, եկեղեցի չէ մնացած, որ կա՛մ քանդուած, կա՛մ պղծուած, կա՛մ մզկիթի փոխարկուած չըլլայ»³⁹⁷: Միայն 1894-96 թթ. էրզրումի նահանգում և գյուղերում կողոպտվել և մասամբ կամ ամբողջովին կործանվել են 36 եկեղեցիներ³⁹⁸:

Այսպիսով, ակնհայտ է, որ 1894-1896 թթ. ընթացքում.

- ֆիզիկապես ոչնչացնելով՝ թուրքերը հետապնդում էին հայերի թվաքանակի կտրուկ կրճատում իրենց իսկ բնօրրանում,
- հայերին տնտեսական հնարավորություններից զրկելով՝ նրանց զրկում էին գոյատևելու միջոցներից,
- հայապատկան հողերը բռնի խլելով և սեփականացնելով՝ հայրենագրկում էին նրանց,

³⁹⁴ Տե՛ս Հայոց պատմություն, հ. III, գիրք առաջին, Ե., 2010, էջ 545:

³⁹⁵ Հայերի ցեղասպանությունը Օսմանյան կայսրությունում: Փաստաթղթերի և նյութերի ժողովածու, Եր., 1991, էջ 562:

³⁹⁶ Տե՛ս Մշակութային ցեղասպանություն. Հայկական մշակութային եղեռնը օսմանյան Թուրքիայի տարածքում, «ՊԲՀ», թիվ 1(124), 1995, էջ 125:

³⁹⁷ Տե՛ս Օրմանյան Մ., Ազգապատում, հ. Գ, Երուսաղեմ, 1927, էջ 5029-5030:

³⁹⁸ Տե՛ս «Դրօշակ», օրգան Հ. Յ. Դաշնակցութեան, Վիեննա, 1896, թիվ 2, յունուար, էջ 15:

- մշակութային վանդալիզմ իրականացնելով և եկեղեցիները մզկիթների վերածելով՝ ստիպում էին հայերին դադարեցնել հոգևոր կապը հայրենի աշխարհի հետ:

Մեծաթիվ արխիվային վավերագրեր (դիվանագիտական փաստաթղթերի ժողովածուներ, մամուլ, վկայություններ) անհերքելիորեն վկայում են, որ 1880-ական թվականներից արևմտահայության նկատմամբ թուրքական վարչակարգի կողմից կիրառվել են միաժամանակ բոլոր ենթակետերով սահմանված գործողությունները: Նախքան ֆիզիկական բնաջնջումը երկրում ստեղծվեցին կյանքի, կենցաղի դժոխային պայմաններ, պետական քաղաքականությամբ քայքայվեց հայ ընտանիքը, պատերազմ հայտարարվեց այդ ժողովրդի կրոնին և մշակույթին: Այնուհետև ոչնչացվեց շուրջ 300 հազար հայ, նույնքան օսմանահպատակ հայ քաղաքացիներ տարագրվեցին երկրից, հազարավոր երեխաներ որպես ստրուկ վաճառվեցին՝ համալրելով հարեմներն ու անառականոցները, մի հսկայական զանգված հարկադրաբար դավանափոխվեց՝ փրկելու համար կյանքը:

Այսպիսով, անժխտելի է, որ 1890-ական թթ. օսմանյան պետական վարչամեքենան սկսեց իրականացնել հայ ժողովրդի զանգվածային ոչնչացումը: Դրանից հայ ժողովուրդը և, մասնավորապես կարինահայությունը մեծ և անդառնալի կորուստներ ունեցան: Եվ միայն ֆիդայական հերոսական պայքարի և կյանքը հայրենիքի զոհասեղանին դրած հայդուկների շնորհիվ Օսմանյան կառավարող շրջանների նկայսրությունը՝ կառավարող շրջաններն առժամանակ դադարեցրին հայության ֆիզիկական ոչնչացումն (ցեղասպանություն) իրականացնելու քաղաքականությունը:

2.3 Ֆիդայական շարժումը Կարինի նահանգում

XIX դարի 80-ական թթ. վերջերին ինչպես ողջ հայության մեջ, այնպես էլ Կարինի նահանգում ծայր առած ֆիդայական շարժումը³⁹⁹, որը պատմական տվյալ պահին թուրք բարբարոսների կողմից ոչնչացման եզրին հասցված հայության մի ստվար մասի՝ արևմտահայության գոյատևման հրամայականն էր, աստիճանաբար ուժեղանում էր ու ավելի էր կազմակերպվում: Պատերազմի ընթացքում կրած մեծ զոհողությունների դիմաց ոչինչ չստացած և ուժգնացող թուրքական բռնատիրության դեմ այլ ելք չգտնելով՝ հայ ժողովրդի մի մասը ստիպված լքում էր հայրենիքը, մի մասը՝ համակերպվում ստեղծված իրավիճակի հետ, իսկ մնացածն էլ զենքը ձեռքին պայքարի էր ելնում օսմանյան բռնապետության դեմ: Ռ. Տեր-Մինասյանի բնորոշմամբ դրանք Մ. Խրիմյանի հոգևոր սաներն ու գաղափարական հետևորդներն էին. «Հայրիկն էր այս աշխարհը յեղաշրջողն ու ազատութեան կրակը վառողը»⁴⁰⁰:

Դարավերջի ազգային, քաղաքական և հոգևոր այդ զարթոնքը փոխեց ժողովրդի ճակատագիրը: Հայության գոյապայքարի պատմության մեջ այդ ժամանակաշրջանից սկիզբ առած ֆիդայական պայքարի համար նախադրյալներ հանդիսացան ներքին սոցիալ-տնտեսական ու քաղաքական հանգամանքները, որոնց գումարվեցին նաև դրսից եկած որոշ ազդակներ: Մասնավորապես դրսի ազդեցության դրսևորումներ էին Սահմանադրական շարժումը, Արևմուտքի ազատաբաղձ գաղափարների տարածումը, բալկանյան ժողովուրդների ազատագրական պայքարի օրինակը և այլն: Սկսված ֆիդայական շարժման ու պայքարի դրսևորումները, մեծ ու փոքր ապստամբական ելույթները հետապնդել են հիմնականում երկու խնդիր՝ ա) դիմել վրիժառության՝ հնարավորինս հակազդել թուրք-քրդական բռնություններին և բ) նման ցուցադրական ելույթներով մեծ տերությունների ուշադրությունը հրավիրել Հայկական հարցի վրա:

³⁹⁹ Քաղաքագիտական առումով «շարժումը» բնութագրվում է որպես մտքի ու գաղափարի հասարակական դրսևորում, իսկ «պայքարը»՝ այդ գաղափարի ավելի հաճախ բռնի միջոցներով նյութականացման փորձ: XIX դարի 80-ական թթ. սկսված հայ ազգային-ազատագրական շարժումը դրսևորվեց ժողովրդի մտավոր, կրթալուսավորական, գաղափարախոսական, սոցիալական և այլ ասպարեզներում, իսկ պայքարը՝ զենքի դիմելու ձևով, որը, աստիճանաբար ծավալվելով, իր մեջ առավ Արևմտյան Հայաստանի բոլոր գավառներն ու Օսմանյան կայսրության այլ հայաշատ տարածքներ: Դրան մասնակցում կամ սատարում էր ժողովրդի զգալի մասը, ինչի արդյունքում ավելի հաճախ շարժումն ու պայքարը գտնվում էին սերտ միասնության մեջ: Այս է պատճառը, որ «պայքար» և «շարժում» հասկացությունները երբեմն օգտագործվում էին որպես հոմանիշներ:

⁴⁰⁰ Տե՛ս Ռուբեն, Հայ յեղափոխականի մը յիշատակները, հ. Գ, Թեհրան, 1982 (Ե., 1990), էջ 41:

Ֆիդայական շարժումը⁴⁰¹ կարելի է բաժանել երկու պատմափուլի՝ 1880-ական թթ., երբ այն ցաքուցրիվ, անհատական, ինքնաբուխ ժողովրդական-վրիժառուական շարժում էր, և 1890-1907 թթ., երբ այն արդեն հայ ազգային կուսակցությունների կողմից կազմակերպվող և ուղղորդվող պայքար էր⁴⁰²: Հենց առաջին պատմափուլում էլ այն ունեցավ իր նախակարապետները (Հակոբ սարկավազ, Գալֆա Հակոբ, Մարգար վարժապետ և այլք), ովքեր մեծ գործ կատարեցին ազատության կայծը բորբոքելու, ժողովրդի ոգին բարձրացնելու գործում:

Ֆիդայական պայքարը Կարինի նահանգում առաջացավ տարերայնորեն, ինքնաբուխ, առանց նախապատրաստության և սկզբնական շրջանում կրում էր տեղական և անկազմակերպ բնույթ: Այն ավելի շատ անհատական-պարտիզանական, վրեժխնդրական շարժում էր և առաջացել էր տարերայնորեն: Հիմնականում անգլեն ու անպաշտպան հայ մարդը, այլ ելք չտեսնելով, որևէ քուրդ թալանչի կամ թուրք պաշտոնյա էր սպանում և լքելով տուն ու տեղ, հարազատներին՝ ստիպված ապաստանում էր լեռներում: Այդ պայքարը նաև կարինահայության արդարացի ելույթն էր ընդդեմ ողջ նահանգն ընդգրկած համատարած անարդարության և մղվում էր հանուն գոյության, պատվի ու արժանապատվության: Շարժումն «սկզբնական շրջանում ուներ սոցիալական բովանդակություն»⁴⁰³ և ուղղված էր ճնշող ու թալանչի քուրդ ռազմական ավագանու և թուրք կեղեքիչ պաշտոնյաների դեմ:

Բոլոր հուշագիրներն ու այդ շարժմանն անդրադարձող հեղինակները ֆիդայիներին միաբերան համարում են ազգային-ազատագրական պայքարի մարտիկներ, քանի որ նրանք անասելի զրկանքներ ու տառապանքներ էին կրում, իսկ շատ դեպքերում՝ սեփական ժողովրդի ազատության սրբազան գործի նահատակներ դառնում: Ֆիդայիները նաև զգալի աշխատանք են կատարել՝ հայ ժողովրդի երկու հատվածների

⁴⁰¹ Արևմտահայերենում ավելի շատ օգտագործվում էր ջանֆիդա բառաձևը, որն արաբերենից էր անցել թուրքերենին և նշանակում էր կյանքը զոհաբերող: Օ. Ճգնավորյանի կարծիքով, որը միանգամայն հնարավոր է, թուրքերեն էին այդպես անվանում բոլոր այն հայերին, որոնք «ազգային ազատագրության ճամբուն վրայ յանձն առած են իրենց կեանքը զոհիլ: Տե՛ս ՀԱԱ, ֆ. 420, գ. 16, ց. 8, թ. 21:

⁴⁰² Խորհրդահայ պատմագիտությանը հիմնականում բնորոշ է եղել ֆիդայական շարժումն ու կուսակցությունների գործունեությունն իրարից մեկուսացնելու միտումը, որն արվում էր, որպեսզի հայ ազգային կուսակցությունների խաղացած դերն ազատագրական պայքարում ամեն կերպ նսեմացվեր:

⁴⁰³ Տե՛ս Հայոց պատմություն, հ. III, գիրք առաջին, Ե., 2010, էջ 473:

միջև կապերն ամրապնդելու համար, տեսակցել են արևելահայ նշանավոր գործիչների հետ, նրանց օգնությամբ զենք ու զինամթերք ձեռք բերել, կամավորներ հավաքագրել:

Արևմտյան Հայաստանի տարածքով մեծ, առևտրական բանուկ ճանապարհների հանգուցակետում գտնվող, կարևոր ռազմավարական նշանակություն և տնտեսական ու մշակութային բարձր ներգրավվածություն ունեցող Կարինի նահանգն անմասն չէր այդ գործընթացներից: Այստեղ ևս սոցիալ-տնտեսական հարաբերությունների աննախադեպ վատթարացումը քայքայիչ դերակատարություն ունեցավ նահանգի հայության վիճակի վրա: Սկսված ազատագրական խմորումները, որոնք սկզբում դրսևորվեցին Սահմանադրական շարժման տեսքով, հետագայում վերաճեցին զինված՝ ֆիդայական պայքարի: Այսինքն՝ ազգային-ազատագրական պայքարը մտավ գործնական կամ ավելի կոնկրետ՝ ռազմական գործողությունների փուլ: Այստեղ ևս տարերայնորեն սկսված այդ պայքարն ուղղված էր իշխանությունների և նրանց թողտվության պայմաններում թալանի, կողոպուտի ու ավազակային կենսակերպ վարող քրդերի ու մյուս քոչվոր ցեղերի դեմ: Ֆիդայիները՝ չհանդուրժելով քուրդ ցեղապետերի վայրագությունները և նրանց պատասխանելով «ական ընդ ական», անսպասելի հարձակվում էին կառավարական զորքերի, քուրդ հրոսակախմբերի կամ հարկահանների վրա: Ֆիդայական խմբերն առաջնորդվում էին չգրված օրենքներով, այնտեղ տիրում էր երկաթյա կարգապահություն:

XIX դարի վերջին քառորդին ռուսական սահմանին մոտ գտնվող Կարին աշխարհում հայության վիճակը շատ ծանր էր, և ազատասիրական գաղափարներն ավելի հեշտ էին ներթափանցում: Այդ պատճառով էլ Կարնո աշխարհն առաջիններից մեկն էր, որտեղ սկսվեց ու աստիճանաբար թափ հավաքեց ֆիդայական շարժումը⁴⁰⁴:

⁴⁰⁴ Կարնո աշխարհում ծավալված ֆիդայական պայքարի մասին տեղեկություններ կան արխիվային վավերագրերում (ՀԱԱ, ֆ., 42, 56, 114, ԳԱԹ, Թ. Ազատյան ֆոնդ և այլն), տպագիր որոշ սկզբնաղբյուրներում (օրինակ՝ Նիսեթեր Հ.Յ.Դաշնակցութեան պատմութեան համար, հ. Բ, Պեյրուֆ, 1965, հ. Գ, Պեյրուֆ, 1976), հուշագրություններում (Ռուբէն, Հայ յեղափոխականի մը յիշատակները, Թեհրան, 1982, Նշկեան Մ., Առաջին կայծերը. էջ մը Կարնոյ զարթօնքէն, 1930, Արամայիս Ազնավուրյանի յուշերը, տպագրված «Հայրենիք» ամսագրի տարբեր համարներում), ժամանակի մամուլում («Հայրենիք», «Վէմ» ամսագրեր, «Մշակ», «Արմենիա», «Մուրճ» թերթեր և այլն) և մի շարք ուսումնասիրողների աշխատություններում: Տե՛ս Չարըգ Դ., Հուշամատյան Բարձր Հայքի, Կարինապատում, Բեյրութ, 1957, Ա-Դո, Վանի, Բիթլիսի և Էրզրումի վիլայեթները. Ուսումնասիրութեան մի փորձ այդ երկրի աշխարհագրական, վիճակագրական, իրաւական և տնտեսական դրութեան, Ե., 1912, Հովհաննիսյան Ռ., Արևմտահայ ազգային-ազատագրական շարժումները և Կարինի «Պաշտպան

Երկրամասի առաջադեմ մտավորականների ակտիվ գործունեությունն ու քարոզչությունը մեծապես նպաստեցին տեղի հայության ազատասիրական դրսևորումներին: Ժողովրդանպաստ դիրքորոշումներով դիմադրական շարժման իրենց գործունեությամբ և հետևողական քարոզչական աշխատանքներով մեծապես նպաստեցին նաև տեղի առաջադեմ հոգևորականությունն ու հայրենասիրական կազմակերպությունները: Կարնո աշխարհի առաջին անձնագոհները՝ ֆիդայիները, եղան շարժման համեստ, բայց առաքելատիպ նախակարապետները և իրենց պատվավոր տեղն ունեն հայ ազատագրական շարժման ողջ պատմության մեջ:

Ճիշտ է ասված, որ պատմությունն իր տրամաբանությունն ունի և հռչակով պատվի է արժանանում ու անմահանում նա, ով առաջինն է գալիս ասպարեզ՝ հիմք դնելով որևէ շարժման, լինի դա գաղափարի, թե գործողությունների տեսքով: Նման հռչակ ձեռք բերեցին ու պատմության մեջ անմահացան նաև Կարսի հնոցով անցած քաջերը, ովքեր հիմնականում գնում էին գործելու Բարձր Հայքում⁴⁰⁵: Համամիտ ենք Ռ. Հովհաննիսյանի, Է. Կոստանդյանի և այլ հեղինակների այն տեսակետին⁴⁰⁶, որ Բարձր Հայքի հայության ազատասիրական գաղափարների արթնացման գործում մեծ դեր են կատարել «Ուսումնասիրաց», «Հողային», «Ընթերցասիրաց» կազմակերպությունները և հատկապես «Պաշտպան հայրենյացը»:

Բարձր Հայքում, չնայած իր կարճատև գոյությանը, ազատասիրական գաղափարների տարածման և ազգային զարթոնքի գործում առանձնահատուկ դերակատարություն ունեցած «Պաշտպան հայրենյաց» կազմակերպության հիմնական նպատակն էր զինել վստահելի և կարող անձանց. «...մասնաւորապէս գիւղերուն մէջ, որպէս զի կարող ըլլան պաշտպանել իրենք զիրենք քիւտերու կամ թիւրքերու յարձակումներուն դէմ»⁴⁰⁷: Հայտնի է նաև, որ թեև իշխանությունների կողմից 1882 թ. կազմակերպությունը բացահայտվեց, և նրա անդամները ծանր պատիժների դատապարտվեցին, իսկ հայոց անդրանիկ հեղափոխական կազմակերպությունը դադարեց գոյություն ունենալուց, սակայն նրա ցանած գաղափարական սերմերը

«Հայրենյաց» կազմակերպությունը», Ե., 1965, Հ. Ջատիկյան, Կարինի նահանգը XIX դարի երկրորդ կեսին, Ե., 2013 և այլն:

⁴⁰⁵ Տե՛ս Հակոբյան Կ., Կարսի դերը արևմտահայ ազատագրական պայքարում 1880-1908 թթ., սեղմագիր, Ե., 2015, էջ 3:

⁴⁰⁶ Տե՛ս Հովհաննիսյան Ռ., նշվ. աշխ., Կոստանդյան Է., նշվ. աշխ., և այլն:

⁴⁰⁷ Տե՛ս Նշկեան Մ., Առաջին կայծերը. էջ մը Կարնոյ զարթօնքէն, Ա.Տ., 1930, էջ 117:

շուտով ծլարձակեցին, և այն «այնչափ մեծ աղմուկ հանեց եւ «Ձայնը հնչեց Էրզրումի հայոց լեռներէն» բանաստեղծութեան մը պատճառ դարձաւ...»⁴⁰⁸ և ռազմերթի հանեց ամբողջ հայությանը: Իսկ մոտ ապագայում, ինչպես ցույց տվեցին իրադարձությունների հետագա զարգացումը, հենց Էրզրումից հնչած այդ ձայնն էլ առաջացրեց շղթայական ռեակցիա և շարժումը տարածվեց նաև մյուս գավառներում: Այդ շարժման միջոցով նաև պարարտ հող նախապատրաստվեց և ֆիդայական շարժում առաջիններից մեկը Կարինում ծավալվեց. «1780-ական թվականներուն Կարին ի յայտ եկաւ ֆետայիական խումբ մը յանձինս Կարապետ Ագաթեանի, Կարապետ Ղումրիկեանի, Գալուստ Արխանեանի, Ռուբեն Շիշմանեանի (Քեռի), Եօղուն օղի Մինաս Քահեանի, Միքաէլ Էփրանոսեանցի, Ղասապ արթինի և այլն, որոնք ասպատակային կռիւներ մղեցին թուրք, քիւրտ, լազ և չերքեզ հարստահարիչներու և սպաննիչներուն դէմ»⁴⁰⁹:

Կարինի նահանգում հայդուկային պայքարի սկզբնական փուլի կարևոր դերակատարներից էր «Առաջիններից էրգիր անցած երիտասարդ ախալցխացի Տիգրան Օքոնյանը» կամ Շամիլը⁴¹⁰. «առաջին հերթին Տիգրան Օքոնեան Օլթի Թամպորատ գիւղին մէջ կազմակերպեց 17 հոգինոց ասպատակային խումբ մը որ յուլիս ամսուան սահմանը անցնելով մտաւ Նարման գաւառի Վէքիխաս գիւղը ահաբեկելու համար Փաշա և Իտրիս Բէկերը, որոնք փորձանք դարձած էին այդ շրջանին մէջ, սակայն գրեթէ ապարդիւն անցաւ այդ ձեռնարկը»⁴¹¹: Տ. Օքոնյանի խումբը 1888-1889 թթ. գործում էր Օլթիի շրջակայքում և սարսափ էր տարածել բոլոր հարստահարողների վրա: Նա առաջինն էր, որ թուրքերից ու քրդերից վրեժ լուծելու համար զինված խումբ մտցրեց Արևմտյան Հայաստան. «Տիգրան Օքոնեան առաջին յեղափոխականը կ'ըլլայ, Դաշնակցութեան կազմութենէն առաջ, որ Կովկասի մէջ մարտական խումբ մը կազմելով, Թուրքիա կը մտնէ ասպատակային գործունեութեամբ

⁴⁰⁸ Նույն տեղում, էջ 146:

⁴⁰⁹ Տե՛ս ՀԱԱ, ֆ. 420, ց. 16, գ. 8, թ. 118:

⁴¹⁰ Նա հանդուգն ու անվեհեր հայդուկ էր, որի խումբը գործում էր երկաթյա կարգապահությամբ: Աշխույժ ու կենսուրախ երիտասարդ էր, աչքի էր ընկնում ընկերասիրությամբ: Տարված էր Րաֆֆու հերոսներով և «ավազակ հայդուկների» խիզախ գործերի մասին լուրերով: Տե՛ս Մելքոնյան Ա., Զավախքը 19-րդ դարում և 20-րդ դարի առաջին քառորդին, Ե., 2003:

⁴¹¹ Տե՛ս ՀԱԱ, ֆ. 420, ց. 16, գ. 8, թ. 121:

թուրքէն ու քիւրտէն վրեժ լուծելու համար»⁴¹²: 1892 թ. Տիգրանի խմբի կազմում էին ալեքսանդրապոլցիներ Ուսուլ Գրիգորը, Քոռ Եղոն, Ալեքսանդրապոլից քիչ հեռու գտնվող Ղոնաղուան գյուղից Մարտիկը, ախալցխացի Վարդանը և էլի շատ ուրիշներ: Օլթիում խմբին է միանում հայտնի դաչաղ Կոլլիկի Տղա անունով մի երիտասարդ, որից ողջ շրջանի թուրքերը սարսափում էին: Տիգրանը վաշխառուներին և հարուստներին թալանում և ավարը բաժանում էր չքավորներին: Իշխանությունները, տեղեկանալով խմբի գործունեության մասին, սկսում են հետևել նրա տեղաշարժերին: Հետապնդումներից ազատվելու համար Տիգրանը փորձում է անցնել սահմանը, սակայն դա նրան չի հաջողվում: Դրանից հետո խումբը ցրում է, զենքերը պահ տալիս և ինքն անցնում է Կարին: Այստեղ սրվում են նրա և Խ. Կերեկցյանի⁴¹³ հարաբերությունները, որը ողբերգական ավարտ է ունենում: Արամ Արամյանի միջոցով Տ. Օքոնյանը սպանել է տալիս Խ. Կերեկցյանին: Ավելի ուշ Խ. Կերեկցյանի եղբայր Տիգրանը, մահամերձ եղբորից իմանալով եղելությունը, վրեժ է լուծում, և ինքն էլ սպանում է Օքոնյանին⁴¹⁴: Չնայած այս ողբերգությանը, որից սկզբնական շրջանում զերծ չէր ֆիդայական շարժումը, Օքոնյանի սկսած գործը շարունակվեց և ունեցավ իր արժանի հետևորդները:

Կարինում հայդուկային պայքարի արժանավոր ներկայացուցիչներից էր Արամ Արամյանը, որը գործել է Տ. Օքոնյանի-Շամիլի հետ: «Երկուսն էլ միեւնոյն խմորիցն էին՝ խիզախ, յանդուգն, նուիրուած ու մոլեռանդ յեղափոխականներ, հմուտ կազմակերպիչներ»⁴¹⁵: Նրանց զինակիցներին անվանում էին «համարձակներ»: Նալբանդյանի, Րաֆֆու և Գամառ-Քաթիպայի բոցաշունչ ստեղծագործություններից խանդավառված պատանի էր Ա. Արամյանը, որը դեռ վարժարանում ուսանելու տարիներին արդեն դրսևորում էր խիզախ ու անմնացորդ հայրենասերին բնորոշ հատկություններ: Հայրենիքի փրկության գործի նվիրյալը զինված պայքարը համարում էր հայ ազգի փրկության միակ ուղին: Ոչ մի դժվարության առջև չընկրկելով՝ Կարինի առաջնորդարանի դիվանապետ-քարտուղարը, «Յեղափոխական եւ մտաւորական տիպար» Արամյանը Կարինի երիտասարդության մեջ ներարկում ու արմատավորում էր

⁴¹² Տե՛ս Չարըզ Դ., նշվ. աշխ., էջ 527:

⁴¹³ Հայտնի «Պաշտպան հայրենյացի» առաջնորդի մասին է խոսքը:

⁴¹⁴ Այդ մասին տե՛ս Արամայիս Ազնավուրյանի յուշերը, «Հայրենիք», 1937, թիվ 9, հուլիս, էջ 146:

⁴¹⁵ Տե՛ս Չարըզ Դ., նշվ. աշխ., էջ 528:

ազատության ձգտումներն ու հայրենիքին ու նրա արդար դատին անմնացորդ նվիրվելու գաղափարները: Նրա մեծագույն ներդրումն ազգային-ազատագրական պայքարում եղավ այն, որ կարողացավ կապ հաստատել Կարնո աշխարհի տարբեր շրջաններում գործող Հունոյի և Տ. Օքոնյանի հայդուկային խմբերի միջև, համախմբել նրանց⁴¹⁶: Նա բոլոր խմբերին կոչ էր անում միմյանց հետ նախապես պայմանավորվել և գործել միասին, որի դեպքում, բնականաբար, արդյունավետությունն անհամեմատ բարձր կլիներ: Արամի մյուս կարևոր ներդրումն այն էր, որ նա կապ էր պահպանում «արդեն իսկ ձեւ ու մարմնին առած, փաստ դարձած» Կարինի ըմբոստ երիտասարդության և «Կովկասի «հայրենասէր»ներու» միջև:

Կարևոր էր նաև այն, որ խիզախ ու անվեհեր նկարագրով Ա. Արամյանը լուրջ գիտելիքների տեր մտավորական էր, լավ գիտեր հայ ժողովրդի հերոսական պատմությունը, արևմտահայ նահանգների քաղաքական կացությունը և տեղյակ էր նրա կրած տառապանքներին: Եվ բոլորովին էլ պատահական չէր, որ որպես Բարձր Հայքի ներկայացուցիչ, 1890 թվականին «հայ յեղափոխականներու Թիֆլիզի մէջ տուած ժամադրութեան եւ կատարած խորհրդակցութիւններուն» ներկա էր նաև Արամը⁴¹⁷: Արամին բնորոշող խոստուն փաստ է նաև այն, որ Հ.Յ.Դաշնակցության ծնունդից անմիջապես հետո Ա. Արամյանն ու Տ. Օքոնյանը, որպես «պատասխանատու կուսակցականներ» գալիս են Կարին, որպեսզի կազմակերպեն տեղի երիտասարդությանը և ստեղծեն կուսակցության առաջին տեղական կառույցը:

Այնուհետև Ա. Արամյանը որոշ ժամանակ «կ'ապրի բեկումի եւ խռովքի շրջան մը», որից հետո նոր եռանդով կրկին նետվում է պայքարի հորձանուտը: 1894 թ. ՀՅԴ բյուրոյի որոշումով, Ալեքսանդրապոլի և Կարսի կոմիտեների աջակցությամբ նա ու Դժոխք Հրայրը ֆիդայական մի խմբի հետ մտնում են Երկիր՝ Բասենի շրջանը՝ նպատակ ունենալով կազմակերպել և զինել այդ շրջանի ժողովրդին «ինքնապաշտպանութեան եւ յառաջիկայ յեղափոխական ձեռնարկներու համար»⁴¹⁸:

⁴¹⁶ Հայ ժողովրդի ազատագրության ուղիների մասին Արամ Արամյանի մոտեցումները շատ ընդհանրություններ ունեն Արմենական կուսակցության տեսաբանների և Հրայր Դժոխքի՝ համատեղ, ընդհանուր և հարմար պահին թշնամուն վճռական հարված հասցնելու տեսակետների հետ: Այն տարբերությամբ, որ Արամ Արամյանի այդ տեսակետները դեռևս հում էին և կարոտ հղկումների:

⁴¹⁷ Տե՛ս Չարըզ Դ., նշվ. աշխ., էջ 529:

⁴¹⁸ Տե՛ս նույն տեղում, էջ 531:

«Զարկի եւ գործնական աշխատանքներուն» միայն հավատացող Ա. Արամյանը 1895 թ. ողբերգական իրադարձությունների նախօրեին կուսակցության թելադրանքով մեկնում է Կարին, որտեղ Ռոստոմ Զորյանի հետ կազմակերպում են թաղային ինքնապաշտպանության գործը: Նրանք տեղյակ էին, որ իշխանությունները ծրագրել են իրենց ոճիրն իրականացնել 1895 թ. հոկտեմբերի 21-ին, և տենդագին նախապատրաստվում էին դիմագրավել: Սակայն այդ ժամանակ Կարին են հասնում «բարենորոգման յանձնախումբի անդամները, որոնք առիթ կուտան թուրք կառավարության փութացնել որոշուած ոճիրը, 3 օր առաջ գործադրել հայոց կոտորածը»⁴¹⁹: Այդ պատճառով հանկարծակիի եկած հայերը մեծ կորուստներ ունեցան:

1895-1896 թթ. Ա. Արամյանը կուսակցության հանձնարարությունների բերումամբ լինում է Արևմտյան Հայաստանի տարբեր մասերում: Օգտագործելով այդ առիթը՝ նա ակտիվ թղթակցում է «Դրօշակ» թերթին: Դրանցում դրսևորվում է հասուն մտավորականը: Նա համոզված էր, որ հայությունը միայն իր վրա հույս դնելով, զինված պայքարով կկարողանա դառնալ իր ճակատագրի տերը:

Ա.Արամյանն իր հերոսական գործունեությունը շարունակում է մինչև 1896 թ., երբ մատնությամբ ձերբակալվում է և 1899 թ. մահապատժի ենթարկվում Կարինում: Քաջասիրտ հայդուկն անգամ կախաղանի տակ չի խոնարհվում. «Կախաղանի այդ բարձունքէն, Արամ Արամյանի ոգին ու գաղափարները, ալիք ալիք կը տարածուին ոչ միայն Էրզրումի, այլ ամբողջ հայկական նահանգներու տարածքին վրայ, հպարտանք ու ոգի ներշնչելով ապրող ու գալոց հայ սերունդներուն»⁴²⁰: Նրա մահն ազատության գաղափարների և հայրենասիրության լավագույն դաս է դառնում խավարի մեջ ընդարմացած ու կամազուրկ դարձած հայ զանգվածների համար: Հերոսական այս արհամարհանքը «մահուան եւ զայն նիւթող բռնակալութեան դէմ կը սորվեցնէ» այդ զանգվածներին, որ մարդը մեկ անգամ է մեռնում, բայց հավերժ հիշվում են նրանք, ովքեր իրենց ազգի և հայրենիքի ազատության և անկախության համար են մեռնում⁴²¹:

⁴¹⁹ Տե՛ս նույն տեղում:

⁴²⁰ Տե՛ս նույն տեղում, էջ 537:

⁴²¹ Տե՛ս նույն տեղում:

Ա. Արամյանի աննկուն ոգու և մեծ հավատի մասին է վկայում նաև նրա նամակը գրված Կարինի բանտից: Հասկանալով, որ այլևս փրկություն չկա, որ մահապատիժն անխուսափելի է, նա դարձյալ պահպանում է հոգու անդորրը, կոչ անում ժողովրդին միասնաբար, մինչև արյան վերջին կաթիլը կռվել թշնամու դեմ, քանզի դա է հաղթանակի միակ ճանապարհը. «...կտակում ենք ձեզ մեր վրեժը եւ այն գործը, որին համար ձեր ընկերները ունին բարոյական այնքան արիության, որ համարձակ քայլերով պիտի դիմեն դեպի կախաղան. բան մը, որ անկասկածէ վաղ թե ուշ կը բարձրացնէ դէպի ցանկալի վերածնություն»⁴²²:

Կարնո աշխարհի հայդուկային պայքարի մեջ կարևոր դերակատարություն է ունեցել ճանաչված հայդուկ Քեռին (Արշակ Գավաֆյան, Քյաֆթառ)⁴²³, ով «մարտական ղեկավարի մը յատկություններով եւ կարողութեամբ օժտուած, թուրք բռնակալութեան եւ ոճիրներուն դէմ անձնապէս ծառացած՝ վրիժառու տիպար մըն էր»⁴²⁴: Կարնեցի Քեռու մասին արժեքավոր տեղեկություններ են պահպանվել «Հ.Յ.Դաշնակցութեան Դիւան» փաստաթղթերի ժողովածուում և Ղ. Չարըզի սովորածավալ հատորում: Որոշ անդրադարձներ կան նրա ժամանակակիցների՝ Ռուբենի⁴²⁵, Արամի⁴²⁶, Մալխասի⁴²⁷, Կոմսի⁴²⁸ և այլոց հուշերում: Մ. Վարանդյանի⁴²⁹, Ս. Վրացյանի⁴³⁰, Հ. Գևորգյանի⁴³¹, Ա. Ներսիսյանի⁴³², Վ. Վալադյանի⁴³³ աշխատություններում, «Հայրենիք», «Դրօշակ» պարբերականներում հրապարակված նյութերում: Ընդհանուր առմամբ բոլոր հուշագիրները և ուսումնասիրողները միաբերան դրական են արտահայտվել Քեռու

⁴²² Տե՛ս նույն տեղում, էջ 538: Նամակը ստորագրված է «Թաթուլ» և թվագրված՝ 30 Յուլիսի 1896 թ.:

⁴²³ Քեռու մասին ավելի մանրամասն տե՛ս Սարգսյան Ա., Քաջարի հայդուկ Քեռին (Արշակ Գավաֆյան), Հայաստան, ցեղասպանությունից վերածնունդ 1915-2015 (Երևանի «Գլաճոր» համալսարանի պրոֆեսորադասախոսական կազմի, ասպիրանտների և հայցորդների յոթերորդ գիտական նստաշրջանի հոդվածների ժողովածու), Ե., 2015, էջ 335-371:

⁴²⁴ Տե՛ս Չարըզ Ղ., նշվ. աշխ., էջ 425:

⁴²⁵ Տե՛ս Ռուբեն, Հայ յեղափոխականի մը յիշատակները, հ. Ա (Կարսի հնոցին մէջ, Դէպի Երկիր, 1904), Լոս Անճէլըս, 1952:

⁴²⁶ Տե՛ս «Հայրենիք» ամսագիր, 1923 ապրիլ, էջ 82:

⁴²⁷ Տե՛ս Մալխաս, «Ապրումներ» («Յուշապատում», հատոր Ա., էջ 247):

⁴²⁸ Տե՛ս Փափագեան Վ., Իմ Յուշերը, հատոր Ա, Պէյրուֆ, 1952:

⁴²⁹ Տե՛ս Վարանդեան Մ., Հ.Յ.Դաշնակցութեան Պատմութիւն, Ա եւ Բ հատորներու միացեալ հրատարակութիւն, Բ. հրատարակութիւն, Պէյրուֆ, 2013:

⁴³⁰ Տե՛ս Վրացեան Ս., Կեանքի ուղիներով: Դէպքեր, դէմքեր, ապրումներ, Գահիրէ, 1955:

⁴³¹ Տե՛ս Գևորգյան Հ., Ազատագրական պայքարի ռազմավարությունը և էջեր նրա հերոսապատումից, Ե., 2012:

⁴³² Տե՛ս Ներսիսյան Ա., Հ.Յ.Դաշնակցութեան պատմութիւն, հ. Բ (1898-1908 թթ.), Պէյրուֆ, 2008:

⁴³³ Տե՛ս Վալադեան Վ., Քեռին, «Հայրենիք», 1959, թիվ 11, էջ 24-35, թիվ 12, էջ 52-63:

մասին: Երկար հայդուկային կյանքով ապրած, հազար ու մի փորձություններով անցած և բազմաթիվ մարդկանց հետ հարաբերված մարտիկի համար սա բացառիկ դեպքերից է, երբ բոլորը գովաբանում են, մեծարում ու դրվատում թե՛ Քեռու անձը, թե՛ նրա կատարած գործերը: Քեռին ծնվել է Կարինում՝ խանութպանի ընտանիքում: Վաղ տարիքից Արշակը ծանոթ էր թուրքերի բարքերին, ականատես է լինում հայերի հանդեպ անմարդկային քայլերին և խոշտանգումներին: Այդ ամենը խոցում են նրա մանուկ հոգին ու էությունը լցնում անհուն վրեժով դեպի թուրքերը: Նա իր խմբով մեծ մասամբ գործում էր Բասենի և Էրզրումի շրջաններում: Այստեղ էլ ձևավորվում է ապագա «Քեռին»: Հունոն եղավ Արշակի հեղափոխական դաստիարակը, իսկ Արշակը՝ Հունոյի արժանի հաջորդը: 1877-1878 թթ. ռուս-թուրքական պատերազմից հետո, երբ ռուսները թուրքերին են վերադարձնում Կարինը, այստեղ ավելի են սաստկանում բռնությունները հայերի հանդեպ: Այդ ամենն այլևս անհանդուրժելի է դառնում Արշակի համար, որը թողնում է տուն ու տեղ և թուրքերից վրեժ լուծելու նպատակով դառնում հայդուկ: Մինչև 1887 թ. նա ինքնուրույն է գործում, իսկ դրանից հետո մտնում է Հունոյի խմբի մեջ ու մինչև 1890 թ. հայդուկային կոիվներ վարում Ալաշկերտ-Կաղզվանում:

Առաջին սերնդի հայդուկներից էր, ովքեր թուրքերի ու քրդերի անմարդկային արարքներ չհանդուրժող և նրանց դեմ պոռթկացող այնազնվագույն անհատներ էին, որոնք ի վիճակի չլինելով այլևս հանդուրժել տարատեսակ անպատվությունները, թալանն ու սպանությունները, ստիպված զենքի էին դիմում: Նրանք չէին հանդուրժում, որ մեղավորներին պատժելու փոխարեն իշխանությունները միշտ ձերբակալում ու տանջահար էին անում հայերին և իրենց տմարդի պահվածքով նրանց ընտրության այլ հնարավորություն չէին թողնում: 1890 թ. Քեռին մասնակցում է Ս. Կուկունյանի արշավանքին, իսկ 1895 թ. ծանր օրերին Անդրանիկի հետ էր. «իր իսկ վկայութեամբ՝ ըլլալով անոր լաւագոյն գործակիցներէն մէկը»⁴³⁴: Այնուհետև մասնակցում է Սասունի ինքնապաշտպանական մարտերին, ապա անցնելով Կովկաս՝ մասնակցում հայ-թաթարական կոիվներին: Քեռին վերածնվող հայ ժողովրդի ապագայի նկատմամբ լավատեսության մարմնացումներից էր:

⁴³⁴ Տե՛ս Չարըզ Դ., նշվ. աշխ., էջ 509:

Հայդուկային պայքարին նվիրված աշխատություններում Քեռու՝ Արշակ Գավաֆյանի (1858-1916) անունը հաճախ է հիշատակվում, սակայն նրա մասին քիչ է գրվել: Քեռին առանձնացել է իր համեստությամբ, գործին անմնացորդ նվիրումով և բոլոր հանձնարարություններն անտրտուն կատարելու իր պատրաստակամությամբ: Էությամբ շատ համեստ, նրան էլ իր զինակից Ռոստոմի նման չէր հետաքրքրում, թե հետագայում որևէ մեկը կցանկանա գրել իր գործունեության մասին և հետո նա հետաքրքրվում էր միայն ներկայով. «կարեւորութիւն էր ընծայում» միայն՝ իր ապրած ներկայի մէջ կատարուող դէպքերին, որոնց վկայ ու մասնակից էր լինում նաեւ ինքը: Այս էր իր մտայնութիւնը»⁴³⁵: Ո՛չ ինքն է հուշեր գրել, ո՛չ էլ ուրիշին է գրի առնել տվել: Բայց որքան էլ համեստ լինէր Քեռին, դա երբեք էլ չի արդարացնում ուսումնասիրողներին: Ինչպես օրինակ՝ 1950 թ. կուսակցության 60-ամյակին նվիրված «Յուշապատում Հ. Յ. Դաշնակցութեան 1890-1950» ստվար հատորի հեղինակներին, որոնք միայն հպանցիկ են հիշատակում նրա անունը: Իսկապես անարդարացի է, որ 600-էջանոց աշխատության մեջ ընդամենը հիշատակվում է Քեռու անունը, այն էլ՝ ի միջի այլոց, ուրիշների առիթներով: Ավելին, Քեռու անունը չի հիշատակվում նույնիսկ այն դէպքերում, երբ անպայման պիտի լինէր. «Անդրանիկի հետ էին անուանի հայդուկներ Սեբաստացի Մուրատը, Գէորգ Չավուշը, Սեպուհը, Կայծակ Առաքելը, Սէյտո Պօղոսը, Կիւմիշխանեցի Աւօն եւ այլ կտրիճ մարտիկներ»⁴³⁶: Քեռին չկա այդ անունների շարքում, չնայած որ նրանց հետ նա ևս 1904 թ. գտնվել է Սասունում: Արդարության դեմ չմեղանչելու համար ասենք, որ Թորգոմի հրամանատարությամբ Սասուն հասած «Մրրիկ» հեծյալ խմբի մասին խոսելիս հեղինակները որպես հրամանատարի օգնական հիշատակել են Քեռուն՝ «Ֆարհատ» ծածկանունով, սակայն այս դէպքում էլ չի բացատրվում, թե ով էր այդ Ֆարհատը⁴³⁷:

Իսկական անունն Արշակ Գավաֆյան է (գրականության մեջ հանդիպում է նաև՝ Գալֆայան, Գաֆաֆյան, Ղաֆաֆյան ձևերով): Քեռու ազգանվան վերաբերյալ նշենք, որ «Հ.Յ.Դ. Յուշամատեան Ալբոմ-Ատլասի» Ա. և Բ. հատորներում առկա տոհմանունը Գավաֆյան է: «Դրօշակի» 2004 թ. Ապրիլյան համարի մի հրապարակման մեջ Քեռու

⁴³⁵ Վալդեան Վ., Քեռին, «Հայրենիք» ամսագիր, 1959, թիվ 12, էջ 52:

⁴³⁶ Տե՛ս Յուշապատում Հ. Յ. Դաշնակցութեան 1890-1950, Բոստոն, 1950, էջ 389:

⁴³⁷ Այդպես է նա հիշատակվում հայտնի խմբապետ Թորգոմ-Թումանի, Անդրանիկի, Ռուբեն Տեր-Մինասյանի և այլ հուշագիրների երկերում:

տոհմանունը նշվում է Գալֆայան⁴³⁸: Ա. Ազնավուրյանի «Հուշերում»⁴³⁹ ևս նշվում է այդ ձևով: Ղ. Չարըզի մոտ «Գավաֆեան» ձևն է⁴⁴⁰: Տ. Պողոսյանի «Տարեգիրքում»⁴⁴¹ և այլ աղբյուրներում Քեռու ազգանունը հիշատակված է Գալֆայան ձևով: Այդ շփոթը պարզելու համար հետազոտող Տ. Պողոսյանը դիմում է Թեհրանում բնակվող Քեռու կրտսեր եղբորը՝ Բագրատին, ում հաղորդած տեղեկության համաձայն՝ Քեռու տոհմական ազգանունը Գավաֆյան է: Նույնը վկայել է նաև Քեռու այրին՝ տիկին Քրիստինե Քեռին, ով նույնպես երկար տարիներ բնակվում էր Թեհրանում: Այնպես որ, կարծում ենք, իսկական ազգանունը Գավաֆյան է:

Կցկտուր տեղեկություններ են պահպանվել «Էրզրումցի Քեռու» մանկության և պատանեկության, ընտանեկան պարագաների և կյանքի վերաբերյալ: Նույնիսկ շփոթ կա նրա ծննդյան թվականի վերաբերյալ. կենսագիրները տատանվում են 1855, 1856, 1858 և 1863 թվականների միջև: Պատանեկան տարիներին զբաղվել է արհեստով, դարձել հմուտ կոշկակար, նորոգել թամբեր: Հայդուկային կյանքի առաջին տարիներին Քեռին ուներ անբաժան ընկեր՝ դարձյալ Արշակ անունով, և նրանց միմյանցից տարբերելու համար ծննդավայրի հատկանիշով էին անվանում. մեկին՝ Էրզրումցի Արշակ, մյուսին՝ ղարաբաղցի: Երկարատև թափառումներից հետո Կարին վերադարձած Քեռին իր ինքնությունը ոստիկանությունից թաքցնելու համար ինքնակոչվում է նաև Ֆարիատ: Այդ մասին առաջին անգամ տեղեկանում ենք 1896 թ. Կարինում մատնիչ Մկրտիչին ահաբեկելու առիթով սկսված խուզարկությունների մասին Ա. Արամյանի՝ ՀՅԴ կենտրոնին գրած մի նամակից. «տոների խուզարկութեան ժամանակ Ֆարիատը երկու անգամ ազատուեց»⁴⁴²:

Նա ուներ նաև Քյաֆթառ Արշակ մականունը, որը մի դիպվածի արդյունք էր: Ականատես Ա. Ազնավուրյանի վկայությամբ կատակասեր Արշակն իր առջևից քայլող ձիուն խրտնեցնում է և աքացի ստանում, որի արդյունքում փշրվում են նրա զույգ ատամները, և ընկերները նրան անվանում են Քյաֆթառ, այսինքն՝ անատամ ծերուկ⁴⁴³:

⁴³⁸ Տե՛ս Հովհաննիսյան Զ., Հայ կամավորական շարժումը, «Դրօշա»կ, ապրիլ, 2004, էջ 101:

⁴³⁹ Տե՛ս Ազնաուրեան Ա., Յուշեր, «Հայրենիք» ամսագիր, թիվ 8, 1957, էջ 82:

⁴⁴⁰ Տե՛ս Չարըզ Ղ., Կարինապատում, Պեյրուֆ, 1957, էջ 506:

⁴⁴¹ Տե՛ս Պողոսյան Տ., Տարեգիրք, Թեհրան, 1970, էջ 497:

⁴⁴² Տե՛ս Հ.Յ.Դաշնակցութեան Դիւան, հ. Ա, էջ 377:

⁴⁴³ Տե՛ս նույն տեղում:

Նույնը վկայում է նաև նշանավոր ֆիդայի Բալաջանը⁴⁴⁴: Ժամանակակիցները նշում են, որ իր հանդուգն նկարագրի համար Քեռին Պարսկաստանում եղած ժամանակ անվանվել է նաև «Մտրակով Ծերունի»: «Քեռի» մականունն Արշակն ստացել էր Սասունում: «Մորեղբայր» նշանակությամբ այդ բառով նահապետական բարքերով ու ավանդական սովորություններով ապրող սասունցիները մեծարում էին իրենց կյանքի բարի օրինակով, մաքուր կենցաղով, պարկեշտ պահվածքով, առաքինի նկարագրով, հայրական վերաբերմունքով իրենց համայնքի վստահությունն ու համակրանքը շահած անհատներին: Հաշվի առնելով, որ նա սասունցի չէր, իսկ սասունցիներն էլ ընդգծված անվստահություն ունեին դրսից եկած ցանկացած մարդու նկատմամբ, կարելի է պատկերացնել, թե ինչպիսի նկարագիր է ունեցել Քեռին, որ մեկ կարճ ժամանակահատվածում այդպիսի հարգանքի և մեծարման է արժանացել Սասունում:

Ֆիդայական պայքարի նվիրյալների կոհորտայում չկա մեկ ուրիշը, որ հայ ժողովրդի ազատագրական պայքարին նվիրված տարիների գումարով հավասարվի Քեռուն: Ժամանակակիցների միաբերան վկայությամբ կյանքի 58 տարիներից 35-ը նա նվիրաբերեց հայության ազատության դատին: Հայ հեղափոխական շարժմանն սկսել է մասնակցել 18 տարեկանում, երբ անդամակցում կամ համակրում է «արեւմտահայոց ազատութեան գաղափարի շեփորահար Կարնոյ Պաշտպան Հայրենեաց Միութեան» և մասնակցում 1882 թ. Կարինում տեղի ունեցած մեծ ցույցին:

1895 թ. նա հայտնվում է Արևմտյան Հայաստանում և Բասենի հովտում կազմակերպում ինքնապաշտպանություն ընդդեմ թուրքերի ու քրդերի զինված ավազակախմբերի: 1903 թ. Քեռին մի խումբ ֆիդայիների հետ մեկնում է Սասունի ինքնապաշտպանությունը կազմակերպողներին օգնելու:

Հայրը թամբագործ էր: Արհեստավոր հորն օգնելու համար կիսատ է թողնում ուսումը և ինքն էլ դառնում թամբագործ: Հետագա տարիներին հաճախ էր օգտագործում իր արհեստը և նորոգում-կարգի էր բերում ֆիդայիների թամբերն ու մյուս անհրաժեշտ պարագաները: Ընդհանրապես նա շատ էր սիրում և առանձնակի հակում ուներ կարգի բերելու ֆիդայիների տնտեսությունը: Պատահական չէր, որ 1903 թ. Սասուն գալով, որպես «Մրրիկ» խմբի հայդուկներից մեկը, Քեռին ընկերների

⁴⁴⁴ Տե՛ս նույն տեղում, էջ 381:

միաձայն որոշմամբ ստանձնում է կոլոլ բոլոր խմբերի պահեստապետի պաշտոնը, որ «այն ժամանակույ ճգնաժամային պայմաններում շատ պատասխանատու եւ ծանր գործ էր»⁴⁴⁵: Մ. Վարանդյանը նշում էր, որ «Քեռին 1904ի օրերուն, Սասնոյ մէջ սոսկ պահեստապետ մըն էր, բայց անոր աստղը հետզհետէ կը բարձրանար Կովկասի Հայ-թրքական կռիւներէն ի վեր, ուր ինք մէկն էր անուանի դերակատարներէն՝ Մուրատի, Կորիւնի եւ այլոց հետ»⁴⁴⁶: Այսինքն՝ Քեռին օժտված էր միաժամանակ և՛ պահեստապետի, և՛ ռազմավարի անվիճելի կարողություններով: Նրա համար զբաղեցրած դիրքի ու կատարած գործի բնույթի տարբերություն գոյություն չունէր: Նա պատրաստ էր կատարելու ցանկացած հանձնարարություն: Նրան չէր հետաքրքրում առաջադրվող գործը կատարելով հեղինակություն՝ պիտի շահեր, թ՞ հանրության համար կմնար աննկատ: Քեռին ծարավի չէր ժողովրդականության ու ծափերի, ձգտում չունէր անպատճառ ղեկավար ու հրամանատար դառնալու:

1889 թ. վերջերին Արշակը Կաղզվան գյուղաքաղաքում փոքրիկ սրճարան ուներ: Այն դարձել էր յուրակերպ հավաքատեղի, որտեղ հաճախ քննարկվում էին ազգային-հեղափոխական իրադարձությունները: Մի օր այստեղ է գալիս Հարություն Մարտիրոսյանը (հայտնի՝ Հունոն) և, պատմելով իր հեղափոխական անցյալի մասին, խումբ է հավաքագրում՝ թուրքերի ու քրդերի դեմ կռվելու նպատակով: Արշակն առաջին ցուցակագրվողներից մեկն էր: Հայդուկային կյանքի առաջին իսկ օրերից դրսևորվում են Արշակի բնավորության այնպիսի գծեր, որոնք վկայում էին նրա մարդկային լավագույն նկարագրի մասին: Նա համեստ էր, քչախոս, «սակաւապէտ ու չարքաշ: Հնազանդօրէն կարգապահ, պատրաստ էր ենթարկուելու իրենց խմբապետի հրահանգներին, որոնցից իւրաքանչիւրը անառարկելի հրաման էր իրեն համար»⁴⁴⁷: Կարգապահ հնազանդությունը և համեստությունն Արշակի անհատական խառնվածքի ու նկարագրի բնորոշ կողմերն էին, և այդ հատկանիշները լիովին պահպանվեցին հետագա բոլոր տարիների ընթացքում և նույնիսկ այն ժամանակ, երբ ինքն էր հրամանատար: Ժամանակակիցներն ընդգծում են նաև նրա պարզությունը, մարդամոտ լինելու և արագ բարեկամանալու հատկությունները. «Քեռուն պատահում

⁴⁴⁵ Տե՛ս Վալադեան Վ., «Հայրենիք» ամսագիր, թիվ 12, 1959, էջ 8:

⁴⁴⁶ Տե՛ս Վարանդեան Մ., Հ.Յ.Դաշնակցութեան պատմութիւն, հ. Բ, էջ 73:

⁴⁴⁷ Տե՛ս Վալադեան Վ., «Հայրենիք» ամսագիր, թիվ 12, 1959, էջ 15:

էի առաջին անգամ, բայց կարծես հին ծանօթներ էինք», - ասում է Արամը իր հուշերից մեկում⁴⁴⁸: Նրա մասին շատ ջերմ տողեր է գրել նաև Մալխասը. «Քեռին զարմանալիորէն հանդարտ, խաղաղ մարդ մ'էր, տարտիման ու հարազատ: Ծանօթանալէդ կէս ժամ վերջը, այնպէս կը թուէր թէ ամբողջ կեանք մը անցուցեր ես հետը: Հայրական վերաբերում ունէր բոլորի հանդէպ, եւ բոլորն ալ կ'ենթարկուէին անոր ձեւերուն, որոնք վանողական ոչինչ ունէին»⁴⁴⁹: «Համեստ էր, լռակեաց: Զգացում էր նախկին արհեստաւորը. աշխատասէր, խոհուն, գլուխը կախ, իր բանին ու գործին: Քայլում էր հանդարտ, հայեացքն ինքնամփոփ, հագուստը շատ համեստ, արհեստաւորի արտաքին ու պահուածք: Ոչ մի ցուցարութիւն, ոչ մի ճիգ տպաւորութեան: Իր ուժերի ճշմարիտ գիտակցութիւնն ունէր եւ իր արժանիքի իսկական ըմբռնումը: Անծանօթ էր իրեն ինչպէս յոխորտանքը, այնպէս էլ նուաստութիւնը: Չափած, կշռած, խոհուն ու նստած մի մարդ էր: Իր կարծիքները, դատողութիւններն ու հարցումները մատնում էին երկարամեայ փորձառութիւն եւ ուշադիր նկատառում»⁴⁵⁰, Քեռու մասին հուշագրել է Նիկոլ Աղբալյանը:

Ցուցամոլությունը, պարծենկոտությունը, սնապարծությունը Քեռու համեստ բնավորությանը խորթ էին: Նա հաճախ էր սաստում իր այն զինվորներին, որոնք փորձում էին դրվատել իր որևէ արարք: Այս պարագան էլ եղել է այն հիմնական պատճառներից մեկը, որ իր կյանքի շատ դրվագներ անհայտ մնան սերունդներին: Հետաքրքիր է սփյուռքահայ մտավորական Քնար Մանճիկյանի վկայությունը. «Երբ առաջին անգամ տեսա Քեռուն, չէի ուզում հավատալ, որ իմ առջև հայդուկային շարժման առաջնորդն է: Նա բարձրահասակ էր, մի քիչ կուզիկ, ուներ ալեհեր գլուխ, արծվային պրոֆիլ, փայլուն աչքեր, հռոմեական քիթ, եռանդուն, կամային ծնոտ: Շալվարի փողքերը խրած էին սապոգների մեջ, ձեռքին տերողորմյան էր: Արտաքինը զինվորականի չէր: Նա ուներ մանր առևտրականի, արհեստավորի, մի խոսքով՝ ինչի տեսք ասես, միայն ոչ ռազմիկի: Անդրանիկի կողքին, որը հաճույքով դրվագներ էր պատմում իր մարտական կյանքից, Քեռին բոլորովին լռակյաց էր: Ընդհանուր զրույցի

⁴⁴⁸ Տե՛ս «Հայրենիք» ամսագիր, թիվ 4, 1923, էջ 82:

⁴⁴⁹ Տե՛ս Մալխաս, Ապրումներ, էջ 274:

⁴⁵⁰ Տե՛ս Անանյան Գ., Նիկոլ Աղբալյան, կյանքը և գրական-հրապարակախոսական գործունեությունը, Ե., 2002, էջ 14:

ժամանակ ամենասակավախոսն էր: Երբ նրան խնդրեցին մի քանի խոսք ասել, նա պատասխանեց. «Ես իմ խոսքերը թողել եմ մարտադաշտում»⁴⁵¹:

Հետագայում Քեռին մասնակցում է Հունոյի ղեկավարած Մատռաբերդի «արշավանքին», այնուհետև իր անբաժան ընկերոջ՝ Ղարաբաղցի Արշակի հետ 1890թ. անդամագրվում է Կուկունյանի ջոկատին, որի անհաջողությունից հետո Քեռուն հաջողվում է խուսափել ձերբակալությունից և թաքնվել Կարինում⁴⁵²: Այստեղ խմբապետությունը վստահվում է արդեն ՀՅԴ-ին անդամագրված Ֆարհատ-Արշակին, 1894-1895 թթ. ջարդերի ժամանակ կարողանում է կազմակերպել տեղի հայ գյուղացիների պաշտպանությունը և հնարավորինս քիչ կորուստներով դուրս գալ ստեղծված ծանր կացությունից⁴⁵³:

Ավելացնենք, որ բոլոր հուշագիրները միաբերան ընդգծել են նրա գնահատելի համեստությունը, կատարած գործի կարևորության գիտակցումը, որդեգրած առաքելության վեհությունն ու պատասխանատվության մեծ զգացումը, ռազմարվեստին փայլուն տիրապետելն ու մարդկային կերպարը զարդարող բնավորության լավագույն գծերի առկայությունը⁴⁵⁴: Նրան բոլորն էլ սիրում էին: Նրա մոտ հաճույքով էին գնում: Հպարտանում էին նրանով: Քեռին ուներ հրամանատարի՝ մարդկանց պահպանելու, իզուր զոհերից խուսափելու արժեքավոր հատկանիշներ: Մարտում խիստ էր: Մարտից հետո բոլորի բարեկամն էր ու լավ ընկերը:

Քեռուն լավագույնս իմացող Վ. Վալադյանն էլ գրում է. «Քեռին երբեք չէր խառնում կուսակցական վեճերին: Որքան էլ նա իր անձնական համակրանքով կամ հակակրանքով թեր կամ դեմ լինէր այս կամ այն անհատին, հաւաքական ձեռնարկների մէջ միշտ կը խուսափէր իրանձնական նախասիրութեանց համեմատ դիրք ճշդելուց: Քեռին, ի բնէ դէրիշի խառնուածք ունենալով, երբեք չէր մտածում բարեկեցիկ լինելու

⁴⁵¹ Տե՛ս Մանճիկեան Բ., Պատմութեան համար դէմքեր, դէպքեր, դէպի արմատներ, Լոս-Անջելըս, 2006, էջ 42:

⁴⁵² Տե՛ս Եղիազարյան Կ., Սարգիս Կուկունյանի արշավանքը, Ե., 2016, էջ 123:

⁴⁵³ Ավելի ուշ Քեռին անցնում է Կովկաս և ամբողջությամբ նվիրվում ֆիդայական գործունեության: 1897 թ. մասնակցում է Խանասորի արշավանքին, ապա Սասունի 1904 թ. ապստամբությանը: Ռևանդի ճակատամարտում 1916 թ. մայիսին 15-ին հերոսաբար զոհվում է:

⁴⁵⁴ Օրինակ՝ Թ. Նազարբեկյանը (տե՛ս ՀԱԱ, ֆ. 49, գ. 1, ց. 4, թ. 13), Անդրանիկը (տե՛ս Զորավար Անդրանիկի Կովկասեան ճակատի օրագրութիւնը (1914-1917), Բոստոն, 1924, էջ 63): Քեռու մասին ջերմ են արտահայտվել «Ռուսակիյե վեդոմոստի» (տե՛ս «Русские Ведомости», 18 մայիսի, 1916), «Արև» (տե՛ս «Արեւ» օրաթերթ, 14 հունիսի, 1916), «Հորիզոն» (տե՛ս «Հորիզոն», 28 դեկտեմբեր, 1915) և այլ գործիչներ ու թերթեր:

մասին: Նա ի ծնէ ժուժկալ էր: Դէպի իր անձը ցուցաբերած անտարբերութեան ու անհոգութեան, իր հագուստ-կապուստին նկատմամբ անփութութեան, իր վարած պարզ կենցաղին համար Հայաստանի կարգ մը շրջաններու մէջ ժողովուրդը անոր տուած է «դէրփշ» մակդիրը որ, կրօնական թէ աշխարհական իմաստով, հաւատքի մը, դատի մը, գաղափարի մը մոլեռանդօրէն ծառայողին ինքնամոռաց անհատին կերպարն է»⁴⁵⁵:

Երախտագետ հայ ժողովուրդն իր քաջարի հերոսի հիշատակին նվիրեց ազգային-հեղափոխական մեր երգերից ամենասրտաբուխն ու հուզիչը, Քեռու առաքինությունների պատշաճ ներբողն ու գործերի փառաբանությունը: Երգ, որը մեր օրերում ևս ներշնչման վարար աղբյուր է բոլոր հայորդիների համար:

Կարնո աշխարհի առաջին հայդուկներից էր Հարություն աղա Տէր Մարտիրոսյանը (Հունո, Յունո)⁴⁵⁶: Ժամանակակիցների վկայությամբ Հունոն «կիսագրագետ, յաղթ, առոյգ տղամարդ մը, որ ասպատակային խումբ մըն էր վարեր... Տիպար հայդուկ մըն էր, որ կը գործէր լուռ ու մունջ, լի ահարկու վրէժխնդրութեամբ թուրքերու եւ մանաւանդ քիւրտերու հանդէպ»⁴⁵⁷: Նա շատ հանդուգն էր և կռվարար, ինչի մասին փաստում էր նաև հայրը. «Վերջին աստիճան կտրիճ էր: Սուրը բերանը խոթէին չէր վախնար»⁴⁵⁸: Մի օր, երբ գյուղ եկած թուրք հարկահանները և ժանդարմներն իրենց սանձարձակ արարքներով անարգում ու խոշտանգում էին խեղճ ու անգրագետ գյուղացիներին, Հունոն նրանց հետ կռվի է բռնվում, ջարդում է մեկի գլուխը և փախչում Ալաշկերտ: Այս դիպվածից հետո էլ սկսվում է նրա հայդուկային գործունեությունը, որի մասին արժեքավոր տեղեկություններ են հաղորդում Ա. Ազնավուրյանը⁴⁵⁹ «որպէս դեպքերու անմիջական վկայ», Բ. վարդապետ Թավաքալյանը⁴⁶⁰, «որպէս մէկը, որ ի մօտոյ տեղեակ է եղել Յունոյի մահուան պարագաներին»⁴⁶¹, «Դրօշակ» թերթը⁴⁶² և այլ աղբյուրներ:

⁴⁵⁵ «Հայրենիք» ամսագիր, թիվ 12, 1959, էջ 34:

⁴⁵⁶ Հունոն որոշ ժամանակ հարել է Հնչակյան կուսակցությանը, իսկ ավելի ուշ դարձել դաշնակցական:

⁴⁵⁷ Չարլզ Ղ., նշվ. աշխ., էջ 508, Յունոյի մասին տե՛ս նաև Յուշեր Արմենակ Եկարյանի, Պէյրութ, 1985, էջ 32:

⁴⁵⁸ «Հայրենիք», Բոստոն, 1938, թիվ 5, Յարութիւն Տէր Մարտիրոսեան (Յունո), Ս. Թորգոմեան, էջ 112:

⁴⁵⁹ Արամայիս Ազնավուրյանի հուշերը, «Հայրենիք» ամսագիր, թիվ 5, 1937:

⁴⁶⁰ Վրացյան Ս., Բագրատ վրդ. Թավաքալյանի նամակները, «Հայրենիք», Բոստոն, 1933, հ. 12, թիվ 1, էջ 103-110, հ. 12, թիվ 2, էջ 98-112, 1934, հ. 12, թիվ 3, էջ 84-95:

⁴⁶¹ Հրոսակապետ Հունոն, «Հայրենիք» ամսագիր, թիվ 5, 1958, էջ 43-51:

⁴⁶² «Դրօշակ», թիվ 2, 1892, թիվ 1, 1901 և այլն:

1890 թ. կեսերից իր շուրջը համախմբելով մի քանի բախտակից քաջ ու «ղաչաղ» դարձածների՝ Հունոն ստեղծում է իր խումբը և ասպատակային գործունեություն ծավալում Ալաշկերտ-Կաղզվան ճանապարհների վրա. «Անցեալ տարուայ գարնան սկզբներին (հոդվածը գրվել և լույս է տեսել 1892 թ. փետրվարին - Ս.Ա.) աւազակապետ Յարութին աղան իր խմբով գտնուում էր Ալաշկերտի շրջանակներում»⁴⁶³: Երբ խմբին տարբեր կողմերից քրդական բռնությունների մասին սրտաճմլիկ լուրեր են հասնում, վրեժխնդրությամբ տոգորված խումբն այդ բոլորին արժանի պատասխան տալու համար սպասում էր հարմար առիթի: Այդ մասին իմանալով՝ «սեպտեմբեր 14-ի առաւօտեան պահուն»⁴⁶⁴ քրդերը որոշում են նախահարձակ լինել և մեծ բազմությամբ հարձակվում են խմբի վրա: Կռիվը տևում է մինչև երեկո: Քրդերը ստվարանալով (400-500 ձիավոր և հետևակ) պաշարում են հայերին: Կռվի ամենաթեժ պահին ոչնչից չվախեցող Հունոն «կամենալով փոխել խմբի դիրքը, առաջ է շարժում, ճեղքում է քրդերի շղթան» և կարողանում է իր մարդկանց փրկել անխուսափելի կործանումից⁴⁶⁵:

Այնուհետև Հունոն Բասենի դաշտում մտերմանում է տեղացի քրդերից մի քանիսի հետ, և նրանց խմբերը միավորվում են: Սկզբում նրանք հնարավորության դեպքում առանց խտրականության թալանում էին քրդերին, թուրքերին ու նաև հայերին: Մի անգամ էլ խումբը կռվի է բռնվում իրեն հետապնդող կառավարական զորքերի հետ: Այստեղ շատերը զոհվում են, իսկ հրաշքով կենդանի մնացած Հունոն փախչում Կովկաս: Որոշ ժամանակ հետո վերադառնում է և շարունակում արդեն գիտակցված պայքարն անօրեն թալանչիների դեմ՝ հարուցելով շրջապատի հիմնականում ավազակությամբ զբաղված քրդերի զայրույթը: Վերջիններս ամենուր հետևում էին Հունոյին և փորձում հաշվեհարդար տեսնել նրա հետ: Ի վերջո, Մատռաբերդի մոտ քրդերին հաջողվում է շրջապատել Հունոյի խմբին: Հարյուրավոր քրդերի կողմից պաշարման մեջ ընկած Հունոն կարողանում է քաջաբար կռվել և ապահովել իր խմբի հաջողությունն ու, ճեղքելով պաշարման օղակը, հասնում է Կաղզվան:

⁴⁶³ «Նամակ Ալաշկերտից: Հրոսակային խմբի կռիւը», «Դրօշակ», փետրվար, 1892: Այստեղ թղթակցությունում անճշտություն կա. ոչ թե 1891 թ. է դա եղել, այլ 1890 թ., քանի որ Հունոյի խմբի՝ 1890թ. այդ տարածաշրջանում գործելու իրողությունը հայտնի փաստ է և վիճարկման ենթակա չէ:

⁴⁶⁴ Նույն տեղում:

⁴⁶⁵ Հրոսակապետ Հունօն, «Հայրենիք» ամսագիր, թիվ 5, 1958, էջ 44:

Կուկունյանի արշավախմբին մասնակցած և հետո նրա հետ միասին Սախալին արքորված տղաներից մեկը՝ Հովսեփ Մովսիսյանն իր հուշերում⁴⁶⁶ Մատռաբերդի դեպքերի մասին, որ լսել էր Կուկունյանի զինվոր Ա. Ազնավուրյանից, հետևյալն է ավելացնում. «Յունոն բեկուած սրտով Կաղզուան է հասցնում խումբը: Այնուհետև դեռ էլի ապրեց եւ, մի շարք ծառայութիւններ անելուց յետոյ, մեռաւ, գլուխը Արամայիսի գրկում»⁴⁶⁷: Չմանրամասնելով նշենք, որ Հունոյի գործունեության գնահատանքի կողքին հուշագրություններում և ուսումնասիրություններում առկա է նաև ոչ այնքան դրական կարծիք. «Յեղափոխական կարող էին,-գրում է ֆիդայական պայքարի կենսագիրներից Վ. Վալադյանը,-եւ իսկապէս էլ դարձան, երբեմնի աւագակներ Չաթօն, Շերօն, Խլաթցի Սէրոբը, Ախալքալաքցի Տիգրան Օքոնեանը, բայց ոչ Յարութիւն-աղաները: Լավ կլինի, որ մեր ազատագրական շարժման պատմութեան մէջ որոմները զատենք մաքուր ցորեններից»⁴⁶⁸:

Այդ շրջանում հայդուկային պայքարի աննկուն գործիչներից էին նաև կարնեցիներ Գարեգին Կարնեցին և Միքայելը՝ երկու անբաժան ընկերներ⁴⁶⁹, Հովհաննես Կորկոտյանը⁴⁷⁰, Վահան Շահինյանը, Սեպուհը, Կայծակ Առաքելը և ուրիշներ:

14 տարեկանում թողնելով ուսումը՝ Հ. Կորկոտյանը հոր արհեստանոցում զինագործություն է սովորում, այնուհետև արհեստը կատարելագործելու համար տեղափոխվում է Թիֆլիս, որտեղ էլ անդամագրվում է ՀՅԴ-ին և դառնում «Վրէժ» խմբի անդամներից մեկը: Այստեղ «կըզբաղուի զինավարժութեամբ, կըդառնայ լաւ նշանառու»⁴⁷¹: Մի քանի փորձություններից հետո նրան հաջողվում է հասնել Կարին: Այստեղ անվախ Կորկոտյանը մի ընկերոջ հետ կարողանում է մտնել քաղաքի բանտը և զարմանալի ճարակությամբ «կ'ազատէ բանտարկուած իր մէկ ընկերը՝ Ղարապաղցի

⁴⁶⁶ «Հայրենիք» ամսագիր, 1933 և 1934 թթ. լույս տեսած մի քանի համարներ:

⁴⁶⁷ «Հայրենիք», 1934, Մարտ, էջ 60:

⁴⁶⁸ Տե՛ս «Հայրենիք» ամսագիր, թիվ 5, 1958, էջ 51:

⁴⁶⁹ Գարեգին Ղոռյանը և Քյոսեն՝ Միքայելը, երկու ըմբոստ հայդուկներ էին՝ սիրված ժողովրդի կողմից, նրանց կողքին էին հայդուկներ բաբերդցի Գևորգը և էրզրումցի Եղիշը՝ «Սև օձ» անունով: 1914 թ. միացել են Քեռու խմբին և զոհվել քուրդ ավագակների դեմ մղած հերոսական կռիվներից մեկում: Իսկ թե կոնկրետ որ և ինչ պայմաններում, ցավոք, մեզ տեղեկություն գտնել չհաջողվեց:

⁴⁷⁰ Էրզրումցի էր, որի ընտանիքը ապրում էր Ախալցխայում: Դեռ փոքր տարիքում գալով Թիֆլիս՝ ծանոթանում և առնչվում է հեղափոխական (այդ բառով էր այդ տասնամյակներում «որակվել» Արևմտյան Հայաստանի և հայության փրկության գոյամարտը - Կ. Ա.) գաղափարներին և որոշում է «Վրէժ» խմբի հետ անցնել Երկիր: Ապա 1895 թ. վերադառնում է Կարին ու մասնակցում դիմադրական կռիվներին: Այստեղ էլ Հովհաննեսն ընկնում է հերոսի մահով:

⁴⁷¹ Տե՛ս Չարլզ Ղ., նշվ. աշխ., էջ 651:

Արշակը»⁴⁷²: Իշխանությունները ձեռնարկում են բոլոր միջոցները՝ «Կորկոտ»-ին ձերբակալելու համար, բայց ապարդյուն: Փախստական վիճակում էլ Կորկոտյանն ընդհարումներ է ունենում ոստիկանության հետ, բայց միշտ «յաղթական դուրս կուգայ»: «Կորկոտն» ինքնակամ կարողանում է պատժել նաև մի քանի մատնիչների՝ դրանով կատաղեցնելով ոստիկանությանը:

Շուտով վրա է հասնում 1895 թ. հոկտեմբերի 18-ի հայկական կոտորածը: Կորկոտն ու նրա մորեղբոր տղա Մարտիրոսն ատրճանակներով զինված, փողոց են դուրս գալիս և կռվի բռնվում զինվորների և խուժանի հետ: Ուժերը խիստ անհավասար էին և նրանք ստիպված նահանջում են և փակվում Մարտիրոսենց տանը: Պաշարողները տասը զոհի գնով հրդեհում են տունը, և Հ. Կորկոտյանը զոհվում է:

Կարինի նվիրյալներից էր նաև Վահան Շահինյանը, ով սահմանադրության շրջանում «քաղաքական թե՛ հասարակական գետնի վրայ» նյութական և բարոյական մեծ զոհողություններով ու իր հետևողական պայքարով կարողացել էր դառնալ քաղաքի բարեկեցիկ և հարուստ հայ երիտասարդության առաջնորդը: Նա խուսափում էր պաշտոններ ստանձնելուց և ցուցականությունից, բայց ամուր «յենարան մըն էր ազատական գործունեութեան եւ ձեռնարկներուն մէջ»: Այդ պատճառով էլ մեծ հարգանք ու վստահություն էր վայելում Կարինի երիտասարդության կողմից: Որևէ դժվարության դեպքում առաջին հերթին Վահանն էր «...որ կը փնտռուէր, որպէս գործնական միտք մը, բոլոր շրջանակները համոզելու եւ գործի մղելու ի վիճակի անձնաւորութիւն մը»⁴⁷³: Կարինի հանրային կյանքը կարոտ էր այդպիսի գործիչների, ովքեր իրենց հետևից էին տանում նաև հարուստ երիտասարդներին, ովքեր եռանդուն մասնակցում էին ազգային կյանքին ու գործերին, առանց «ինքզինքնին հայ զանգուածներէն հեռացնելու եւ աղայական հովեր առնելու»⁴⁷⁴: Անսահման էր նրա սերը դեպի հայությունը, անսահման էր նաև նրա ժողովրդականությունը:

Կարինի ազատատենչ հայության շրջանում իր ուրույն տեղն ուներ նաև Դարպասյան բազմաճյուղ գերդաստանը, որի արժանավոր ներկայացուցիչներն էին Տիգրանը (հայտնի դերասանուհի Արուս Ոսկանյանի հայրը), Արամը, Դերենիկն ու

⁴⁷² Տե՛ս նույն տեղում, էջ 652:

⁴⁷³ ՀԱԱ, ֆ. 420, ց. 16, գ. 8, թ. 34:

⁴⁷⁴ Նույն տեղում:

Հրանդը: Իրենց հայրենասիրական գործունեության համար իշխանությունների կողմից հետապնդվելով՝ նրանք հեռանում են Կարինից, իսկ հետագայում անդամագրվում ՀՅԴ-ին: Նրանցից Դերենիկը, պաշտոնյաների շրջանում ծանոթներ ունենալու շնորհիվ պաշտոնեության մեջ, բազմաթիվ կեղծ անձնագրերով «կը դիրացնէ վտանգուած յեղափոխականներու եւ հանրային գործիչներու երթեւեկը»⁴⁷⁵:

Կարինի հերոսական դեմքերից էր նաև Ռուբեն Շիշմանյանը՝ «Երզնկացի կամ Դերսիմի քեռին»: Երիտասարդ տարիքում որոշելով լուծել թուրքերի կողմից դավադրաբար սպանված եղբոր վրեժը՝ Ռուբենը նետվում է ֆիդայական պայքարի հորձանուտը՝ սկզբում ճանապարհների վրա ասպատակությամբ, իսկ ավելի ուշ արդեն իր հեղափոխական գործունեությամբ դառնալով թուրքերի սարսափը: Չնայած երիտասարդ տարիքին՝ Քեռին մշտապես զուգակցում էր քաջությունը և կազմակերպելու ու ղեկավարելու հմուտ կարողությունները, որոնք շուտով «դարձուցին զինքը ոչ միայն յեղափոխական մարտիկ մը, այլ նաեւ, որոշ ծրագրով գործող ղեկավար. իսկ աւելի ուշ, հայ յեղափոխական շարժման կարեւոր տիպարներէն մէկը»⁴⁷⁶: Գործունեության առաջին օրերից իսկ նրա նպատակն էր խմբեր կազմել, զինել նրանց և դառնալ հարվածող ուժ, որը պիտի կարողանար զսպել թուրքերին ու քրդերին և «ճամբայ բանալ հայ ազատագրական պայքարին»⁴⁷⁷: 1894 թ. Ռ. Շիշմանյանը փոքրաթիվ խմբով հարձակվում է մի թուրք պաշտոնյայի և նրան ուղեկցող ժանդարմների վրա և այս դեպքի պատճառով հետապնդվելով՝ բարձրանում է Սեպուհ լեռը, որտեղից ասպատակային հարձակումներ է կազմակերպում թուրքական բանակի վրա: Այս արտասովոր դեպքը զայրացնում է Երզնկայի չորրորդ բանակի հրամանատարին, որն էլ հրամայում է պաշարել խմբին և գերի վերցնել նրանց: Դրսևորելով հրամանատարին վայել լավագույն հատկանիշներ՝ Ռ. Շիշմանյանը կարողանում է շրջապատման միջից դուրս բերել խումբը: Հետագայում ձերբակալվում է և 4 տարի տևած դատավարական քաջքշուկից հետո զանազան զրպարտանքներով թուրքերը, «ապացուցելով» նրա մեղքը դատապարտում են մահվան: Նրա հերոսական կերպարը միշտ ոգեշնչման աղբյուր եղավ կարինահայության համար:

⁴⁷⁵ Չարլզ Ղ., նշվ. աշխ., էջ 655:

⁴⁷⁶ ՀԱԱ, ֆ. 420, ց. 16, գ. 8, թ. 53:

⁴⁷⁷ Նույն տեղում:

Կարնո աշխարհում աչքի ընկնող հայդուկներ էին Անտոն Գոշը, Նիկոլը, Մելքոնը, Տուրբախը (Հարություն Այվազյան կամ Կիրակոսյան), Գերասիմը, Կայծակ Առաքելը (Աբաջյան, բաբերդցի Աղա)⁴⁷⁸, Բաբերդցի Սեպուհը (հայտնի է նաև Քյոսա Արշակ անունով) և շատ ուրիշներ, որոնք դարձան Կարինի հայության կուռքերը:

Կարինի նահանգի հյուսիսարևմտյան մասում գտնվող Բաբերդի գավառի Թոմնա (Թոմլա) գյուղում է 1872 թ. ծնվել ֆիդայական պայքարի նվիրյալ զորավար Սեպուհը (Արշակ Ներսիսյան): Բնավորությամբ ըմբոստ և ազատատենչ Ներսես հորից այդ որակները ժառանգած Արշակը փոքր տարիքից աչքի էր ընկնում չարաճճի բնավորությամբ և հակում ուներ «փորձելու ամեն բան, որ նորություն էր իր համար»⁴⁷⁹: Նրան բնորոշ էր նաև այն, որ միայնակ կարող էր պայքարել մի քանի հոգու դեմ:

1882 թ. Ներսեսը, հոգնելով լազերի դեմ մշտական կռիվներից, ընտանիքով տեղափոխվում է Տրապիզոն: Այստեղ էլ լուսավորչական երկսեռ դպրոցում ուսանելու տարիներին իր ուսուցիչներից (հատկապես ապագա հայտնի հնչակյան գործիչ Հմայակ Խուշպուլյանից) Արշակն առաջին անգամ լսում է ազգային-ազատագրական պայքարի քարոզներ: Դրանք այն տարիներն էին, երբ Բեռլինի վեհաժողովում խաբված հայությունը փարում էր զենքի գաղափարին: Սեպուհի վրա խոր տպավորություն են թողնում հատկապես արդեն ազատագրական պայքարի գաղափարով ներշնչված մշեցի և վանեցի ճամփորդները, որոնք երկիր վերադառնալիս կամ պանդխտության մեկնելիս անցնում էին Տրապիզոնով: Թեև հինգ տարի հետո Սեպուհը կրկին վերադառնում է հայրենի գյուղ, սակայն իր աշխույժ և կռվարար բնավորությամբ և դրանցում բոլորին հաղթելով՝ շատ հայտնի է դառնում, ինչին նպաստում են նաև Տրապիզոնում ստացած մարմնամարզական դասերը: Հանձին Սեպուհի՝ «հայ ազգային-ազատագրական պայքար էր մտնելու մի անձնավորություն, որի բնորոշ հատկանիշներն էին ակտիվությունը, համարձակությունը, չպարտվելու և միշտ հաղթող մնալու ձգտումը, հետևողականությունը»⁴⁸⁰: Շուտով թողնելով ուսումը՝ Սեպուհն անցնում է աշխատանքի: Այստեղ էլ պատանին աչքի էր ընկնում ոչ միայն իր

⁴⁷⁸ Կայծակ Առաքելը (Տիգրան Աբաջյան) Բարձր Հայքի Բաբերդ քաղաքից էր: Մանկությունից զենքի և որսի սիրահար, լավ նշանառու: Երիտասարդ տարիքում պետական զորանոցից զենք գողանալու համար բանտարկվում է: Բարեկամների միջամտությամբ ազատվելով՝ անցնում է Երզնկա և միանում Երզնկացի Քեռու խմբին, որտեղ էլ դրսևորվում են նրա քաջությունն ու հեղափոխական ոգին:

⁴⁷⁹ «Հայրենիք», 1937, թիվ 2, Արամայիս Ազնավուրեանի յուշերը, էջ 141:

⁴⁸⁰ Տե՛ս Ներսիսյան Ա., Զորավար Սեպուհ, Ե., 2014, էջ 18:

համարձակ և հանդուգն նկարագրով, այլև ֆիզիկական բացառիկ օժտվածությամբ՝ «երկար հասակ, նուրբ, կապուտաշյա, շեկ, քիթը բարեձև, ձախ այտին վրա պիսակ, ճակատն ու գլուխը ձևավոր»⁴⁸¹:

Այս շրջանում ծանոթանալով Հնչակյան կուսակցության անդամներից Թովմաս Զալալյանի հետ և ոգևորվելով հայրենիքի փրկության համար պայքարի գաղափարով՝ Սեպուհը նույնպես դառնում է հնչակյան՝ երդվելով հնազանդ լինել և մինչև կյանքի վերջը հավատարիմ մնալ հայրենիքին, սրբությամբ կատարելով իր վրա դրված բոլոր պարտականությունները⁴⁸²: Իսկապես նա հավատարիմ է մնում իր խոստմանը և կատարում կուսակցության դժվարին հանձնարարությունները⁴⁸³: Հնչակյանների կազմակերպած Գում Գափուի ցույցից հետո հայտնի է դառնում, որ իշխանությունների ձեռքն ընկած մի գրության մեջ հնչակյան գործիչների ցուցակում Սեպուհի, անունը ևս կա, ինչը նշանակում էր, որ նրան կարող էին ձերբակալել: Սեպուհը ձեռք բերելով Եվտեմ Չախալյան անուն-ազգանունով կեղծ անձնագիր, հեռանում է Սևաստոպոլ⁴⁸⁴:

Այստեղ ևս արկածներ հեղինակելով և միշտ հաղթելով՝ Սեպուհը հայտնվում է Կուկունյանի արշավանքի ստեղծած եթերային երազախառն մթնոլորտում: Արշավանք, որը թեև դժբախտ ավարտ ունեցավ, սակայն հայության ուշադրությունը սևեռեց արևմտահայ խնդրի վրա: Օրակարգ մտավ արևմտահայության ազատագրական պայքարին օժանդակելու մղումը: Այդ ոգևորությունից անմասն չէր նաև Սեպուհը, ով Սևաստոպոլում վերջնականորեն կողմնորոշվում է դեպի ՀՅ Դաշնակցությունը, որն էլ հնարավորություն է ընձեռում իրականություն դարձնելու նրա երազանքը՝ անցնել Երկիր և մասնակցել այնտեղ ընթացող ազգային-ազատագրական պայքարին:

1895 թ. Կարսում անդամագրվելով Հրայրի խմբին՝ Սեպուհը դառնում է կուսակցական կապավոր և փայլուն իրականացնում այդ դժվարին առաքելությունը՝ իր նպաստը բերելով Հրայրի խմբին: Այստեղ գործող Հրայրը Ռուբենի վկայությամբ 1895-1896 թթ. Կարսում և Բասենում գործում էր հետևյալ խելացի ծրագրով. «Նախ՝ կազմակերպել թրքական մասի հայերը սուսիկ-փուսիկ, առանց աղմուկի, առանց զուլումի: Երկրորդ՝ ռուսական Բասենէն եւ Թախտի շրջանէն որոշուած վայրերու մէջ,

⁴⁸¹ Տէ՛ս Լազեան Գ., Յեղափոխական դեմքեր (մտաւորականներ եւ հայդուկներ), Գահիրէ, 1945, էջ 24:

⁴⁸² Տէ՛ս «Հայրենիք» ամսագիր, 1925, թիվ 1, էջ 135:

⁴⁸³ Օրինակ՝ 1890 թ. հունիսին ահաբեկում է մատնիչ Գրիգորին և այլն:

⁴⁸⁴ Տէ՛ս «Հայրենիք» ամսագիր, 1943, թիվ 2, էջ 76:

սահմանի վրա, տեղական խմբերով ռազմանյութ բերել լեռներու մէջ թաքցնել եւ հեռանալ: Թուրքական Բասենէն կուգան խմբեր, իբր գյուղացիներ, կը հանէն այդ թաքնուած զենքերը եւ գիշերով կը հասցնեն Հրայրին ու նորէն գյուղացի կդառնան»⁴⁸⁵: Փոխադրման այս ձևը բավականին արդյունավետ էր և շոշափելի արդյունք տվեց:

Ի վերջո, 1895 թ. հուլիսյան մի գիշեր իրականանում է Սեպուհի երազանքը՝ անցնել Երկիր և ազատագրական պայքարի մասնակիցը դառնալ. «Բաբերդի կորյունի համար բացված էր ճանապարհը, որ հնարավորություն կտար քաջությունը, ուժն ու տաղանդը ի գործ դնելու հանուն հարազատ ժողովրդի ազատության ու բարօրության»⁴⁸⁶: Այնուհետև սկսվում է արկածներով լեցուն և հերոսական մի ամբողջ շրջան, երբ Սեպուհի կյանքը թեև շատ անգամ է վտանգվում, սակայն ամեն անգամ փրկվելով՝ նոր լիցքերով նա նետվում է ազատագրական պայքարի դաշտ⁴⁸⁷:

Սեպուհը հայ ազատագրական շարժման ծառայող խմբապետների և ապա զինվորական հրամանատարների մեջ որոշ չափով գրագետ անձնավորություն էր: Նա ի վիճակի էր զինվորական խնդիրներից դուրս զբաղվել նաև հանրային, կուսակցական ու քաղաքական խնդիրներով: Նա ուներ նաև հարաբերվելու և շրջապատի վրա տպավորություն թողնելու կարողությունը: Այս առավելություններով և բարեմասնություններով նա կուսակցական ու խմբապետական գործունեության ժամանակ վճռական դեր է կատարել բազմաթիվ բարդ իրավիճակներում. «զինք դարձուցած էին փնտռուած անձ մը, բոլոր միջավայրերու մէջ, միշտ դրական գործերու հետամուտ, միշտ զինուորական գործողութեանց անձնատուր»⁴⁸⁸: Սեպուհի ամբողջական կերպարի օրինակով ողջ հայութեան հետ Կարնո աշխարհն էլ կարող է հպարտությամբ ու խորը հարգանքով գրել Ամերիկայում գտնվող նրա շիրմի վրա. «ահա Ձեզ հայութեան ազնուագոյն զաւակներէն մէկը, որուն կեանքն ու գործերը կրնան օրինակ ծառայել, հայ ապրող եւ գալոց սերունդներուն հաւասարապէս»⁴⁸⁹:

⁴⁸⁵ Ռուբէն, Հայ Յեղափոխականի մը յիշատակները, հ. Ա, Թեհրան, էջ 125:

⁴⁸⁶ Տէ՛ս Ներսիսյան Ա., Զորավար Սեպուհ, Ե., 2014, էջ 31:

⁴⁸⁷ Քանի որ Սեպուհի կյանքի գրեթե բոլոր մանրամասները լուսաբանված են հուշերի և նրան նվիրված ուսումնասիրությունների (դրանցում շահեկանորեն առանձնանում է հատկապես Ա. Ներսիսյանի նշված Զորավար Սեպուհ, Ե., 2014, գործը) մեջ, ուստի առանց մանրամասնությունների մեջ մտնելու՝ գնահատենք նրա գործունեությունը միայն մեր խնդրո առարկա ժամանակաշրջանում:

⁴⁸⁸ Տէ՛ս Չարըզ Դ., նշվ. աշխ., էջ 664:

⁴⁸⁹ Տէ՛ս նույն տեղում, էջ 665:

Բարձր Հայքում և Ալաշկերտում երկար տարիներ ժողովրդի պաշտպանության պատվաբեր գործը կատարել է Ա. Ազնավուրյանի հայդուկային խումբը, որի մասին, ցավոք, մեզ քիչ բան է հայտնի: Բացառություն են, թերևս, նրա հուշերի որոշ պատառիկներ, որոնք տարբեր տարիներին տպագրվել են «Հայրենիք» ամսագրում: Այդ հրապարակումներից տեղեկանում ենք, որ նրա զինակից ընկերներն են եղել Հունոն և երկու Արշակները, որոնց հետ նա անցկացրել է իր հայդուկային ողջ կյանքը: Խումբը մեծ ներդրում է ունեցել հատկապես Բասենի շրջանում 1895-1896 թթ. հայերի նկատմամբ թուրք-քրդական հարձակումների ու գազանությունների դեմն առնելու գործում: Ազնավուրյանի խումբն զբաղվել է Երևան-Փարաքար-Բայազետ-Շահրիար-Կողբ գծով Երկիր զինամթերքի փոխադրության դժվարագույն առաքելությամբ ⁴⁹⁰:

Տարիներ շարունակ Քյոփրի Քյոյում է պայքարել Գրիգոր Տեր-Մկրտչյանի հայդուկային ուժեղ խումբը, որի անդամներից էին նորբայազետցի Արտաշես Բարիկյանը (Եգոր), սալմաստեցի Ավետիսը, տիվրիկցի Վարդան Տեր-Դավթյանը (Բիձա), ալեքսանդրապոլցի Գրիգոր Լոռեցյանը (Պիղատոս), Մշո Վարդենիս գյուղից Օհան Լարոյանը (Լորթո), թիֆլիսեցի Ռուբեն Տեր-Կարապետյանը, վանեցիներ Խաչիկ Աբրահամյանը, Գասպարը, Գրիգոր Ասլանյանը, շատախցի Ազր Քյոսեյանը, ախալքալաքցի Ստեփան Նազարեթյանը (Իվան), ախալցխացի Սարգիս Յաղանյանը, ղազախցի Մկրտիչ Հակոբյանը, շուշեցի Արշակ Ոսկանյանը, համադանցի Սաղաթել Զոհրաբյանը, Խաչիկ Խիզանցին, ղզլարցիներ Մկրտիչ Սուլթանյանը (Մկո), Փանոսը, Աբգարը, Մարտիրոսը, Մարիամ Մակարյանը (Մարո), Աստվածատուր Միրզայանը և ուրիշներ, որոնք իրենց անձը նվիրաբերել են հայրենիքի ազատագրության սուրբ գործին: Նշենք նաև, որ հայդուկային խմբերի կարևոր առաքելություններից էր Երկրի խորքերը զենք-զինամթերք տեղափոխելը: Այդ կարևոր գործողությունների ընթացքում տեղի էին ունենում բախումներ քրդերի և ոստիկանական ուժերի հետ, որոնց ընթացքում հաճախ զոհվում էին մեծ թվով հայդուկներ: Այսինքն՝ այդ գործընթացն արդեն այնքան էլ արդյունավետ չէր և պատճառ էր դառնում մեծաթիվ զոհերի:

Կարևոր աշխարհի ազատագրական գործիչներից էին նաև կարնեցիներ Արմեն Գարոն (Գարեգին Փաստրմաճյան), Վարդգեսը (Հովհաննես Սերենկյուլյան, Զարմայր)՝

⁴⁹⁰ Տե՛ս «Հայրենիք» ամսագիր, 1958, թիվ 5, Հրոսակապետ Յունսոն, էջ 48:

Կարնո և ողջ հայության սիրելի Գիսակը, Գարեգին Կարնեցին (Գարեգին Ղռոյան), Միքայելը (Բյոսա), Բաբերդցի Գևորգը, Կարնեցի Եղիշը, Բալաջանը (Ստեփան Ստեփանյանց), Վանի Սարգիսը, Կայծակ Առաքելը (Բաբերդցի վարազ) և ուրիշ շատ-շատերը, որոնց մի մասի անուններն անհայտ մնացին սերունդներին:

Կարնեցի մեծահարուստ ընտանիքի զավակ Գ Փաստրմաճյանը, հակառակ այն իրողությանը, որ, ապահովված լինելով նյութական բարեկեցությամբ, կարող էր ճոխ և անհոգ կյանքով ապրել, գիտակցաբար ընտրեց հեղափոխականի դժվարին ճանապարհը և իրեն նվիրաբերեց հայ ժողովրդի և հայրենիքի փրկության գործին: Ժառանգաբար Գարեգինին էր փոխանցվել գերդաստանին հատուկ ազատատենչ ոգին. բռնության դեմ ծառանալու համար զոհվել էր Խաչատուր պապը, որն իր խելքի և համարձակության շնորհիվ մեծ հարստության տեր էր դարձել, սակայն չէր հանդուրժել կուսակալների տմարդի պահվածքը, որի համար էլ սպանվել էր: 1890-ական թթ. Կարինի դեպքերի ժամանակ հայրը՝ Հարությունն ու հորեղբայրը՝ Հովհաննեսը կռվեցին թուրքերի դեմ: Ականատեսների վկայությամբ ցույցի ժամանակ «առաջին անգամ ըլլալով, թուրքին դեմ ատրճանակ գործածողը» Հովհաննեսն է եղել⁴⁹¹: Հայրը դեպքերից հետո կտրուկ մերժում է ստորագրել կուսակալի պահանջը՝ տեղի ունեցածը հայ խռովարարներին վերագրելու մասին:

Մանուկ Գարեգինի վրա մեծ ազդեցություն էին թողել նաև մեծերի գրույցները: 1877-1878 թթ. պատերազմի ընթացքում իրենց տանը հաճախ հյուրընկալվող հայազգի գեներալներ Լոռիս-Մելիքովի, Տեր-Ղուկասովի, Լազարևի հետ:

1890 թ., երբ հնարավոր էր Սանասարյան վարժարանի վրա թուրք խուժանի հարձակումը, Գ. Փաստրմաճյանը դառնում է ավագ դասարանների սաների կողմից կազմակերպված ինքնապաշտպանության ղեկավարը, որն էլ դարձավ նրա՝ պայքարի գործին նվիրվելու մկրտությունը:

XIX դարի վերջերին ինչպես ամբողջ, այնպես էլ Կարինի նահանգում գործող ֆիդայական պայքարն սկսեց աստիճանաբար անկում ապրել: Դա հետևանք էր այն իրողության, որ ռուս-թուրքական սահմանամերձ գոտի Կարինի նահանգն առաջիններից մեկն էր, որ գտնվում էր երկու կայսրությունների իշխանությունների

⁴⁹¹ Տե՛ս Չարլզ Ղ., նշվ. աշխ., էջ 540:

ուժեղացված հսկողության ներքո՝ և յուրաքանչյուր տեղաշարժ ու գործողություն անմիջապես նկատվում էին, խիստ պատժվում, որը մեծաքանակ մարդկային ու նյութական ռեսուրսների կորուստների պատճառ էր դառնում, այլևս անարդյունավետ և նպատակահարմար չէր: Կուսակցությունները և ֆիդայի ղեկավարները համոզվել էին, որ ուժերի խիստ անհավասարության պայմաններում անհնարին էր միայնակ հաղթել թուրք-քրդական միացյալ թշնամուն: Ի դերև ելան բոլոր այն հույսերը, որ մեծ տերությունները կսատարեն հայ ժողովրդին, ինչպես եղել էր բուլղարների դեպքում: Այս տարակարծությունները փարատելու և վերջնական որոշման հանգելու նպատակով 1896-1897 թթ. տեղի են ունենում այդ ժամանակաշրջանում ֆիդայական շարժումը հիմնականում ղեկավարող Դաշնակցություն կուսակցության շրջանային և 1897-1898 թթ. ՀՅԴ կովկասյան մարմինների տարեկան շրջանային ժողովները, որոնք քննարկում են ֆիդայական խմբերի գործունեության և շատ այլ կարևոր խնդիրներ: Սուր բանավեճեր են ծավալվում ֆիդայական խմբերի հետագա գոյության նպատակահարմարության հարցի շուրջ: Ժողովականներն ի վերջո հանգում են այն եզրակացության, որ ՀՅԴ-ն պետք է դադարեցնի շարժումն Արևմտյան Հայաստանում, բայց շարունակի մարտական-գինամարզական խմբեր կազմակերպելու ծրագիրը⁴⁹²:

Առաջ անցնելով նշենք, որ Արևմտյան Հայաստանի «յեղափոխական շարժման հինգ գլխավոր վառարաններ»-ից մեկի՝ Կարինի նահանգում հայդուկային պայքարն այնպիսի լայն ընդգրկումներ չունեցավ, ինչպես օրինակ՝ Սասունում, Մուշում կամ Տարոնում, քանի որ նահանգում թուրքական երրորդ բանակի ներկայությունն ազատ գործելու հնարավորություն չէր տալիս:

⁴⁹² Տե՛ս Նիթեր ՀՅ. Դաշնակցութեան պատմութեան համար, հ. Բ, էջ 54-58:

ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆՆԵՐ

Արխիվային ու տպագիր վավերագրերի, հուշագրությունների, ժամանակի պարբերական մամուլից և հրապարակի վրա առկա տարաբնույթ ուսումնասիրություններից քաղած փաստական նյութի հիման վրա ներկայացնելով XIX դարի վերջին քառորդի հայ ազգային-ազատագրական պայքարի դրսևորումները Կարինի նահանգում՝ հանգել ենք հետևյալ եզրակացությունների՝

1. Կարինի նահանգը, գտնվելով առևտրառազմավարական ճանապարհների հանգուցակետում, այդ շրջանում ուներ ոչ միայն կարևոր տնտեսական և քաղաքական դերակատարություն, այլև դարձել էր ազատախոհական խմորումների օջախներից մեկը: Ուստի միանգամայն բնական էր, որ գաղափարական կենտրոն Կ.Պոլսից անմիջապես հետո մյուս հայկական գավառների շարքում առաջիններից մեկն այստեղ սկսվեցին ազատագրական լուրջ խմորումներ:

2. Սահմանադրական շարժումն ազգային և հոգևոր-մշակութային փոխհարաբերությունների նոր փուլ էր: Այն արևմտահայությանը վստահություն ներշնչեց իր ուժերի նկատմամբ, ազատագրական գաղափարախոսության միջոցով ճեղքեց կրոնադավանական կաղապարները, իրավականորեն ձևակերպեց ժողովրդի բողոքելու իրավունքը, հող նախապատրաստեց՝ պայքարելու ազգային ինքնորոշման իրավունքի համար, եղավ արևմտահայ ազգային-ազատագրական պայքարի գաղափարախոսական մեկնակետն ու զինված պայքարի կարևորագույն նախադրյալներից մեկը: Սահմանադրությունից բխող «Սահմանադրական հրահանգ գավառաց համար» և «Կարինի բարենորոգումների ծրագիրը» ոչ միայն նպաստեցին, այլև լրացուցիչ խթան եղան Կարինի նահանգում այդ պայքարի համար:

3. Զեյթունի 1862 թ. ապստամբությունն անգնահատելի նշանակություն ունեցավ հայության ինքնագիտակցության բարձրացման, թուրքական բռնություններին ուժով հակադրվելու մտայնության տարածման համար և դարձավ զինված պայքարի կարևոր նախադրյալներից մեկը ևս:

4. Կարինահայությունը գաղափարական վերափոխումների առաջնագծում էր և իր կազմակերպչական ու գործնական արարքներով մարտահրավեր նետեց դարավոր

հարմարվողականությանը և արևմտահայ իրականության մեջ առաջիններից մեկը դուրս եկավ ազատագրական պայքարի:

5. Համընդհանուր վերազարթոնքի շրջանում Ազգային սահմանադրությամբ ոգեշնչված պոլսահայության և հարստահարվող ու հետամնաց գավառահայության արանքում գտնվող կարինահայ մտավորականությունը, լավ հասկանալով դրա անհրաժեշտությունը, ամբողջ ուժով զարկ տվեց կրթամշակութային, քարոզչական և կազմակերպչական աշխատանքներին: Այդ նպատակով Կարինում մի շարք կազմակերպություններ հիմնվեցին:

6. Արևմտահայ իրականության մեջ առաջիններից մեկը և ամենահզորը Կարինի «Պաշտպան հայրենյաց» ազատագրական կազմակերպությունն էր: Այն իր առջև դրված նպատակներով, կազմակերպական կուռ կառուցվածքով, մարտական շարքերով և գաղտնի գործելու բարձր մակարդակով պարարտ հող նախապատրաստեց կուսակցությունների տեղական կառույցների արդյունավետ գործունեության համար: Ու թեև միայն մանկության շրջան ապրած և առաջին անվստահ քայլերն անող «Պաշտպան հայրենյացն» իր նպատակների կենսագործման համար մղած պայքարի արշալույսին նահատակվեց, սակայն նրա գործունեությունը նշանակալից երևույթ էր արևմտահայ ազգային-ազատագրական շարժումների համատեքստում և կազմում է 1880-ական թթ. սկսված նրա վերելքի փառապսակը:

7. Հայ ժողովրդի ազգային-ազատագրական պայքարը հիմնավորվում էր պատմական և սոցիալ-տնտեսական ու քաղաքական դրդապատճառներով: 1890-ական թթ. առաջին կեսին առավել ուժեղ, բազմամարդ ու գործունյա միջուկը ձևավորվել է ռուս-թուրքական սահմանի վրա գտնվող Կարինի նահանգում: Սահմանի երկու կողմում էլ գտնվեցին հզոր անհատներ, ովքեր իրենց հայրենանվեր գործունեությամբ ոգեկոչեցին ու պայքարի ձեռնոց նետեցին թուրքական իշխանություններին:

8. Կարինում Արմենական կուսակցության գործունեության մասին թեև ուղղակի վկայություններ չգտնվեցին, սակայն շատ փաստեր անուղղակի վկայում են, որ այդպիսի առնչություններ, այնուամենայնիվ, եղել են:

9. Հայկական կուսակցություններից առաջինը հնչակյանները Կարինում ստեղծեցին իրենց տեղական կառույցը և համագործակցելով «Պաշտպան հայրենյացի» նախկին անդամների հետ՝ առաջինը զենք բարձրացրին իշխանության ներկայացուցչի դեմ:

10. Համազգային զարթոնքի աստեղային շրջանում՝ 1890-ական թթ. «կենսունակության քննությանը չդիմացած» հնչակյանների պառակտումը և արմենականների կտրուկ թուլացումը հանգեցրին ՀՅԴ-ի շուրջ ազատամարտի ուժերի ու հնարավորությունների կենտրոնացման խնդիրը: Այդ նույն գործընթացը տեղի ունեցավ նաև Կարինում, որի արդյունքում ազատամարտի առաջատար ուժը և այդ ուժերի կենտրոնացման առանցքը Կարինում դարձավ ՀՅԴ տեղական մարմինը:

11. Կարինում ազգային կուսակցությունների տեղական մարմինների ձևավորման շրջանում գերակայողն անմիջապես զինված ելույթներ ունենալու և դրանցով Հայկական հարցի վրա մեծ տերությունների ուշադրությունը գրավելու մարտավարությունն էր, որը հանգեցրեց նրանց և թուրքական բանտերի քավարանով անցած, ավելի իմաստնացած և խիստ զգուշավոր դարձած պաշտպանհայրենյացական ավագ սերնդի միջև, ինչը երբեմն հանգեցնում էր անցանկալի երևույթների:

12. 1890 թ. Կարինի ցույցն ազատության համար բողոքի պոռթկում էր. առաջին անգամ հայը զենքի դիմեց, որն անկյունադարձային եղավ: Հայի գնդակից թուրք զոհվեց, և դրա ազդեցության ներքո փոխվեց նրա հոգեբանությունը. սկսվեց մշտական զոհի կարգավիճակից դուրս գալու, անարդարությունների համար պատժող և վրիժառու դառնալու վերափոխման գործընթացը:

13. Օրախնդիր դարձած Հայկական հարցին ու բարենորոգումների պահանջներին հակադարձելով՝ իշխանությունները որդեգրեցին հայաջինջ քաղաքականություն, որն ընդգծված բնույթ կրեց հատկապես Ռուսաստանին սահմանամերձ Կարինի նահանգում: Թեև 1894-1896 թթ. կոտորածները միշտ մնում են 1915 թ. ցեղասպանության ստվերում, սակայն դրանք Կարինի նահանգում բնակվող հայերի գոյությանը հասցված ամենամեծ հարվածներն էին եղեռնից առաջ: Հայերի մեծ մասը կոտորվեց, շատերը կրոնափոխ եղան կամ լքեցին երկրամասը: Արդյունքում XIX դարի

20-30-ական թթ. տեղի ունեցած գործընթացը նոր թափով շարունակվեց և մեկ անգամ ևս անդառնալիորեն փոխեց նահանգի ժողովրդական նկարագիրն ի վնաս հայության:

14. XIX դարի վերջին քառորդին տեղի ունեցավ սահմանամերձ կարինահայության աշխարհականացման գործընթաց. կարինահայերը դարձան կարևոր գործոն կայսրության արևելյան մասերի անվտանգության ապահովման գործում: Այստեղ ավելի հաճախ սկսեցին շրջանառվել դավաճանություն և հայկական խառնակություն արտահայտությունները, որոնք օգտագործվում էին հայերին վնասելու նպատակով:

15. 1890-ական թթ. օսմանյան իշխանությունների կողմից հայ ժողովրդի զանգվածային ոչնչացման դեմ հայության շարքերում կարինահայերը ևս զենքը ձեռքին դուրս եկան ֆիդայական պայքարի: Կարինը դարձավ կարևորագույն տարանցիկ ուղիներից մեկը՝ դեպի Երկիր զենք-զինամթերք և կռվող ուժեր փոխադրելու համար:

ՕԳՏԱԳՈՐԾՎԱԾ ԱՂԲՅՈՒՐՆԵՐԻ ԵՎ ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՑԱՆԿ

1. ԱՐԽԻՎԱՅԻՆ ՆՅՈՒԹԵՐ

ա) Հայաստանի ազգային արխիվ

- 1.1 \$ 45, գ. 1, ց. 4 (Ռազմական գործողությունները Կովկասյան ճակատում 1914-1918 թթ. Նազարբեկովի անտիպ հուշերը):
- 1.2 \$ 56, ց. 16-18, գ. 68, 70, 71, հաստատված պատճեն, ձեռագիր 18, 56 (Ս. Էջմիածնի լուսավորչական հայոց սինոդի ֆոնդ):
- 1.3 ՀԱԱ, \$ 57, ց. 5, գ. 3 (Ամենայն հայոց կաթողիկոսի դիվան):
- 1.4 \$ 314, ց. 8, գ. 6, ց. 32, գ. 8 (անձնական ծագում ունեցող վավերագրեր):
- 1.5 \$ 408, ց. 1, գ. 2, ց. 1 (Փաստաթղթերի հավաքածու Սոցիալ-դեմոկրատական հնչակյան կուսակցության և ամերիկահայ հասարակական-քաղաքական գործիչ Ներսես Փիլիկյանի գործունեության վերաբերյալ):
- 1.6 \$ 420, ց. 16, գ. 8, 9, 11, 12, ց. 81, գ. 214 (Արտասահմանից ստացված վավերագրական նյութերի հավաքածու,) Ճգնաւորեան Օ., Հայ ազատագրական ճիգերը Արեւմտեան Հայաստանի մէջ, ձեռագիր անավարտ մենագրություն:
- 1.7 \$ 424, ց. 2, գ. 116 (Դարբինյան Արտակ՝ հասարակական-քաղաքական գործիչ, հրապարակախոս):
- 1.8 \$ 524 (Կարինի Սանասարյան վարժարանին նվիրված նյութերը):
- 1.9 \$ 450, ց. 2, գ. 1, թ. 27 (Փաստաթղթերի հավաքածու Հայկական հարցի վերաբերյալ):
- 1.10 \$ 453, ց. 1, գ. 59, 72 (Պետրոսյան Ապահ՝ հասարակական-քաղաքական գործիչ):
- 1.11 \$ 476, ց. 4, գ. 51 (Շահպարտնյան Վարդան):
- 1.12 \$ 818, ց. 1, գ. 23, 515 (Ներսիսյան Մկրտիչ Գեղամի):
- 1.13 \$ 1296, ց. 1, գ. 51 (Գեղամյան Եղիշե՝ պատմաբան):
- 1.14 \$ 1396, ց. 1, գ. 1, 8, 15, 46, 66 (Տեր-Մկրտչյան Անուշավան՝ քաղաքական գործիչ):
- 1.15 \$ 1456, ց. 1, գ. 1, 38, ց. 2, գ. 7, 9, 24 (Սոցիալ-դեմոկրատական հնչակյան կուսակցություն):
- 1.16 \$ 1457, ց. 1, գ. 1, 68, ց. 2, գ. 16, ց. 3, գ. 1-6 (Հայ հեղափոխական

Դաշնակցություն կուսակցություն):

1.17 Ֆ. 4047, ց. 2, գ. 9, Լևոն Սարգսյան, Հուլիս 1889-1892 թվականներից (ՀՀԴ ծագումը, առաջին քայլերը և Ա. ընդ. Ժողովը):

1.18 Архив внешней политики России, ф. "Политархив", 1889-94 гг., оп. 482, д. 1630, л. 163.

բ) Եղիշե Չարենցի անվան գրականության և արվեստի թանգարանի արխիվ (ԳԱԹ)

1.19 Բ. Նավասարդյանի ֆոնդ, վավ. 9-111, Կերեկցյան Տիգրան, Խաչատուր Գևորգ Կերեկցյանի կենսագրությունը, ձեռագիր:

1.20 Թ. Ազատյանի ֆ., բաժ. XII, գ. 11507, 11508, 11512, 11519:

1.21 Բ. Նավասարդյանի ֆոնդ, վավ. 9-111, թ. 38 «Թ» 55:

1.22 Սրվանձտյանց Գ.-ի ֆ., II բ., գ. 65:

գ) ՀՀ ԳԱԱ պատմության ինստիտուտ

1.23 Լեոյի անձնական արխիվ, ֆ. 1, ց. 1, գ. 162, գ. 175:

2. ՏՊԱԳԻՐ ՍԿԶԲՆԱԴԲՅՈՒՐՆԵՐ

ա) հայերեն

2.1 Ազգային սահմանադրություն հայոց, Կ.Պոլիս, 1860, նույնը՝ Կ.Պոլիս- Սթանպոլ, 1863, նույնը՝ Անթիլիաս, 1968:

2.2 Դիան Հ. Յ. Դաշնակցութեան, յաւելած «Հայրենիք» ամսագրի, հրատ., Պոսթըն, 1934, 395 էջ, Բ հատ., Պոսթըն, 1938, 464 էջ:

2.3 Հայաստանը բուրժուական դիվանագիտության և սովետական արտաքին քաղաքականության փաստաթղթերում (1828-1923), Զ. Կիրակոսյանի խմբագրությամբ, Ե., «Հայաստան» հրատարակչություն, 1972, 810 էջ:

2.4 Հայերի ցեղասպանությունը Օսմանյան կայսրությունում (փաստաթղթերի և նյութերի ժողովածու), Մ. Ներսիսյանի խմբագրությամբ, Ե., 1991, 746 էջ:

2.5 Հիմնական կանոնագիր Միացեալ ընկերութեանց հայոց (1880-1908), Կ.Պոլիս, 1912, Վ. և Հ. Ներսէսեան, 14 էջ:

2.6 Նիւթեր Հ.Յ.Դաշնակցութեան պատմութեան համար, խմբ.՝ Հր. Տասնապետեանի, հրատ. Հ. Յ. Դաշնակցութեան, Պէյրութ, «Վահէ Սէթեան» տպարան, Ա հատ., բ. տպագր., 1984, 304 էջ, Բ հատ., բ. տպագր., 1985, 302 էջ, Գ. հատ., 1976, 357 էջ,

Դ հատ., 1982, 384 էջ:

- 2.7 Նիսիեր Հ.Յ.Դաշնակցության պատմության համար, Եր. Փամպուքեանի, հրատ. Հ. Յ. Դաշնակցության, Պէյրութ, «Վահէ Սէթեան» տպարան, Ե հրատ., 2007, 529 էջ, Զ հատ., 2010, 559 էջ, Է հատ., 2010, 384 էջ, Ը հատ., 2011, 496 էջ, Թ հատ., 2012, 560 էջ:

բ) ռուսերեն

- 2.8 Геноцид армян в Османской империи, сборник документов и материалов под редакцией М. Г. Нерсисяна, составители: М. Г. Нерсисян, Р. Г. Саакян (այսուհետև՝ Геноцид армян...), с. 112.
- 2.9 борник договоров России с другими государствами, 1856-1917, Москва, 1952.
- 2.10 Современное состояние Оттоманской империи, составил М. А. Убичини и П. де Куртейль, Санкт- Петербург, 1877,

գ) տապալի հուշագրություններ, ժամանակակիցների վկայություններ և հրապարակումներ

- 2.11 Ա. Ազնաուրեանի յուշերը, գրի առաւ՝ Ե. Հայրապետեան, «Հայրենիք» ամսագիր, Բոստոն, 1936, թիւ 9, էջ 99-110, թիւ 10, էջ 75-82, թիւ 11, էջ 115-122, 1937, թիւ 1, էջ 136-142, թիւ 2, էջ 135-144, թիւ 4, էջ 144-149, թիւ 5, էջ 135-141, թիւ 6, էջ 150-153, թիւ 8, էջ 133-141, թիւ 9, էջ 145-151, թիւ 10, էջ 156-160, թիւ 11, էջ 133-136, թիւ 12, էջ 126-136, 1938, թիւ 1, էջ 145-150, թիւ 2, էջ 118-123, թիւ 3, էջ 130-137, թիւ 4, էջ 158-163, թիւ 6, էջ 130-136, թիւ 7, էջ 137-140, թիւ 8, էջ 154-157, թիւ 9, էջ 140-143, թիւ 11, էջ 149-155, թիւ 12, էջ 134-139:
- 2.12 Եկարեան Ա., Յուշեր Արմենակ Եկարեանի, Պէյրութ, 1985, Ռ.Ա. կուսակցության Ա., Եկարեան ակումբի հրատ., 255 էջ:
- 2.13 Դարբինեան Ա., Հայ ազատագրական շարժման օրերէն, Յուշեր 1890էն 1940, Երեւան, 2003, Բ, 389 էջ:
- 2.14 Զորավար Անդրանիկի Կովկասեան ճակատի պատմական օրագրութիւնը (1914-1917), Պոսթոն, 1924, «Պայքար» տպ., 200 էջ:
- 2.15 Խան-Ազատ Ռ., Հայ յեղափոխականի յուշերից, «Հայրենիք» ամսագիր, 1927, թիւ 1, էջ 122-135, թիւ 2, էջ 112-124, թիւ 8, էջ 60-72, թիւ 9, էջ 52-63, թիւ 10, էջ 56-72,

թիւ 11, էջ 124-138, թիւ 12, էջ 122-129, 1928, թիւ 1, էջ 146-154, թիւ 2, էջ 91-100, թիւ 3, էջ 114-128, թիւ 4, էջ 123-135, թիւ 5, էջ 102-114, թիւ 6, էջ 126-141, թիւ 7, էջ 153-160, թիւ 8, էջ 134-148, թիւ 10, էջ 136-142, թիւ 11, էջ 146-156, թիւ 12, էջ 149-157, 1929, թիւ 3, էջ 117-125, թիւ 4, էջ 99-108, թիւ 5, էջ 102-114, թիւ 6, էջ 107-115, թիւ 7, էջ 147-160:

2.16 Մալխաս (Արտաշես Հովսեփյան), Ապրումներ, Ա հատ., Թեհրան, տպ. «Ֆարաբի», 1982, 520 էջ:

2.17 Նշկեան Յ. Մ., Առաջին կայծերը, էջ մը Կարնոյ զարթոնքէն, «Պայքար»-ի տպարան, ա. տ., 1930, 146 էջ:

2.18 Ռուբէն, Հայ յեղափոխականի մը յիշատակները, Երեւան, «Ադանա», Ա հատ., 1990, 402 էջ, Բ հատ., 1990, 328 էջ, Գ հատ., 1990, 374 էջ, Դ հատ., 1991, 414 էջ, Ե հատ., 1991, 384 էջ, Զ հատ., 1991, 460 էջ:

2.19 Փափագեան Վ., Իմ Յուշերը, հատ. Ա, Պոսթըն, տպ. «Հայրենիք»-ի, 1950, 600 էջ:

3. ԷԼԵԿՏՐՈՆԱՅԻՆ ԿԱՅՔԵՐ

3.1 http://www.armeniansgenocide.am/am/Encyclopedia_Of_armenian_genocide_erzrumi_hay_bnakchutyan_tvakanake:

3.2 <http://www.aztagdaily.com/archives/190231>

3.3 akunq.net/am/?p=2241:

3.4 armenian-community.ge/News/954

3.5 <http://www.armenianreligion.am/images/menus/752/pastatxter.pdf>, էջ 119:

3.6 <http://www.armenianreligion.am/images/menus/752/pastatxter.pdf>, էջ 130:

3.7 <http://www.slaq.am/arm/news/148100/>, և <http://www.genocide-museum.am>:

4. ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

ա) հայերեն

4.1 Անանյան Գ., Նիկոլ Աղբալյան, կյանքը և գրական-հրապարակախոսական գործունեությունը, Երևան, 2002, ԵՊՀ, էջ 313:

4.2 Առաքելյան Հ., Զեյթուն (տեղագրություն, ազգագրություն և վարչական տեսություն), Թիֆլիս, Ա., 1896, 92 էջ:

4.3 Գևորգյան Հ., Ազատագրական պայքարի ռազմավարությունը և էջեր նրա

հերոսապատումից, Երևան, հեղինակային հրատարակություն, 2012, 597 էջ:

- 4.4 Գիւզալեան Գ., Հայ քաղաքական մտքի զարգացումը եւ Հ.Հ. Դաշնակցութիւնը, Փարիզ, հրատ. Հ.Յ.Դաշնակցութեան, 1927, 137 էջ:
- 4.5 Գիւլխանդարեան Ա., Ազգային շարժումների դրոպատոճառները ԺԹ դարում, Փարիզ, 1939:
- 4.6 Եազըճյան Գ., Ապտով Համիտ Բ. Կարմիր սուլթանը, Պէյրութ, 1980, Սեւան, 872 էջ:
- 4.7 Եղիազարյան Կ., Սարգիս Կուկունյանի արշավանքը, Երևան, ԵՊՀ հրատ., 2016, 180 էջ:
- 4.8 Զատիկյան Հ., Կարինի նահանգը XIX դարի երկրորդ կեսին, Երևան, 2013, Նորավանք ԳԿՀ, 424 էջ:
- 4.9 Զեյթունի պատմագիրք, Պուենոս Այրես, 1960, Զեյթունի հայր. Միութ. հրատ., 1150 էջ:
- 4.10 Զեյթունցի, Զեյթունի անցեալէն ու ներկայէն, Բ մաս, Բարիզ, 1903, Ա հ., 240 էջ:
- 4.11 Զորավար Անդրանիկի Կովկասեան ճակատի պատմական օրագրութիւնը (1914-1917), Պոսթոն, 1924, «Պայքար» տպ., 200 էջ:
- 4.12 Թառոյան Կ., Արևմտահայերի սոցիալ-քաղաքական վիճակը և ազատագրական պայքարը սուլթանական Թուրքիայի բռնապետության դեմ (1878-1908 թթ.), Երևան, ՀՀ ԳԱԱ «Գիտություն» հրատարակչություն, 2001, 445 էջ:
- 4.13 Թումայան Կ., Պատմութիւն Արևելեան խնդրոյ և առաջնորդ Հայկական հարցի, հ. Բ, Լոնտոն, 1905, 675 էջ:
- 4.14 Լազեան Գ., Յեղափոխական դէմքեր (մտաւորականներ, հայդուկներ), Հ.Յ.Դ հրատ. երիտ. Միութեան Գահիրէ, «Նուպար» տպարան, 1945, 413 էջ:
- 4.15 Լեո, Թուրքահայ հեղափոխության գաղափարաբանությունը, հ. Ա, Երևան, «Շաղիկ», 1994, 204 էջ:
- 4.16 Լէօ, Թիւրքահայ յեղափոխութեան գաղափարաբանութիւնը, հատ. Բ, Պարիզ, տպագրութիւն՝ Պահրի եղբարց, 1935, 262 էջ:
- 4.17 Խուդինյան Գ., Հայ Յեղափոխական Դաշնակցության ծնունդը, Երևան, «Արտագերս», 2000, 227 էջ:

- 4.18 Խուդինյան Գ., Հ Յ Դաշնակցության քննական պատմություն (ակունքներից մինչև 1895 թվականի վերջերը), հրատարակություն Հ.Յ. Դաշնակցության, Երևան, ՀՀ ԳԱԱ պատմության ինստիտուտ, 2006, 440 էջ:
- 4.19 Կիտուր Ա., Պատմութիւն Ս.Դ. Հնչակեան կուսակցութեան, 1887-1962, հ. Բ, 1963 Պեյրութ, Շիրակ տպ., 636 էջ:
- 4.20 Կիրակոսյան Ջ., Բուրժուական դիվանագիտությունը և Հայաստանը (XIX դարի 70-ական թթ.), Երևան , 1978, Հայաստան, 362 էջ:
- 4.21 Կիրակոսյան Ջ., Երիտթուրքերը պատմության դատաստանի առաջ (19-րդ դարի 90-ական թթ. – 1914 թ.), գիրք առաջին, Երևան, 1982, «Հայաստան», 464 էջ:
- 4.22 Կոստանդյան Է., Գարեգին Սրվանձտյանց (կյանքը և գործունեությունը), Երևան, 1979, ՀՍՍՀ ԳԱ հրատարակչություն, 193 էջ:
- 4.23 Կոստանդյան Է., Մկրտիչ Խրիմյան, հասարակական-քաղաքական գործունեությունը, Երևան, 2000, Զանգակ-97, 446 էջ:
- 4.24 Կոստանդյան Է., Ակնարկներ արևմտահայ մշակութային և հասարակական-քաղաքական կյանքի պատմության /19-րդ դարի 80-ական թվականներ/, Երևան, 2005, 176 էջ:
- 4.25 Կոստանդյան Է., Դրվագներ Մաղաքիա արքեպիսկոպոս Օրմանյանի կյանքից և գործունեությունից, Երևան, 2015, ՀՀ ԳԱԱ պատմության ինստիտուտ, 341 էջ:
- 4.26 Հակոբյան Կ., Կարսի դերը արևմտահայ ազատագրական պայքարում 1880-1908 թթ., թեկնածուական ատենախոսության սեղմագիր, Երևան, 2015, 28 էջ:
- 4.27 Համբարյան Ա., Հայ հասարակական-քաղաքական միտքը արևմտահայության ազատագրության ուղիների մասին, Երևան, 1990, «Հայաստան», 480 էջ:
- 4.28 Համբարյան Ա., Ազատագրական շարժումները Արևմտյան Հայաստանում 1898-1908 թթ., Երևան, ՀՀ ԳԱԱ «Գիտություն» հրատարակչություն, 1999, 447 էջ:
- 4.29 Հայոց պատմություն, հ. III, գիրք առաջին, Երևան, 2010, Զանգակ-97, 728 էջ:
- 4.30 Հովհաննիսյան Ն., Քրդերի մասնակցությունը հայերի ցեղասպանությանը, քրդական գործոնը Արևմտյան Հայաստանի հարցի լուծման հայկական հայեցակարգում, Ե., 2016:
- 4.31 Հովհաննիսյան Գ., Հնչակյան կուսակցության պատմություն (1887-1915թթ.),

Երևան, Մեսրոպ Արք. Աշճեան մատենաշար, թիվ 83, Երևան, ՀՀ ԳԱԱ պատմության ինստիտուտ, 2012, 354 էջ:

- 4.32 Հովհաննիսյան Ռ., Արևմտահայ ազգային-ազատագրական շարժումները և Կարինի «Պաշտպան հայրենյաց» կազմակերպությունը (XIX դարի 70-80-ական թթ.), Երևան, 1965, Հայկական ՍՍՌ ԳԱ հրատարակչություն, 388 էջ:
- 4.33 Ղազարյան Հ., Արևմտահայությունը ցեղասպանության նախօրյակին, Երևան, «Տիգրան Մեծ» հրատարակչություն, 2001, 690 էջ:
- 4.34 Ղազարեան Վ., Արմենական կուսակցություն, Պեյրութ, 1985, Զարթոնք, 65 էջ:
- 4.35 Ճիզմեճեան Մ., Պատմութիւն ամերիկահայ քաղաքական կուսակցութեանց, 1890-1925, Ֆրեզնո, 1930, «Նոր օր», 572 էջ:
- 4.36 Մանճիկեան Բ., Պատմութեան համար. դէմքեր, դէպքեր, դէպի արմատներ, Լոս-Անջելես, 2006, Յ. և Բ. Մանճիկեան հրատ., 209 էջ:
- 4.37 Մելքոնյան Ա., Էրզրում. Էրզրումի նահանգի հայ ազգաբնակչությունը XIX դարի առաջին երեսնամյակին (Ժողովրդագրական ուսումնասիրություն), Երևան, 1994, ՀՀ ԳԱԱ հրատարակչություն, 180 էջ:
- 4.38 Մելքոնյան Ա., Զավախքը 19-րդ դարում և 20-րդ դարի առաջին քառորդին, Երևան, «Զանգակ-97», 2003, 543 էջ:
- 4.39 Մկրտչյան Լ., Արևմտահայության ցեղասպանության աբդուլհամիդյան քաղաքականությունը, Հայոց ցեղասպանությունը (ուսումնասիրություններ), Ե., 2001, էջ 58-67:
- 4.40 Մկրտչյան Լ., Զեյթունի ապստամբությունը 1895-1896 թթ., Երևան, ԵՊՀ հրատարակչություն, 1995, 209 էջ:
- 4.41 Յուշապատում Հ. Յ. Դաշնակցութեան 1890-1950, հրատարակութիւն՝ Հ.Յ.Դ. Բիւրոյի, Բոստոն, «Հայրենիք»ի տպարան, 1950, 636 էջ:
- 4.42 Նաթանեան Մ., Արմենական կուսակցութիւնը, ծագումէն սկսեալ մինչեւ Սահմանադրական Ռամկավար կուսակցութեան կազմութիւնը, խմբագրութիւն եւ ներածութիւն Տիգրան Գէորգեանի, Գահիրէ, 1990, 106 էջ:
- 4.43 Նալբանդեան Մ., Երկու տող, Փարիզ, 1861, Արամեան տպ., 48 էջ:
- 4.44 Ներսիսյան Ա., Հ.Յ.Դաշնակցութեան պատմութիւն, Խ. Բ. /1898-1908թթ./,

Պեյրուֆ, 2008, Ա, 400 էջ:

- 4.45 Ներսիսյան Մ., Հայ ժողովրդի ազատագրական պայքարը թուրքական բռնապետության դեմ 1850-1890 թթ., Երևան, 2002, ՀՀ ԳԱԱ «Գիտություն» հրատ., 492 էջ:
- 4.46 Ուզունեան Հ., Արեւմտահայ ազատագրական պայքարին ծագումը Արմենական կուսակցութեան մէջ եւ Ռամկավար Ազատական Կուսակցութիւնը իր 60-ամեակին, Լոս Անճելըս, Գալիֆորնիա, 1986, G. Printing, 54 էջ:
- 4.47 Չարըզ Ղ., Յուշամատենան Բարձր Հայքի, Կարինապատում, Պեյրուֆ, 1957, «Մշակ», 792 էջ:
- 4.48 Չերազ Մ., Թե ինչ շահեցանք Պէրլինի վեհաժողովէն, Կոստանդնուպօլիս, 1878, «Տնտեսեան» տպ., 30 էջ:
- 4.49 Պատմութիւն Ս.Դ. Հնչաեան կուսակցութեան, 1887-1962, հ. Ա, խմբ.՝ Կիտուր Ա., հրատարակութիւն Ս.Դ.Հնչակեան կուս. պատմագրութեան կեդր. յանձնախումբի, տպարան «Շիրակ», Պեյրուֆ, 1962, 640 էջ:
- 4.50 Պողոսյան Հ., Զեյթունի պատմությունը, Երևան, 1969, «Հայաստան», 458 էջ:
- 4.51 Պողոսյան Վ., Հայոց ցեղասպանության առաջին փուլը ֆրանսիական պատմագրության և հասարակական մտքի գնահատմամբ (XIX դ. վերջ-XX դ. սկիզբ), Երևան, 2005, ՀՀ ԳԱԱ «Գիտություն» հրատ., 272 էջ:
- 4.52 Պողոսյան Տ., Րաֆֆի Տարեգիրք, Թեհրան, 1970, «Մողերն» տպ., 687 էջ:
- 4.53 Սարգսյան Ս., Հայ Սահմանադրական ռամկավար կուսակցություն 1908-1921 թթ., Երևան, 2009, «Տիգրան Մեծ», 244 էջ:
- 4.54 Սարգսյան Ս., «Արմենիա» պարբերականը ազատագրական գաղափարախոսության ակունքներում, Երևան, 2014, «Անտարես», 680 էջ:
- 4.55 Սարուխան Ա., Հայկական խնդիրն և Ազգային սահմանադրությունը Թիւրքիայում (1860-1910), հ. Ա, Թիֆլիս, 1912, «Էպօխա» տպարան, 480 էջ:
- 4.56 Սասունի Կ., Հրայրի դերը հայ ազատագրական շարժման մէջ (ակնարկ մը անոր յեղափոխական նկարագրին վրայ), տպարան «Ատլաս», Պեյրուֆ, 1964, 48 էջ:
- 4.57 Սիմոնյան Հ., Անդրանիկի ժամանակը, Երկու գրքով, գիրք Ա, Երևան, 1996, «Կախա», 830 էջ, գիրք Բ, Երևան, 1996, «Կախա», 752 էջ:

- 4.58 Ստեփանյան Խ., Ռուբեն Տեր-Մինասյան (կյանքը և գործը), Երևան, «ՎՄՊ-Պրինտ», 2008, 183 էջ:
- 4.59 Վարանդեան Մ., Հ.Յ.Դաշնակցության պատմություն, Ա. և Բ. հատորներու միացեալ հրատարակութիւն (անձնանուններու և տեղանուններու ցանկերով հարստացած), Բ հրատարակութիւն, Պեյրուֆ-2013, 653 էջ:
- 4.60 Վարանդեան Մ., Հ.Յ.Դաշնակցության պատմություն, հ. Բ., Թեհրան, 1981, «Վարանդեան» հրատ., 351 էջ:
- 4.61 Վրացեան Ս., Կեանքի ուղիներով: Դէպքեր, դէմքեր, ապրումներ, Հ. Ա, Գահիրէ, 1955, տպ. «Յուսաբեր», 295 էջ:
- 4.62 Տասնապետեան Հ., Ռոստոմ, Պեյրուֆ, 1979, Հ.Յ. Դաշնակցության հրատ., 444 էջ:
- 4.63 Տասնապետեան Հ., Հ.Յ.Դաշնակցության կազմակերպական կառույցի հոլովոյթը և այլ ուսումնասիրութիւններ, Պեյրուֆ, Համազգայինի «Վահէ Սէթեան» տպարան, 2009, 491 էջ:
- 4.64 Տեր-Կարապետեան Գ., Տարօնի աշխարհ, պատկերներ ու պատմութիւններ, Փարիզ, 1931, Ա, 340 էջ:
- 4.65 Քօսեան Յ., Բարձր Հայք, հ. Ա (Կարին քաղաքը), Վիեննա, 1925, Մխիթարյան տպ. 496 էջ:
- 4.66 Օրմանեան Մ., Խոհ և խօսք. Իր կեանքին վերջին շրջանին մեջ, Երուսաղէմ, 1929, Սրբոց Յակոբեանց, 504 էջ:

բ) ռուսերեն

- 4.67 Армянский вопрос. Геноцид армян, библиография литературы на русском языке (1877-1997), составители П.О. Оганесян, Э. А. Бабаян, издательство «Хоск», 1998, стр: 6.
- 4.68 Амфитеатров А., Армянский вопрос, С.-Петербург, 1906.
- 4.69 Гасымлы М., Анатолия и Южный Кавказ в 1724-1920-е гг.: в поисках исторической истины, Москва, «Инсан», 2014, 523 стр.:
- 4.70 Диллон Э., Положение дел в Турецкой Армении, Братская помощь..., отд. II, էջ 15:
- 4.71 Д-р Лепсиус, Правда об Армении, Братская помощь..., отд. II, էջ 136-137:

- 4.72 Макколь М.. Ответственность Англии перед Арменией (Положение армян в Турции до вмешательства держав в 1895 году, в кн.: Положение армян до вмешательства держав в 1895 году, М., 1896, с. 131-211).
- 4.73 Малама Я., Описание Эрзрумского жилайета, СПб, 1874:
- 4.74 Ролен-Жекмен М. Г., Армения, армяне и турки. Положение армян в Турции до вмешательства держав в 1895 году, Москва, 1896, стр. 18-19
- 4.75 Чернов С. Л., К вопросу о Сан-Стефанском договоре 1878 г., “История СССР”, 1975, с. 136.

գ) անգլերեն

- 4.76 Hakobian A., Armenia and the war, London, 1917.
- 4.96 Nalbandian Louise, The Armenian revolutionary movement. University of California press, Berkeley, Los-Angeles, 1975, 286 p.

5. ՀՈԴՎԱԾՆԵՐ

- 5.1 Եղիազարյան Կ., Սարգիս Կուկունյանը և նրա գլխավորած արշավանքը, «Պատմաքանասիրական հանդես», 2000, թիվ 1, էջ 69-84:
- 5.2 Զատիկյան Հ., Կարինի նահանգի հայ բնակչության, արևմտահայության, 1894-1896 թթ. կոտորածների, Մեծ եղեռնի զոհերի թվաքանակի հարցի շուրջ, «Պատմաքանասիրական հանդես», թիվ 1(125), էջ 143-151):
- 5.3 Զատիկյան Հ., Կարնո նահանգի պատմությունից (XIX դ. երկրորդ կես), «Լրաբեր հասարակական գիտությունների», 1991, թիվ 5, էջ 173-181:
- 5.4 Զատիկյան Հ., Կարինի բարենորոգումների ծրագիրը (1879 թ.), «Բանբեր Հայաստանի արխիվների», 1991, թիվ 3, էջ 42-51:
- 5.5 Լալայան Ե., Կարնո գավառի տեղեկագիրը, «Բանբեր Հայաստանի արխիվների», 1974, թիվ 3, էջ 29-37:
- 5.6 Խառատյան Ա., Դարձյալ արևմտահայերի սահմանադրության մասին, «Պատմաքանասիրական հանդես», թիվ 2, 2008, էջ 81-93:
- 5.7 Խուդինյան Գ., Հ.Յ. Դաշնակցության գործունեությունը Էրզրումի վիլայեթում 1890-1895 թթ., Հայոց պատմության հարցեր, ՀՀ ԳԱԱ պատմության ինստիտուտ, Ե., 2003, էջ 57-65:

- 5.8 Խուդինյան Գ., Հայ Յեղափոխական Դաշնակցության ծրագրի և կանոնագրի պատմությունից, «Բանբեր Հայաստանի արխիվների», Երևան, 2002, թիվ 1, էջ 63-64:
- 5.9 Համբարյան Ա., Արևմտահայերի թվաքանակի հարցի շուրջ, «Բանբեր Հայաստանի արխիվների», 1969, թիվ 2,
- 5.10 Հարությունյան Գ., 1877-1878 թթ. ռուս-թուրքական պատերազմը և Հայկական հարցը Սան-Ստեֆանոյի պայմանագրում, «Պատմաբանասիրական հանդես», թիվ 2, 2006, էջ 22-40:
- 5.11 Հովհաննիսյան Զ., Հայ կամավորական շարժումը, «Դրօշակ», ապրիլ 2004, էջ 101:
- 5.12 Հովհաննիսյան Ռ., Կարինի «Պաշտպան հայրենյաց» կազմակերպության պատմությունից, «Պատմաբանասիրական հանդես», 1964, թիվ 2, էջ 292-298:
- 5.13 Մելքոնյան Է., Մկրտիչ Ներսիսյանն ընդդեմ հայ ազգային-ազատագրական շարժման պատմության կեղծարարների, «Լրաբեր հասարակական գիտությունների», թիվ 1, 1996, էջ 28-40:
- 5.14 Մշակութային ցեղասպանություն Հայկական մշակութային եղեռնը օսմանյան Թուրքիայի տարածքում, «Պատմաբանասիրական հանդես», թիվ 1(124), 1995, էջ 124-131:
- 5.15 Ստեփանյան Խ., Ռուբեն Տեր-Մինասյան. պայքարի առաջին փորձառությունը, «ԲՀԱ», 2004, թիվ 1, էջ 144-149:
- 5.16 Վրացյան Ա., Բագրատ վրդ. Թավաքալյանի նամակները, «Հայրենիք», Բոստոն, 1933, թիվ 1, էջ 103-110, թիվ 2, էջ 98-112, 1934, թիվ 3, էջ 84-95:

6. ՊԱՐԲԵՐԱԿԱՆՆԵՐ

- 6.1 «Արարատ» ամսագիր, 1896, թիվ 10:
- 6.2 «Արեւ» օրաթերթ, 14 հունիսի, 1916:
- 6.3 «Արծուի Վասպուրական», 1862-1863, թիվ 1:
- 6.4 «Արօր», թիվ 1, 2, 3, 4, 5, 6-7, 8-9-10, 12, 1910, թիվ 1, 2-3, 4, 5-6, 7-8, 9, 1911, 25 հոկտեմբերի, թիվ 245:
- 6.5 «Բանբեր Հայաստանի արխիվների», Երևան, 2002, թիվ 1:

- 6.6 «Դրօշակ», 1892, փետրուար, թիվ 3, թիվ 2, 1892, թիվ 1, 1901, 1896, թիվ 2, թիվ 3, փետրուար, 1892, ապրիլ 2004:
- 6.7 «Կոռնկ հայոց աշխարհին», 1862, թիվ 10, 1863, թիվ 1, թիվ 3:
- 6.8 «Հայրենիք» ամսագիր, թիվ 4, 1923, 1927, թիվ 1, թիվ 2, 1932: 1934, մարտ, թիվ 2, 5, 9, 1937, թիվ 5, 6, 8, 9, 1938, թիվ 5, 1957, թիվ 5, 8, 1958, թիվ 12, 1959, թիվ 6, 1960, 1959, թիվ 12, 1933, հ. 12, թիվ 1, էջ 103-110, հ. 12, թիվ 2, 1934, հ. 12, թիվ 3:
- 6.9 «Հորիզոն», 28 դեկտեմբեր, 1915:
- 6.10 «Մասիս», 1883, թիվ 3463-3464, թիվ 3497: 1862, 25 օգոստոսի և 11 սեպտեմբերի, 1880, թ. 2718:
- 6.11 «Մամուլ», 1882, թիվ 973:
- 6.12 «Մշակ», քաղաքական-գրական ամենօրեա լրագիր, Թիֆլիս, 1878, թիվ 165, 1879, թիվ 126, 1883, թիվ 4, թիվ 6:
- 6.13 «Մեղու», 1857, թիվ 8, 1862, թիվ 169:
- 6.14 «Մուրճ», Թիֆլիս, 1895, N 6, 1889, N 12, 1895, N 11, 12:
- 6.15 «Հնչակ», սեպտեմբեր, 1880, թ. 2718, 1883, թիվ 3463-3464, 1888, 1890, թիվ 6, 14 սեպտեմբեր:
- 6.16 «МОСКОВСКИЙ телеграф», 1883, № 2
- 6.17 «Public Record Office» (London), Foreign Office (FO), 424/181, N 88/1, էջ 57:
- 6.18 «Turkey», թիվ 1(1892), London, 1892, էջ 16, 19, 37: